Радиоуглеродные даты Чобарети в наличном виде¹⁰ как будто укладываются преимущественно в диапазон 3350 - 3100 cal. BC и выглядят в целом более ранними, чем гехаротские. Таким образом, если синхронизация материалов Чобарети и Лусагюха на основании аналогичности декора является корректной, то последний комплекс действительно старше гехаротского и должен датироваться временем до 3000 г. до н.э. Продолжив цепочку аналогий, становится возможным синхронизировать керамику Чобарети, Лусагюха, Апарана III и погребений Арагаца.

Таким образом, вышеперечисленные памятники, содержащие керамику с процарапанным после обжига орнаментом, образуют одну хронологическую группу. Если комплекс Гехарота знаменует собой финал первого этапа куро-аракса (KA Ic), то «до-гехаротские» материалы Лусагюха, Арагаца и Апарана III, соответственно, должны принадлежать KA Ib.

Датам Чобарети и, следовательно, памятникам с процарапанным после обжига орнаментом предшествуют даты погребения N 1 Джрвеж/Авана (раскопки Ф. Мурадяна, 2012 г.). Керамика этого комплекса выглядит безусловно архаичнее и старше основной массы «элар-арагацской» керамики и, на мой взгляд, аналогична материалам кургана Ментеш-тепе, даты которого синхронны аванским. Вышеприведенным комплексам аналогична также керамика погребения N 1 Начевчавеби. Иными словами, речь может идти о типологически и хронологически едином комплексе, представляющем на данный момент древнейший - KA Ia - период куро-аракса.

Таким образом, в рамках KA I типологически вычленяется три керамических комплекса, образующих хронологическую последовательность в диапазоне 3600/3500 - 2900 cal BC. Вместе с тем, учитывая тенденцию значительного сужения

⁶ Palumbi G., *The red and black. Social and cultural interaction between the Upper Euphrates and Southern Caucasus communities in the fourth and third millennium BC*, Roma, 2008.

⁷ Badalyan R.S., Avetisyan P.S., *Bronze and Early Iron Age archaeological sites in Armenia*, 2007.

⁸ Manning S.W. et al., in press.

⁹ Kakhiani K., Sagona A., Sagona C., Kvavadze E., Bedianashvili G., Massager E., Martin L., Herrscher E., Martkoplshvili I., Birkett-Rees J., Longford C., *Archaeological investigations at Chobareti in Southern Georgia, the Caucasus*, *Ancient Near Eastern Studies* 50, 2013, p. 1-138.

¹⁰ Sagona A., *Rethinking the Kura-Araxes genesis*, *Paléorient* 40/2, 2014, p. 23-46, fig. 8.

диапазона в результате статистического анализа, очевидную в случае с датами нижнего горизонта Гехарота, нельзя исключить, что все три периода КА I займут на хронологической шкале более узкий промежуток. В этой связи следует вернуться к проблеме энеолитического комплекса Годедзора, возраст которого определен по девятнадцати датам 3600-3300 гг. до н.э. Соответственно предполагается, что нижний хронологический рубеж куро-аракса не может быть ранее 3300 г. до н.э.¹¹ Если же в дальнейшем предполагаемый на основании дат Авана и Ментеш-тепе возраст комплексов КА Ia будет подтвержден, следует предположить, что население Годедзора сосуществовало, но не контактировало с окружающим «куро-аракским» населением¹².

¹¹ Аветисян П., Амаякян С., Арешян Г., Калантарян А., Мкртчян И., Пилипосян А., У подножия Арарата, Каталог выставки, Санкт-Петербург, 2008.

¹² Badalyan R., New data on the periodization and chronology of the Kura-Araxes culture in Armenia, p. 71-92.

ՎԱՂԲՐՈՆՉԵՂԱՐՅԱՆ ԻԼԻԿՆԵՐԻ ԳԼՈՒԽՆԵՐ ՄԵՃ ՍԵՊԱՍԱՐԻՑ ԵՎ ԴՐԱՆՑ ԾԻՍԱԳՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔԱՍԸ

Լարիսա Եգանյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազգիտական հետազոտությունների կենտրոն

Վաղբրոնզեդարյան ՄեՃ Սեպասարի (մ.թ.ա. XXIX/XXVIII-XXV դդ.) գտածոներում բազմաթիվ են իլիկի գլուխները: Դրանց մեջ կան ծիսական համատեքստում ի հայտ եկող ոսկրե և քարե օրինակներ: Խոշոր եղջերավոր անասունի ծնկոսկրից պատրաստված տարբեր չափերի իլիկների գլուխները տափակ են, մի կողմը՝ քիչ ուռուցիկ: Բոլորը մշակված, հղկված և հարթեցված են, ունեն միջանցիկ անցք: Քարից իլիկի գլխի անցքը բացված է երկկողմ շաղափումով, որի արդյունքում 1,5 սմ տրամագծով բացվածքը մեջտեղում նեղանում է¹:

Իլիկի գլուխներ հանդիպում են վաղբրոնզեդարյան գրեթե բոլոր բնակավայրերում և դամբարաններում: Ոսկորից իլիկի գլուխներ հայտնի են Շենգավիթից², Գառնիից³, Ծաղկահովիտից, Ծաղկալանջից⁴, Շիրակավանից⁵, Ագարակից⁶, Արևիկից⁷, Բեշտաշենից⁸: Քարից իլիկի գլուխներ գտնվել են Շենգավիթից, Ջրառատի դամբարանաբլուրից⁹, Ագարակից¹⁰, կավից տարբերակներ՝ Մինգեչաուրից¹¹, Զեթիից¹²,

¹ Համապատասխան իլիկի ոսկրե գլուխ (տրամ. 4,5 սմ, հաստ. 2 սմ, անցքի տրամ. 1սմ) հայտնաբերվեց 2005 թ. C-4 քառակուսուց, 1 մ խորության վրա (աղ. 1, նկ. 1): Իլիկի երկու միանման և միաչափ ոսկրե գլուխներ (տրամ. 7 սմ, հաստ. 0,3 սմ, անցքի տրամ. 1,4 սմ) գտնվեցին 2006 թ. D-4 քառակուսուց, 70 սմ խորության վրա, սալահատակին (տախտ. նկ. 4, 6): Իլիկի ոսկրե գլուխներ գտնվեցին նաև II տեղամասի C-2 քառակուսում, 1,30 մ խորության վրա (տրամ. 6 սմ, հաստ. 1,5 սմ, անցքի տրամ. 1սմ (տախտ. նկ. 1): Մեկ այլ ոսկրե իլիկի գլուխ (տրամ. 4,5 սմ, հաստ. 2 սմ, անցքի տրամ., 0,7 սմ, (աղ. 1, նկ. 3) գտնվեց 2012 թ. քառ. I-4-ում բացված հորի մեջ: Սպիտակ քարից իլիկի գլուխ (տրամ. 8 սմ, հաստ. 1 սմ, անցքի լայն.՝ 1,3 սմ) գտնվեց 2015 թ. տեղամաս II-ի B-I քառակուսուց, 90 սմ խորությունից (աղ. 1, նկ. 5):

² Байбуртян Е., Последовательность древнейших культур Армении на основании археологического материала, Ереван, 2011, табл. VIII.

³ Խանգաղյան Է., Գառնի IV, 1949-1966 թթ. պեղումների արդյունքները (վաղ բրոնզից մինչև ուրարտական շրջանը Ներառյալ), Երևան, 1969, նկ. 4:

⁴ Badalyan R.S., Avetisyan P.S., Bronze and Early Iron Age archaeological sites in Armenia I, Mt. Aragats and its surrounding region, British Archaeological Reports International Series 1697, 2007, PL II/3, 4, 5, p. 267; PL. II.21, p. 275.

⁵ Թորոսյան Ռ.Ս., Խնկիկյան Օ.Ս., Պետրոսյան Լ.Ա., Հին Շիրակավան (1977-1981թթ. պեղումների արդյունքները), Երևան, 2002, էջ 9, տախտ. V, նկ. 4-7. Badalyan R.S., Avetisyan P.S., նշվ. աշխ., էջ 299, տախտ. II/12-15:

⁶ Թումանյան Գ.Ա., Ագարակ I, Վաղբրոնզեդարյան բնակավայրը (2001-2008 թթ.), Երևան, 2012, էջ 30:

⁷ Ханзадян Э.В., Раннебронзовое поселение близ с. Аревик, Советская Археология, 1969, N 4, с. 157.

⁸ Жоржикашвили Л., Гогодзе Э., Памятники Триалети эпохи ранней и средней бронзы, Тбилиси, 1974, табл. 37/268.

⁹ Խանգաղյան Է., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Երևան, 1967, էջ 81:

¹⁰ Թումանյան Գ.Ա., նշվ. աշխ., էջ 30:

¹¹ Асланов Г.М., Ваидов Р.М., Ионе Г.И., Древний Мингечаур, Баку, 1959, табл. XIV/1-3. Խնկիկյան Օ., նշվ. աշխ., էջ 75:

¹² Петросян Л. А., Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до н.э.), Ереван, 1989,

Դվինից¹³, Էլառ-Դարանիից¹⁴, Գառնիից¹⁵, Ագարակից¹⁶, ևս Մեծ Սեպասարից: Դամբարանային նյութերում իլիկի գլուխներ հայտնի են Վերին Նավերից (դամբ. 36)¹⁷, Յամիճից (դամբ. 34)¹⁸, Ջրառատի դամբարանաբլուրից¹⁹: Կանանց հետ թաղված իլիկի գլուխներ գտնվել են Արթիկի N 4, 12, 13, 571²⁰ և Չեչմանիսի N 11 դամբարաններից²¹:

Թեև իլիկները հիմնականում առնչվում են մարդու տնտեսական գործունեությանը²², սակայն զոհաբերությունների համատեքստում կամ թաղումներում դրանց հանդես գալը ենթադրում է նաև ծիսական որոշակի գործառույթ: Վերջին միտքը հավանական է դառնում տարբեր մշակույթներում առկա իլիկի մասին պատկերացումներով:

Այսպես խեթական ծիսակարգում բուրդը և իլիկը կապված են ստորին աշխարհի բնակիչ օձի հետ, ինչով պայմանավորված՝ կատարվում էր «ոչխար խուզելու» հատուկ ծես, բուրդ էր նվիրվում կին-աստվածություն՝ Կամուրսեպեին: Խեթալուվիական ծեսերում «Ծեր կինը» ոչխարի հետ կատարում էր «դժբախտությունը» հեռացնելու մոգական գործողություններ²³: Նոր խեթական ծիսակարգում համանման ծես կատարվում էր Թուննավի «Պառավ կնոջ» կողմից²⁴:

Հունական դիցաբանության մեջ նման կին-աստվածություններ են Օլիմպոսում ապրող ճակատագրի անողոք երեք մոյրաները. Կլոտոն մանում էր մարդու կյանքի թելը՝ որոշելով նրա տևողությունը, Լաքեզիսը այդ թելն անցկացնում էր մարդու կյանքի խորդուբորդություններով, իսկ Ատրոպան՝ կտրում այն²⁵: Սպիտակ հագած մոյրաներն երգում էին. Լաքեզիսը եղածի, Կլոտոն՝ ներկայի, Ատրոպոսը՝ ապագայի մասին՝ ժամանակ առ ժամանակ դիպչելով իլիկին. Կլոթոն՝ աջ, Ատրոպասը՝ ձախ,

с. 31, табл. 18/4.

¹³ Кушнарева К.Х., Древнейшие памятники Двина, Ереван, 1977, с. 9, рис. 7.

¹⁴ Խանգաղյան Է., Էլառ-Դարանի, Երևան, 1978, տախտ. X/18:

¹⁵ Խանգաղյան Է., Գառնի IV, 1949-1966 թթ. պեղումների արդյունքները, Հնագիտական պեղումները Հայաստանում, Երևան, 1969, N 12, էջ 9, նկ. 4, էջ 33, նկ. 24:

¹⁶ Թումանյան Գ.Ա., նշվ. աշխ., էջ 30:

¹⁷ Սիմոնյան Հ., Վերին Նավեր, Գիրք Ա, 1976-1990թթ. պեղումների արդյունքները, Երևան, 2006, էջ 111:

¹⁸ Хачатрян Т.С., Древняя культура Ширака, Ереван, 1975, рис. 31а.

¹⁹ Խանգաղյան Է., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Երևան, 1967, էջ 81:

²⁰ Хачатрян Т.С., Артикский некрополь, Ереван, 1979, с. 19, 21, 98, 365.

²¹ Դևեջյան Ս., Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Ձորագետում, Երևան, 2001, էջ 95:

²² Ըստ ասորեստանյան գրավոր աղբյուրների վկայությունների՝ մ.թ.ա. III հազարամյակում Հայկական լեռնաշխարհից ներմուծվող տարբեր իրերի մեջ պղնձից հետո նշվում են բրոնզ գործվածքները (Янковская Н.Б., Некоторые вопросы экономики Ассирийской державы, Вестник древней истории, N 1, 1956, с. 29):

²³ Гамкрелидзе Т.В., Иванов Вяч.Вс., Индоевропейский язык и индоевропейцы, т. 2, Тбилиси, 1984, сс. 581-582.

²⁴ Иванов Вяч.Вс., Древнебалканский и общеиндоевропейский текст мифа о герое-убийце пса и евразийские параллели, (в кн: Избранные труды по семантике и истории культуры), том V, Мифология и фольклор, Москва, 2009, с. 97.

²⁵ Այդ մասին տե՛ս Կուն Լ., Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Երևան, 1956, էջ 25. Лосев А.Ф., Мойры, Мифы народов мира (այսուհետ՝ МНМ), Энциклопедия, т. 2, Москва, 1992, с. 169:

Լեքեզիսը՝ երկու ձեռքով: Պավսիանոսի վկայությամբ՝ Աֆրոդիտեն մոյրաներից հնագույնն է²⁶: Մոյրաների ձեռքերում մարդու ողջ կյանքն է, հատկապես նշանակալից պահերը՝ ծնունդը, ամուսնությունը, մահը²⁷:

Սկանդինավյան դիցաբանության մեջ մոյրաների գործառնություն ունեին ճակատագիր հյուսող, կյանքի տևողությունը և մահը սահմանող սորները²⁸, հին կրեոացիների մոտ՝ աստվածուհի Արիադեսն²⁹, իրանցիների մոտ՝ Arədvī Sūrā Anāhitā-ն, սլավոնների մոտ՝ Մոկոշը³⁰ և Պարասկևա Պյատնիցան³¹:

Որպես ջուկհակուհի կամ մանող կին էին պատկերացվում³² երկնքի աստվածուհի, «աստղերի մայր, աստվածներ ծնող» աստվածների և մարդկանց նախամայր, հանգուցյալների պաշտամունքի հետ կապված եգիպտական Նութը (Neth, Neith)³³: Գործառնությամբ Նութին մոտ է հին հնդկական դիցաբանության մեջ արևի և պողպեթություն հետ կապված, մարդկանց կեղծ ուղիներից փրկող, նաև հանգուցյալներին նախնիների ճանապարհով ուղեկցող³⁴, «ոչխարներից հագուստ հյուսող» Պուշանը³⁵:

Հայ դիցաբանության մեջ «զմեծն Անահիտ, որով կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց» «...կեցուցիչ³⁶...» աստվածուհին նաև գորգագործուհի է³⁷, որ գորգի (բուրդ, մալանչ, թել) հետ կապով բացահայտում է ճակատագիր տնօրինողի գործառնությունը:

Չնդեպրոպացիների հավատալիքներում Մայր աստվածուհին նույնացվում է հողի-երկրի հետ: Չնդարիները մտահոգվում էին Մայր հողի հետ հանգուցյալի միավորման, նրա մեջ տարալուծվելու մասին: Այդ նպատակով հատուկ կտրատում էին պատանը, որպեսզի աճյունը հավեր հողին, մի կտոր հող էին դնում պատանի տակ³⁸: Ռիզվեդայում կոչ էին անում հողին բացել իր գիրկն ու ընդունել հանգուցյալին, ինչպես մայրն է բարուրում զավակին, իսկ հանգուցյալին ասում էին. «քեզ կմոտեցնեմ Մայր հողին» կամ «Կգա օրը երբ ինձ կհանձնեն հողին»³⁹: Հույների համար մայր հողը

²⁶ Кобылина М.М., Об изображениях мойр в Северном Причерноморье, Советская археология, 1971, N 3, с. 252, 256:

²⁷ Այդ մասին տե՛ս Կուև Ն., նշվ. աշխ., էջ 25. Лосев А. Ф., նշվ. աշխ., էջ 169:

²⁸ Мелитинский Е.М., Норны, МНМ, т. 2, Москва, 1992, с. 226.

²⁹ Կուև Ն., նշվ. աշխ., էջ 250:

³⁰ Гамкрелидзе Т.В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 582. Иванов Вяч. Вс., Топоров В.Н., Мокошь, МНМ, Энциклопедия, т. 2, Москва, 1992, с. 169.

³¹ Նույնը: Հմմտ. Гамкрелидзе Т.В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 494: Հայկական գրագիտության համար տե՛ս Аванесян Л., Ковер из подземного царства (по мотивам армянской сказки „Девница-лягушка,“), Центр поддержки арменистических исследований, Армянский гуманитарный вестник, 2-3-1, Москва-Ереван, 2009, с. 40

³² Голан А., Миф и символ, Москва, 1993, с. 180.

³³ Пиотровский М.Б., Хатор, МНМ, т. 2, նշվ. աշխ., էջ 230:

³⁴ Топоров В.Н., Пушан, МНМ, т. 2, նշվ. աշխ., էջ 353:

³⁵ Ригведа, Мандалы I-X в переводе Т. Я. Елизаренковой, Москва, 1999, X, 26, 6.

³⁶ Ազաթանզեղոս, Պատմութիւն հայոց (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի), Երևան, 1983, էջ 41-47:

³⁷ Աղայան Դ., Երկեր, Երևան, 1979, էջ 343-382:

³⁸ Клейн Л.С., Древние миграции и происхождение индоевропейских народов, Санкт-Петербург, 2007, с. 41.

³⁹ Տե՛ս Րիգվեդա X, 18.10-14.

Դեմետր (Դեմետրա՝ մայր երկիր/հող) աստվածուհին Է⁴⁰, որը հելենիստական Հունաստանում «*հացահատիկի մայր*» անունը էր կրում⁴¹, սլավոնների համար՝ *Мать-Сыра Земля*-ն⁴², հնդարիների համար՝ Պրիտիվի⁴³: Մայր հողի հետ Անահիտ աստվածուհու կապը «*Ոսկեհատ Ոսկեմօր դից...*»⁴⁴ բնորոշումն է: Հայոց գութաներգերում ծպտված Անահիտը Պառավ անունն է կրում⁴⁵: Հեքիաթներում մեծ կրծքերով կին դեռ թեշիկ մանող պառավ է⁴⁶:

Պառավը խեցեգործական իրերը չար ոգիներից պահպանելու որոշակի ծես էր կատարվում: Ֆիգուրները դնում էին թրծման վառարանի մեջ, վերջում դրանք թաղում էին, հաճախ՝ գերեզմանում⁴⁷: Այթին-թեփեփ խմբակային թաղումների ուղեկցող կյուրթերում կանանց արձանիկները դիտվում են որպես տոհմի նախամայր, ընտանիքի հովանավոր⁴⁸: Տոհմի նախամայրը և պառավը ծիսական իմաստով նույնն են: Պառավի կերպարի տակ նախնական համապարփակ դերը կորցրած երկնքի տիրակալուհի, նախամայր աստվածուհին է՝ Մեծ մայրը, որ ծեսերում և հավատալիքներում պահպանվել է որպես «Ճեր կին», «Պառավ կին», կամ «Պառավ»: Պառավն ամենպիտակ է Անահիտին (Մոկոշին) Աթենասին⁴⁹:

Իլիկը նաև պահպանակ էր: Այն դնում էին ծննդկանի գլխի տակ⁵⁰: Մանածագործության և ջուլիակության հովանավոր կին աստվածություն ունեին տաջիկները, որին դիմում էին անպտուղ կանայք⁵¹:

Ծիսակարգում կյանքի տևողությունը խորհրդանշող իլիկի գլուխներին կարող են զուգադրվել միջանցիկ անցքերով շրջանաձև ծանրոց-կախիկները և անվակները, կավից կամ քարից տափօղակները: Անահիտ աստվածուհու պաշտամունքի հետ են կապված հում կավից միջանցիկ անցքով տափօղակները⁵²: Իլիկի գլուխը և անիվը հավանաբար պտույտներով զուգադրվել են երկնքի և արևի հետ: Իլիկի գլուխն արևի

⁴⁰ Тахо-Годи А.А., Деметра, МНМ, т. 1, Москва, 1991, с. 364-365.

⁴¹ Ֆրեգեր Ջ., Ոսկե ճյուղը, Երևան, 1989, էջ 466:

⁴² Иванов Вяч.Вс., Заметки о типологическом и сравнительно-историческом исследовании римской и индоевропейской мифологии, в кн: Избранные труды по семантике и истории культуры, том V, Мифология и фольклор, Москва, 2009, с. 223.

⁴³ Клейн Л.С., նշվ. աշխ., էջ 76:

⁴⁴ Ազաթանգեղոս, 1983, 809, էջ 453:

⁴⁵ Բդոյան Վ., Հայկական աղամաններ, Երևան, 1986, էջ 27:

⁴⁶ Մարտիրոսյան Հր., Լեռնային ակունքի ֆառերը. Արշալույսի դիցուհին և գլխի ու մորթու գոհածերը վիշապակոթողների իմաստաբանության հենքում, Վիշապ քարակոթողները, Երևան, 2015, էջ 156:

⁴⁷ Пещерова Е.М., Гончарное производство Средней Азии, Москва-Ленинград, 1959, с. 126.

⁴⁸ Массон В.М., Сараниди В.Л., Среднеазиатская терракота эпохи бронзы, Москва, 1979, с. 85.

⁴⁹ Иванов Вяч.Вс., Топоров В.Н., Мокошь, МНМ, т. 2, 1992, с. 169. Гамкрелидзе Т.В., Иванов Вяч.Вс., նշվ. աշխ., էջ 582:

⁵⁰ Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, Երևան, 1981, էջ 50:

⁵¹ Гамкрелидзе Т.В., Иванов Вяч. В., նշվ. աշխ., էջ 582:

⁵² Խաչատրյան Հ., Բենիամինի անտիկ դաստակերտի հելենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը (մասն II), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածու, II, Գյումրի, 1999, էջ 58:

խորհրդանիշ է⁵³: Հավանաբար նման համադրումից է ձևավորվել պատկերացումը, թե բախտի աստվածուհին ձեռքով արագ պտտում է աշխարհի անիվը⁵⁴: Հայոց հավատալիքներում «բախտի անիվը», Վանի մոտ, խոր քարանձավում գտնվող ճախարակն է⁵⁵: Չուգադրելի է նաև Լոռիում թխվող, հացի հորեր խորհրդանշող «կլկլա» կամ «ղուլաճ» կոչվող կլոր, մեջը ծակ հացերը, որոնք Նոր տարվա օրն անցկացնում էին գոմեշի և եզան եղջյուրներին, որպեսզի այդ տարի հորը լցվեր ցորենով⁵⁶: Դրանցով նաև Նոր տարվան գուշակություններ էին անում⁵⁷: Մայր աստվածուհին նույնացվում էր հողի հետ: Հողից ծնված ամեն ինչ կրկին վերադառնում է հող: Այդ կապի խորհրդանիշը նաև հորն է:

Դամբարանում իլիկ դնելը, որպես Մեծ մոր կամ Նախամայր աստվածուհու խորհրդանիշ, հավասարազոր է նրա պատկերը կամ արձանիկը հանգուցյալի հետ դնելուն: Դրանք պետք էին գալու հանդերձյալ կյանքում և կարող էին վնասել անդրաշխարհի չար ուժերին:

Հնագույն հավատալիքները ծնել են ձեռքին իլիկ և թել մանող կին աստվածության մասին պատկերացումները: Վերջիններս արտացոլված են աստվածուհիներին տիպաբանորեն մոտ և ծիսական նույն գործառույթ ունեցող դիցաբանության մեջ կանանց կերպարներում (խեթալուվիական «Պառազ կին», խեթական «Ծեր կին», հին հունական մոյրաներ, հին գերմանական նորներ, իրանական Arədvī Sūrā Anāhitā, սլավոնական Մոկոշ, հայոց Անահիտ, բախտի անիվը պտտող կին): Թեև կին աստվածություններն են որոշում մարդու կյանքի տևողությունը, սակայն կանխորոշումը և ճակատագիրը ենթարկվում են արական աստվածների: Օրինակ՝ խեթերի մոտ սպիտակ բուրդը մանելու ծեսը, որ պայատում կատարում էր թագավորը՝ երկու անգամ ոլորելով իրեն փոխանցված արդեն ոլորած սպիտակ բուրդը և երկու անգամ պտտելով թել ոլորելու հարմարանքը⁵⁸: Հավանաբար թելն արդեն ոլորվել էր «Ծեր կնոջ» կողմից⁵⁹: Հունական դիցաբանության մեջ ճակատագիրը ենթարկվում է միայն Չևսին⁶⁰, հայ առասպելաբանության մեջ՝ «գրող», երազացույց, եցագահան⁶¹ Տիրին, ով մահվան ոգին է⁶², Կյանքի կանխորոշողն ու ճակատագիրը տնօրինողը:

⁵³ Киквидзе Я.А., Земледелие и земледельческий культ в древней Грузии, Тбилиси, 1988, с. 164-166.

⁵⁴ Հոմերոս, Իլիական, գրաբարից թարգմ. Մկրտիչ Խերանյանը, Երևան, 1987, Ծանոթագրություններ, էջ 476:

⁵⁵ Սրվանձտյանց Գարեգին, Երկեր, Երևան, 1978, էջ 88:

⁵⁶ Լալայեան Ե., Նշանաւոր տօներ, Ազգագրական հանդես, Գիրք X, էջ 249:

⁵⁷ Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, Երևան, 2005, էջ 26:

⁵⁸ Ардзинба В.Г., Ритуалы и мифы древней Анатолии, Москва, 1982, с. 212.


⁵⁹ Խեթական թագավորն իրեն համարում էր ամպրոպի աստծու զավակ (Արդզինբա Վ.Գ., Заметки к текстам хеттских ритуалов, Вестник древней истории, 1977, 3, с. 123): Ենթադրվում է, որ խեթական տիրակալ Թուդհալիա IV դեռևս կենդանության օրոք երկրպագվում էր որպես աստվածություն (Արդզինբա Վ.Գ., նշվ. աշխ., 1982, էջ 55):

⁶⁰ Кобылина М.М., նշվ. աշխ., էջ 256:

⁶¹ Ազաթանզեղոս, Պատմութիւն Հայոց, (աշխարհաբար թարգմ. եւ ծանոթ. Արամ Տեր-Ղեւոնդյանի), Երևան, 1983, 778, էջ 437:

⁶² Харатян З., Культурные мотивы семейных обычаев и обрядов армян, Армянская этнография и фольклор, 17, Ереван, 1989, с. 31.

Այսպիսով, իլիկները կապված են և՛ իգական, և՛ արական աստվածությունների հետ. «կյանքի թելը»՝ իգական, իսկ ճակատագիր տնօրինելը՝ արական սկզբի հետ: Ասվածի համատեքստում չի բացառվում, որ իլիկի մասին համապատասխան պատկերացումներ կարող էին գոյություն ունենալ նաև բրոնզեդարյան Չայաստանում, ինչի մասին է վկայում այդ առարկաների հաճախակի գտածոները տարբեր հնագիտական հուշարձաններում:



Աղյուսակ 1

**ԳՆԴԵՎԱԶԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ 2016-2017 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Հակոբ Սիմոնյան, Կարեն Ծերեթյան, Մելինե Սիմոնյան,
Իսկուհի Համբարյան, Գրիգոր Վարդանյան
Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն ՊՈԱԿ,
ՀՀ Մշակույթի նախարարություն

Ներածություն. Ըստ հնագիտական դիտարկումների՝ մ.թ.ա. III հազարամյակի կեսին Հայաստանի սոցիալ-քաղաքական, տնտեսական, մշակութային և կրոնա-բարոյական կյանքում տեղի են ունեցել լուրջ տեղաշարժեր, որոնք մեր տարածաշրջանում կանխորոշել են պատմամշակութային զարգացման հետագա ընթացքը: Մ.թ.ա. 2500-2400 թթ. միջակայքում, մեզ դեռևս անհայտ քաղաքական ցնցումների հետևանքով, կործանվել է նստակյաց կենցաղավարությամբ հայտնի շենգավթյան սոցիալ-մշակութային վիթխարածավալ ընդհանրությունը: Դրան փոխարինել են միջին բրոնզի դարի մշակույթները, որոնց տնտեսության առավել բնորոշ հատկանիշներից է եղել շարժուն անասնապահությունը: Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջանների և Հարավային Կովկասի՝ Արաքս գետից դեպի հյուսիս ընկած և մինչև Մեծ Կովկասյան լեռնաշղթան ձգվող տարածաշրջանի հնագիտության համար, թերևս, կարևոր խնդիրներից է շենգավթյան մշակույթի եզրափակիչ փուլից միջին բրոնզի դարի անցման շրջանի հուշարձանների բացահայտումը և ուսումնասիրությունը:

XX դարի երկրորդ կեսին՝ մասնավորապես վերջին քառորդում կատարված լայնածավալ պեղումներն ի հայտ բերեցին մի շարք ուշագրավ հուշարձաններ, որոնք վերագրվեցին վաղից միջին բրոնզի դարի անցման փուլին և պայմանականորեն կոչվեցին «վաղ դամբանաբլուրների» մշակույթ: Առանձնապես տպավորիչ են Իորի-Ալազանիի միջագետքի, Մարտկոպիի, Ծալկայի, Բեդենի և Թեռեքի վիթխարի դամբանաբլուրները՝ իրենց ինքնատիպ և ճոխ թաղման գույքով: Հայաստանի Հանրապետության տարածքում միջին բրոնզի դարի վաղ փուլի հուշարձաններ հայտնաբերվեցին մի քանի տասնամյակ ավելի ուշ, քան Հարավային Կովկասում: Գուցե դրանով է նաև պայմանավորված, որ գիտական շրջանակներում տարածում է ստացել այն տեսակետը, թե ժամանակակից Վրաստանի և Ադրբեջանի տարածքներում փաստագրված «վաղ դամբանաբլուրների» հնագիտական մշակույթը նախորդում է Հայաստանի Հանրապետության տարածքի միջին բրոնզի դարի հուշարձաններին և, կամ, ՀՀ տարածքի Լճաշենի N 55, Արտաշավանի N 5, Զարաշամբի Մեծ դամբարանները վերաբերում են «վաղ դամբանաբլուրների» մշակույթի ավարտական փուլին¹:

Այսպիսով, նման մոտեցման հետևանքով Հայաստանում վաղ բրոնզի դարի շենգավթյան մշակույթի՝ պատմության թատերաբեմից հեռանալուց (միջինացված՝ մ.թ.ա. 2400 թ.) մինչև միջին բրոնզի դարի վաղ փուլի հուշարձանների հանդես գալը (մ.թ.ա. մոտ 2200 թ.) առաջացել էր մշակութա-ժամանակային բաց: Այն լրացնելու համար երիտասարդացվել էին Շենգավթի վաղ բրոնզի դարի դամբարանները և

¹ Ավետիսյան Պ., Հայաստանը Զ.ա. III հազարամյակի երկրորդ կեսում (բնակեցման փուլերի և ժամանակագրության հարցերի շուրջ), Հայաստանի հնագույն մշակույթը, հ. 2, խմբ.՝ (Զալանթարյան Ա., Հարությունյան Ս.), Երևան, 2002, էջ 16:

շենգավթյան մշակույթի եզրափակիչ փուլի այլ համալիրներ: Արդյունքում առաջացել էր արհեստածին ժամանակագրական խզում Հայաստանի և հարևան տարածաշրջանների հնագիտական մշակույթների միջև: Հնագիտական այս խնդիրների բացահայտման գործընթացում իրենց կարևոր ներդրումը կարող են ունենալ Գնդեվազի նորահայտ դամբանաբլուրների ուսումնասիրությունները (նկ. 1):

Տեղադրությունը. «Գնդեվազի դուզ» հանդամասն զբաղեցնում է Արփա գետի ձախափնյա սարավանդը, որը Ջերմուկ տանող մայրուղու աջ և ձախ կողմում է՝ Գնդեվազ գյուղից մոտ 2 կմ, Ջերմուկից 12 կմ հարավ-արևելք: Մորֆոլոգիական առումով տարածքը հյուսիսից-հարավ իջնող մեղմաթեք սարավանդ է, որն ավտոճանապարհով բաժանվում է երկու մասի (նկ. 2): «Լիդիան Արմենիա» ընկերությանը պատկանող հանքարդյունաբերության գոտին սարավանդի արևելյան կեսում է: Այն արևելքից և հարավից եզերվում է հեղեղատի խորադիր կիճով: Սարավանդի արևելյան հատվածի երկարությունը (հյուսիսից-հարավ) շուրջ 500 մ է, լայնությունը (արևմուտքից-արևելք)՝ 200 մ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1650-1750 մ:

Երկրաբանական կառուցվածքը. Ամուլ սարի հանքարդյունաբերության նախապատրաստումների ընթացքում այստեղ բացվել են մի քանի երկրաբանական կտրվածքներ, որոնք ցուցադրում են լավային հին հոսքերը, «պատմում» դրանց կազմի և կառուցվածքի մասին: Ըստ մեր դիտարկումների՝ նեոգենյան հրաբխային ժայթքումներն այստեղ արտանետել են կարմիր, մոխրագույն և սև բազալտներ, անդեզիտաբազալտներ և անդեզիտներ²: Դրանք սարավանդի վրա ստեղծել են բլրակներ և քարակարկառներ: Լավային հոսքերը տեղ-տեղ ինտենսիվորեն շլակացված են: Հետագա դարերի ընթացքում լավայի մակերեսը ծածկվել է մինչև 1 մ հաստությամբ տարաբնույթ նստվածքներով: Տարածքի արևելյան և հարավային կողմում՝ դեպի հեղեղատն իջնող սարավանդերին, դիտվում են սողանքային երևույթներ:

Նորահայտ դամբարանադաշտը. 2014 թ. «Լիդիան Արմենիա» հանքարդյունաբերող ընկերությանը հատկացված PL21 տեղամասում վերգետնյա հետազոտությունների արդյունքում ՀՀ մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի և «Մշակութային ժառանգություն» ՀԿ-ի միացյալ արշավախումբը փաստագրել է 11 դամբանաբլուր (նկ. 2): Ըստ արշավախմբի ղեկավար Հակոբ Միմոնյանի դիտարկման՝ Գնդեվազի բոլոր դամբարանները, որոնք գտնվում են միմյանց մոտ կամ տասնյակ, իսկ առանձին դեպքում հարյուրավոր մետրեր հեռավորությամբ, հիմնականում կառուցվել են կոնաձև, ցածրադիր բնական բլրակների վրա: Դամբանափոսերը խորացրել են մինչև բնական ժայռի ելքերը, որոնց վրա էլ կատարել են թաղումները:

Որոշ դամբարանների վրա կուտակել էին շրջակա արտերից հավաքած մանր քարեր (երբեմն մինչև 1 մ հզորությամբ): Այս իրավիճակը որոշ հնագետների շփոթեցրել էր, և նրանք այս բլրակները բնորոշել էին որպես զուտ երկրաբանական գոյացումներ: Դրա հետևանքով վտանգվել էր փրկարարական պեղումների ծրագիրը, և արշավախմբի աշխատանքների սկզբնական փուլն իրականացվել է պատվիրատուի հետ դժվարին բանակցությունների պայմաններում:

Փորագիծ-պատկերազարդ քարեր. Տարածքում փաստագրվել են փորագիծ նշաններով մի քանի տասնյակ (շուրջ 40) քարեր (նկ. 3), որոնց պատկերներն աղերսվում են Գոգարանի և Ապարանի ջրամբարի կրոմլեխների վրա եղած խազանշան-

² Геология СССР, Армянская ССР, том XLIII, полезные ископаемые, Ред. Асланян А.Т., Гулян Э.Х., Москва, 1975, с. 101.

ներին³: Նման փորագրություններով քարեր մեր արշավախումբը փաստագրել է նաև Ամուլ սարի հանքարդյունաբերության փոխակրիչի տարածքում, Սյունիքի մարզում (Գորհայք), Արագածոտնում (Հարթավան) և այլուր: Առ այսօր այս պատկերները չունեն իրենց միանշանակ մեկնաբանությունը⁴: Ուշագրավ է, որ դրանք հիմնականում փաստվել են կրովաքարերի քարերի վրա և պաշտամունքային այլ բնույթի կառույցներում: Մեր կարծիքով այս պատկերները մարդու կողմից ստեղծած, մեզ դեռևս անհայտ, որոշակի տեղեկատվություն պարունակող փորագրություններ են, որոնք առաջվում են հին մարդկանց ծիսա-կրոնական պատկերացումների հետ:

Դամբարանադաշտի ուսումնասիրման պատմությունը և դամբարանների կառուցվածքը. Դամբարանադաշտը՝ առանց վկայագրի, պահպանական գոտու և այլ հիմնավորող փաստաթղթերի, գրանցվել է 2002 թ. կազմած ՀՀ Վայոց ձորի հուշարձանների պետական ցուցակում: «Լիդիան Արմենիա» հանքարդյունաբերական ընկերության ֆինանսավորմամբ՝ 2016-2017 թթ. մեր արշավախումբն այստեղ իրականացրել է փրկարարական պեղումներ: Դամբանաբլուրներից 3-ը (NN 1, 2, 3) պեղել ենք 2016 թ., 5-ը (NN 4, 6, 8, 9, 10)՝ 2017 թ.: Դրանք, առանց բացառության, քարահողային կոնստրուկցիաներ են՝ ծածկված մանր ու միջին չափերի տարբեր գույնի, հաճախ՝ ծակոտկեն բազալտից ձևավորված քարե «գրահով»: «Չրահի» մեջ հանդիպում են նաև անդեզիտների բեկորներ և այլ քարատեսակներ: Դամբանաբլուրները ստորաբաժանվում են երկու տիպի. ա) քարե «գրահը» չունի կանոնավոր եզրագիծ և բ) դամբանաթմբի պարագծով, մեծ քարերով շարված են կրովաքարեր: Վանի թագավորության ժամանակաշրջանում դամբարանների մեծ մասում կատարվել են իջեցուկ թաղումներ:

N 4 դամբարանը. Քարահողային լիցքով դամբանաթումբը կառուցվել է գրեթե հարթ վայրում՝ «Գնդեվազի դուզ» հանդամասի հարավային մասում՝ Գնդեվազ գյուղից ուղիղ գծով 2500 մ հարավ-արևելք, ծովի մակերևույթից 1659 մ բարձրությամբ տեղանքում: Դամբանաթմբի արևմտյան հատվածը փոքր-ինչ բարձր էր արևելյանից: Ծմահողի ներքո, 30-50 սմ հաստությամբ սևահողի վրա կուտակված էին հրաբխային մեծ և փոքր քարաբեկորներ և սալաքարեր, որոնք ձևավորում էին պաշտպանիչ շերտը՝ «գրահը»: Սրա եզրերը հյուսիս-արևելքում և արևմուտքում մասնակիորեն խաթարված էին: Դամբանաթմբի հարավային եզրում դրված էր մի մեծ բազալտ քար: Այստեղ դիտվում էին նաև ժայռի ելքեր: Դամբանաթմբի «գրահի» տարբեր հատվածներում դիտվում էին շրջանաձև դասավորված քարեր, որոնք, սակայն, չէին պարունակում որևէ հնագիտական տեսականի (նկ. 4):

Դամբանաթմբի չափերն էին՝ տրամագիծը հյուսիսից հարավ՝ 18 մ, արևելքից արևմուտք՝ 16 մ, բարձրությունը գետնի մակարդակից՝ 70 սմ, դամբանախցի հատակից՝ 130 սմ: Քարե «գրահի» տրամագիծը (հյուսիսից հարավ) 17,1 մ էր (նկ. 5): Սրանից 2-3 մ դեպի հարավ-արևմուտք N 5 դամբանաբլուրն է, որի միայն «գրահն» է պեղվել:

³ Մուրադյան Ֆ.Մ., Նորահայտ նշանագրեր Ապարանի շրջանից, Հնագիտական աշխատանքները Հայաստանի Նորակառուցներում (1986-1987 թթ. պեղումների արդյունքները), Երևան, 1992, էջ 103-105, աղ. CIII-CXV:

⁴ Ըստ Ա. Մովսիսյանի զգուշավոր ենթադրության՝ դրանք արձանագրություններ են, մի տեսակետ, որը լուրջ հիմնավորման կարիք ունի (Մովսիսյան Ա., Հայկական մեհենագրություն, Երևան, 2003, էջ 173):

N 4 դամբանաթմբի կենտրոնական մասում հարթ հրապարակ էր՝ ծածկված մանր քարերի լիցքով: Սրա ներքո էր դամբանախուցը: Վերին շերտի գտածոները հիմնականում խեցեղենի բեկորներ էին, վանակատի մեծ ու փոքր ցլեպներ: Դրանցից առանձնանում էին կայծքարե շեղբը՝ ատամնածև հարդարված կտրող եզրով (նկ. 8/6) և սև անոթի բեկորը՝ փորագիծ նախշով: Հետագայում պարզվեց, որ վերջինս դամբարանում դրված կճուճից մեկի բեկորներից է, որը դուրս էին նետել գանձախույզները՝ դամբարանը թալանելիս: Վերին շերտի մաքրման ժամանակ հայտնաբերվել էր նաև մի քանի, թերևս, կենդանու բեկոտված ոսկոր:

Դամբարանը լցված էր բաց շականկագույն հողի հետ խառնված մանր ու միջին քարերի խիտ զանգվածով: Զարե «գրահի» ներքո բացվեց ժայռե հիմքի վրա, կողքի դրված բազալտե՝ 53x50 և 55x60 սմ չափի, թերթածև քարերի շարվածքով եզերված, ձվածև հատակագծով սաղո դամբանախուցը, որի պատերը ներառված էին դամբանաթմբի լիցքի մեջ: Ժայռե հատակը պատված էր կաթնագույն կրային նստվածքով: Երկայնական առանցքով դամբարանը կողմնորոշված էր արևելքից արևմուտք, հյուսիս-արևելք և հարավ-արևմուտք շեղումով: Դամբարանի քարաշար հատվածի չափերն էին. երկարությունը՝ 312 սմ, լայնությունը՝ հյուսիս-արևմուտքում՝ 155 սմ, կենտրոնական հատվածում՝ 255 սմ, հարավարևելյան եզրում՝ 210 սմ: Պատերի բարձրությունը՝ 10-20 սմ:

«Չրահի» քարերի վերևից չորրորդ շերտի ներքո՝ դամբարանի մեջ, բացվեցին կենդանու քայքայված ոսկորներ՝ մի քանի բեկոր և մեկ խողովակածև ոսկորի միջնամաս, ինչպես նաև վերին շերտի քարերի ճնշման հետևանքով տեղում ճզմված մի կավանոթ: Սրա բեկորներից դեպի արևելք բացվեց մարդու՝ արևելքից արևմուտք ձգվող ազդոսկրեր՝ քայքայված խնձորակներով: Պահպանվել էին հատվածներ ոտքերի և ձեռքերի խողովակածև ոսկորներից, կմախքի հատուկներ այլ ոսկրամասեր և գանգի բեկորներ: Ստորին ծնոտը, որը բաժանված էր երեք մասի, դամբարանի հյուսիսային պատի տակ էր, դամբանաթմբի գագաթից 90 սմ խորությամբ՝ ատամնաշարով ուղղված դեպի վեր:

Թմբի գագաթից 104 սմ խորությամբ ազդոսկրերի և սրունքոսկրերի միջակայքում ընկած էր գանգի խիստ քայքայված ծոծրակային հատվածը: Սրանից հյուսիս-արևմուտք բացվեց 36 սմ երկարությամբ սրունքոսկրը՝ հյուսիսից հարավ ձգվող դիրքով, որի հետ 90° անկյուն էր կազմում ազդոսկրը: Երկրորդ ոտքի ազդոսկրը և սրունքոսկրը՝ ծնկան հողից ծաված, ճիշտ անատոմիական դիրքով էին: Իրենց տեղում էին նաև խիստ քայքայված կոնքի ոսկրերը: Ազդոսկրերից դեպի արևելք բացվեց բազկոսկրը, որի ուսամերձ հողին կից էր երկրորդ բազկոսկրի ստորին հատվածը:

Բացակայում էին կրծքավանդակը, ողնաշարը, ոտքի և ձեռքի ֆալանգները և այլն: Որոշակի է, որ, չնայած թերի վիճակին, կմախքի առանձին հատվածներ թաղման ժամանակ կապակցված են եղել փափուկ հյուսվածքներով: Դատելով ոսկորների դիրքից, կարելի էնթադրել, որ այստեղ կատարվել է անհատական թաղում՝ դիամասնատման ծեսով: Չի բացառվում նաև, որ կմախքի նախնական դիրքը խաթարել են դամբարան թափանցած գանձագողերը: Դամբարանում հայտնաբերվել են նաև խոշոր և մանր եղջերավոր կենդանիների խողովակածև ոսկորներ ու ատամներ:

Խցի ներսում բացվել է 6 կավանոթ՝ բոլորն էլ տեղում ճզմված, բեկոտված վիճակում, ինչպես նաև 3 այլ կավանոթի բեկորներ: Հայտնաբերվել են նաև 60-ից ավելի վանակատից ցլեպներ և պարզունակ գործիքներ: Դրանց առկայությունը

դամբարանում, մեր կարծիքով, պայմանավորված էր չար ոգիներին դամբարանից վանելու հնագույն հավատալիքներով, որոնք լայնորեն տարածված էին հին Հայաստանում⁵:

Դամբարանից հայտնաբերվել է նաև վանակատե 2 նետասլաք, բրոնզե 3 կիսագնդաձև թիթեղ, որոնք հավանաբար կարված են եղել զրահաբաճկոնին, արծաթե դրվագազարդ թիթեղի բեկոր, ծովային կոնաձև խխունջի սղոցված գազաթ՝ ապրանքադրամ:

Թաղման գույքը՝ կավանոթներ. Ընդհանուր առմամբ՝ դամբարանում փաստվել է ամբողջական և բեկոտված 9 կավանոթ: Բոլոր կավանոթները ձեռածեփ են, Նրբախեցի: Ըստ կավազանգվածի կազմի, տեխնիկական հատկանիշների և գույնի՝ խեցեղենը ստորաբաժանվում է երկու խմբի. ա) խոհանոցային՝ աղյուսագույն, կոպիտ հարդարած, անզարդ (2), բ) սեղանի սպասք՝ հիանալի կոկած, սև փայլեցված, զարդանախշ (7): Համանման իրավիճակ փաստագրվել է նաև Արցախում առ այսօր միակ լավ ուսումնասիրված միջին բրոնզի դարի Երկարուկ բլուր (Ուզերլիկ թեփե) բնակատեղիի ստորին հորիզոնում: Ըստ Կ. Կուշնարյովայի՝ սև և աղյուսագույն կավանոթների կավազանգվածի միմյանցից էական տարբերությունը պայմանավորվել է տարաբնույթ գործառնական նշանակությամբ կավանոթների համար տարբեր կավատեսակների օգտագործմամբ⁶:

Սեղանի սպասքը Նրբախեցի է և ունի հիանալի հղկած-փայլեցված սև մակերես և աղյուսագույն աստառ: Պատրաստվել են լավ հունցած ավազախառն, մանրահատիկ կավից: Այս խմբի կավանոթները երկու տիպի են՝ կճուճներ և սափորներ, որոնք արտաքուստ զարդարված են խորադիր և նուրբ-փորագիծ գծերով: Կճուճներին բնորոշ են վեցաթերթ, իսկ սափորներին՝ իննաթերթ վարդակները, որոնք, թերևս, մատնանշում են 6 և 9 թվերի մոզական ընկալումը հին Սյունիքում: Կավանոթները պատրաստել և զարդարել են արհեստավարժ վարպետները՝ հանպատրաստից, առանց տրաֆարետի կամ նախօրոք արված էսքիզի, որի հետևանքով հիմնական մոտիվները՝ հավասարասրուն եռանկյունիներն ու շեղանկյունիները տարաչափ են:

ա) Կճուճ՝ հարթ հատակով, կիսագնդաձև՝ վերին մասում փոքր-ինչ փքված իրանով, կենտրոնում ներճկված վզիկով, դուրս հակված շրթով: Շրթի ուռուցիկ գագաթը թեթևոր ցածրանում և հիմքի մոտ ավարտվում է սրացող երիզով: Չափերը. հատակի տրամագիծը՝ 70, իրանինը՝ 170, վզիկինը՝ 110, բերանինը՝ 120, բարձրությունը՝ 127, վզիկինը՝ 25, զարդագոտու լայնքը՝ 45, պատերի հասությունը՝ 5 մմ:

Չարդանախշը. հատակի կենտրոնում նուրբ-փորագիծ հատվող գծիկներով ձևավորված է շեղանկյունիներից կազմված ժապավեն՝ ներառված զուգահեռ գծերի մեջ: Վզիկի հիմքում ժապավենաձև գոտի է՝ ձևավորված իրարից 10-13 մմ հեռավորությամբ փորված գծերով: Սրա մեջ ներգծված է զիզգագ, որը ստեղծում է սուր ծայրերով վեր և վար ուղղված հավասարասրուն եռանկյունիներից կազմված հաջորդական շղթա: Եռանկյունիներից կենտրոնականի ներսում երկուական շեղ գծերից կազմված ժապավեններ են, որոնք լցված են ուղղահայաց, կարճ գծիկներով: Արդյունքում

⁵ Симонян А.Е., Обсидиан и кремь как атрибуты погребального обряда, Вопросы изучения армянской народной культуры (Культура и язык), Тезисы докладов VIII конференции молодых ученых, Ереван, 1988, с. 79-81.

⁶ Кушнарёва К.Х., Новые данные о поселении Узерлик-Тепе, около Агдама, Труды Азербайджанской археологической экспедиции, том II, 1956-1960 гг., Москва-Ленинград, 1965, с. 81.

ստեղծվել է շեղանկյունիներից բաղկացած դրասանգ: Այս զարդը կիրառվել է շենգավթյան մշակույթի երրորդ փուլից⁷, շարունակվել միջին բրոնզի դարի վաղ փուլի կավանդների զարդանախշում՝ Երկարուկ բլուրի ստորին շերտ⁸, Դաշուզի N 6 դամբարան⁹, Սիսիան 2¹⁰ և զարգանալով տիրապետել մ.թ.ա. II հազարամյակի առաջին կեսի սևան-արցախյան մշակույթի գունազարդ խեցեղենի զարդանախշում: Իրար հաջորդող մյուս եռանկյունիները լցված են հակադիր ձգվող շեղ գծիկներով, որոնց շնորհիվ վար և վեր ուղղված եռանկյունիները հստակ գատորոշվում են միմյանցից:

Հորիզոնական ժապավենից ցած անցնում է հավասարասրուն եռանկյունիներից կազմված վեցաթերթ վարդակ: Սուր ծայրերով ցած ուղղված եռանկյունիները լցված են ուղղահայաց և շեղ, միմյանց հետ հատվող նուրբ-փորագիծ գծերով, որոնք ձևավորում են շեղանկյունիներից կազմված բազմաշարք դրասանգ (նկ. 6/4):

բ) Կճուճ՝ հարթ հատակով, գնդաձև իրանով, դեպի շուրթը կոնաձև նեղացող վզիկով, դուրս հակված շրթով: Շրթի ուռուցիկ գազաթը թեքդիր ցածրանում և հիմքի մոտ ավարտվում է սրացող երիզով: Չափերը. հատակի տրամագիծը՝ 81, իրանինը՝ 163, վզիկինը՝ 120, բերանինը՝ 125, բարձրությունը՝ 120, վզիկինը՝ 15 մմ, զարդագոտու լայնքը՝ 30, պատերի հաստությունը՝ 5 մմ:

Չարդանախշը. վզիկի հիմքում 6 մմ լայնությամբ ժապավենաձև գոտի է՝ եզերված խորաքանդակ-ներճկված հորիզոնական գծերով, որոնց միջակայքը լցված է աջից դեպի ձախ ցածրացող շեղ գծիկներով: Հորիզոնական ժապավենից ցած անցնում է մեծադիր զիզգազ՝ առաջացնելով հավասարասրուն եռանկյունիներից կազմված վեցաթերթ վարդակ: Սուր ծայրերով ցած ուղղված եռանկյունիները լցված են աջից դեպի ձախ ցածրացող նուրբ-փորագիծ շեղ գծիկներով (նկ. 6/3):

գ) Կճուճ՝ հարթ, փոքր-ինչ ուռուցիկ հատակով, գնդաձև իրանով, ներճկված վզիկով, դուրս հակված ուռուցիկ շրթով, որի գազաթը թեքդիր ցածրանում և հիմքի մոտ ավարտվում է սրացող երիզով: Չափերը. հատակի տրամագիծը՝ 100, իրանինը՝ 205, վզիկինը՝ 124, բերանինը՝ 138, բարձրությունը՝ 155, վզիկինը՝ 18, զարդագոտու լայնքը՝ 43, պատերի հաստությունը՝ 7 մմ:

Չարդանախշը. վզիկի հիմքում 8 մմ լայնությամբ գոտի է, եզերված խորաքանդակ գծերով: Սրանց միջակայքը լցված է աջից դեպի ձախ՝ լայն, ձախից դեպի աջ՝ նեղ, խիտ դասավորված նուրբ-փորագիծ գծիկներով: Վերջիններս կարծես թե միավորում են լայն երկու գծերը, ստեղծելով դրասանգ: Այս գոտու ներքո պատկերված է հիմքով ժապավենին հավասար 6 մմ և 1 փոքր հավասարասրուն, սուր ծայրերով ցած ուղղված եռանկյունիներից կազմված յոթաթերթ վարդակ: Փոքր, թերևս կենտրոնական եռանկյունու մեջ ներգծված են միմյանց հետ հատվող շեղ գծեր՝ 4-ը աջից դեպի ձախ, 11-ը՝ ձախից դեպի աջ ուղղվածությամբ: Դրանք ձևավորել են մի քանի շարք դրասանգներ: Մյուս վեց, ավելի մեծ եռանկյունիները եզերված են ժապավեններով՝ ձևավորված խորաքանդակ, 7 մմ հեռավորությամբ ձգվող գծերով, որոնք լցված են խիտ դասա-

⁷ Simonyan H.E., The archaeological site of Shengavit: an ancient town in the Armenian Highland, Fundamental Armenology 1, 2015.

⁸ Кушнарева К.Х., ук. соч.

⁹ Ахундов Т., Северо-западный Азербайджан в эпоху энеолита и бронзы, Баку, 2001, с. 112-114.

¹⁰ Avetisyan P., Badalyan R., Gevorkyan A., Khnkikyan O., The 1998 excavation campaign at the Middle Bronze Age necropolis of Sisian, Armenia, Studi Micenei ed Egeo-Anatolici XLII/2, Roma, 2000, p. 161-173.

վորված փորագիծ գծիկներով: Եռանկյանկյունիներից մեկի սուր անկյունից դեպի վեր բարձրանում է իրար մեջ ներգծված սուր անկյունների շարքը, որը կարծես մխրճվում է դրա երկու կողմից, եռանկյան հիմքից ցած իջնող ուղղահայաց և խիտ գծիկների մեջ: Այս զարդանախշը կրում է վաղ բրոնզի դարի շենգավթյան մշակույթի ազդեցությունը և բնորոշ է սևան-արցախյան մշակույթի վաղ փուլին (Նկ. 7/2):

դ) Սափոր՝ հարթ հատակով, փքված իրանով, ներճկված վզիկով, դուրս հակված շրթով, որի ուռուցիկ գագաթը թեքդիր ցածրանում և հիմքի մոտ ավարտվում է սրացող երիզով: Չափերը. հատակի տրամագիծը՝ 105, իրանինը՝ 255, վզիկինը՝ 140, բերանինը՝ 160, բարձրությունը՝ 235-240, վզիկինը՝ 35, զարդագոտու լայնքը՝ 80, պատերի հասությունը՝ 7 մմ:

Չարդանախշը. վզիկի հիմքում խորաքանդակ-ներճկված, առվակածև գոտի է, որից ցած հավասարասրուն, սուր ծայրերով ցած ուղղված եռանկյունիներից կազմված իննաթերթ վարդակ է: Եռանկյունիների կողեզրերը փոքր-ինչ ներճկված են դեպի ներս, որի շնորհիվ դրանց միջակայքի անզարդ հատվածներն ունեն ձգված կամարների տեսք: Եռանկյունիների կենտրոնական մասում, հիմքից դեպի վեր բարձրանում են միմյանց մեջ ներգծված եռանկյունիների ուղղահայաց շարքեր, որոնք դեպի վեր լայնանալով, ստանում են ձկնակերպ մարմնի տեսք: Սրանց աջ և ձախ կողմերում հակադիր ուղղություններով նուրբ-փորագիծ շեղ գծիկներ են, որոնք պատում են «ձկների գլուխների» շրջակա տարածքները (Նկ. 6/1):

ե) Սափոր կամ փոքր կարաս՝ հարթ հատակով, վերին մասում փքված իրանով, ներճկված վզիկով, դուրս հակված ուռուցիկ շրթով, որի ուռուցիկ գագաթը թեքդիր ցածրանում և հիմքի մոտ ավարտվում է սրացող երիզով: Չափերը. հատակի տրամագիծը՝ 145, իրանինը՝ 365, վզիկինը՝ 180, բերանինը՝ 230, բարձրությունը՝ 675, հատակից մինչև իրանի փքված մասինը՝ 190, վզիկինը՝ 65, զարդագոտու լայնքը՝ 180, պատերի հասությունը՝ 15 մմ:

Չարդանախշը. վզիկի հիմքում խորաքանդակ-ներճկված, առվակածև նեղ գոտի է, որից ցած հավասարասրուն, սուր ծայրերով ցած ուղղված եռանկյունիներից կազմված իննաթերթ վարդակ է՝ բաժանված երեքական եռանկյունուց կազմված երեք խմբի, որոնք միմյանցից գատորոշված են դատարկ լուսանցքներով: Եռանկյունիների կողեզրերը փոքր-ինչ ներճկված են դեպի ներս, որի շնորհիվ դրանց միջակայքի անզարդ հատվածներն ունեն ձգված կամարների տեսք: Եռանկյունիները ձևավորված են միմյանց մեջ ներգծված չորսական խորաքանդակ, սուր ծայրերով ցած ուղղված գծերով, որոնք կազմում են երեք նեղ ժապավեն: Վերին և ներքին ժապավենները լցված են շեղ, իսկ կենտրոնականը՝ հորիզոնական, փոքր-ինչ լայն գծիկներով (Նկ. 6/2):

զ) Սև փայլեցրած մակերեսով մեծ կավանոթի բեկոր: Կտրվածքում խեցին աղյուսագույն է, մակերեսի մոտ՝ սև, բարակ շերտով: Չարդանախշը կատարվել է փորագծման և կետագարդման տեխնիկայով: Պահպանված բեկորի վրա պատկերված է 28 մ լայնությամբ զարդագոտի՝ եզերված նուրբ-փորագիծ, հորիզոնական գծերով, որոնց միջակայքում փորագծված են միմյանց հաջորդող շեղադիր ուղիղ անկյուններ: Այս ժապավենից վեր և վար խորադիր կետաշարքեր են (Նկ. 7/4):

Պահպանված բեկորի չափերը. երկարությունը՝ 51, բարձրությունը՝ 65, զարդագոտու լայնքը՝ 50, պատի հասությունը՝ 7 մմ: Կարելի է ենթադրել, որ այն եղել է բավականին մեծ սափորի բեկոր, որը ոչնչացվել է դամաբարանի թալանման հետևանքով:

Է) Սև փայլեցրած մակերեսով կավանոթի բեկոր: Կտրվածքում խեցին աղյուսագույն է, մակերեսի մոտ՝ սև, բարակ շերտով: Չարդանախշը կատարվել է փորագծման տեխնիկայով: Պահպանված բեկորի վրա պատկերված են հորիզոնական 4 գծեր, որոնցից ստորին զույգ գծերի միջակայքը լցված է շեղ գծիկներով: Սրա վրա օղապարան հիշեցնող դաջվածք է, որը, թերևս, հարդի կամ խոտի հետք է (նկ. 7/5):

Պահպանված բեկորի չափերը. երկարությունը՝ 40, բարձրությունը՝ 50, զարդագոտու լայնքը՝ 14, պատի հաստությունը՝ 9 մմ:

ը) Կճուճ (փարչ)՝ հարթ հատակով, ձվաձև՝ վերին մասում փքված իրանով, ուղղահայաց վզիկով, դեպի դուրս թեք կտրած շրթով, գորշ-դարչնագույն (մրապատ) մակերեսով և աստառով: Շրթի ուռուցիկ գագաթը թեքդիր ցածրանում և հիմքի մոտ ավարտվում է սրացող երիզով: Աստառի վրա պահպանվել են հարդարման հետքեր՝ խազեր: Հատակի վրա արատաքուստ փորագիր զարդ է, կամ հարդի դաջվածք (նկ. 7/1): Չափերը. բերանի տրամագիծը՝ 110 մմ, պատերի հաստությունը՝ 5 մմ:

թ) Կճուճի բեկոր՝ կարճ, ուղիղ դրված վզիկով, բլուրձն, դեպի դուրս թեք կտրած, սրացումով ավարտվող շրթով, գորշ-դարչնագույն (մրապատ) մակերեսով: Շրթի հիմքի թույլ ընդգծված հորիզոնական գոտին, թերևս, առաջացել է շուրթը հարդարելիս: Չափերը. բեկորի լայնությունը՝ 73 մմ, բարձրությունը՝ 37 մմ, վզիկի բարձրությունը՝ 20 մմ, պատերի հաստությունը՝ 7 մմ (նկ. 7/3):

Պատրաստման տեխնիկայով՝ ձեռածեփ, կառուցվածքով ու ձևով՝ գնդաձև կամ ձվաձև, զարդանախշով՝ ներճկման ու նուրբ փորագծման եղանակով կատարված խեցեգործության գնդեվազյան նմուշները համանման են դաշտային Արցախի Երկարուկ բլուր բնակատեղիի ստորին շերտի կավանոթներին: Կ. Քուշնարյովան, տուրք տալով իր ժամանակ տարածված տեսակետներին, սևան-արցախյան մշակույթն ամբողջությամբ համարում է կարմիրբերդյան մշակույթի հետնորդը և թվագրում է մ.թ.ա. XVIII-XVII դարերով¹¹: Իրենց զարդանախշերով ու ձևերով Գնդեվազի գտածոներն համանման են նաև Սիսիան 2-րդ դամբարանադաշտի խեցեղենի հետ: Ըստ որոշ հայ հնագետների՝ Սիսիանի դամբարանից հայտնաբերված կավանոթերը պատկանում են թռեղքյան մշակույթի ««ծաղկուն ժամանակաշրջան»-ի առաջին և երկրորդ փուլին, և թվագրվում են մ.թ.ա. 22/21-20 դարերով¹²: Մեր կարծիքով Սիսիանի կավանոթերը, ինչպես սև փայլեցված, այնպես էլ գունազարդ, վերաբերում են ոչ թե թռեղքյան, այլ սևան-արցախյան մշակութային արեալին: Այստեղ ընդհանրություններն այնքան մեծ են, որ կասկած չի հարուցում Գեղամա ու Ջերմուկի լեռների և դաշտային Արցախի ընդգրկածությունը միևնույն հնագիտական մշակութային արեալում:

Նետասլաքները. Տերևաձև են, երկթև՝ հիմքի մասում ուղղանկյունաձև հանվածքներով, որոնք ձգվում են մինչև նետասլաքի կենտրոնական մասը: Պատրաստված են թափանցիկ՝ սև գծերով վանակատից: Ունեն երկկողմ մշակում: Առաջին նետասլաքի մի կողմը, հավանաբար օրգանական նյութի հետ շփման մակերեսը, պատված էր կրային նստվածքով: Չափերը. երկարությունը՝ 2, լայնքը (թևերի հատվածում)՝ 1,5, թևերի բացվածքը՝ 0,5 մմ (նկ. 8/3):

Երկրորդ նետասլաքի թևերից մեկը կտրված է: Չափերը. երկարությունը՝ 2,5, լայնքը (թևերի հատվածում)՝ 2 մմ (նկ. 8/4):

¹¹ Кушнарева К.Х., Южный Кавказ в IX-II тыс. до н.э., С. Петербург, 1993, с. 163.

¹² Avetisyan et al., op. cit., 2000, p. 163-164, fig. 2.

Նետի կոթը սլաքին ամրացնելու համար հիմքում ուղղանկյունաձև հանվածքով նետասլաքները մեծ տարածում են ունեցել բրոնզեդարյան Հայաստանում: Նետասլաքների այս տիպն սկիզբ է առել վաղ բրոնզի դարում և ձևաբանական որոշ փոփոխություններով լայնորեն կիրառվել հետագա դարերում՝ ընդհուպ Վանի թագավորության կազմավորումը, որի սպառազինությունում վանակատե նետասլաքները բացակայում են¹³: Տերևաձև նետասլաքները հատկապես բնորոշ են վաղ բրոնզի դարի ուշ և միջին բրոնզի դարի վաղ փուլին: Հետագայում գերակշռում են ձգված իրանով նետասլաքները:

Արծաթե թիթեղ. Ուռուցիկ, շուրջանակի դասավորված մեծ ու փոքր գնդիկներից ձևավորված զարդանախշով, դրվագազարդ արծաթե թիթեղի բեկոր (Նկ. 8/1): Նման է Թռեղքի XVII դամբարանից հայտնաբերված շրջանաձև, 11,5 սմ տրամագծով ոսկյա թիթեղին¹⁴: Գնդեվազի թիթեղի կենտրոնական, ետ ծալված եզրերով շրջանակի մեջ, ամենայն հավանականությամբ, ազուցված է եղել ոսկերչական քար: Ուշագրավ է, որ Թռեղքի սկավառաձև թիթեղի կենտրոնական գնդիկը նույնպես պատրաստվել է առանձին և, ապա, ամրացվել զարդին: Դատելով գրեթե բացարձակ նմանությունից, կարելի է ենթադրել, որ Գնդեվազի թիթեղը եղել է բավականին մեծ և մեզ է հասել ընդամենը այս զարդի կենտրոնական բեկորը:

Է. Գոգաձեն Թռեղքի XVII դամբարանը վերագրում է միջին բրոնզի դարի երկրորդ փուլին և թվագրում է մ.թ.ա. XVIII-XVII դդ., թեև Նշում է ոսկյա թիթեղի զարդանախշի ընդհանրությունը մ.թ.ա. III հազարամյակի հինարևելյան ոսկերչական նմուշների հետ¹⁵: Թռեղքի XVII դամբարանի սև փայլեցված կարասներն իրենց ձևով նույնական են Ներքին Նավերի I դամբարանի կարասներին¹⁶, և դա, մեր կարծիքով, հիմք է նշված դամբարանը մ.թ.ա. XXIII-XXII դարերով թվագրելու համար:

Չրահաշապիկի բրոնզե կիսազնդաձև հեծանակներ. Ուռուցիկ, կոճակաձև իրերի եզրերին առկա է երկուական անցք, որոնց միջով անցնող թելերով դրանք կարվել են կաշվե զրահաբաճկոնին (Նկ. 8/2, 7, 8): Հայաստանում այս տիպի զրահի մասերը լայն տարածում են ունեցել մ.թ.ա. III-1 հազարամյակներում: Դրանց հնագույն, դրվագազարդ օրինակները հայտնաբերվել են Փարվանա լճի մերձակա դամբարանից, որոնք Բ. Կուֆտինը թվագրում է մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսով¹⁷: Գնդեվազի գտածոներն իրենց ձևով, չափերով, ինչպես նաև քանակով համահունչ են Թռեղքի XVII դամբարանի ոսկյա կիսազնդիկներին¹⁸: Այս տիպի և չափի զրահաբաճկոնի վերադիր կոճակներ փաստագրվել են նաև Վանի թագավորության ժամանակաշրջանում: Դրանք առկա են Թռեղքի՝ Մարավ-Դերեսի N2¹⁹, Շիրակավանի, Օշականի, Կարմիր Բլուրի և այլ հուշարձանների դամբարաններում: Սակայն ուրարտական սպառազինությունում օգտագործվող կիսազնդիկները, սովորաբար, ներքուստ

¹³ Куфтин Б.А., Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, с. 102.

¹⁴ Куфтин В.А., ук. соч., с. 441, табл. СIII. Жоржикашвили Л., Гогодзе Э., Памятники Триалети эпохи ранней и средней бронзы, Тбилиси, 1974, с. 97, табл. 88.

¹⁵ Гогодзе Е., Периодизация и генезис курганной культуры Триалети, 1972, Тбилиси, с. 95, 103-104.

¹⁶ Симонян А.Е., «Царское» погребение эпохи средней бронзы Неркин Навер, Археология, этнология, фольклористика Кавказа, Тбилиси, 2004, с. 126-127.

¹⁷ Куфтин В.А., ук. соч., с. 283, табл. СХV.

¹⁸ Жоржикашвили Л., Гогодзе Э., ук. соч., с. 97, табл. 88.

¹⁹ Куфтин В., ук. соч., с. 101-105, табл. СХV.

ունեցել են «կամրջակներ», որոնց միջոցով են ամրացվել զրահաշապիկին²⁰, մինչդեռ միջին բրոնզի դարի կիսազնդիկները զրահաբաճկոնին կարվել են եզրերում բացված անցքերով անցնող թելերով: Նկատի ունենալով այս հանգամանքը, հակված ենք ենթադրելու, որ Գնդեվազի կիսազնդածև զրահաբաճկոնի վերադիր զնդիկները ժամանակակից են դամբարանին:

Ապրանքադրամ. Ծովային կոնաձև խխունջի գազաթի սղոցած, կիսազնդածև, կենտրոնում լայնադիր անցքով հատվածը (նկ. 8/5): Հավանաբար ծառայել է որպես փոխանակության միջոց, թերևս՝ ապրանքադրամ: Մ.թ.ա. III հազարամյակում կոնաձև ծովային խխունջների սղոցած գազաթները լայնորեն կիրառվել են հին Արևելքում, մասնավորապես Շումերում²¹: Նման խխունջներ հայտնաբերվել են նաև Շենգավթի՝ Ս. Սարդարյանի 1958 թ. պեղած N 1 դամբարանից, որը պահվում է մասնավոր հավաքածուում:

Ամփոփում. Գնդեվազի N 4 դամբարանի գտածոների քննական վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այս համալիրը բնորոշ է «վաղ դամբանաբլուրների» մշակույթին: Նախորդ, շենգավթյան մշակույթի հաստապատ խեցեղենն իր պատրաստման տեխնիկայով և ձևերով տարբերվում է «վաղ դամբանաբլուրների» մշակույթի նրբախեցի կավանոթներից, որոնցում, սակայն, հստակ է նախորդից ժառանգած կավագործության բնագավառի մի շարք էական հատկանիշներ, մասնավորապես զարդարվեստում. ա) խորաքանդակ-ներճկված գոտիները, որոնք դարձել են ավելի նեղ, բ) փորագիծ, նուրբ գծագարողը, գ) շեղանկյունիների հաջորդական շարքերից կազմված դրասանգը, դ) շեղ գծիկներով լցված՝ սուր ծայրերով վեր և վար ուղղված հավասարասրուն եռանկյունիները, ե) սև փայլեցված մակերեսի հետ աղյուսա-դարչնագույն աստառի համադրությունը և այլն: Ներճկված և նուրբ-փորագիծ զարդանախշի համադրությունը, որպես վաղ բրոնզի դարի երգրափակիչ փուլի բնորոշ հատկանիշ դեռևս 1941 թ. դիտարկել էր Բ. Կուֆտին²²: Ընդունված է նաև, որ նուրբ գծիկներից կազմված երկրաչափական մոտիվները, որոնք սերվել են վաղ բրոնզի դարի մշակույթից, նախորդում են բջջազարդ և սանրատամ «քայլող» գործիքով դաջած պատկերներին²³:

Գնդեվազի սև փայլեցրած կավանոթների ինքնատիպ հարդարումը խորադիր, ներճկված կողերով հավասարասրուն եռանկյունիների հաջորդական շարքերով, որոնց միջակայքի դատարկ դաշտերը կամարածև լուսանցքներ են ստեղծում, բնորոշ է սևան-արցախյան մշակույթի վաղ փուլին: Չարդանախշի մյուս կարևոր առանձնահատկությունը շեղ գծիկներով լցված շեղանկյունիների հաջորդական շարքերից կազմված դրասանգներն են, որոնք սաղմնավորվելով շենգավթյան մշակույթում, շարունակվում են սևան-արցախյան մշակույթի վաղ փուլում, ապա լայն տարածում ստանում գունազարդ խեցեղենի զարդարվեստում: Մշակութաստեղծ հատկանիշներից են նաև շեղ գծերով լցված, սուր գազաթներով վեր և վար ուղղված հավասարասրուն եռանկյունիների հաջորդական շարքերը: Գնդեվազի, ինչպես նաև միջին բրոնզի դարի Թռեղքի, Երկարուկ բլրի, Սիսիանի և համաժամանակյա մյուս

²⁰ Есаян С. А., Калантарян А. А., Ошакан І, Археологические раскопки в Армении 18, Ереван, 1988, табл. LX, LXVIII.


²¹ Зограбян А., Распространение товаро-денег на территории Армянского нагорья в III-II тыс. до н.э. Армянский гуманитарный вестник, Ереван, 2009, с. 109.

²² Куфтин Б., ук. соч., с. 104.


²³ Кушнарева К.Х., ук. соч., 1965, с. 154-156.

հուշարձանների խեցեգործության նմուշները, կարծում ենք, սերվել են շենգավթյան խեցեգործության ավանդներից: Նկատի ունենալով շենգավթյան խեցեգործության մի շարք հատկանիշների վերարտադրումը Գնդեվազի N4 դամբարանի կավանդներում, մետաղե իրերի ընդհանրությունը «վաղ դամբանաբլուրների» մշակույթի հուշարձաններում և անփոս դամբարաններին բնորոշ թաղման ծեսը, Գնդեվազի դամբարանը կարելի է վերագրել սևան-արցախյան մշակույթի վաղ փուլին, որը նախորդում է Սիսիան 2-ի դամբարաններին և ժամանակակից է Ներքին Նավերի N 1 դամբարանին, Թռեղքի վաղ դամբանաբլուրներին, մարտկոպի-ալազանիի և բեդենյան հուշարձաններին:


Early kurgan culture in South Caucasus, with the location of Gndevaz



Նկ. 1. «Վաղ դամբանաբլուրների» հնագիտական մշակույթի տարածույթը հարավային Կովկասում




Նկ. 2. Քնդելակի դամբարանադաշտի գլխավոր հատակագիծը




Նկ. 3. Գնդեվազի տարածքում հայտնաբերված փորագիր նշանների ով քարեր




Նկ. 4. Գնդեվազի N 4 դամբարանը, օդալուսանկար




Նկ. 5. Գնդեվազի N 4 դամբարանը (հատակագիծ և կտրվածք)



Նկ. 6. Գնդեվազի N 4 դամբարանի գույքը, խեցեղեն



Նկ. 7. Գնդեվազի N 4 դամբարանի գույքը, խեցեղեն



Նկ. 8. Գնդեվազի N 4 դամբարանի գույքը, մանր գտածոներ

ДРЕВНЕГОРОДСКИЕ ПАМЯТНИКИ КОНЦА II НАЧАЛА I ТЫС. ДО Н.Э. НА ИОРСКОЙ ВОЗВЫШЕННОСТИ

Киазо Пицхелаури

Национальная академия наук Грузии

В конце прошлого столетия дешифровкой аэрофото и спутниковых снимков на Иорской возвышенности (рис. 1), было обнаружено большое количество поселений конца бронзового века (рис. 2, 3). Они в основном расположены вокруг плодородных долин, в предгорьях, и все одной планировки. На вершинах естественных холмов цитадель со святилищем в центре, вокруг которого элитарные жилые помещения. Цитадель окружают несколько рядов мощных крепостных стен сложной планировки и оборонительный ров. Непосредственным продолжением цитадели является, расположенная террасами на склоне горы (рис. 2, 3) основная часть поселения, которую также окружает мощная фортификационная система. При выборе места строительства конкретных поселений, в первую очередь, учитывалась его пригодность в стратегическом отношении и для водоснабжения.

Поселения эти расположены большими группами, что, по нашему мнению, было связано с основной хозяйственной деятельностью его населения, так как их объединяли общие социально-экономические и политические интересы.

Вход в дом находится на западной стороне. Он представляет собой длинный коридор, ширина которого у входа 4.5 м, а у порога - 1.5 м. Южная стена коридора на 2.5 метров от порога входит в глубину помещения и представляет собой разделительную стену помещений N1 и N 2 дома N 2. Здесь ее ширина достигает 0.6 м. Здесь же находится проем, откуда можно попасть в помещение N 1. Внутренние размеры первого помещения 8.5 X 6.0 м. Максимальная сохранившаяся высота стен 1.5 м. В северо-западном углу базальтовыми плоскими плитами составлен «хлев», площадью 3.0 X 2.5 м. В юго-западном углу помещения находится печь. Ее размер - 0.8 X 0.7 м. Подковообразная печь изготовлена из рваного базальтового камня и глины. Она пристроена к южной стене. Ее высота от уровня пола - 0.5 м. Верхняя часть ограничена бортиком, шириной 0.1 - 0.15 м и высотой 0.1 м. В глубине стояла «сковорода», изготовленная из крупнозернистой глины. В ней сохранились остатки золы.

Перед очагом находится зольная яма, диаметр которой 1.5 м. По краю ямы, в один ряд выложен каменный бордю. Каменный круг поврежден. Яму заполняла чистая зола.




Рис. 12

Глинобитный пол помещения расположен прямо на скалистой породе. На полу и вдоль стен находятся невысокие глиняные подиумы, на которых стояли 21 керамических сосуда. Большинство этих сосудов неравномерного обжига. Черепок довольно грубый. В основном это горшки, большого и среднего размера. Здесь же стояли четыре маслoбойки, черного цвета (рис. 14, 1-4). В отличие от горшков, они изготовлены из хорошо отмученной глины. На плечике некоторых из них имеется резной орнамент. Здесь же была найдена качественная керамика черного цвета (рис. 18-2,3), а также зернотерки, терочники и камни для растирания.

Внутренние размеры второго помещения - 11.75 X 6.5 м. Толщина восточной и западной стены 3.25 - 5.0 м. Максимальная сохранившаяся высота стен 1.2 м. В

восточной части пола помещения из базальтовых плит выстроен «хлев», западная сторона которого глинобитная. В помещении было найдено четыре сосуда и один очаг.

Дом N 3 (рис. 13) находится в квадрате N 12, XII участка, в квадратах N 10,11,12, XIII участка, в квадрате 3 XXI участка и в квадратах 1,2,4 XXII участка. В ходе раскопок выяснилось, что дома N 3 и N 2 построены одновременно. У них одна общая стена, ширина которой 3 м. Дом ориентирован по линии восток-запад. Дверной проем находится на западной стороне. Длина входа 4.0 м.



Рис. 13

Дом состоит из двух помещений. Внутренние размеры помещения N 1 равняются 7.0 X 5.0 м. Пол глинобитный. В юго-западном углу находится выложенный маленькими базальтовыми камнями круглый очаг. Вдоль западной стены, на глиняном возвышении длиной 0.15 м и шириной 0.4 м засвидетельствована керамическая посуда. По всей вероятности здесь стояло три сосуда. Один из них представляет собой большой горшок, изготовленный из крупнозернистой глины (рис. 18-4), серо-коричневого цвета. Он обожжен неравномерно. Горшок сильно поврежден. Второй сосуд - маслобойка, изготовлена из хорошо отмученной глины, серого цвета. Ручка горизонтальная (рис. 14-5), налеплена на плечико. Там же продольное отверстие. Третий сосуд - небольшой горшочек (рис. 18-1).




Рис. 14

Перед глиняным возвышением, на полу, в анатомическом порядке лежали конечности крупно-рогатого животного. Вдоль южной стены, в непосредственной близости очага, глиняного возвышения и конечностей животного в большом количестве были найдены необработанные обсидиановые отщепы.




Рис. 15

Помещение N 2 широким входом соединяется с помещением N 1. Вместо стены их разъединяет хлев, который построен обработанными базальтовыми четырехугольными блоками (рис. 15). Средний размер блоков 0.4 X 0,5 X 0.12 м. Площадь помещения N 2 достигает 4.5 X 4.0 м. Пол выстлан плоскими базальтовыми плитами. Северо-восточный угол помещения выделен стеной. Площадь, отделенная стеной, заполнена золой толщиной 0.4 м, смешанной с фрагментами глиняной посуды. По видимому, это место предназначалось для золы из печки, которая находилась рядом.

Печь находилась в центре восточной стены и непосредственно примыкала к ней. Печь представляет собой базальтовое строение с двумя отделами, перед которой находится зольник. В одном отделе разжигали огонь, а во втором, на глинобитной поверхности наклепана «сковорода», изготовленная из крупнозернистой глины. Перед печкой, на вымощенном камнем полу вырезана круглая яма, в края которой вставлены три камня с округлым верхом. Яма была заполнена золой. Ее глубина 0.1 м.




Рис. 16

Вдоль северной стены помещения N 2, рядом с зольником стояли пять горшков большого и среднего размера. Они изготовлены из крупнозернистой глины и неравномерно обожжены. Здесь же найдены две маслобойки, темно-серого цвета, изготовленные из хорошо отмученной глины с горизонтальной ручкой. Около ручки имеется отверстие.

Дом N 4 расположен в 5.0 м южнее дома N 3. Общая длина дома 15.0 м, а ширина 8.0 м. Дом состоит из двух помещений. Раскопано первое помещение, внутренний размер которого 5.7 X 6.5 м. Сохранившаяся высота стен 0.4 - 1.2 м. Пол глинобитный. Юго-западный угол помещения вымощен каменными плитами. В северо-западном углу засвидетельствована печь (рис. 17), длина которой достигает 0.9 м, а ширина - 0.7 м. Печь составлена из трех стоячих базальтовых плит и примыкает к западной стене. В печи найдены фрагменты большого горшка. Перед печью находится маленькая площадка составленная из известняковых плоских плит, перед которой засвидетельствован вылепленный из крупнозернистой глины очаг. К северной стене примыкает вторая печь. Она расположена в 1.7 м от первой печи. Вторая печь составлена из плоских базальтовых камней.



Рис. 17

В N 1 помещении дома N 4 была найдена глиняная посуда различного назначения, а также каменные и костяные орудия. Часть керамики черного цвета. Все они - маслoбойки, миски и однорукие горшки, изготовлены из хорошо отмученной глины. Большая же часть керамика - горшки разной величины и очаги изготовлены из крупнозернистой глины с различной примесью. Они обожжены неравномерно. В основном серо-коричневого цвета. В черепке заметен толченный обсидиан. Каменные орудия представлены в виде точильных камней, камней для растирания и терочников. Кроме этого на полу в большом количестве обнаружены обсидиановые отщепы.




Рис. 18

В домах раскопанных на поселении Сабечдави материал имеет сходство с комплексами могильника Самтавро, которые датируются XIII-XII вв. до н.э. Во время разведок на территории поселения, а также в разведывательных раскопах на южном склоне горы Эли-Баба была найдена керамика I тыс. до н.э. Если принять во внимание материал, обнаруженный на могильнике Эли-Баба, можно предположить, что «циклопический» комплекс Сабечдави функционировал с XII в. до н.э. до VI в. до н.э.

К поселению Сабечдави примыкают четыре могильника. Один из них расположен в поле юго-западнее поселения, второй - на правом берегу речки Башков-Су, третий - западнее, а четвертый - северо-западнее поселения. Четвертый могильник был изучен в 2002-2003 годах, в ходе строительства нефтепровода Баку-Тбилиси-Джейхан. Было раскопано более 100 погребений, которые датируются VII-VI вв. до н.э.⁸

Могильник Эли-Баба находится в 0,5 км. юго-западнее с. Барети. Некрополь принадлежит поселению Сабечдави, расположенному на холме и склонах горы Эли-Баба, исследование которого проводились с 1990-го до 1999 года.



Рис. 19

Раскопанная часть Эли-Баба (Сабечдави) указывает, что поселение (рис. 1-5) имело крепостную систему регулярной планировки, жилые кварталы, улицы, площади и культовые места, т.е. оно являлось поселением городского типа.

Материал, полученный при археологических раскопках в основном датируется XII-XI вв. до н.э. На поселении имеются слои и последующих эпох, на что указывают разведывательные работы и данные могильника.

В 30-х годах XX столетия склоны горы Эли-Баба и близлежащую территорию исследовал Б.А. Куфтин. Обнаруженные им памятники были нанесены на карту, на которой обозначены «циклопическая» крепость и могильник⁹.

Второй могильник находится юго-восточнее, а третий - восточнее поселения. Четвёртый Могильник был выявлен в 2002 году во время археологических работ, производимых в связи со строительством нефте- и газопроводов- BTC и SCP (рис. 19). Раскопки проводились в 2002-2003 годах. Могильник занимает 1500 кв. м. На этой площади расположены были 127 погребения (рис. 20).

⁸ Narimanishvili G., Shanshashvili N., ук. соч., с. 176. Narimanishvili G., ук. соч., с. 92.

⁹ Narimanishvili G., Shanshashvili N., ук. соч., с. 176.



Рис. 20

После снятия гумусного слоя появилась интенсивная насыпь, состоящая из мелких базальтовых камней. Каменная насыпь была настолько интенсивной, что невозможно было определить контуры погребений. Поэтому на всей площади могильника был снят слой мелких камней, после чего показались каменные перекрытия погребений и каменные круги.

Внешний вид каждого погребения, раскопанного на могильнике однообразен¹⁰: каждое погребение имеет кромлех (рис. 21). Каменные круги составлены из больших и средних базальтовых камней. Диаметр больших кромлехов достигает 5,0 - 7,0 м., а малых - 1,8 - 4,5 м.



Рис. 21

На могильнике зафиксированы грунтовые погребения и каменные ящики. Раскопано было 44 грунтовых погребений и 83 каменных ящиков. Часть грунтовых погребений была перекрыта деревянным настилом, а некоторые каменными плитами.

¹⁰ Нариманишвили Г., ук. соч., 2012, с. 104, рис. 22-г.



Рис. 22

На могильнике было раскопано два типа каменных ящиков. К первому типу относятся 82 погребения. Они в основном представляют собой удлинённые каменные ящики, которые состоят из необработанных базальтовых камней и перекрыты плоскими плитами.

Ко второму типу относится всего одно, N 45 погребение. В отличие от других, его насыпь состоит из массивных базальтовых плит, чьё основание упирается в камни кромлеха, а верхушка поднимается к центру таким образом, что принимает форму конуса, в центре которого расположен был каменный ящик.

Во время раскопок была зафиксирована одна специфика: могильник расположен в небольшой котловине. Толстый слой земли засвидетельствован только на этом участке горы Эли-Баба, остальное же пространство покрыто базальтовым массивом. Площадь котловины равняется 20 000 кв. м., а могильник занимает 1 500 кв.м.



Рис. 23

Особого внимания заслуживает тот факт, что несмотря на большое свободное пространство вокруг могильника, где легко можно найти место для погребения, население использует лишь небольшую территорию. Место, отведённое для могильника настолько интенсивно занято захоронениями, что большая часть кромлехов пересекают друг друга, из-за чего большинство каменных кругов повреждено. Очевидно, что погребения выстраивались на определённом, специально выделенном месте. Несмотря на то, что во время раскопок не было зафиксировано никаких следов ограды, остаётся впечатление, что могильник был ограждён если не физически, то виртуально и вне этой ограды покойников не хоронили.

Вероятно, во время определения этого места под некрополь, был совершён ритуал ограждения, проявлением которого можно считать обнаруженные в специальных ямках скопления больших обсидиановых отщепов. Эти ямки были зафиксированы на северной, южной и восточной окраине некрополя. Вероятно подобное скопление должно было быть и на западной окраине, но или мы не смогли обнаружить его, или оно не сохранилось. Возможно именно эти скопления обсидианов обозначали границы могильника.

В захоронениях кости покойника настолько плохо сохранились, что в основных случаях трудно судить о позе и ориентировке. Из 127 погребений скелет покойника был выявлен лишь в 11 грунтовых и 16 каменных погребениях.



Рис. 24

В связи с ритуалом захоронения внимания заслуживает ещё один факт. Во время раскопок могильника часто встречались каменные ящики, или ямы малого размера, которые в основном находились вокруг кромлеха, или под ним. Они были наполнены только глиняной посудой. В некоторых из них (каменный ящик N 19) лежало столько керамики, что не было свободного места. Подобные ямы и каменные ящики в основном располагались вокруг погребений большого размера. Они связаны с ними и являются частью погребального ритуала. Аналогичный факт был зафиксирован на могильнике XV-XIV веков до н.э. Сафар-Хараба, где около погребения была устроена только одна ритуальная яма¹¹.

В связи с обрядом захоронения особого внимания заслуживает каменная антропоморфная фигура (рис. 24), возвышающаяся на погребении N 42¹². Высота скульптуры 120 см. Верхняя часть камня имеет человеческий облик. А нижняя часть заострена, вставлена в землю и обложена камнями,

В погребальном ритуале могильника Эли-Баба одно из значительных мест занимает молотильная доска¹³ которая обнаружена в девяти погребениях (NN 10, 13, 17, 26, 60, 67, 92, 110, 113).

Большую часть погребального материала могильника Эли-Баба составляет глиняная посуда. Одна часть которой изготовлена на гончарном круге (рис.22), а другая - вылеплена вручную (рис. 23).

¹¹ Могильник Сафар-Хараба находится также в Триалети, в 4-х км западнее могильника Эли-Баба (Narimanishvili G., Trialeti in the 15th and 14th centuries B.C., in: Gamkrelidze G. (ed.), Rescue Archaeology in Georgia: The Baku-Tbilisi-Ceyhan and South Caucasian Pipelines, Tbilisi, 2010, 275-369, с. 318-319).

¹² Narimanishvili G., Shanshashvili N., укр. соч., с. 176, fig. 7,1.2. Narimanishvili G., укр. соч., с. 104, fig.22-a,b,f.

¹³ Narimanishvili G., Shanshashvili N., укр. соч., 176.




Рис. 25

Металлические боевые и хозяйственные орудия выявлены в небольшом количестве. В погребениях засвидетельствованы 4 железных наконечника копья, 18 ножей, два бронзовых наконечника жезла (погребения NN 28, 51) и один бронзовый наконечник стрелы (погребение N 17), который относится к восточнозакавказскому типу. В погребениях в большом количестве встречаются украшения (рис.25, 3-9): бронзовые булавки (рис. 25-9) с конусовидным навершием (NN 7, 71, 72, 82, 107, 109, 113), браслеты разной формы и кольца (рис. 25-3,4,5).


Интересны бронзовые подвески разнообразной формы (рис.25-7,8). Надо отметить бронзовые трёхпалые подвески, которые имеют утолщённое цилиндрическое тулово и округлую головку. В некоторых из них сохранились фрагменты шнурков. Подвески аналогичного типа обнаружены были в погребениях Трельского и Шираванского могильников, где они датируются VIII-VI вв. до н.э.

На могильнике Эли-Баба были найдены также две ажурные подвески, изготовленные из антимона. В 69 погребениях были обнаружены бусы разнообразной формы¹⁴ и различного материала (рис. 26). Археологический материал из погребений могильника Эли-Баба имеет сходство с погребальным инвентарём памятников эпохи широкого освоения железа из Квемо (Нижней) Картли и датируется VII-VI веками до н.э.

¹⁴ Kvachadze M., Narimanishvili G., Late Bronze-Early Iron Age beads from Trialeti, Aegean World and South Caucasus: Cultural relations in the Bronze Age, International workshop, September 23-25, 2016, Proceedings, Tbilisi, 180-209, p. 180, Tab. I-XV.



1



2

Рис. 26

Поселение Сабечдави многослойное. Повидимому, поселение появилось в XII веке до н.э. и просуществовало до VI века до н.э. Оборонительная система у поселения видимо была с момента основания. Хотя на этом этапе исследования трудно сказать засвидетельствованная нами сложная оборонительная система появилась одновременно с поселением, или со временем видоизменилась. Ясно, что нижняя крепость появилась одновременно с поселением. «Циклопический» крепостной комплекс Сабечдави является частью Триалетских оборонительных систем, которые трансформировались в XII в. до н.э. Исследование «циклопических» крепостей и поселений Южного Кавказа началось давно. Мнения ученых разделяются касательно их появления, датировки и типологии. Проведенные нами исследования в Триалети показали, что созданная «циклопическими» крепостями оборонительная система в регионе появилась в XVI-XV вв. до н.э. Крепостей этой эпохи не так много. С XII в. до н.э. появляются новые крепости и соответственно создается новая система, к которой в VIII-VII вв. до н.э. добавляются новые крепости. Примером может служить ситуация, зафиксированная вокруг поселения Сабечдави. До появления поселения и крепости Сабечдави, в 1.0 км западнее горы Эли-Баба, уже существовало «циклопическое» поселение и крепость Бешташени. К этим двум пунктам в VII в. до н.э. добавился «циклопический» комплекс Кноле.

«Циклопическая» оборонительная система Южного Кавказа прекратила существование в VI в. до н.э., что было обусловлено совершенно иным военно-политическим положением.

ՀԱՆԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

Միքայել Զերլես, Ռուբեն Դավթյան
Մյունխենի համալսարան

2016 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում իրականացվեցին հայ-գերմանական արշավախմբի հնագիտական հետազոտություններ, որոնք հիմնականում ուղղված էին Ստեփանավանի և Տաշիրի շրջանների հուշարձանների ուսումնասիրությանը¹: Որպես ուղեցույց օգտագործվեց ՀՀ Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը²: Ներկա հոդվածը հիշյալ աշխատանքի նախնական հաշվետվությունն է:

Լոռու մարզի աշխարհագրական դիրքը

Լոռու մարզը զբաղեցնում է 3,799 կմ² մակերես, գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսում՝ արևելքում և արևմուտքում սահմանակցելով Տավուշի և Շիրակի մարզերին, հարավում՝ Արագածոտնի և Կոտայքի մարզերին, իսկ հյուսիսում՝ Վրաստանի հանրապետությանը (Նկ. 1):

Լոռու լանդշաֆտը լեռնային է: Ամենաբարձր կետը Աջքասարն է (3196 մ), որը գտնվում է մարզի հյուսիս-արևելքում: Լոռին հարուստ է աղբյուրներով և գետերով: Լեռնային մարզագետիների առկայությունը բարեբեր պայմաններ է ստեղծում երկրագործության և անասնապահության համար: Կլիման խոնավ է: Մարզին հատուկ են տաք և անձրևառատ ամառներ, ցուրտ ու ձնառատ ձմեռներ:

Լոռու մարզը հարուստ է նաև բնական հանածոներով. առկա են բազմաթիվ, մասամբ հնագույն հանքավայրեր³: Դրանցից որոշները կապվում են մոտակայքում գտնվող հնագիտական հուշարձանների հետ. այսպես, օրինակ՝ Մարզահովտի, Ֆիոլետովոյի, Լորուտի, Լեջանի և Շամլուղի հանքերի հարևանությամբ գտնվում են վաղ, իսկ Ախթալայում՝ ուշ բրոնզի դարերին բնորոշ հուշարձաններ⁴:

Ուսումնասիրության պատմությունը

Հնագիտական հետազոտությունները Լոռու մարզում սկսվել են XIX դարի վերջերից (դրանք, ի դեպ, ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված առաջին հնագիտական ձեռնարկումներն են): 1871 թ. վաղ և

¹ Հոդվածի հեղինակները իրենց խորին շնորհակալությունն են հայտնում պ. գ. թ. Ս. Դևեջյանին՝ օգտակար խորհուրդների և հետազոտության համար համապատասխան գրականության տրամադրման համար, ինչպես նաև պ. գ. թ. Ա. Բոբոխյանին, պ. գ. դ. Պ. Ավետիսյանին, պ. գ. դ. պրոֆ. Զ. Ավետիսյանին և պ. գ. դ. Ե. Գրեկյանին՝ այս աշխատանքի իրագործումը հնարավոր դարձնելու համար: Գերմանական կողմից շնորհակալություն ենք հայտնում պրոֆ. պ. գ. դ. Ա. Օստոյին, ինչպես նաև Մյունխենի համալսարանին՝ հետազոտությունները ֆինանսավորելու համար:

² <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=37965> (վերջին ներբեռնում 01.10.2017): Ցուցակում տեղ գտած և տեղի բնակչության կողմից «բերդ» անվանված որոշ բլուրներ, իրականում հնագիտական հուշարձաններ չեն (հմմտ. օր.՝ Վանաձորի շրջանի Ձորագյուղ գյուղի (LS-24) «Բերդեն» կոչվող բլուրը):

³ Gevorkyan A., Bobokhyan A., Metallurgy of Ancient Armenia in cultural and historical context, Journal of Armenian studies, 2014, N 1, p. 49.

⁴ Gevorkyan A., Bobokhyan A., նշվ. աշխ., էջ 49:

միջինբրոնզեդարյան կյուլթեր հայտնաբերվեցին Ակներ գյուղի տարածում⁵: 1887-1888 թթ. ժակ դե Մորգանը հնագիտական հետազոտություններ իրականացրեց Ախթալայում, Ուլքիլիսեում և Մուսի Յերիում⁶: Արդեն այդ ժամանակ հնագիտական կյուլթը համեմատվեց Առաջավոր Ասիայի այլ հուշարձանների հետ⁷: 1883 թ. Ս. Սադաթեյովը հնագիտական պեղումներ կատարեց Չեշմանիսում (LS-2)⁸, իսկ 1893 թ. Է.Ա. Թադայիշվիլու ղեկավարությամբ պեղումներ կատարվեցին Պրիվոլնոյում (LS-13)⁹: Չուգահեռաբար Ն. Մառը շարունակում էր Ակների պեղումները¹⁰:

Որոշ դադարից հետո հնագիտական հետազոտությունները Լոռիում շարունակվեցին միայն 1930-ական թվականներին: Այսպես՝ 1937 թ. Եվ. Բայբուրդյանը պեղումներ է կատարում Վանաձոր քաղաքի Թագավորանիստ և Դիմաց հուշարձաններում¹¹: 1948 թ. Բ. Պիտրովսկու գլխավորությամբ պեղվեց Վանաձորի միջին բրոնզի դարաշրջանով թվագրվող «Թագավորական» կուրգանը¹²:

Լոռու մարզի հնագիտական ուսումնասիրության հաջորդ փուլը կապված է Ս. Դևեջյանի անվան հետ, որը 1969 թ. սկսում է Լոռի Բերդի դամբարանադաշտի պեղումները: Լոռի Բերդում պեղվել են 100-ից ավել դամբարաններ, որոնք ժամանակագրվում են միջին բրոնզի դարի վաղ փուլերից մինչև աքեմենյան դարաշրջան: 2000 թ. Լոռի Բերդի արշավախումբը ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան չորս դամբարան է պեղել Կուրթան գյուղում¹³: 2005-2007թթ.Կուրթանում հայ-ռուսական միացյալ արշավախումբը պեղումներ է իրականացրել ուշ բրոնզ-վաղ երկաթի դարաշրջանի բնակավայրում¹⁴:

Վանաձորի տարածքում Թագավորանիստ հուշարձանի բնակավայրում գտնվել են մ.թ.ա. 7-5-րդ դդ. կյուլթեր¹⁵:

⁵ Մինչև 1935 թ.՝ Ունակ: Տե՛ս Пиотровский Б., Археология Закавказья с древнейших времен до I тысячелетия до н.э., Ленинград, 1949, с. 5-8:

⁶ Morgan J. de, Mission scientifique au Caucase. Études archéologiques & historiques. Les premiers ages de métaux dans l'Arménie russe, Paris, 1889, p. 56-63 (Ախթալա), p. 63-64 (Ուլքիլիսե), p. 64-74 (Մուսիերի):

⁷ Smith A., Prometheus Unbound: Southern Caucasiain Prehistory, Journal of World Prehistory 19, 2005, p. 240. Sagona A., Past and present directions in the archaeology of the Transcaucasus, Tüba-Ar 13, 2010, p. 145.

⁸ Դևեջյան Ս., Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Ձորագետում, Երևան, 2001, էջ 86:

⁹ Деведжян С., Лори-Берд I, Результаты раскопок 1969-1973 гг., Ереван, 1981, с. 10. Gevorgyan A., Bobokhyan A., նշվ. աշխ., էջ 50, նկ. 16:

¹⁰ Деведжян С., նշվ. աշխ., 1987, էջ 7:

¹¹ Պեղումների արդյունքների համար տե՛ս Пиотровский Б., նշվ. աշխ., էջ 35-36. Դևեջյան Ս., նշվ. աշխ., 2001, էջ 7:

¹² Пиотровский Б., նշվ. աշխ., էջ 46-48. Դևեջյան Ս., Լոռի Բերդ II, Միջին բրոնզի դար, Երևան, 2006, էջ 403-410:

¹³ Դևեջյան Ս., Հոբոսյան Ս., Դամբարանների պեղումներ Լոռու մարզի Կուրթան գյուղում, Հին Հայաստանի մշակույթը, 2008, N 14, էջ 113-127:

¹⁴ Асланян С., Васильев Ст., Раскопки городища Куртан в Северной Армении, Новейшие открытия в археологии Кавказа, 27-е Крупновские чтения, Махачкала, 2012, с. 156-158. Асланян С., Васильев Ст., Элементы урбанизации в урартский период в Северной Армении (раскопки городища Куртан), Труды II (XVIII) всероссийского археологического съезда, 2008, N 1, Москва, с. 380-381. Dolukhanov P. et al., Prehistoric Sites in Northern Armenia, Antiquity, 2004, N 78/301, <http://antiquity.ac.uk/projgall/dolukhanov301/>.

¹⁵ Փալանջյան Ռ., Թագավորանիստի մ.թ.ա.VII-VI խեցեղենի շուրջ, Հին Հայաստանի

2009 թ. ի վեր Ս. Հոբոսյանի ղեկավարությամբ փրկարարական պեղումներ են կատարվում Թեղուտ գյուղի տարածքում¹⁶, իսկ 2010 թվականից Ա. Գևորգյանի և Ա. Բոբոխյանի գլխավորությամբ պեղումներ են ընթանում Մարգահովիտ գյուղում, որոնք առանձնակի կարևորություն են ներկայացնում հնագույն մետաղագործության ուսումնասիրության առումով¹⁷:

Ուսումնասիրված հուշարձանների նկարագրությունը

Ստեփանավանի շրջան

LS-1 Լոռի Բերդ. Լոռի Բերդը պատկանում է Հայաստանի բրոնզի և երկաթի դարի ամենանշանավոր հուշարձանների թվին, որտեղ հայտնի են դամբարանադաշտ և բնակավայր: Դամբարանադաշտը տեղադրվում է Ձորագետի և Ուռուտ (կամ Միսխանա) գետերի միջև և զբաղեցնում է մոտ 500 հա մակերես: Նշված երկու գետերի միախառնման վայրում գտնվում է Լոռե միջնադարյան ամրոցը (Նկ. 2), որը Կյուրիկյան հարստության մայրաքաղաքն էր:

Դամբարանադաշտի թվագրության վերին սահմանը սկսվում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջերից և շարունակում մինչև մ.թ.ա. 6-5/4.-րդ դդ.: Մինչ օրս պեղվել են 111 դամբարաններ, որոնց զգալի մասը պատկանում են ուշ բրոնզի փուլին:

Միջին բրոնզի դարի դամբարանները (թիվ 25 դամբարան) գետներես տեսանելի են բազալտե կրոմլեխներով¹⁸: Դամբարանախցերն ուղղված են հիմնականում արևելք-արևմուտք: Մի շարք դեպքերում խցերն ունեն դեպի դամբարանախուց ուղղորդող *դրոմոս* (թիվ 1, 6, 60, 65, 66, 71, 75, 77, 94 դամբարաններ): Լոռի բերդի դամբարանադաշտում թաղման հիմնական եղանակներն են դիաթաղումն ու դիակիզումը¹⁹:

Մեծ թիվ են կազմում ուշբրոնզեդարյան դամբարանները, որոնց ձևաձև դամբարանաթմբերը հաճախ երևում են հողի մակերեսին: Ի տարբերություն միջինբրոնզեդարյան սալարկղային դամբարանախցերի՝ այս փուլին պատկանողները հիմնահողային են (թիվ 2, 8, 9, 19, 21, 33, 41, 46, 52, 84, 85 դամբ.), որոնք առանցքով ուղղված են հյուսիս-արևելք - հարավ-արևմուտք, հազվադեպ՝ արևելք-արևմուտք²⁰: Ընդհանուր առմամբ դամբարանների ճարտարապետությունը ավելի պարզ բնույթ է կրում, քան Նախորդ դարաշրջանում: Չնայած դրան՝ ուշբրոնզեդարյան դամբարաններում նկատելի են նաև չափսերի տարբերություններ, որոնք բաժանում ենք պայմանականորեն երեք խմբի. մեծ (մինչև 8 x 3,6 x 3,5 մ), միջին (մոտ 5 x 1,7 x 2 մ) և փոքր (մոտ 2,7 x 1,7 x 2,3 մ): Լոռի բերդի ուշբրոնզեդարյան սոցիալական

մշակույթը, 2008, N14, էջ 175-180:

¹⁶ Հոբոսյան Ս., Թեղուտի 2009-2010 թթ. հնագիտական պեղումների նախնական արդյունքները, Պատմաբանասիրական հանդես, 2001, N 2, էջ 199-211:

¹⁷ Gevorgyan A., Bobokhyan A., նշվ. աշխ., էջ 50-52:

¹⁸ Դևեջյան Ս., նշվ. աշխ., 2006, էջ 93-94:

¹⁹ Թիվ 61, 65, 77, 78, 79, 82, 83և 92 դամբարաններում մարդկային մնացորդներ չեն հայտնաբերվել, սակայն գրանցվել են մոխրի հաստ շերտեր: Այլ դեպքերում մարմնի մի քանի մասեր են գտնվել. օրինակ՝ թիվ 60 և 61.1 դամբարանում մեկական գանգ առանց ստորին ծնոտի (տե՛ս Դևեջյան Ս., նշվ. աշխ., 2006, էջ 98):

²⁰ Деведжян С., նշվ. աշխ., էջ 25-27 և 42-43. Դևեջյան Ս., Թագակիր իշխանավորի պատկերը Լոռի բերդի բրոնզեդարյան բնակավայրից, Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, N 8, էջ 108. Դևեջյան Ս., Լոռի Բերդի ոսկին Ուշ Բրոնզի դարում, Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազարամյակ - մ.թ. XIV դար), Երևան, 2007, էջ 109:

վերակարգության համակարգում բարձր դիրք էին զբաղեցնում մեծ դամբարանախցերում թաղվածները²¹:

Վաղերկաթեդարյան դամբարաններն իրենց կառուցվածքով հիշեցնում են ուշբրոնզեդարյանները և հանդես են գալիս ավելի հասարակ դամբանախցերով (դամբ. թիվ 10-12, 29-30, 42-43, 45, 49, 51, 76): Այս փուլի դամբարանները առանցքով կողմնորոշված են արևելք-արևմուտք կամ հյուսիս-արևելք - հարավ-արևմուտք²²: Դիաթաղումն այս ժամանակաշրջանում հանդիսանում է թաղման տարածված եղանակը:

Միջին երկաթի դարի դամբանախցերն ունեն արևելք-արևմուտք ուղղվածություն (թիվ 2-3, 62-64 դամբարաններ)²³: Շատ հաճախ այստեղ փաստագրվում են կենդանիների, հատկապես ձիերի թաղումներ. օրինակ՝ 64-րդ դամբարանում հայտնաբերվել են 12 միավոր ձիու մնացորդներ²⁴:

Չորս ուշերկաթեդարյան դամբարաններն ունեն ուղղանկյուն քարարկային դամբանախցեր (թիվ 105, 106, 108, 109 դամբարանները), որոնք արևելք-արևմուտք ուղղվածություն ունեն: Մարդաբանական կյուլթը խիստ խաթարված է: Հետաքրքիր երևույթ է նկատվում թիվ 109 դամբարանում, որտեղ հայտնաբերվեց մարդու առանձնացված ստորին ծնոտը, մինչդեռ թիվ 106-ում թաղված են մարդկային երկու գանգ: Այստեղ գտնվել են ոսկյա մահիկաձև ականջօղեր, երկու արծաթյա ապարանջաններ, ինչպես նաև մեկ նորբաբելոնյան գլանակնիք²⁵:

Լոռի Բերդի միջինբրոնզեդարյան բնակավայրը գտնվում է Ուռուտ գետի ձախ ավիին: Այստեղ 1973, 1980 և 1986 թթ. հայտնաբերվել է երկշերտ բնակավայր, որի ստորին շերտը թվագրվում է մ.թ.ա. 18-16-րդ դարերով, մինչդեռ վերին շերտը միջնադարյան է²⁶:

LS-2 ՉԵԶՄԱՆԻՍ. Այս հնագիտական հուշարձանը գտնվում է Ստեփանավան քաղաքի արևմտյան հատվածում՝ մի բլրի վրա, որի լանջով անցնում է Ստեփանավանը Արմանիսին (LS-9) միացնող ավտոճանապարհը: 1883 թ. Մ. Սաղաթելովը այդ բլրի ստորոտին հինգ դամբարաններ է պեղել²⁷: 1980 թ., այստեղ կատարվող շինարարական աշխատանքներին զուգահեռ Ս. Դևեջյանը 21 դամբարաններ է պեղել, որոնք թվագրվում են ուշ բրոնզի ուշ փուլով և ուշ բրոնզից դեպի վաղ երկաթ անցման շրջանով²⁸: Դամբարաններն ուղղված են կամ հյուսիս-արևելք - հարավ-

²¹ Դևեջյան Ս., նշվ. աշխ., 2007, էջ 108-109:

²² Деведжян С., նշվ. աշխ., էջ 52-53:

²³ Դևեջյան Ս., Լոռի Բերդի ոսկին երկաթի լայն տարածման շրջանում, Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազարամյակ- մ.թ. XIV դար), Երևան, 2007, էջ 135-136:

²⁴ Դևեջյան Ս., նշվ. աշխ., 2007, էջ 140:

²⁵ Davtyan R., Einflüsse der Achämeniden im Südkaukasus, Archäologische Untersuchungen anhand neuer Grabfunde aus Lori Berd (Armenien), 2016, S. 10.

²⁶ Դևեջյան Ս., նշվ. աշխ., 2006, էջ 201-213:

²⁷ Դևեջյան Ս., Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Ձորագետում, Երևան, 2001, էջ 89: 1959թ. Ա. Պողոսյանի կողմից մի քանի այլ դամբարաններ են պեղվել, սակայն դրանց գտնվելու ճշգրիտ վայրն անհայտ է: Երկրորդը, առանց աշխարհագրական դիրքի բնութագրության, հրատարակվել են Хачатрян Т., Каменные ящики Степанавана, «Հայկական ՍՍՌ-ԳԱ Պետական պատմության թանգարան, Աշխատություններ, 1959, N 5, էջ 105-112: Այսուհանդերձ, Սաղաթելովի և Պողոսյանի պեղած կյուլթերի նմանությունը խոսում է այն մասին, որ վերջիններս նույնպես կարող են Չեզմանիսում պեղված լինել:

²⁸ Դևեջյան Ս., նույն տեղում, էջ 133-134:

արևմուտք (թիվ 1-2-րդ, 4-8-րդ, 10-րդ, 12-րդ, 14), կամ արևելք-արևմուտք (3, 9, 11, 15, 21)²⁹: Դիակները դրվել են կծկված դիրքով՝ մեկ ձեռքը գլխի տակ դրված³⁰: Բացի 17-րդ դամբարանից, որտեղ փաստագրվել է զույգ թաղում, մյուս դամբարանները անհատական են:

Խեցանոթները ներկայացված են հիմնականում կճուճներով և քրեղաններով, ինչպես նաև սափորներով և բաժակներով: Մի շարք սափորներ իրանի վերին հատվածում զարդարված են ակոսագոտիներով³¹, որոնց զուգահեռները կարելի է տեսնել Գեղարոտում³², Լոռի Բերդում (LS-1)³³ և Արթիկում³⁴: Դրանց կողքին հայտնաբերվել են նաև ակոսային ուղիղ և ալիքաձև գոտիներով, հազվադեպ հանդիպող ցանցկեն եռանկյունազարդ գոտիով զարդարված սափորներ: Նման խեցեղեն հայտնի է Լոռի Բերդից³⁵, Զեթիից³⁶, Մակարաշենից³⁷:

Այստեղ հանդիպող քրեղանները հիմնականում խորն են, երկկոն կամ կլորացող իրանով, շուրթը դուրս ճկված, մեծ մասամբ զարդարված մեկ կամ մի քանի ակոսագոտիներով³⁸: Նման քրեղաններն իրենց զուգահեռներն են գտնում Հայաստանի մի շարք հուշարձաններում, ինչպես օրինակ՝ Լոռի Բերդի թիվ 11³⁹ և Անգեղակոթի 6-րդ⁴⁰ դամբարաններում: Մեկ այլ դեպքում քրեղաններն ունեն լայն բացված շուրթեր և համեմատաբար փոքր հատակ⁴¹: Վերջիններիս զուգահեռները նույնպես հայտնի են Լոռի Բերդից⁴² և այլ հուշարձաններից, օրինակ՝ Իջևանից⁴³:

Բրոնզե ապարանջաններ գտնվել են Չեշմանիսի թիվ 1, 16 և 20 դամբարաններում՝ ննջեցյալի ձախ, իսկ թիվ 19 դամբարանում՝ երկու ձեռքերի վրա ամրացված⁴⁴: Թիվ 8, 11 և 15 դամբարաններում կմախքի ոտքերի մեջտեղում հայտնաբերված շքասեղները խոսում են հագուստի երբեմնի առկայության մասին⁴⁵:

Չեշմանիսի հուշարձանը գտնվում է Լոռի Բերդի դամբարանադաշտից ընդամենը 4 կմ հեռավորության վրա. նշված հուշարձանների հետ առնչվող համայնքներն անկասկած գտնվել են մշտական կապերի մեջ: Չնայած դրան՝ Լոռի Բերդի դամբարանները թե՛ իրենց ճարտարապետական հորինվածքով, թե՛ ուղեկցող գույքի տեսա-

²⁹ Դևեժյան Ս., նույն տեղում, էջ 107:

³⁰ Դևեժյան Ս., նույն տեղում, էջ 105:

³¹ Դևեժյան Ս., նույն տեղում, էջ 107-109:

³² Мартиросян А., նշվ. աշխ., 1964, էջ 94, նկ. 45:

³³ Деведжян С., նշվ. աշխ., աղ. XIV:

³⁴ Хачатрян Т., Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 221, рис. 134, 136.

³⁵ Деведжян С., նշվ. աշխ., աղ. XV. 7, XVI. 2:

³⁶ Петросян Л., Раскопки помятников Кети и Воскеваза, Археологические раскопки в Армении 21, Ереван, 1989, табл. 61/1:

³⁷ Мартиросян А., Армения в эпоху Бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 200.

³⁸ Դևեժյան Ս., նույն տեղում, էջ 111:

³⁹ Деведжян С., նշվ. աշխ., աղ. XXI, 5, 6:

⁴⁰ Խնկիկյան Օ. Անգեղակոթ գյուղի պեղումները, Լրաբեր հասարակական գիտությունների, 1978, N 3, էջ 103-105:

⁴¹ Դևեժյան Ս., նույն տեղում, էջ 112-113:

⁴² Деведжян С., նշվ. աշխ., աղ. XXII, 7:

⁴³ Есаян С., նշվ. աշխ., 1976, էջ 110, 114:

⁴⁴ Դևեժյան Ս., Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Ձորագետում, Երևան, 2001, էջ 105 (1-ին, 16-ին և 20-րդ դամբարաններ), 107 (19-րդ դամբարան):

⁴⁵ Դևեժյան Ս., նույն տեղում, էջ 107:

կանիով և առատությամբ անհամեմատ ավելի հարուստ են, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Չեչմանիսի դամբարանադաշտում թաղվածները պատկանել են հասարակության մեկ այլ՝ նյութապես ոչ ապահովված կամ այսպես կորված «երրորդ» խավին:

1967թ. Չեչմանիսի բլրի վրա կիկլոպյան ամրոցի մնացորդներ են հայտնաբերվել, որոնք 1980 թ. Ս. Դևեջյանի պեղումների ժամանակ դեռևս տեսանելի էին⁴⁶: 2016 թ. այդ մնացորդներն արդեն չէին պահպանվել, քանի որ նույն վայրում էլեկտրայուն էր կառուցվել:

Չարկ է նաև նշել, որ այստեղ ճանապարհաշինարարական աշխատանքների ժամանակ վաղբրոնզեդարյան խեցեղենի բեկորներ են հայտնաբերվել⁴⁷:

LS-5 Կուրթան. Գարգառ և Արգաքան գետերի միախառնման վայրում Կուրթան գյուղին կից մի սարահարթի վրա, գտնվում է 2 հա մակերեսով ամրոց, որին տեղի բնակիչները «Ճտաբերդ» են անվանում (նկ. 4): Ի տարբերություն Լոռի Բերդի միջնադարյան ամրոցի (նկ. 2) և Գետավանի (LS-22) դիրքի՝ Ճտաբերդի սարահարթ կարելի է մուտք գործել մի քանի կողմից, որովհետև երկու գետերի առաջացրած ձորը այնքան էլ խորը չէ: Սարահարթի հարավային մասում պահպանվել են մեծ քարերով շարված պատի մնացորդներ (նկ. 3):

Ճտաբերդի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այստեղ առկա են ուշբրոնզեդարյան, ինչպես նաև երկաթեդարյան շերտեր⁴⁸: Դրա մասին վկայում են 2016 թ. հավաքված վերգետնյա խեցեղենի բեկորները (նկ. 5):

Կուրթան գյուղից մոտ 1 կմ արևմուտք և Գարգառ գետից հյուսիս, պեղվել են չորս դամբարաններ, որոնք թվագրվում են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերով (նկ. 6)⁴⁹: Դեռևս 1989 թ. Ա. Բաղդամյանը մաքրել է երեք դամբարանների «գրահները» (դամբ. 1-3), որոնք հետագայում պեղել են Ս. Դևեջյանը և Ս. Յոբոսյանը: Թիվ 1-3 դամբարանները կառուցված էին իրար կից (նկ. 10): Սրանք միախուց սալարկղային դամբարաններ են, որոնից 1-ինը ուներ հյուսիս-արևելք - հարավ-արևմուտք ուղղվածություն (1,77 x 1,20 x 1,10 մ): Այստեղ թաղված էր 50-55 տարեկան տղամարդ՝ կծկված դիրքում: Թիվ 2 դամբարանախուցը նույնպես հյուսիս-արևելք - հարավ-արևմուտք ուղղվածություն ուներ (2,15 x 1,80 x 0,40 մ): Թիվ 2 և 3 դամբարանում մարդաբանական նյութ չի հայտնաբերվել⁵⁰: Կավամանների շնորհիվ այս դամբարանները թվագրվում են վաղ երկաթի դարով (մ.թ.ա. 12-9-րդ դդ.):

Թիվ 4 դամբարանը նույնպես շրջապատված էր կրոմեխով, սակայն դամբարանախուցը հիմնահողային էր (2,75 x 1,6 x 2 մ): Հանգուցյալը 50-60 տարեկան տղամարդ էր, պառկած աջ կողքին, որին ուղեկցում էր տասը խեցանոթ: Դամբարանը թվագրվում է ուշ բրոնզի դարով (մ.թ.ա. 15-րդ դ.)⁵¹:

⁴⁶ Դևեջյան Ս., նույն տեղում, էջ 85:

⁴⁷ Դևեջյան Ս., նույն տեղում, էջ 17-18, աղ. IV, 1-5:

⁴⁸ Асланян С., Васильев Ст., նշվ. աշխ., 2008, էջ 380-381. Асланян С., Васильев Ст., նշվ. աշխ., 2012, էջ 156-157:

⁴⁹ Դևեջյան Ս., Յոբոսյան Ս., նշվ. աշխ., էջ 113-127: Դեռևս Յ. Մարտիրոսյանը վկայում է Կուրթան գյուղում 1961թ. քանդված մի դամբարանի մասին, որի մետաղյա առարկաները թվագրվում են մ.թ.ա. 7-6-րդ դդ. (Տե՛ս Мартиросян А., նշվ. աշխ., էջ 289-291):

⁵⁰ Դևեջյան Ս., Յոբոսյան Ս., նշվ. աշխ., էջեր 113-115: Այս դատարկ դամբարանները հնարավոր է կենտաֆ լինեին, չնայած մարդկային ոսկորների ամբողջական քայքայումը նույնպես հնարավոր է:

⁵¹ Դևեջյան Ս., Յոբոսյան Ս., նշվ. աշխ., էջ 115:

LS-9 Արմանիս. Այս գյուղը գտնվում է Ստեփանավան քաղաքից 4 կմ արևմուտք՝ Ձորագետի աջ ափին: Այն միջազգային ճանաչում ունի իր ոսկու հանքարդյունաբերության շնորհիվ⁵² (հանքը գործում է մինչ օրս⁵³):

Գյուղաբնակ Վոլոդյա Յովհաննիսյանի այգում պատահաբար հայտնաբերվեցին դամբարաններ. կառույցի վերգետնյա նշաններն ավերվել էին, սակայն դամբարանում դրված գույքը պահպանվել էր, որն էլ հաջողվեց գրանցել (նկ. 7, 8): Այգում պահպանվել է առնվազն մեկ դամբարան, որի ծածկասալը պարզ երևում է հողի մակերեսին: Կավամաններից պարզ դարձավ, որ դամբարանները պատկանել են վաղ երկաթի դարին:

Թիվ 1 խեցանոթը ցածր վզով և բարձր դուրս թեքված շուրթով կճուճ է: Իրանն ունի երկու աղեղնաձև լայն բռնակ: Դրանց վերևի մասում սափորի ուսերին, որպես զարդանախշ, երեք հորիզոնական ակոսագծեր են: Նման բռնակներով կճուճների գուգահեռները հայտնի են Մաստարայի թիվ 4, 5⁵⁴ և 9, 17 դամբարաններից⁵⁵ և փոքրիկ այլ զարդանախշով Թալինի թիվ 18 և 66⁵⁶, Արթիկի թիվ 223⁵⁷ դամբարաններից: Մեկ այլ լայնափոր կճուճ (կավաման թիվ 2) դեպի ուսերն անցման շրջանում նույնպես ունի երեք ակոսային գծանախշեր: Զրեղաններից մեկը (կավաման թիվ 3) ունի բերանի լայն բացվածք և կրկին երեք ակոսային գծանախշեր: Բռնակի փոխարեն այստեղ կարելի է տեսնել մեկ հորիզոնական կանթ, որը հատուկ է վաղ երկաթի դարի քրեղաններին⁵⁸: Թիվ 4 կավամանը իրենից ներկայացնում է փոքր բաժակ՝ շրթին ամրացված օղակաձև բռնակով:

Մի դամբարանից դուրս եկած բազմաթիվ ուլունքները կազմում են սարդիոնե տարբեր չափերի ուլունքների շար (նկ. 9): Դրանից բացի՝ գտնվել են մի քանի բաց կապույտ գույնի ուլունքներ, որոնք հավանաբար մածուկից են և հիշեցնում են կոյաբզեզի ձև:

LS-11 Սվերդլովի ամրոց. Համանուն գյուղից հարավ-արևելք՝ մի բարձր բլրի վրա (նկ. 10), պահպանվել են պաշտպանական կառույցի մնացորդներ, որին տեղի բնակիչները «*Բերդի դոշ*» են անվանում (նկ. 11): Այն երեք կողմից պաշտպանված է բնական ժայռերով, այնպես որ պաշտպանողական այլ կառույցների անհրաժեշտությունը չի եղել: Ժայռի հարավային մասում պահպանվել է չոր շարվածքով պատ, որը տեղ-տեղ հասնում է մինչև 1 մ բարձրության: Այստեղ գործ

⁵² Գյուղի այլ անունն է Ոսկեսար (Տե՛ս Gevorkyan A., Bobokhyan A., նշվ. աշխ, էջ 56):

⁵³ Գևորգյան Ա., Չալիբեկյան Մ., Հայաստանի ոսկու հանքավայրերը և դրանց շահագործումը հնում, Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազարամյակ- մ.թ. XIV դար), Երևան, 2007, էջ 22:

⁵⁴ Badalyan R., Avetisyan P., Smith A., Periodization and chronology of Southern Caucasia: From the Early Bronze Age through the Iron III Period, in: Smith A., Badalyan R., Avetisyan P. (ed.), The foundations of research and regional survey in the Tsaghkahovit plain, Armenia. The Archaeology and geography of Ancient Transcaucasian Societies, vol. 1, Chicago, 2009, p. 85, fig. 30m (5-րդ դամբարան), ինչպես նաև p. 88, fig. 31b (4-րդ դամբարան):

⁵⁵ Badalyan R., Avetisyan P., Bronze and Early Iron Age archaeological sites in Armenia/1: Mt. Aragats and its surrounding region, British Archaeological Reports International Series 1697, Oxford, 2007, p. 217.

⁵⁶ Badalyan R., Avetisyan P., նշվ. աշխ., էջ 257, նկ. 32 (18-րդ դամբարան), էջ 259, նկ. 4 (66-րդ դամբարան):

⁵⁷ Хачатрян Т., Арктикский некрополь, Ереван, 1979, с. 203.

⁵⁸ Bartl K., Die frühe Eisenzeit in Ostanatolien und ihre Verbindungen zu den benachbarten Regionen, Baghdader Mitteilungen, 1994, N 25, S. 486-487.

ուկնենք հավանաբար միաշերտ պաշտպանողական պատի հետ, որը, սակայն, տեղ-տեղ քանդված է և պատված բուսականությամբ:

LS-12 Սվերդլով. Գյուղապետի տան ներքնահարկ. Սվերդլով գյուղի գյուղապետ Կամսար Չերքեզյանի տանը շինարարական աշխատանքների ժամանակ հայնաբերվել է մի դամբարան: Այստեղից դուրս է հանվել մի ամբողջական խեցանոթ, այնուհետև տան կայունությունը պահպանելու համար՝ դամբարանը կրկին փակվել է: Հայտնաբերված կճուճը հաստափոր է, իրանից դեպի ուներ անցման հատվածում երևում է հորիզոնական նախշ՝ կազմված թեք, «փորագրված» փոքր խաչերով (նկ. 12): Այս կավամանի ձևը տարածված է ամենից առաջ միջին բրոնզի դարում, շարունակվում է նաև ուշ բրոնզի դարում, մինչդեռ նախշի առումով տարածման հիմնական դարաշրջանը ուշ բրոնզի դարն է:

Տաշիրի շրջան

LS-14 Կրուզլայա Շիշկա. Հիշյալ գյուղի մոտ գտնվող *Պեչկա* ժայռածածկում գտնվել է մուստիերյան շրջանի մի կայան⁵⁹: Բացի դրանից, հետազոտության ժամանակ գյուղին կից մի բլրի գագաթին հայտնաբերվեցին կիկլոպյան ամրոցի մնացորդներ՝ կառուցված չոր շարվածքի եղանակով (նկ. 13): Նույնատիպ շարվածքով պատեր փաստագրվեցին նաև բլրի լանջերին: Պատերը վատ են պահպանված, բացի այդ վայրի բուսականության աճը հասնում է մինչև 1,5 մ, ինչն էլ դժվարացնում է ամրոցի ուսումնասիրությունը (նկ. 14):

LS-17 Պաղաղբյուր. Այս գյուղը գտնվում է Մեծավանից 9,4 կմ հարավ-արևելք՝ հայ-վրացական սահմանին կից⁶⁰: Տեղանքը վաղուց է հայտնի իր պալեոլիթյան գտածոների շնորհիվ: Գյուղից արևմուտք գտնվում են փոքր քարանձավներ, որոնք արդեն հետազոտված են⁶¹: Պաղաղբյուր գետից հյուսիս, որը հոսում է համանուն գյուղի միջով, փաստագրվեցին մի շարք դամբարաններ. դրանց տարբեր մեծությունների կրով-լեխները երևում էին գետներես: Դամբարաններից հարավ հոսում է Սառնաղբյուր գետը և խառնվում Պաղաղբյուրին: Այդ վայրի հյուսիսային հատվածում պարզ երևում են ժայռային գոյացություններ քարանձավներով: Դրանցից մեկում գտնվում է ժայռապատկերների խումբ՝ այծերի և այլ կենդանիների պատկերներով⁶²:

LS-18 Մեծավան. Բլուկ Բերդ. Մեծավանը գտնվում է հայ-վրացական սահմանից 3,5 կմ հարավ: Այդ տարածքում հայտնի են մի շարք հնագիտական հուշարձաններ⁶³: Գյուղի ծայրամասից 0,6 կմ դեպի հյուսիս-արևելք՝ մի բարձր բլրի գագաթին՝ պահպանվել են ամրոցի մնացորդներ (նկ. 15): Այն տեղի բնակիչների կողմից «*Բլուկ Բերդ*» կամ «*Բլուկ Ամրոց*» է կոչվում (LS-18): Ամրոցը զբաղեցրել է մոտ 1 հա

⁵⁹ Dolukhanov P. et al., նշվ. աշխ.:

⁶⁰ Գյուղի նախկին անվանումն է Սովուկբուլախ:

⁶¹ Gasparian B., Le peuplement de l'Arménie au Paléolithique, Dossiers d'Archéologie, 2007, N 321, p. 25.

⁶² Վերջինիս փոքր պատկերը հայտնի է Տե՛ս Սիմոնյան Հ., Վտանգված ժառանգություն, Մշակույթ, 1989, N 1, էջ 21: Հոդվածում անդրադարձ չի կատարվել ժայռապատկերներին:

⁶³ Գյուղից հյուսիս-արևելք՝ հայ-վրացական սահմանացանցից մի քանի մետր հեռավորության վրա, գտնվում է Սուրբ Հովհաննես Մկրտիչ մատուռը (LS-19), որի անմիջական հարևանությամբ կա մի հարթ, ուղղահայաց կանգնեցված քար, որը տեղի բնակիչների կողմից ներկայացվում է որպես մենհիր: Եկեղեցու կողքին՝ հողի մակերեսին երևացող մեծ ու հարթ քարերը հնարավոր է, որ դամբարաններ լինեն:

տարածք⁶⁴: 1988 թ. երկրաշարժի հետևանքով ամրոցի բազալտե քարերը մասնակի տեղաշարժվել են, մինչդեռ գյուղի մեծահասակ բնակիչները դեռևս հիշում են այստեղ գտնվող պատերի շարվածքների մասին, որոնք պատկերացում են տալիս ամրոցի հատակագծի մասին:

LS-21 Սարատովկա. Հիշյալ գյուղին կից՝ Ստեփանավան-Տաշիր ավտոճանապարհից մոտ 400 մ հյուսիս-արևելք, պահպանվել են բնակավայրի մնացորդներ: Այն տարածվում է մոտավորապես 2,8 հա մակերեսի վրա՝ Տաշիր գետի մի վտակի անմիջապես կողքին: Աշխարհագրական դիրքը անհարմար է, քանի որ գտնվելով իջվածքում՝ այն զուրկ է որևէ բնական պաշտպանությունից:

Չոր շարվածքով, ուղղանկյուն հատակագծով կացարանների պատերը երկկողմանի են, ունեն տարբեր մեծության քառանկյուն հատակագծեր: Հիմքերի պատերը հիմնականում երկշար են: Կացարան N1-ից ամբողջովին պահպանված են միայն պատերի ստորին շարվածքները, որոնք ունեն 12,30 մ երկարություն և 6,30 մ լայնություն: Կացարանի ներսում առկա է բաժանարար պատ, որն այն կիսում է երկու գրեթե հավասար մասերի: Փաստագրված թիվ 2-5 կացարանների հիմքերը վատ են պահպանվել: Թիվ 5 կացարանի հիմքերի մնացորդները՝ բնակավայրի հյուսիսային հատվածում, գտնվում են համեմատաբար բարձր դիրքում (նկ. 16), որը մեր փաստագրած կացարաններից ամենամեծն է (20,8 x 8 մ):

Կացարանների պատերի միայն մեկ շերտն է պահպանվել գետներես: Բնակավայրի տարածքում վերգետնյա խեցեղեն չի գտնվել, ինչն էլ դժվարացնում է հուշարձանի նախնական թվագրումը: Բնակավայրի տարածքն այժմ ամայի է, այն չի օգտագործվում երկրագործական և անասնապահական նպատակներով: Մակերեսին հնագիտական կյուլթ չի հայտնաբերվել:

LS-22 Գետավան. Գետավան գյուղից⁶⁵ 3 կմ հարավ-արևելք գտնվում է մի ամրոց, որը տեղացիների կողմից կոչվում է «Ղզղալա»: Այն գտնվում է երկու կողմից ձորերով շրջապատված բարձրության վրա՝ առաջացած Տաշիր գետի և վերջինիս վտակներից մեկի կողմից: Այս փոքր բարձրավանդակը ընդլայնվում է դեպի հյուսիս, որտեղից սկսած երևում են պարիսպների մնացորդները՝ 6 աշտարակներով (նկ. 17): Պարիսպների ներսի տարածքը զբաղեցնում է մոտ 3 հա: Նորահայտ հուշարձանի ժամանակագրությունը ճշտելու համար անհրաժեշտություն կա կատարելու հետախուզական պեղումներ:

Ամրոցից անմիջապես հյուսիս երևում են ավելի վաղ շրջանի բնակավայրի մնացորդներ, որոնք զբաղեցնում են մոտ 5-6 հա տարածք: Չոր շարվածքով կառուցված պատերի պահպանված բարձրությունը տեղ-տեղ հասնում է 1 մ-ի: Ուղղանկյուն հատակագծով կառույցները շրջապատված են նույն եղանակով կառուցված շրջանաձև շարվածքներով: Բնակավայրից արևմուտք երևում են դամբարաններ՝ ծածկված մեկական հսկա սալաքարերով:

Ըստ ՀՀ Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի (5.99.1)՝ բնակավայրը, ինչպես նաև դամբարանները, թվագրվում են մ.թ.ա. II-ի հազարամյակով, սակայն վերգետնյա խեցեղենի բացակայությունը բարդացնում է նախնական թվագրության հարցը:

⁶⁴ Նահապետյան Ն., Մեծավան, Վանաձոր, 2016, էջ 76-77:

⁶⁵ Ստեփանավան-Տաշիր ավտոճանապարհի մոտ, դրանից արևմուտք և Գետավան գյուղի ձորից արևելք գտնվում է մի մեծ, մինչ օրս չուսումնասիրված դամբարանաբլուր:

Վերջաբան

Հետազոտվող տարածքում փաստագրված հնագիտական իրերը և հուշարձանների տիպաբանությունը թույլ է տալիս ենթադրել, որ պատմական Լոռու տարածքը ամենաուշը բրոնզի դարից սկսած հանդիսացել է երկրագործության և անասնապահության կարևոր կենտրոններից մեկը: Դրան նպաստել է հումուսով չափազանց հարուստ հողը և օդի բավարար խոնավությունը: Հին բնակչության խտության պատճառներից մեկը Ստեփանավանի և Տաշիրի շրջանի սևահողն է, որի հումուսի պարունակությունը Ձորագետի ավազանում 10-14% է. սա Հայաստանի Հանրապետության ամենաբարձր ցուցանիշն է⁶⁶:

Ստեփանավանի և Տաշիրի շրջանների լանդշաֆտն իր անտառներով և գետերով նպաստավոր պայմաններ է ստեղծում որսորդության և ձկնորսության համար: Դրա մասին են խոսում հատկապես Լոռի Բերդում հայտնաբերված կենդանական մնացորդները: Այստեղ հանդիպող կենդանիներից են խոշոր և մանր եղջերավոր անասունները, խոզը, ձին, ուղտը: Բացի այդ, հանդիպում են նաև վայրի կենդանիների ոսկորներ՝ գայլի, աղվեսի, նապաստակի, եղջերուի: Լոռի Բերդի թիվ 56 ուրարտական շրջանի (մ.թ.ա. 7-6 դդ.) դամբարանում հայտնաբերվել են առաջավորասիական առյուծի (*Panthera leo persica*) ոսկրային մնացորդներ, որոնք իշխանության խորհրդանիշ էին⁶⁷:

Տաշիր, Ձորագետ և Ուռուտ գետերը ժամանակի ընթացքում խորացրել են ձորերը՝ կերտելով այս շրջանի լանդշաֆտը: Թվարկված բերդերից մի քանիսը՝ Լոռի Բերդը, Գետավանը և Կուրթանը, կառուցված են այդ ձորերի շնորհիվ առաջացած հարթությունների վրա և ունեն պաշտպանողական հսկայական նշանակություն: Այսպես, եթե ձորերի միջով Կուրթանի ամրոց հասնելը դժվարամատչելի է, ապա Լոռի Բերդի և Գետավանի դեպքում այն գործնականորեն անհնար է: Ուստի պատահական չեն այս ամրոցների կառուցման համար ընտրված տեղերը:

Այլ ամրոցներից Բլուկ Բերդը, Կրուզայա Շիշկան և Սվերդլովը բլուրների վրա են կառուցվել, որոնք գերիշխող դիրք ունեին շրջապատի նկատմամբ: Վերջիններս կարող էին հեշտությամբ օգտագործվել տեղանքի հսկման նպատակով:

Ի հակադրություն դրանց՝ Լոռի Բերդի և Սարատովկայի բնակավայրերը ցածրադիր դիրքում են գտնվում: Չնայած Սարատովկայի բնակավայրը դեռևս ուսումնասիրված չէ, այն կարող է համեմատվել Լոռի Բերդի պեղված բնակավայրի հետ: Վերջիններիս դիրքի ընտրության հարցում, հնարավոր է, որոշիչ դեր է ունեցել ջրի պաշարների առկայությունը:

Լոռի Բերդի դամբարանադաշտից գտնված բազմաթիվ մետաղյա առարկաները խոսում են տվյալ ժամակաշրջանի բնակչության բարեկեցության մասին: Դամբարանադաշտի վաղ շրջանից արդեն իսկ հանդիպում են գեներ, մեծ քանակությամբ ոսկյա և արծաթյա առարկաներ: Դա ցույց է տալիս, որ տեղի բնակչությունն ի վիճակի է եղել օգտվել նշված բնական հանածոներից: Լոռի Բերդի պարագայում ոչ միայն Լեջանի հանքավայրն է չափազանց մոտ գտնվում, այլև Լոռու մարզի այլ հանքերը: Լոռի Բերդի դամբարանադաշտից 3 կմ արևմուտք է գտնվում Արմանիսի հանքը, որն, ամենայն հավանականությամբ, նշված դամբարաններում գտնված ոսկյա առարկաների համար հումքի աղբյուր է եղել:

⁶⁶ Մանսայան Մ., Գրիգորյան Ա., Եղյան Գ., Լոռու մարզ. բնությունը, բնակչությունը, տնտեսությունը, Երևան, 2003, էջ 58:

⁶⁷ Devejian S., Some Urartian objects from the tombs of Lori Berd, Aramazd, 2010, N 5/2, p. 84.


Լոռի Բերդից բացի, այս տարածքում են գտնվում նաև Վանաձորի «Թագավորական» կոչվող և Օձունի դամբարանները, որոնք միջին բրոնզի դարի վերնախավին վերաբերող թաղումների օրինակներ են: Այդ ժամակաշրջանում այս տարածքը ընդգրկված էր թռեղքվանաձորյան մշակույթի ոլորտում⁶⁸:

Ուրարտուի թագավորության և ներկայիս Լոռու մարզի տարածքը բնակեցրած երբեմնի պետական միավորումների հարաբերությունները դեռևս ամբողջովին չեն ուսումնասիրված: Լոռի Բերդի դամբարանների նյութերը խոսում են ուրարտական մեծ ազդեցության մասին, սակայն ողջ Լոռու մարզի համատեքստում, կապերը քիչ են տեսանելի:


Լոռու մարզը, ամբողջ Հայաստանի հետ միասին, գտնվում էր Աքեմենյան տերության ուղեծրում: Հնագիտական առումով հիմնականում հանդիպում ենք տեղական արտադրության առարկաների: Այս պարագայում կրկին եզակի է Լոռի Բերդը, որտեղ հայտնաբերվել են Աքեմենյան աշխարհակալ տերության տարբեր ծագերում շրջանառվող առարկաներ⁶⁹:

⁶⁸ Տե՛ս Դևեջյան Ս., Լոռի Բերդ II, Միջին բրոնզի դար, Երևան, 2006, էջ 119-144:

⁶⁹ Davtyan R., նշվ. աշխ.:




Նկ. 1. Լոռու մարզի 2016 թ. ուսումնասիրված հնագիտական հուշարձանները
 LS-1. Լոռի Բերդ, 2. Չեչմանիս, 3. Գարգառ, 4. Գյուլաքարակ, 5. Կուրթան,
 6. Լեջան, 7. Ագարակ, 8. Կողես, 9. Արմանիս, 10. Սվերդլով (եկեղեցի),
 11. Սվերդլով (ամրոց), 12. Սվերդլով (գյուղապետի ներքնահարկ, 13. Պրիվոլնոյե,
 14. Կրուգլայա Շիշկա, 15. Լեռնահովիտ, 16. Նորաշեն, 17. Պաղաղբյուր, 18.
 Մեծավան (Բլուկ բերդ), 19. Մեծավան (ուխտատեղի սահմանին), 20. Տաշիրի
 գերեզմանադաշտ, 21. Սարատովկա, 22. Գետավան, 23. Բլագոդարնոյե,
 24. Չորագյուղ




Նկ. 2. Լոռի Բերդի ամրոց
 (ըստ Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները,
 Երևան, 2009, էջ 51, նկ. 1)



Նկ. 3. Կիլիկիայի պատ Կուրթանում (լուսանկարը՝ Մ. Հերլեսի)



Նկ. 4. Կուրթանի ամրոցի հատակագիծը (ըստ ՀՀ Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ. 5.57)



Նկ. 5. Կուրթանի վերգետնյա խեցեղենի բեկորներ (զճանկարները՝ Ռ. Դավթյանի, Մ. Հերլեսի)



Նկ. 6. Կուրթանում պեղված դամբարանների կրումլեխները (լուսանկարը՝ Մ. Հերլեսի)



Նկ. 7-9. Խեցեղեն և ուլունքաշար Արմանիսից (լուսանկարը՝ Մ. Հերլեսի)



Նկ. 10. Սվերդլովի բլուրը (լուսանկարը՝ Մ. Հերլեսի)



Նկ. 11. Սվերդլովի ամրոցի պատը (լուսանկարը՝ Մ. Հերլեսի)



Նկ. 12. Կճուճ Սվերդլովից (լուսանկարը՝ Մ. Հերլեսի)



Նկ. 13.



Նկ. 14.

Նկ. 13. Կրուգլայա Շիշկայի ամրոցը և նկ. 14 Գիկլոպյան ամրոց Կրուգլայա Շիշկայում (լուսանկարները՝ Մ. Հերլեսի)



Նկ. 15. Բլուկ Բերդի ավերակները (լուսանկարը՝ Մ. Հերլեսի)



Նկ. 16. Մարատովկա. կացարան թիվ 5 (լուսանկարը՝ Մ. Հերլեսի)



Նկ. 17. Գետավանի ամրոցը (լուսանկարը՝ Մ. Հերլեսի)

**ՏԵՍԱՐԱՆԱՅԻՆ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐՈՎ ՀԻՆՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ
ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԳԼԱՆԱՁԵՎ ԿՆԻՔՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՐԹԻՎՅԱՆ
ՉՈՒԳԱՅԵՆՆԵՐԸ**

Աշոտ Փիլիպոսյան

Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի
պահպանության ծառայություն ՊՈԱԿ

Արթիկի դամբարանադաշտում 1960-70-ական թթ. հնագետ Տելեմակ Խաչատրյանի իրականացրած պեղումները նոր էջ բացեցին հայ նագիտության մեջ: Իզոլը չէ, որ նույնիսկ կես դար անց այդ եզակի հնագիտական հուշարձանի նյութերը տիպաբանման, մեկնաբանման, վերակազմությունների ու վերաթվագրումների կարևոր սկզբնաղբյուր են: Այդ առումով, սույն հոդվածում մեկ անգամ ևս նորովի քննարկվում են Արթիկի դամբարանադաշտի ուշքրոնզեդարյան դամբարաններից հայտնաբերված գլանաձև կնիքներին առնչվող խնդիրները:

Տեսարանային հորինվածքներով գլանաձև կնիքների վաղագույն օրինակները կամ նրանց արտատպությունները վկայված են Միջագետքի (Ուրուկ IV, Ուրուկ III, Ջենդեթ-Նասր, Բաբելոն, Թել Բիլլա, Խաֆաջե) մ.թ.ա. IV հազ. երկրորդ կեսով թվագրվող հնագիտական համալիրներում¹: Մ.թ.ա. III հազ., այսպես կոչված վաղդինաստիական, աքադական և Ուրի III հարստության ժամանակներում, տեսարանային հորինվածքներով գլանաձև կնիքները տարածում են ստանում նաև Թել Ֆարայի, Աբու Սալաբիխի, Ալ Հիբայի, Թել Ասմարի, Թել Սուլեյմեի և համաժամանակյա այլ հուշարձաններում²: Մ.թ.ա. III հազ. վերջերից և առավելապես մ.թ.ա. II հազ. առաջին կեսին այս տարբերակին վերաբերող կնիքների վրա մեծ ազդեցություն են սկսում գործել ամորեական և հարավմիջագետքյան վաղպետական կազմավորումները և հատկապես Իսսին-Լարսան, Միպպարը, Մարին և Բաբելոնը³: Մ.թ.ա. XVI-XV դդ. Միջագետքում տարածում են ստանում այստեղ հաստատված կասսիտական հարստության տիրակալների տեսարանային հորինվածքներով գլանաձև կնիքները⁴, իսկ

¹ Frankfort H., Cylinder seals. A documentary essay on the art and religion of the Near East, London, 1939, tab. III, fig. d. Moortgat A., Vorderasiatische Rollsiegel, Berlin, 1940, fig. 30. Wiseman D., Catalogue of the Western Asiatic seals in the British Museum - Cylinder seals I, Uruk - Early Dynastic periods, London, 1962, tab. 2, fig. a-c. Amiet P. 1980, La glyptique mésopotamienne archaïque, Paris, fig. 654. Brandes M., Siegelabrollungen aus den archaischen Bauschichten in Uruk-Warka, Wiesbaden, 1980, S. 77-87. Collon D., First impressions. Cylinder seals in the Ancient Near East, London, 1987, fig. 639, 742, 800, 807, 885, 887.

² Offner G., Les grandes écoles de glyptique a l'époque archaïque (d'Uruk IV à la 1^{er} Dynastie d'Ur), Revue d'assyriologie et d'archéologie orientale, vol. XL, Paris, 1945-1946, p. 157-204, tab. XXI-XXVI. Heinrich E., Andrae W., Fara (Ergebnisse der Ausgrabungen der Deutschen Orient Gesellschaft in Fara und Abu Hatab 1902/03), Berlin, 1931, Tab. 46, Abb. f. Postgate J., Moon J., Excavations at Abu-Salabikh, 1981, Iraq XLIV, London, 1982, p. 103-136, tab. V, fig. a. Woolley C., The royal cemetery (Ur excavations II), London-Philadelphia, tab. 197, 1934, fig. 57.

³ Moortgat A., Vorderasiatische Rollsiegel, Berlin, 1940, fig. 256, 467. Spellers L., Catalogue des intailles et empreintes orientales Musées Royaux d'art et d'histoire, Bruxelles, 1943, p. 138. Fujii H., Okada Y., Matsumoto K., Oguchi H., Yagi K., Numoto H., Preliminary report on the excavation at area A and area B of Usiye, Al-Rāfidān, 1984-1985, N 5-6, p. 134, tab. 9. Collon D., Catalogue of the Western Asiatic seals in the British Museum. Cylinder seals III, Isin/Larsa and Old Babylonian periods, London, 1986, fig. 122, 133, 637, 641.

⁴ Porada E., On the problem of Kassite art (in Archaeologica Orientalia in Memoriam Ernst

մ.թ.ա. XIII դ. մինչև մ.թ.ա. VII դ. վերջերը, քննարկվող տարածքը դառնում է Միջին ու Նորասուրբական և Նորբաբելոնյան թագավորությունների նմանօրինակ կնիքների արտադրության հիմնական տարածքը⁵:

Սիրիա-Պաղեստինյան աշխարհում (Արադ, Մեզիդդո, Յամամ Էթ-Թուրքման, Թել Մարդիխ, Շահդուդ, Յամա, Թել Բրակ, Չագար-Բագար, Թել Մոզան, Թել Աչանա, Կարքեմիշ և այլն) այս տարբերակին վերաբերող գլանաձև կնիքները հանդես են գալիս մ.թ.ա. IV հազ. վերջերից⁶: Մ.թ.ա. III հազ. վերջում և մ.թ.ա. II հազ. առաջին քառորդին այստեղ առավել նկատելի են դառնում Ուրի III հարստության, ապա և Բաբելոնի հին թագավորության ավանդույթները, իսկ մ.թ.ա. II հազ. կեսերից քննարկվող տարածքը (Բեթ-Շան, Յագոր, Թել Աբու-Յավամ, Գեզեր, Ուգարիթ, Նուզի, Մուհամադ-Արաբ, Թել Ռիմախ, Թել Չաքարիա, Խաբուր, Կամիդ-Էլ-Լոզ, Արապխա, Կիրքուկ և այլն) ներառվում է այս տարբերակին վերաբերող միտաննական և կասսիտական կնիքների ոլորտը⁷: Մ.թ.ա. XIII դ. Սիրիա-Պաղեստինյան աշխարհում աստիճանաբար տարածում են ստանում այս տարբերակին վերաբերող միջինասուրբական կնքագործության օրինակները, որոնց կիրառությունը շարունակվում է նաև Նորասուրբական և Նորբաբելոնյան թագավորությունների տիրապետության շրջանում մինչև մ.թ.ա. VII-VI դդ. սահմանագիծը:

Մ.թ.ա. IV հազ. երկրորդ կեսից այս տարբերակին վերաբերող գլանաձև կնիքները հայտնվում են նաև Իրանական սարահարթում (Շոշ, Չոդա-Միշ, Սիակ III, Գոդին թեփե IV-V, Թեփե Յահյա IVc, Սուրխ-Դում և այլն) ու հատկապես լայն տարածում ստանում տեղի (Բանի-Սուրմա, Կալե Նիսար, Շահդադ, Թեփե Յիսսար III, Թեփե Յահյա IVb, Թափ-Մայյան) հնագիտական համալիրներում⁸: Մ.թ.ա. II հազ. առաջին

Herzfeld), Locust Valley, 1952, tab. XXIX, fig. 5. Beran T., Die Babylonische Glyptik der Kassitenzeit, Archiv für Orientforschung, Bd. 18, Graz, 1958, S. 255-258. Beran T., Die Babylonische Glyptik der Kassitenzeit, Archiv für Orientforschung, 1958, Bd. 18, Graz, S. 255-258. Amiet P., Kassites ou Elamiets? Bibliotheca Mesopotamica, 1986, vol. 21, p. 1-6, tab. 1.

⁵ Moortgat A., Assyrische Glyptik des 13. Jahrhunderts, Zeitschrift für Assyriologie, N 13, Berlin, 1942, S. 50-88. Porada E., The collection of the Pierpont Morgan library. Corpus of Ancient Near Eastern seals, vol. I, Washington, 1948, fig. 660. Collon D., First impressions. Cylinder seals in the Ancient Near East, London, 1987, p. 75-83. Փիլիպոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագործության համակարգում, Երևան, 1998, էջ 32-33:

⁶ Ben-Tor A., Cylinder seals of third-millennium Palestine, Bulletin of the American School of Oriental Research, Supplement Series, N 22, Cambridge (Mass.), 1978, fig. 11. Moortgat A., Moortgat-Correns U., Tell-Chüera in Nordost-Syrien 1976, Berlin, 1978, S. 22, fig. 4. Beck P., The seals and stamps of early Arad, Tel Aviv, N 10, pt. 2, 1984, p. 97-114, fig. 6. Braun B., En Shahdud. Salvage excavations at a farming community in the Jezreel valley, Israel, British Archaeological Reports, International Series 249, Oxford, 1985, p. 80-85.

⁷ Contenau G., La Glyptique Syro-Hittite, Paris, 1922, p. 163, tab. XXXVI, fig. 270. Starr R., Nuzi, vol. 2, Cambridge, 1939, tab. 119. Nougayrol J., Cylindres seaux et empreintes de cylindres trouvés en Palestine, Paris, 1939, p. 30. Frankfort H., Cylinder seals. A documentary essay on the art and religion of the Near East, London, 1939, p. 182-185, tab. XXXI, XLII, XLVI. Collon D., The seal impressions from Tell Atchana / Alalah, Alter Orient und Altes Testament, 1975, N 27, p. 230. Gavin C., The Nuzi collections in the Harvard Semitic Museum in Morrison M.A. and Owen D.J. (in: Studies in the Civilization and Culture of Nuzi and the Hurrians), Winona Lake, 1981, p. 145. Collon D., Some cylinder seals from Mohammed Arab, Iraq L, London, 1988, p. 62-69, fig. 1-3. Salje B., Der Common Style der Mitanni-Glyptik und die Glyptik der Levante und Zyperns in der Späten Bronzezeit, Mainz am Rhein, 1990, Taf. I-XIII. Аветисян Гр., Государство Митанни, Ереван, 1984, с. 38. Янковская Н., От редактора (предисловие к книге Г. Вильхельма «Древний народ хурриты»), Москва, 1992, с. 9-13, рис. 2-4.

⁸ Delaporte L., Musée du Louvre, Catalogue des cylindres orientaux I (Fouilles et missions),

կեսին, այսպես կոչված «Համուրաբբիի դարաշրջանում», Իրանական սարահարթում աստիճանաբար տարածում են գտնում հարավմիջագետքյան կենտրոնների ազդեցության տակ ստեղծված օրինակները⁹, իսկ մ.թ.ա. II հազ. երկրորդ կեսին և մ.թ.ա. I հազ. սկզբներին՝ համապատասխանաբար կասսիտական և ասսուրական գլանաձև կնիքների ազդեցության տակ ստեղծվածները¹⁰: Մ.թ.ա. VIII-VII դդ. Իրանական սարահարթի հյուսիս-արևմտյան շրջաններում, կապված ժամանակի քաղաքական կոնյունկտուրայի հետ, ոչ մեծ քանակով հայտնվում են նաև վանտոսայան կնիքներ, իսկ մ.թ.ա. VI դ. վերջերից գործածության մեջ են մտնում այս տարբերակին պատկանող Աքեմենյան կայսրության ինքնատիպ նմուշները¹¹:

Եգիպտոսում տեսարանային հորինվածքներով գլանաձև կնիքների ամենավաղ և եզակի օրինակները տարածում են ստանում մ.թ.ա. IV-III հազ. սահմանագծին և հայտնի են Սաքքարայի, Նագա Էդ Դերի և Էլ Զաբի պեղումներից¹²: Մ.թ.ա. III-II հազ. այս կնիքները Եգիպտոսում լայն տարածում չգտան և փաստված են սակավաթիվ օրինակներով: Բացառված չէ, որ դրանց հիմնական մասը տեղական չէ, այլ պատրաստվել է Եգիպտոսի տիրակալների պատվերով Լևանտի (Ուզարիթ, Բեյրութ, Թել Բիթ Մերսիմ, Թել Էլ Աջջուլ, Բիբլոս), չի բացառվում նաև Միջերկրականի ավազանի (Պերատի, Փորոս, Կիթին, Կլավդիա, Կարթագեն) կնքագործների կողմից¹³: Մ.թ.ա. II հազ. վերջով և մ.թ.ա. I հազ. առաջին կեսով թվագրվող

Paris, 1920, fig. 250, 464. Ghirshman R., Fouilles de Siak près de Kashan, vol. IV-V, Paris, 1938-1939, tab. XCIV. Delougaz P., Kantor H., New evidence for the prehistoric and protoliterate cultural development of Khuzestan (in: The memorial volume of the 5th international congress of Iranian art and archaeology), Teheran, 1952, p. 32, tab. X. Dyson R., Harris M., The archaeological context of cylinder seals excavated on the Iranian Plateau, *Biblioteca Mesopotamica*, vol. 21, Malibu, 1988, p. 79-110. Vanden Berghe L., Luristan een Verdwenen Bronzekunst uit West-Iran, Gent, 1982-83, p. 49, fig. 17. Buchanan B., Early Near Eastern seals in the Yale Babylonian collections, New Haven-London, 1981, p. 385-387, fig. 1092-1099. Хинц В., Государство Элам, Москва, 1977, с. 20-23, рис. 5-15.

⁹ Sunmer W., Excavations at Tall-i Malyān 1971-1972, Iran XII, London, 1974, 155-180, p. 172, fig. 12. Lambert W., Ancient Near Eastern seals in Birmingham, Iraq XXVII, London, 1979, fig. 42.

¹⁰ Morgan J., *Préhistoire Orientale*, t. III, Paris, 1927, p. 275, tab. 257, fig. 3. Contenau G., Ghirshman R., Fouilles de Tepe Giyan près de Nihavend 1931 et 1932 etc., vol. III, Paris, 1935, p. 49, tab. 38, fig. 1, 3-6. Burney Ch., Excavations at Havtavan Tepe, Iran X, 1969, p. 127-142. Hakemi A., Rad M., The description and results of the scientific excavations of Hasanlu, Solduz (in Persian and English), Teheran, 1950, p. 96, tab. 50, fig. 3-5. Negahban E., The seals of Marlik, *Journal of Near Eastern Studies*, vol. XXXVI, 1977, p. 2, p. 82-87, fig. 1-4. Muscarella O., Surkh Dum at the Metropolitan Museum of Art. A mini report, *Journal of Field Archaeology*, 1981, N 8, fig. 40.

¹¹ Schmidt E., Persepolis, t. II, Oriental Institute Publications, vol. LXIX, Chicago, 1957, p. 43-45, tab. 15, 16. Brentjes B., *Alte Siegelkunst des Vorderen Orients*, Leipzig, 1983, S. 160-164. Collon D., First impressions. Cylinder seals in the Ancient Near East, London, 1987, p. 90-93, fig. 418-423, 425-427.

¹² Scharff A., *Die archäologischen Ergebnisse des vorgeschichtlichen Gräberfeldes von Abusir el-Meleq*, Leipzig, 1926, S. 58. Frankfort H., *Cylinder seals. A documentary essay on the art and religion of the Near East*, London, 1939, p. 292-300. Флиттнер Н., Египетские цилиндры собрания В.С. Голенищева, *Известия Российской Академии истории материальной культуры*, вып. III, Ленинград, 1924, с. 245.

¹³ Walters H., *Catalogue of the Greek and Etruscan vases in the British Museum*, N 1-2, London, 1926, fig. 112. Petrie F., *Ancient Gaza III*, London, 1933, tab. 3, fig. 37. Kühne H., *Das Rollsiegel in Syrien. Zur Steinschneidekunst in Syrien zwischen 3300 und 330 v. Chr.* (Katalogbearbeitung), Tübingen, 1980, Abb. 55, 56. Amandry P., Un motif Scythe en Iran et en Grece, *Journal of Near Eastern Studies*, 1965, vol. XXIV, N 3, p. 11, tab. 1, fig. 1. Sakellarakis J., *Corpus der Minoischen und Mykenischen Siegel I*, Berlin, 1982, Abb. 57. Bleibtreu E., *Rollsiegel aus dem Vorderen Orient*

եգիպտական հուշարձաններում այս տարբերակին վերաբերող կնիքներ գրեթե չկան, իսկ մ.թ.ա. VI դ. վերջերից, մի կարճ ժամանակահատված, այստեղ հայտնվում են աքեմենյան կնքագործության նմուշները:

Փոքր Ասիայում հայտնաբերված գլանաձև կնիքների այս տարբերակի ամենավաղ օրինակներն ու նրանց դաջվածքները հիմնականում վերաբերում են մ.թ.ա. III հազ. սկզբին կամ առաջին կեսին: Դրանք իրենց վրա կրում են Ուրուկի, Ջեմդեթ-Նասրի, Թեյ Ֆարայի կնքագործության ընդգծված ազդեցությունը և հայտնաբերվել են Չինչիրլիի, Տրոյայի, Չաթալ-հույուկի, Արսլան թեփեի ու Յասեկ-հույուկի վաղբրոնզեդարյան հուշարձաններից¹⁴: Մ.թ.ա. III հազ. վերջի և հատկապես մ.թ.ա. II հազ. առաջին կեսի հնագիտական հուշարձաններում (Զյուլ թեփե-Կանիշ, Աջեմ-հույուկ, Կեսարիա, Իզմիր, Տարսուս-Տարսուս, Կարա-հույուկ և այլն) միջագետքյան կնիքների կողքին (և նրանց օրինակով) հայտնվում են նաև տեղական՝ ավելի անփույթ կերպով արված տեսարանային հորինվածքներով գլանաձև կնիքներ¹⁵, իսկ մ.թ.ա. II հազ. կեսերից այստեղ (Ադանա, Ալաջա-հույուկ, Սաբունլիե, Գեյլիդոնյան ծովախորշ, Ուլու Բուրուն, Տարսուս) տարածում են ստանում միտաննական և կասսիտական կնքագործության օրինակները կամ դրանց ազդեցության տակ ստեղծված նմուշները¹⁶: Գլանաձև կնիքների այս տարբերակը Փոքր Ասիայում մ.թ.ա. II հազ. երրորդ քառորդից հետո գործնականում դուրս եկավ կիրառությունից:

Այս տարբերակին վերաբերող գլանաձև կնիքները փաստված են նաև Միջերկրականի ավազանի արևելյան հատվածում: Դրանք պեղվել են Բալկանյան թերակղզու (Թորդոս, Դիկիլի-թաշ), Կրետեի (Կնոսոս) և Ապենինյան թերակղզու (Պալերմո) մ.թ.ա. III հազ. վերջի հնագիտական համալիրներում¹⁷: Այս կնիքներն ու դաջվածքները շատ չեն, կրում են միջագետքյան կնիքերին բնորոշ հատկանիշներ և, ամենայն հավանականությամբ, այստեղ են ներթափանցել փոխանակային առևտրի շնորհիվ¹⁸: Նմանօրինակ տեղական կնիքները, մերձավորարևելյաններին զուգահեռ, այստեղ

- Zur Steinschneidkunst zwischen 3200 und 400 vor Christus nach Funden in Wien und Graz, Vienna, 1981, Abb. 83. Collon D., Some cylinder seals from Mohammed Arab, Iraq L, London, 1988, p. 62-69, fig. 1-24.

¹⁴ Schmidt H., Heinrich Schliemanns Sammlung Trojanischer Altertümer, Berlin, 1902, Abb. 868. Frankfort H., Cylinder seals. A documentary essay on the art and religion of the Near East, London, 1939, pl. XXXVIII, fig. f, j. Moortgat A., Vorderasiatische Rollsiegel, Berlin, 1940, fig. 446. Collon D., First impressions. Cylinder seals in the Ancient Near East, London, 1987, p. 14-15, fig. 10, 11.

¹⁵ Porada E., The collection of the Pierpont Morgan library. Corpus of Ancient Near Eastern seals, vol. I, Washington, 1948, fig. 893. Osten H., Ancient Oriental seals in the collections of Mr. Edward T. Newell, Oriental Institute Publications, vol. XXII, Chicago, 1934, fig. 149, 183, 227, 236, 280, 283, 285. Hrozny B., Inscriptions cunéiformes du Kultépe 2, Praha, 1962, p. 39-40. Buchanan B., Early Near Eastern seals in the Yale Babylonian collections, New Haven-London, 1981, p. 389-408, fig. 1100-1165.

¹⁶ Tunca Ö., Catalogue des sceaux-cylindres du Musée d'Adana, Syro-Mesopotamian Studies, vol. 3, pt. 1, Malibu, 1979, fig. 60. Buchholz H., The cylinder seal (in: Bass G., Cape Gelidonya. A Bronze Age shipwreck), Philadelphia, 1967. Alp S., Zylinder- und Stempelsiegel aus Karahöyük bei Konya, Ankara, 1968, S. 122.

¹⁷ Evans A., The palace of Minos, vol. IV, London, 1935, p. 423, fig. 349, 350. Hood S., An Oriental cylinder seal impression from Romania? World Archaeology, 1973-1974, vol. 5, pl. 3, fig. 11. Rocco B., Un sigillo mesopotamico del Terzo Millennio a. C. Conservato nel Tesoro della Cappella Palatina di Palermo, Atti dell'Accademia di Scienze Lettere ed Arti di Palermo, serie IV, vol. 40, Palermo, 1980-1981, p. 265-274.

¹⁸ Փիլիպոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագործության համակարգում, էջ 39-40:

տարածում են ստանում մ.թ.ա. II հազ. ընթացքում և հայտնի են Պիրենեյան (Վելես-Մալագա), Ապենինյան (Յոմ, Վիչենցա, Նեապոլ) ու Բալկանյան (Թեբե, Պերատի, Լերնա, Չիգուրիես) թերակղզիների, Յոնոս և Զոս կղզիների (Լալիսոս, Կամարիես), Կրետեի (Կնոսոս) և Կիպրոսի (Էնկոմի, Սալամիս, Յակա-Սուլթան-Թեկե, Սինդա) հնագիտական համալիրներից¹⁹: Մ.թ.ա. I հազ. սկզբներից այս տարբերակին պատկանող կնիքները տեղում դառնում են խիստ հազվադեպ:

Տեսարանային հորինվածքներով գլանաձև կնիքները մ.թ.ա. II հազ. տարածվում են նաև Արաբական թերակղզու, Պարսից ծոցի (հատկապես Ֆայլակա կղզու) հնագիտական համալիրներում և հիմնականում կապված են միտաննական սոցիալ-մշակութային իրողությունների հետ²⁰:

Քննարկվող տարբերակին պատկանող կնիքներ հայտնաբերվել են նաև Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում: Սրանք առայժմ բացակայում են տեղի վաղ և միջին բրոնզի շրջափուլերին վերաբերող հուշարձաններում և հատկապես լավ ներկայացված են Լճաշենի, Արթիկի, Հառիճի, Շամիրամի, Լոռի բերդի, Զարաշամբի, Մեծամորի, Զանազեղի, Առաջածորի, Շահթախտի, Չախիրլիի և Մինգեչաուրի ուլբրոնզեդարյան դամբարանային համալիրներում²¹: Դրանց հիմնական մասը միտաննական կնքագործության արդյունք են (կամ նրա ընդգծված ազդեցություն են կրում) և պարզորոշ տեղավորվում են մ.թ.ա. XV-XIV դդ. ժամանակային

¹⁹ Walters H., Catalogue of the Greek and Etruscan vases in the British Museum, N 1-2, London, 1926, fig. 132, 133, 142, 144, 150. Porada E., The collection of the Pierpont Morgan library. Corpus of Ancient Near Eastern seals, vol. I, Washington, 1948, p. 179-198. Kenna V., Catalogue of the Cypriote seals of the Bronze Age in the British Museum, Studies in Mediterranean Archaeology, t. XX, p. 3, Göteborg, 1971, fig. 107, 112. Schaeffer C., Corpus des cylindres-sceaux de Ras Shamra - Ugarit et d'Enkomi - Alasia, Paris, 1983, p. 64. Mazzoni S., Continuity and development in the Syrian and Cypriote common glyptic styles, Biblioteca Mesopotamica, vol. 21, Malibu, 1986, p. 171-182, pl. 33-35.

²⁰ Potts D., Towards an integrated history of culture change in the Arabian Gulf area, Journal of Oman Studies, 1981, vol. 4, p. 29-52, p. 29-52. Collon D., First impressions, fig. 255, 258, 604. Библи Дж., В поисках Дильмуна, Москва, 1984, с. 349.

²¹ Ghirshman R., Fouilles de Sialk près de Kashan, vol. IV-V, Paris, 1938-1939, fig 75, 81, pl. III. Пиотровский Б., Археология Закавказья с древнейших времен до I тыс. до н.э., Ленинград, 1949, с. 68, 88. Кушнарева К., Памятники эпохи поздней бронзы Нагорного Карабаха, Советская археология, 1954, N 4, рис. 8. Бабаев И., Некоторые вопросы изучения памятников глиптики в Азербайджане, Доклады Академии Наук АзССР, т. XX, N 6, Баку, 1964, էջ 78. Мнацаканян А., Цилиндрическая печать из Лчашена, Пленум Института Археологии АН СССР 1961г., секция «Археология Кавказа», тез. докладов, Москва, 1965. Хачатрян Т., Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 157-158. Арешян Г., Оганесян В., Мурадян Ф., Аветисян П., Петросян Л., Конец среднего бронзового века в междуречье Аракса и Куры, Историко-филологический журнал, 1990, N 1, табл. 11, рис. 2,8. Джафаров Г., Связи Азербайджана со странами Передней Азии в эпоху поздней бронзы и раннего железа (по археологическим материалам Азербайджана), Баку, 1984, с. 35-36, табл. III, рис. 2. Оганесян В., Культура первой половины II тыс. до н.э. в среднем течении реки Раздан (Автореферат дисс. на соиск. уч. степени канд. ист. наук), Ереван, 1990, с. 15. Փիլիպոսյան Ա., Արթիկի գլանաձև կնիքներն ու դրանց միտաննական զուգահեռները, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը II, Գյումրի, 1996, էջ 6-7. Փիլիպոսյան Ա., Ոսկու տարանցիկ առևտուրը Հին Արևելքում և Հայկական լեռնաշխարհում, Հին Հայաստանի ոսկին, Երևան, 1997, էջ 28-30. Փիլիպոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագործության համակարգում, էջ 42-43. Դևեջյան Ա., Նորահայտ գլանաձև կնիքներ Հառիճից, Հին Հայաստանի մշակույթը, հ. 3, Երևան, 2003, էջ 67-71. Փիլիպոսյան Ա., Հովհաննիսյան Վ., Արթիկի թիվ 422 դամբարանի միտաննական կնիքը, Հին Հայաստանի մշակույթը հ. 3, Երևան, 2003, էջ 72-82, աղ. 1, նկ. 1:

սահմաններում: Ըստ ձեռքի տակ առկա հնագիտական տվյալների՝ մ.թ.ա. II հազ. վերջին քառորդից քննարկվող տարբերակի կնիքների կիրառությունը կարծես թե ժամանակավորապես դադարում է Հայկական լեռնաշխարհում: Դրանց վերստին օգտագործման փաստն արդեն կապված է Վանի թագավորության (Ուրարտուի) հնամշակութային իրողությունների հետ և ժամանակային առումով համապատասխանում է մ.թ.ա. IX-VI դդ.: Հայտնաբերվել են Թուփրաք քալեի, Թեյշեբահինիի, Մծբինի, Մարդինի և այլ հնագիտական հուշարձաններից²²:

Այս համատեքստում հետաքրքրական է Արթիկից հայտնաբերված գլանաձև կնիքների ուսումնասիրությունը: Դրանք հայտնաբերվել են թիվ 53, 99, 111, 227, 422, 625 կատակոմբային դամբարաններից, վերաբերում են ուշ բրոնզի շրջափուլին և տեղավորվում են մ.թ.ա. XV-XIII դդ. ժամանակային սահմաններում²³: Ուշ բրոնզի շրջափուլի մերձավորարևելյան և միջերկրածովյան զուգահեռների համեմատական վերլուծության համատեքստում առավել տեղեկատվական են Արթիկի թիվ 53 և 422 կատակոմբային դամբարաններից հայտնաբերված օրինակները:

Արթիկ. դամբարան թիվ 53. Տուֆի հանքաշերտի մեջ փորված կատակոմբային, ստորին հատվածում օվալաձև դամբանախցի երկարությունը 1,55 մ էր, լայնքը՝ 1,40 մ, խորությունը՝ 1,45 մ: Խցի մուտքը փակված էր կարմիր տուֆի խցանածակասալով: Հանգուցյալի կմախքը կծկված վիճակում գետեղված էր դամբանախցի կենտրոնում: Ուսին իրար վրա եկող վերջույթներով բրոնզե լարից հերակալ կար, մոտը՝ ցանցկեն գլխիկով, շրջանաձև բռնակով, ցանցկեն՝ զանգվածեղ խաչարդով և տերևաձև, երկսայր, կարճ շեղքով բրոնզե դաշույն: Կմախքի մերձակայքում հայտնաբերվեցին սարդինից և ագաթից պատրաստված գնդաձև, գլանաձև և վեցանիստ ուլունքահատիկներ: Դամբանախցում տեղադրված էին նաև սև փայլեցված 2 սափորներ (մեկը՝ անկանթ, մյուսը՝ իրանի ուռուցիկ հատվածի հանդիպակաց հատվածներում տեղադրված շրջանաձև զույգ կանթերով), սև փայլեցված 2 քրեղաններ և 1 խորը կճուճ (իրանի վերին հատվածում հորիզոնական, վերադիր երեք ուռուցիկ գոտիներով՝ զարդարված խորադիր շեղ կտրվածքներով, իրանի ստորին հատվածում մրապատ): Սարդինե և ագաթե ուլունքների մոտ հայտնաբերվեցին նաև լավ մաղված կավի ամուր շաղախից պատրաստված բազմաթիվ մանր ուլունքահատիկներ և նույն նյութից պատրաստված գլանաձև կնիք (աղ. 1)²⁴: Վերջինիս մակերեսին փորագրված է նույն ուղղությամբ ընթացող տղամարդկանց շքերթ (աղ. 3, նկ. 1): Ճիշտ նման տեսարանային հորինվածքներով գլանաձև կնիքները հիմնականում բնորոշ են միտաննական կնքագործական կենտրոններին, վերաբերում են մ.թ.ա. XV-XIII դդ. ու հայտնաբերվել են Ուզարիթի (Ռաս Շամրա) (աղ. 3, նկ. 3)²⁵ և Նուզիի (Յորդան թեփե)

²² Lehmann-Haupt C., Armenien, einst und jetzt, Bd. 1, Berlin, 1910, S. 9, 18, Abb. 3, 54. Piotrovsky B., Ourartou, Genève, 1970, III. 39, 40, 44. Дьяконов И., Урартские письма и документы, Москва-Ленинград, 1963, рис. 24-39. Ходжаш С., Труханова Н., Оганесян К., Эребуни, Москва, 1979, с. 138, рис. 121, 122. Փիլիպոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագործության համակարգում, աղ. 42, 50: Пилипосян А., Глиптика Вантоспского (Урартского) царства (к постановке вопроса), Археология, этнология, фольклористика Кавказа, Эчмиадзин, 2003, с. 109-110, табл. I, рис. 32-44.

²³ Хачатрян Т., Арктикский некрополь (каталог), Ереван, 1979, с. 133, 152, 157, 204, 296-297, 395.

²⁴ Хачатрян Т., Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 157-158. Хачатрян Т., Арктикский некрополь, с. 27, 133.

²⁵ Schaeffer C. 1983, Corpus des cylindres-sceaux de Ras Shamra - Ugarit et d'Enkomi - Alasia,

(աղ. 3, նկ. 2) պեղումներից: Նույն տեսարանով դրոշագարդված կավանոթի բեկոր (աղ. 3, նկ. 4) հայտնաբերվել է նաև Թել Մոհամեդ Արաբ հնավայրի (Զիրկուկի ջրամբարի մոտ, Յյուսիսային Իրաք) արևելյան կառույցի թիվ 10 սենյակից և, ըստ ուղեկցող հնագիտական նյութերի, վերաբերում է մ.թ.ա. XIII դարին²⁶:

Միայն տղամարդկանցից կազմված և մի ուղղությամբ ընթացող շքերթի տեսարանը տարածված սյուժե է հինմերձավորարևելյան հորինվածքային արվեստում: Դրավադագույն օրինակներից մեկը հայտնի 1 Ուրի մ.թ.ա. III հազ. երկրորդ կեսով թվագրվող արքայական զինանշանի վրա (աղ. 3, նկ. 5)²⁷: Նույն ոլորտին է առնչվում նաև Թռեղքի միջինբրոնզեդարյան դամբանաբլուրից հայտնաբերված և մ.թ.ա. XXI-XX դդ. թվագրվող արծաթե գավաթի վրա ներկայացված գայլապոչ տղամարդկանց ծիսական երթը (աղ. 3, նկ. 6)²⁸: Չի բացառվում, որ նույն բնույթի ծիսական արարողության դրվագ է ներկայացնում նաև մ.թ.ա. II հազ. կեսով թվագրվող Յագլըքայայի խթական զինավառ աստվածների շարժը (աղ. 3, նկ. 7)²⁹: Հատկապես Թռեղքի միջինբրոնզեդարյան արծաթե գավաթի վրա ներկայացված գայլապոչ տղամարդկանց և Յագլըքայայի քարաժայռին քանդակված զինավառ արական աստվածների ծիսական երթերի հորինվածքային տեսարանները թույլ են տալիս ենթադրել, որ նման երթերը, ամենայն հավանականությամբ, իրականացվել են կոնկրետ հանդիսությունների ժամանակ և դրանք, առավելապես առնչվել են բնության մահվան ու զարթոնքի, ինչպես նաև ռազմին առնչվող ծիսական արարողությունների հետ: Չի բացառվում, որ հայ ազգագրության մեջ պահպանված և այսօր էլ որպես առավել տարածված ազգային պարատեսակ համարվող քոչարին (որ պարում են բացառապես տղամարդիկ ու պատանիները) (աղ. 3, նկ. 8, 9) հնագույն այդ ծեսերի որոշ դրվագների մասամբ այլափոխված և վերափոխատարված դրսևորումը հանդիսանա:

Արթիկ. դամբարան 422. Դարձյալ տուֆի հանքաշերտում փորված կատակոմբային դամբանախցի հորատանցքի խորությունը 1,75 մ էր, օվալաձև խցի երկարությունը 1,75 մ, լայնքը՝ 2,30 մ, բարձրությունը՝ 1,20 մ: Այս դամբանախցի մուտքը ևս փակված էր կարմիր տուֆի խցան-ծածկասալով: Հանգուցյալի կմախքը կծկված դիրքով հանգչում էր դամբանախցի կենտրոնում: Նրա մոտ հայտնաբերվեցին տարբեր չափերի սև փայլեցված 3 քրեդաններ, բրոնզե լարից պատրաստված ծամկալներ և/կամ ականջօղեր, արդիոնե ուլունքներ, լավ մաղված կավի ամուր շաղախից պատրաստված բազմաթիվ մանր ու մեծ (գլանաձև, պրիզմայաձև, գնդաձև և այլն) ուլունքահատիկներ, ինչպես նաև նույն նյութից պատրաստված գլանաձև կնիք (աղ. 2, նկ. 1-10)³⁰: Հայտնաբերված հնագիտական նյութերի խումբը թույլ է տալիս համալիրը թվագրելու մ.թ.ա. XV դ. վերջից մինչև մ.թ.ա. XIV դ. առաջին կեսը ներառող ժամանակահատվածով³¹:

fig. 1.

²⁶ Collon D., Some cylinder seals from Mohammed Arab, Iraq L, London, 1988, p. 59-77, pl. VII, fig. 4, ill. 4.

²⁷ История Древнего Востока, 2005, с. 118-119. Вертман С., Месопотамия. Энциклопедический словарь, Москва, 2007, с. 310.

²⁸ Жоржикашвили Л.Г., Гогодзе Э.М., Памятники Триалети эпохи ранней и средней бронзы, Тбилиси, 1974, табл. 56 и 57.

²⁹ История и культура Древнего Востока, Энциклопедический словарь, 2008, с. 410.

³⁰ Хачатрян Т., Древняя культура Ширака, с. 157-158. Хачатрян Т., Артикский некрополь, с. 78, 296-297.

³¹ Ա. Փիլիպոսյան, Վ. Հովհաննիսյան, նշվ. աշխ. էջ 72-82:

Գլանաձև կնիքը պատրաստված է սպիտակավուն շաղախից և ծածկված է թափանցիկ ջնարակի բարակ շերտով: Երկարությունը 23,6 մմ է, տրամագիծը՝ 10,8 մմ (ՀՊԹ, հավաքածու 2346/289): Իրանի դրոշմող մակերեսին, իրար հետևից, աջից ձախ, դեպի կենսաց ծառը շարժվող զույգ թևատարած թռչուններ են փորագրված, որոնց գլխավերևում լուսատուի կամ երկնային ինչ-որ մարմնի՝ համակենտրոն զույգ շրջանագծերի տեսքով արված խորհրդանշան կա (աղ. 4, նկ. 1): Նկատի ունենալով տեսարանի ընդհանուր սյուժեն և դրա իրականացման տեխնիկական մանրամասներն՝ ուսումնասիրողները կնիքը վերաբերել են միտանական կնքագործությանը³²: Նրա դրոշմող մակերեսին փորագրված տեսարանն արխայիկ բնույթ ունի և սյուժետային որոշ տարբերություններով հանդիպում է Միջագետքի (Ջեմդեթ-Նասր), Փոքր Ասիայի (Կարաթաշ-Սեմայուկ), Սիրիա-Պաղեստինյան աշխարհի (Բեթշան IX, Ռաս Շամրա-Ուզարիթ) և Իրանական սարահարթի (Ադա Էվլար, Թեփե Սիպլ) մ.թ.ա. III-II հազ. թվագրվող որոշ օրինակների վրա (աղ. 4, նկ. 2-7)³³: Ըստ որում կնիքների դրոշմող մակերեսներին փորագրված թռչունների թռիչքի կամ շարժման ուղղությունը (քից ձախ և/կամ ձախից աջ) եվրասիական տարածաշրջանի մի շարք հին ցեղախմբերի մոտ առնչվում է ծիսական բնույթի որոշ պատկերացումների հետ և, ըստ այդմ, բարի կամ չար գուշակությունների («Աուսպիցիա», «Մանտիկա») համար հիմք հանդիսանում³⁴: Հավքերի նման շարժը հին հնդիկները կոչում էին «apasavja», հարավային սլավոնները՝ «Мертвецкое коло», իռանականները՝ «tuatal», իսկ անգլիացիներն ու շոտլանդացիները՝ «withershins»³⁵: Թռչնագուշակություններով զբաղվող քրմերին անվանում էին «ավգուրներ»³⁶:

Հատկանշական է, որ միտանական խնդրո առարկա կնիքների և Արթիկի թիվ 422 դամբարանից հայտնաբերված օրինակի վրա առկա հորինվածքային մանրամասները (մարդ, թռչուն, այծ, ցուլ, ծառ, համակենտրոն շրջանագծերով ներկայացված լուսատու և այլն) հանդիպում են Մերձավոր Արևելքի (Մեզիդո IX, Լաքիշ, Ալալախ VI-V) և Հայկական լեռնաշխարհից (Շահթախտի, Արուճ, Ելփին, Զարաշամբ) հայտնաբերված մ.թ.ա. XVI դ. երկրորդ կեսի և մ.թ.ա. XV դ. խեցանոթների նկարագրող իրաններին: Այդ տեսարաններում հատկապես աչք է զարնում իրար հաջորդող թռչունների և վերջիններիս գլխավերևում գետնոված համակենտրոն շրջանագծերով լուսատուի առկայությունը, ըստ ամենայնի, առասպելաբանական որոշակի իմաստ կրող համատեքստում: Դրանց հիման վրա վերականգնվող ենթադրյալ սյուժեն քարաշամբյան գունագարդ անոթների տեսարանների շնորհիվ (աղ. 5, նկ. 1-4) ձեռք է բերում կոնկրետ բովանդակություն, իր մեջ ներառելով առասպելական նետածիզ որսորդի, նրա շան, ինչպես նաև հովանավոր և հակամետ արարածների հաջորդական

³² Хачатрян Т., Древняя культура Ширака, с. 132, 185. Аветисян Г., *Նշվ. աշխ.*, 1984, էջ 34-45. Փիլիպոսյան Ա., *Նշվ. աշխ.*, 1996, էջ 6-7. Փիլիպոսյան Ա., *Նշվ. աշխ.*, 1998, էջ 42-43, աղ. 41, նկ. 8. Փիլիպոսյան Ա., Հովհաննիսյան Վ., *Նշվ. աշխ.*, 2003, էջ 72-82:

³³ Frankfort H., *Cylinder seals. A documentary essay on the art and religion of the Near East*, London, 1939, p. 36, fig. 14. Вильхельм Г., *Древний народ хурриты*, Москва, 1992, с. 13, рис. 4. Amiet P., *La période IV de Tepe Sialk Reconsidered* (in: *De l'Indus aux Balkans*, Recueil Jean Deshayes), Paris, 1985, p. 295, fig. 1. Salje B., *Der Common Style der Mitanni-Glyptik und die Glyptik der Levante und Zyperns in der Späten Bronzezeit*, Mainz am Rhein, 1990, S. 222-223, Tab. VIII, Abb. 145-153.

³⁴ Դիցարանական բառարան, Երևան, 1985, էջ 40, 148-149:

³⁵ Махабхарата, Книга о Карне, 1990, с. 274. Ксенофонт, Москва, 1976, с. 25, 37.

³⁶ Դիցարանական բառարան, էջ 28-29:

և իմաստավորված պատկերները: Դրանց մի մասի (որսորդ, շուն, գայլ, թռչուն, այծ, եղջերու) մոտ կամ վերևում շրջանով (և/կամ համակենտրոն շրջանագծերով) ներկայացված լուսատուն (ինչպես և արթիկյան օրինակի վրա), թերևս, ընդգծում է վերոնշյալ կերպարների աստրալ բնույթը (որսորդ-արև-աստված, որսորդ-մեռնող և հառնող աստված, թռչուն-արև, այծ-աստղ, շուն-աստղ և այլն): Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ ինչպես քննարկված կնիքներին արված փորագիր տեսարաններում, այնպես էլ այլախիսյան և քարաշամբյան խեցանոթների նկարագարող տեսարաններում, ըստ երևույթին, գործ ունենք մ.թ.ա. II հազ. հինմերձավորարևելյան օյկումենում տարածված մեկ համընդհանուր դիցաբանական սյուժեի (առասպելի) կամ նրա տարբերակ-պատումների առանձին դրվագները կազմող տեսարանների խորհրդանշական պատկերման փաստերի հետ:


Հարցն այս տեսանկյունից դիտարկելիս առավել տրամաբանական է թվում հիշյալ վերականգնվող սյուժեն համադրել եվրասիական տարածաշրջանում (այդ թվում նաև Հայկական լեռնաշխարհում) վաղագույն ժամանակներից հայտնի առասպելական որսորդի (Ատտիս, Ադոնիս, Օրիոն, Հայկ, Կեփալոս, Մելեագրոս, Հերմես-Կանդակլես, Կոփսուլին, Օդին, Ոտան և այլն), նրա շան (Սիրիուս՝ Օրիոնի շունը, Սարամա՝ Ինդրայի շունը, Մերա՝ Իկարոսի շունը, Լայլապոս՝ Կեփալոսի շունը, Չևսի ոսկե շունը, Արտավազդ-Շիդարի շները և այլն), ծիսական որսորդության (Կալիդոնյան վարագի որս, Կրոմֆոնյան խոզի որս, Տավտեսյան աղվեսի որս, կինճերի որս Արտավազդ-Շիդարի կողմից) և վերջիններիս հովանավորող թռչունների (Անգուղ, գարուղներ, ավշիներ, սուպարևաներ և այլն) հետ առնչվող մի շարք ավանդապատումների հետ³⁷:

Ի մի բերելով Արթիկի դամբարանադաշտի թիվ 53 և թիվ 422 դամբարաններից հայտնաբերված գլանաձև կնիքների մասին շարադրանքը՝ կարելի է եզրակացնել, որ 1. դրանք արտադրվել են միտանական կնքագործական կենտրոններից մեկում (երկրի արևելյան հատվածում) և Հայկական լեռնաշխարհ են բերվել ռազմաքաղաքական և/կամ առևտրատնտեսական որոշակի գործընթացների արդյունքում, 2. վերաբերում են մ.թ.ա. XV դ. վերջից մինչև մ.թ.ա. XIV դ. առաջին կեսը ներառող ժամանակահատվածին, 3. վկայում են մ.թ.ա. II հազ. կեսին լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի վաղպետական կազմավորումների միջև ձևավորված առևտրատնտեսական և ռազմաքաղաքական որոշակի կապերի մասին, 4. գլանաձև իրանների դրոշմող մակերեսներին կրում են փորագիր տեսարաններ, որոնք առնչվում են Մերձավոր Արևելքում և Միջերկրականի ավազանի արևելյան հատվածում հնագույն ժամանակներից տարածված ծիսապաշտամունքային արարողությունների և դրանց առնչվող առասպելաբանական որոշ սյուժեների հետ, 5. այդ արարողությունների որոշ դրվագներ այլափոխված ձևով պահպանվել և այժմ էլ պարբերաբար կիրառվում են հայ ազգագրական հանդիսություններում և պարերում:


³⁷ Топоров В., Минералы, Мифы народов мира, т. II, Москва, 1992, с. 144. Легенды и сказания Древней Греции и Древнего Рима, Москва, 1990. Հարությունյան Ս., Հայ հին վիպաշխարհը, Երևան, 1987: Պետրոսյան Ա., Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Երևան, 1997: Այս մասին առավել մանրամասն տես՝ Ա. Փիլիպոսյան, Վ. Հովհաննիսյան, Եզվ. աշխ., 2003, էջ 72-82:



Աղյուսակ 1. Արթիկ. Կատակոմբային դամբարան թիվ 53




Աղյուսակ 2. Արթիկ. Կատակոմբային դամբարան թիվ 422



1

2



3



4



5



6



7




8




9

Աղյուսակ 3. 1. Արթիկ. 2. Նուզի (Յորդան թեփե). 3. Ուզարիթ (Ռաս Շամրա).
 4. Թեղ Մոհամեդ Արաբ. 5. Ուր (արքայական զինանշան). 6. Թռեղք.
 7. Յազըբայա. 8, 9. Հայկական պար՝ քոչարի



Աղյուսակ 4. 1. Արթիկ. 2, 4. Ռաս-Շամրա/Ուզարիթ (Պաղեստին).
 3. Ջեմդեթ-Նասր (Միջագետք). 5. Աղա Էվլար (Իրան). 6. Թեփե Սիպկ (Իրան)
 7. Կարաթաշ-Սեմայուկ (Փոքր Ասիա)



Աղյուսակ 5. Քարաշամբի միջինբրոնզեդարյան անոթի իրանին արված պատկերաշարը

ԻՐԻՆՂԻ ՀՈՒՀԱՐԾԱՆԱԽՈՒՄԸ

Հերիկ Դանիելյան, Արսեն Բոբոխյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Իրինղի հուշարձանախումբը¹ գտնվում է Արագած լեռան հարավ-արևմտյան լանջերին, համանուն գյուղից (Արագածոտնի մարզ) մոտ 500 մ դեպի արևելք՝ Գիր սար (Բեքարու) բլրի (2050 մ)² շրջակայքում (սկ. 1-3): Մոտ 90 հա մակերես զբաղեցնող բլուրը ունի հարթ գագաթ և ժայռային դարավանդներ: Հարավային ու հարավարևելյան հատվածներում դարավանդները դժվարամատչելի են և միայն հյուսիսային ու հյուսիս-արևելյան հատվածներում են համեմատաբար հասանելի:

Իրինղը Հուշարձանների պետական ցուցակում (2002 թ.)³ հայտնի է որպես Զ.ա. III-II հազ. ամրոց: Տ. Խաչատրյանի մի հաղորդումից տեղեկանում ենք, որ 1952 թ. Իրինղում կուրգաններ է պեղել Հ. Մազականյանը (թվագրվում են Զ.ա. XII-XI դդ., թերևս նաև Զ.ա. III-II հազ. առաջին կեսով, նյութերը՝ սև-մոխրագույն խեցեղեն, զուգահեռներ ունեն Լճաշենում և Արթիկում)⁴: Ե. Ասատրյանը հիշատակում է ամրոց-բնակատեղին՝ ըստ վերգետնյա նյութերի, այն թվագրելով Զ.ա. III հազ. վերջով, և երկու դամբարանադաշտ, որոնցից առաջինը մի քանի հեկտար մեծությամբ՝ ամրոցի շրջակայքում (ըստ պատահական նյութերի՝ թվագրում է բրոնզի դարի տարբեր փուլերով), իսկ երկրորդը՝ գյուղի հարավում (ծխախոտի չորանոցի մոտից մոտ 2 կմ տարածվում է ասֆալտե ճանապարհի երկու կողմերում)⁵: Ռ. Բադալյանն ու Պ. Ավետիսյանը հետախուզական աշխատանքներ են իրականացրել հուշարձանի տարածքում և հիշում են այն Արագածյան հուշարձանների կատալոգում որպես վաղ բրոնզի և ուշ բրոնզ-վաղ երկաթի հուշարձան⁶:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիշապաքարերը հետազոտող արշավախումբը 2014-2015 թթ. նոր հետախուզական աշխատանքներ իրականացրեց Իրինղի հուշարձանախմբի տարածքում, որի պատճառն էր այստեղ 2014 թ. արշավախմբի կողմից հայտնաբերված վիշապաքարը: Ըստ այդ նոր հետազոտությունների՝ Իրինղի հուշարձանախումբը բաղկացած է հետևյալ միավորներից (սկ. 3/1).

¹ Շնորհակալություն ենք հայտնում Իրինղի գյուղապետ Բարսեղ Հեքոյանին՝ ցուցաբերած բազմակողմանի աջակցության համար, ինչպես նաև ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի մագիստրանտ Լևոն Հարությունյանին, ով մասնակցել է 2014 թ. հետախուզական աշխատանքներին: Օգտակար խորհուրդների և լրացումների համար մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում պ.գ.դ. Ռուբեն Բադալյանին:

² Բլուրն իրենից ներկայացնում է թեք-բլրակապատ սարահարթի վրա գերիշխող էքստրուզիվ գմբեթ, որի հարաբերական բարձրությունը մոտ 75 մ է. այն կազմված է թթու լավաներից, տուֆաքրեկիաներից և սև բազալտներից:

³ Արագածոտն, Իրինղ 48.1:

⁴ Хачатрян Т.С., Из истории изучения древнейших памятников склонов горы Арагац, Арменоведческие исследования I, Ереван, 1974, с. 99. Իրինղից հայտնի որոշ պատահական գտածոներ պահպանվում են ՀՊԹ-ի ֆոնդերում՝ իսկ. NN 2133 (դամբարանի խեցեղեն համալիր) և 1993, 2018 (տուֆե արձանների գլուխներ):

⁵ Ասատրյան Ե., Թալինի շրջանի հուշարձանները, Երևան, 2004, էջ 37-38:

⁶ Badalyan R.S., Avetisyan P.S., Bronze and Early Iron Age archaeological sites in Armenia: I. Mt. Aragats and its surrounding region, British archaeological reports 1697, Oxford, 2007, p. 293.

1. Վաղ բրոնզի դարի բնակավայրը տարածվում է բլրի գրեթե բոլոր հատվածներում, բացի արևմտյանից (ըստ խեցեղեն բեկորների բաշխվածության):

2. Վաղ (ըստ թալանված դամբարանների նյութի), միջին-ուշ բրոնզի և վաղ/միջին երկաթի (ըստ կրոմիտների կառուցողական առանձնահատկությունների) դամբարանադաշտը տարածվում է ողջ բլուրով մեկ (հատկապես հարավային հատվածում) և դրանից անդին՝ դեպի արևելք:

3. Ամրոցի մնացորդները նկատելի են երկու հատվածներում՝ բլրի գագաթի շուրջ (միջնաբերդը) և բլրի ստորին՝ հյուսիս-արևմտյան մասում, որտեղ և գտնվել է մուտք/երը: Միջնաբերդի ամրաշինական համակարգի երկայնքով ընթանում է ուղղանկյուն կցակառույցների (հիմնականում մոտ 6 x 4 մ) երկարավուն շարք: Պատն ավարտվում է այնտեղ, ուր բնական ժայռերը պաշտպանական գործառույթն իրենց վրա են վերցնում: Պարիսպը երկշար է՝ խճաքարային լիցքով, և տեղ-տեղ ընթանում է մի քանի շարքով. որոշ հատվածներում ունի աշտարակ-որմնահեցեր, այլ հատվածներում տեսանելի են խճաքարային հարթակներ: Պարիսպն, ամենայն հավանականությամբ, թվագրվում է վաղ/միջին երկաթի դարով (ըստ կառուցողական առանձնահատկությունների):

4. Բլրի գագաթին կա ուղղանկյուն հատակագծով ինչ-որ շինություն, որի շրջակայքում բոլորակ փոսիկներով քարեր և ժայռային հարթակներ են, որոնք ակնհայտորեն ունեն ինչ-որ ծիսական նշանակություն և տեսականորեն կարող են վերաբերել ամրոցի բնակության բոլոր փուլերին:

5. Բնակավայրը՝ լավ տեսանելի ուղղանկյուն կառույցների հիմքերով, տարածվում է բլրից դեպի հյուսիս-արևմուտք, հավանաբար ժամանակակից է ամրոցին ու գործել է նաև ավելի ուշ (թերևս մինչ միջնադար):

6. Բլրի արևմտյան լանջին առկա են մեգալիթյան կառույցներ: Դրանցից յուրահատուկ է կլոր մեգալիթյան շրջանը (տրամագիծը 11.20 մ, քարերից՝ 5-ը դեռ կանգուն, որոնց կողքին կան ընկածները. դրանց բարձրություններն են՝ սկսած ամենամեծից, կենտրոնում՝ 155, 120, 108, 95, 90, 70, 25 սմ, հմմտ. նկ. 1/2): Մեկ մենհիր հայտնաբերվեց բլրի արևմտյան հատվածի թալանված դամբարանի մեջ: Այլ վիշապանման մենհիր գտնվում է գյուղում՝ եկեղեցու բակում⁷, և կարող էր ներկայիս տեղը բերվել հնագիտական հուշարձանի տարածքից (գյուղի տներից մեկում առկա է նաև բլրի մոտից տեղափոխված տուֆե ֆալլոս): Մեգալիթյան կառույցներից հիշատակելի են թվով հինգ կլոր աշտարակաձև շինությունները («օղուզ(հսկայի) տները»)՝ բլրի արևելյան լանջին:

7. Վիշապաքարը (բազալտ, 337x 85x 49 սմ) հայտնաբերվել է 2014 թ. աշնանը (նկ. 4): Այն գտնվում է բլրի հյուսիս-արևմտյան լանջին (վիշապաքարերին ոչ տիպիկ մի տեղում, ստորին ամրաշինական համակարգի մեջ) և, ինչպես պարզվեց, բերվել է ներկայիս վայրը նույն գյուղի բնակիչ Միսակ Վարդանյանի կողմից հարակից հարթավայրային (վիշապային լանդշաֆտին խիստ բնորոշ, հմմտ. նկ. 3/2) հատվածից՝ 1970-ական թթ. վերջի և 1980-ական թթ. սկզբի մելորացման աշխատանքների ժամանակ (ըստ՝ Չայկ Մանուկյանի, Իրինդի բնակիչ, 05.09.2015): Վիշապաքարը բացառիկ է իր ձևով (մի տեսակ նման է «եգիպտական սարկոֆագի») և պատկերագրությամբ (առաջին անգամ հայտնաբերվել է երկգլխանի

⁷ Այս տեղեկության համար շնորհակալ ենք Յուշարձանների պահպանության գործակալության աշխատակից Գագիկ Սարգսյանին:

վիշապ՝ վերնամասում ցլագլուխ, որի տակ մի առասպելական էակի պատկեր է, որը հատկապես նմանվում է կատվազգիի, և որից դեպի վար է իջնում մի «ժապավեն»):

Բլրի մակերեսից հավաքած 53 խեցեղեն բեկորներից 11-ը պատկանում են վաղ բրոնզին, 10-ը ուշ բրոնզ-վաղ երկաթին, մնացածը դիագնոստիկ չեն⁸: Բլրի մակերեսը հարուստ է վանակատի բեկորներով⁹ (հավաքվել է 32 օրինակ, այդ թվում՝ Զ.ա. II հազ. բնորոշ երկճանկ նետասլաք) (նկ. 5):

Առկա տվյալները գալիս են փաստելու, որ թերևս վաղ բրոնզում բլրի շրջակայքում գործել է անպաշտպան բնակավայր և դամբարանադաշտ, միջին բրոնզում և ուշ բրոնզում այստեղ պիտի լինեի սրբավայր՝ բլրի գագաթի ժայռափոր կերտվածքներով, դամբարանադաշտով, մեգալիթներով (մենհիրներ, «օղուզի (հսկայի) տներ») և վիշապով հանդերձ, իսկ վաղ/միջին երկաթում՝ պահակակետ, որ վերահսկում էր տարածքը (բլրից ողջ տարածաշրջանն ափի մեջ է երևում): Հավանական է նաև, որ հիշյալ գործառույթները լինեին դիաքրոն տարբեր փուլերի համար: Իրինդի պատմաաշխարհագրական միջավայրի դիտարկումը GIS համակարգով (նկ. 2-3) ցույց է տալիս, որ հանձինս համապատասխան հնագիտական հուշարձանների՝ գործ ունենք տեսանելիության բարձր մակարդակով բնորոշվող մշակութային մի գոտու հետ, որում հիմնական օբյեկտ է հանդիսանում Գիր սար բլուրը, բայց նաև վերջինիս ժայռերը, գոգավորությունը, շրջակայքի ջրային հարուստ համակարգը: Դրանց իրական և վերացական իմաստավորմանն ու մասնակի ձևափոխմանն են ուղղված եղել Իրինդի հնագույն բնակիչների ջանքերը:

Իր պատմաաշխարհագրական լանդշաֆտով, բնույթով և թվագրությամբ Իրինդի հուշարձանախումբը հատկապես մոտ է հարակից Ծաղկասարի հուշարձանախումբին¹⁰: Կարծում ենք, որ Ծաղկասարի, Ոսկեթասի, Սառնաղբյուրի, Վերին Սասնաշենի և Իրինդի տիպի հուշարձանախումբերը մի յուրահատուկ ենթամիավոր են արագածյան պատմաաշխարհագրական միջավայրում, որոնց առանցքային կետերը նշված են եղել վիշապ քարակոթողներով:

Այսպիսով, Իրինդը Հայաստանի այն բացառիկ հուշարձանախումբն է, որտեղ տարատեսակ հուշարձաններ (ամրոց, բնակավայր, սրբավայր, մեգալիթներ) հանդես են գալիս մեկ միասնական պատմամշակութային լանդշաֆտում: Տարածքի հետագա ավելի մանրամասն հետազոտությունը կարող է նպաստել հայ հնագիտության մի շարք խնդիրների պարզաբանմանը:

⁸ Պ. Ավետիսյանի և Ռ. Բաղայանի հետախուզական աշխատանքի ընթացքում հայտնաբերված վերգետնյա նյութի մեջ եղել են նաև անտիկ շրջանին վերաբերող խեցեղեն բեկորներ (սահմանումը՝ Մ. Չարդարյանի տեղեկության համար շնորհակալություն ենք հայտնում Ռ. Բաղայանին):

⁹ Իրինդի տարածքում հայտնաբերված վերգետնյա վանակատի XRF անալիզները ցույց են տալիս, որ վերջիններս ծագում են Մեծ Արտեմի հանքավայրից (Keller J., Seifried C., The present status of obsidian source identification in Anatolia and the Near East, in: Widemann, Albore-Livadie, Eds., *Archéologie et Vulcanologie*, 25, 1990, p. 83):

¹⁰ Badalyan R.S., Avetisyan P.S., op. cit., p. 287-289.




1




2

Նկ. 1. Գիր սար բլուրն արևմուտքից (1) և կլոր մեգալիթյան շարքը բլրի արևմտյան լանջին (2)




1



2


Նկ. 2. Գիր սար բլուրն ու շրջակայքը՝ ըստ ArcGIS.imagery տիեզերական նկարի (1), ինչպես նաև 1:10.0000 քարտեզի, դրա թվային մոդելի (DEM) և BingMap տիեզերական նկարի (2)



Պայմանական նշաններ

- | | | |
|------------------------|---|-------------|
| ◆ Վիշապաբար, սերկայուն | ⊗ Կտրամուն կառույցներ | — Գետեր |
| ■ Վիշապաբար, սկզբնապես | ■ Ուղղանկյուն կառույցներ | — Պարիսպներ |
| ▲ Մենկիր | ⊗ Դարավանդան շինություն | — Եզրագծեր |
| ◆ Մենկիրների կտր շարք | ⊗ Բնակավայր բրիգ քառա | |
| ● Դամբարաններ | ● Բլրի զագաթի ուղղանկյուն շինություն, ձակ քարեր, ծայրային հարթակներ | |
| ● Շակաների տներ | | |

1



2

Նկ. 3. Հնագիտական հուշարձանների դասավորվածությունը Գիր սար բլրի տեղագրական քարտեզի վրա (1) և բլրի կտրվածքը՝ վիշապաբարի սկզբնական ու ներկայիս դիրքով (2) (ArcGIS)



1




2



3

Նկ. 4. Վիշապաքարը (1) և դրա պատկերագրական մանրամասները (2-3)



Նկ. 5. Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերին վերագրվող վերգետնյա գտածոներ
 Գիր սար բլրի հարավ-արևմտյան հատվածից, արտաքուստ մոխրագույն,
 ներքուստ դարչնագույն-վարդագույն խեցեղեն բեկորներ (1-4),
 վանակատե նետասլաք (5) և գործիք (6)

МЕТАЛЛ ШИРАКА В ПОЗДНЕБРОНЗОВОМ И РАННЕЖЕЛЕЗНОМ ВЕКАХ. КРАТКИЙ ОЧЕРК

Арам Геворкян

Институт археологии и этнографии НАН РА

Металлургия Ширака и всего Закавказья в период поздней бронзы и раннего железа переживает время своего наивысшего расцвета¹. Даже при беглом ознакомлении с продукцией металлопроизводства этого времени очевиден колоссальный скачок, который переживает эта важнейшая отрасль ремесленного производства. В это время наблюдается резкое увеличение объема производства металла, появляются совершенно новые конструктивные формы орудий труда, оружия и различных украшений.

Ширак со своими интересными, а порою просто уникальными археологическими памятниками с богатейшими наборами меднобронзовых артефактов, в это время занимает одно из ведущих положений. Теперь уже количество меднобронзовых изделий на отдельно взятом памятнике превышает десятки и сотни (Артик) экземпляров.

Для систематизации и всестороннего исследования этого богатейшего материала требуется отдельная, более расширенная работа, в данном же случае я ограничусь лишь металлом отдельных наиболее крупных памятников, медь и бронза которых исследована спектральным анализом. Но прежде чем перейти непосредственно к спектрально исследованным артефактам, хочу вкратце остановиться на орудиях производства бронзолитейного дела. Эти орудия представлены отдельными литейными формами и различными инструментами в виде керамической посуды (тигли, льячки, ложки).

Из такого сравнительно небольшого микрорегиона, каким является Ширак, известны 3 литейные формы для отливки закавказских секир. Если учесть, что со всей территории Армении до сих пор известны всего несколько таких находок, а 3 из них найдены в Шираке, то становится ясным значение этого металлургического микроочага.

Одна из этих литейных формочек найдена на территории ленинканского (Гюмри) поселения. К сожалению, она является случайной находкой без сопровождающего материала, что сильно затрудняет вопрос её стратификации и датировки. Эта хорошо сохранившаяся каменная формочка, по свидетельству А. Мартиросяна, впервые её опубликовавшего, дала гипсовую модель, которая морфологически идентична закавказским секирам 12-11вв. до н.э. Она особенно сближается с аналогичными образцами северо-восточной Армении². В целом же

¹ Телемак Хачатрян долгие годы плодотворно работал в Шираке и внес огромный вклад в дело изучения древней истории не только этого региона, но и всего Армянского нагорья. Его фундаментальные монографии по археологии Ширака основательно обогатили наши представления о древнейшей материальной культуре бронзового века Закавказья. Пользуясь случаем приносим нашу глубокую благодарность за его бескорыстный научный труд на благо археологии Армении.

² Мартиросян А.А., Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с.123, рис. 49

ареал распространения такого типа боевых секир охватывает территорию центрального и восточного Закавказья.

Еще больший интерес представляет фрагмент литейной формочки секиры, найденной на южном холме поселения Орома. Она была обнаружена в не стратифицированном почвенно-растительном слое раскопа М-7. Другая оромская формочка найдена в верхнем смешанном слое северного холма в раскопе А 2-3³. Она представляет собой хорошо сработанную каменную формочку для отливки секир. Сделана она из местной вулканической породы, которая в обилии встречается на северо-западных склонах горы Арагац. По гипсовой модели, сделанной в этой формочке, получилась обушная часть секиры с овальной проушиной. Края обуха рифленые, в центральной части имеется небольшой шишкообразный выступ. Отсутствие элементов лопасти сильно затрудняет полную реконструкцию секиры, но наличие шишкообразного выступа на обухе и её рифленность дает основания полагать, что в этом негативе отливалась боевая секира, типологически близкая секирам из Ахтала и Хаштарака. Наконец следует упомянуть найденный в раскопе Е-2 фрагмент формочки для отливки бронзовых черенковых кинжалов.

Весьма интересным представляется замечательный набор литейщика из арктической катакомбы N 285⁴. Здесь мы сталкиваемся с редчайшим случаем целого набора инструментов литейного дела, которые крайне редко встречаются в могильном инвентаре Закавказья. Опубликованный материал позволяет заключить, что весь набор состоит из разных тиглей и лячек ложкообразной формы. Все они сделаны из плохо отмученной глины и носят на себе следы сильного обжига, а в трещинах сохранились мельчайшие остатки металла.

Морфологически тигли делятся на 2 типа:

1-плоскодонные чашеобразные, которые в свою очередь представлены 2-мя видами: а) тигель без приспособления для слива и тигель с «носиком» для слива жидкого металла;

2-вазообразные тигли с ножкой-подставкой.

Лячки ложкообразной формы по своей конструкции в общем однотипны, единственная разница у них в строении ручки. У одной из них она клювообразная, а у остальных они прямые и более утолщенные.

Этим, пожалуй, исчерпывается материал Ширака, относящийся к инструментарию древнего литейного дела бронзы. Все остальные мои наблюдения относительно производства металла в дальнейшем строятся на основании готовой продукции и результатах спектрального анализа.

Из археологических памятников Ширака этого времени самый богатый по количеству цветной металл раскопан из арктических катакомб.

Т. Хачатрян, целое десятилетие раскопавший эти катакомбные погребения, разделил их на три хронологических этапа: I- этап 14-13вв.

(5).

³ Badaljan R.S., Kohl P.L., Kroll S.E., Horom, 1995. Archäologischen Mitteilungen Iran aus Turan, 29, 1997 Berlin, S. 21, Abb 9, 10.

⁴ Хачатрян Т., Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 204-206, рис. 118.

2 этап - 12-11 вв.; III-этап 10-9 вв. до н.э.⁵. Многолетние раскопки выявили самые разнообразные меднобронзовые изделия. Количество их, по моим подсчетам, достигает более 1200 экземпляров⁶. Среди этого обилия металла массивные бронзовые артефакты в виде оружия или орудий труда составляют в целом незначительную долю. В среднем на каждые десять погребений приходится один массивный предмет. Основная масса металла составляет небольшие украшения самых разнообразных форм и назначений.

Из цветного металла этого весьма интересного и своеобразного могильника спектрально проанализировано 84 изделия. Если придерживаться периодизации Т. Хачатряна, весь проанализированный металл распадается по этапам в следующем количестве. Из захоронений 14-13 вв. до н.э. Исследовано 19 предметов, 60 анализов приходится на материал 12-11 вв. до н.э., а остальные 5 относятся к 10-9 вв. до н.э.

Металл 14-13 вв. до н.э. Результаты спектрального анализа дают возможность разделить весь исследованный металл на 3 металлургические группы. Эти группы выделяются в зависимости от искусственной примеси легирующего компонента в состав сплава.

1. Группа «чистой» меди. В составе двух браслетов (пог. N 72 и N 102) не зафиксировано повышенного содержания легирующих добавок. Они практически отлиты из меди без добавки к нему каких-либо примесей.

2. Группа оловянистой бронзы (Cu + Sn). Основная масса артефактов некрополя отлита из меди с добавкой к ней олова в количестве от 1 до 13%.

3. Группа оловянисто-свинцовистых бронз (Cu + Sn + Pb). В двух случаях наряду с оловом зафиксировано и повышенное содержание свинца. Содержание его превышает 1%. В обоих случаях мы имеем дело с украшениями. В одном случае это небольшой браслет из 72-го погребения, а во втором-биконическая подвеска в виде колокольчика из пог. N 196.

Кроме артефактов с медной основой имеется подвеска из 203-го погребения, отлитая из сплава олова и свинца (Sn + Pb). В этом бинарном сплаве количество элементов примерно равно 50%.

Как видим, мастера - литейщики Артика 14-13 вв. для легировки в основном использовали олово, получая при этом классическую бронзу высокого качества. Остальные типы сплавов применялись крайне редко. Эти выводы, конечно, носят предварительный характер, т. к. выборка проанализированного материала довольно ограничена. Надеюсь, что со временем серия эта будет расширена и тогда можно сделать окончательные выводы.

Металл 12-11 вв. до н.э. Из комплексов этого времени проанализировано около 60 предметов. Это дает возможность проводить более надежные статистические расчеты. Основная масса исследованного материала на различные украшения в виде колец, браслетов, подвесок, умбонов и т.д. Оружие представлено 12 экземплярами, что составляет примерно 1/5 всей серии. Только 5 предметов приходится на орудия труда и конское снаряжение.

⁵ Там же, с. 198-232.

⁶ Хачатрян Т., Артикский некрополь. Каталог, Ереван, 1979.

Рассматривая частотные гистограммы распределения концентрации элементов в составе меднобронзовых предметов 12-11 веков, замечаем, что многие примеси имеют многовершинные конфигурации. Это дает основание полагать, что металлурги древнего Артика пользовались двумя или более рудными источниками. Сказанное наглядно демонстрируется гистограммой Zn, которое показывает, что половина изделий выплавлена из руды, поступавшей из месторождений с очень низким содержанием этого элемента. Другая половина приходится на руду с относительно высоким содержанием (0,03-0,3%).

Здесь наблюдается еще одна любопытная закономерность. Из 12 проанализированных предметов оружия только три экземпляра (ан. 3693, 3723, 3698) отлиты из цинкосодержащих медных руд, в то время как остальные из меди, в исходной руде которой цинк практически отсутствует. Совершенно иная картина наблюдается с составом бронзы предметов украшения. Преобладающая часть их изготовлена из меди с относительно высоким содержанием цинка.

Металлургическая характеристика этой проанализированной серии самая разнообразная. Здесь имеются почти все рецепты сплавов, известные литейщикам Закавказья конца II тыс. до н.э. Однако тщательный разбор полученных данных показывает, что цветной металл Артика 12-11 веков состоит из трех основных металлургических групп и нескольких условных.

Основные металлургические группы этого времени в целом повторяют картину металла 14-13вв.

1. Группа «чистой» меди. Примерно одна шестая часть изделий отлита из меди без легирующих компонентов. Сюда в основном вошли несколько украшений в виде браслетов, один черенковый кинжал с ромбическим сечением из погребения 291 и шаровидная булава из того же комплекса. В эту группу входит и двухчастные конские удила из 79-го погребения.

2. Группа оловянистой бронзы (Cu + Sn). Рассматривая гистограмму распределения концентрации примеси олова в составе арктического металла легко заметить, что присутствие олова, близкое к значению 1%, как бы служит границей между искусственной добавкой и естественной примесью. Исходя из этого, все изделия, содержащие в своем составе 1 и более процентов олова, я отношу к оловянистой бронзе. Сюда не входят те сплавы, в которых помимо олова имеется и повышенное содержание других легирующих компонентов (Pb, Zn, Sb). Оловянистая бронза составляет самую многочисленную металлургическую группу арктического металла. На её долю приходится около 65% всех проанализированных артефактов. Содержание олова в составе сплава колеблется от 1 до 15%. Его количество в составе оружия, как правило, составляет 3-10%, за исключением одного кинжала с трубчатой рукоятью из погребения N182 (ан. 3698), содержание олова в составе которого доходит до 14%, что в данном случае является исключением из общего правила. Из оружия в группу входят 3 наконечника копья, гладкая шаровидная булава из погребения N 331 и бронзовый черенок биметаллического кинжала с железным клинком.

Весь остальной материал этой группы составляют различные браслеты, пуговицы и другие мелкие украшения.

3. Группа оловянисто-свинцовистых сплавов (Cu + Sn + Pb). Анализами зафиксировано 4 случая, когда вместе с оловом в составе бронзы имеется высокое

содержание свинца. Это так называемые двухкомпонентные оловянисто-свинцовистые бронзы. Из такого сплава изготовлены наконечник копья из 330-го погребения, меч (пог. 335), цепочка для подвески (пог. 360) и небольшое граненое кольцо (пог. 564).

Кроме основных металлургических групп, среди арктического металла имеются отдельные случаи, когда изделия отлиты из сплавов, не входящих в вышеуказанные группы. Так, например, имеются два предмета из оловянистой бронзы, но с высоким содержанием мышьяка. Из такого сплава изготовлена миниатюрная статуэтка птицы (пог. 360) и черенковый кинжал с утолщенным клинком (пог. 336). Одна небольшая пуговица из 199-го погребения отлита из оловянисто-цинкового сплава (Sn-7%, Zn-8,5%).

В проанализированной серии встречаются единичные случаи других сплавов, из которых хочу отметить орнаментированный бегущей спиралью браслет (пог. 135), изготовленный из свинцовисто-сурьмяной бронзы. Примесь свинца в нем составляет 1,3, а сурьмы около 12%. Одна пуговица отлита из сурьмяной бронзы (Sb-3,5%), а браслет с нисходящими концами (пог. 198) из свинцовистой бронзы (ан. 9489, 3667). В этой серии анализами зафиксирован случай, когда основой пуговицы (пог. 582) является только сурьма с незначительными примесями Cu, Pb, Bi, Ni, As.

Металл Ширикавана. Для получения наиболее полной картины древнейшего металлопроизводства Ширикава считая необходимым остановиться и на большой серии проанализированного металла Ширикавана.

Это интересное и сложное многослойное поселение с обширным могильным полем, расположенное на левом берегу среднего течения реки Ахурян. В связи со строительством водохранилища здесь велись интенсивные археологические раскопки, в результате чего выявлен богатый материал, среди которого особое место занимают артефакты бронзолитейного дела.

подавляющее большинство меднобронзовых предметов Ширикавана происходят из погребений, раскопки которых показали, что они весьма богаты металлическим инвентарём⁷.

Вся картина металлургии Ширикавана здесь построена по результатам спектрального анализа 97 предметов. Эта серия удачно дополнилась 12 меднобронзовыми находками из разрушенных погребений этого некрополя, собранных сотрудником историко-архитектурного музея-заповедника «Кумайри» С. Тер-Мартirosяном и переданных в лабораторию Рубеном Бадаляном. В общей сложности набралось 109 проанализированных образцов цветного металла позднебронзового и раннежелезного веков.

Эта богатейшая коллекция цветного металла распадается на две хронологические группы: ранний (14-12 вв.) и поздний (11-9/8 вв. до н.э.).

Металл 14-12 вв. Из меднобронзовых артефактов этого времени проанализированы 27 предметов. Спектральным анализом охвачены почти все категории вещей, производящихся в позднебронзовом веке Армении.

⁷ Թորոսյան Ռ., Խնկիլյան Օ., Պետրոսյան Լ., Հին Շիրակագետներ, Երևան, 2002, էջ 30-40, 90-110:

Металлургическая характеристика. Спектроаналитические исследования показали, что мастера-литейщики Ширакавана 14-12 вв. в своих мастерских отливали все, или почти все, типы сплавов на медной основе с применением лигатуры (Sn, Pb, Sb), из которых доминирующая роль принадлежит олову. Из 27 предметов только в двух случаях не было зафиксировано добавки олова (ан. 513-пуговица, пог. 12; ан. 542-навершие булавы, пог. 19). Во всех остальных случаях в обязательном порядке имеется олово от 1 до 12%. Здесь удалось выделить две самостоятельных и пять условных групп.

1. Группа оловянистой бронзы (Cu + Sn). Сюда вошли те сплавы, в составе которых имеется повышенное содержание только олово. К этой группе относятся 15 предметов. Все они изготовлены из меди с добавлением к нему олова от 1 до 12-13%. Из такой бронзы в основном отлиты предметы вооружения (кинжалы, различные детали лука, плоские черешковые наконечники стрел, шаровидные булавы и т. д.).

2. Группа оловянистой бронзы с высоким содержанием мышьяка (Cu + Sn + As). Таких сплавов в исследованной коллекции оказалось всего 5. К ним относятся: 2 плоских черешковых наконечника стрелы из погребения 19 (ан. 538, 540); 2 пуговицы (ан. 512, 541) и небольшая, круглая в сечении проколка (ан. 543).

Условные металлургические группы. К этим группам я отношу те сплавы, количество которых не превышает 1-го, 2-х случаев. Надеюсь, что при расширении серии анализов синхронного металла Ширикавана некоторые условные группы смогут выделиться как самостоятельные.

В исследуемой коллекции имеется единственный случай, когда предмет изготовлен из «чистой» меди. Этим изделием оказалась большая рифленая пуговица из 12-го погребения (ан. 513). Другая аналогичная пуговица отлита из оловянисто-свинцовой бронзы, в составе которой олово составляет 8.2 а свинец 2.4%. К этой же условной группе относится широкий кинжал с трубчатой рукоятью и полусферическим навершием (пог. 12). Полушаровидное навершие булавы из 19-го погребения (ан. 542) отлита из сурьмяной бронзы. Это, пожалуй, один из тех редких случаев, когда древние мастера Ширикавана отлили оружие без применения олова, а легировали сплав только сурьмой (10%). Нечто подобное наблюдается и с составом небольшого, плоского черешкового наконечника стрелы (ан. 540). Разница только в том, что наконечник стрелы изготовлен из высокомышьяковистой меди (Sb-1.9%, As-1.6%).

Как видим, в мастерских Ширикавана В 14-12 вв. до н.э. самые разнообразные по форме и составу меднобронзовые изделия, продукция которых имела самое широкое применение.

О высочайшем технологическом уровне свидетельствует бронзовая скульптурная композиция, изображающая воина со львом⁸. Этот уникальный образец высокохудожественной металлопластики, к сожалению, не исследован спектральным анализом.

Металл 11-9/8 вв. до н.э. Металлопроизводство Ширикавана в этот период вступает в фазу своего наивысшего расцвета. Количество бронзовых артефактов,

⁸ Յորրույան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., Կզվ. աշխ., էջ 46, ադ. XIV(1):

по сравнению временем, возрастает в несколько раз. Появляются новые формы оружия и орудия труда. Становятся более разнообразными предметы конского снаряжения и различные культовые предметы. Наряду с расширением ассортимента происходит и значительный прогресс в технологической области металлургии.

Металлургические группы. Выше я уже говорил, что из коллекции этого времени Ширикавана в общей сложности исследовано 83 предмета из 82 изготовлены на медной основе и только одна небольшая круглая подвеска со свастикой в центре оказалась из сурьмы с добавкой меди и свинца (ан. 533).

Оловянистая бронза (Cu + Sn). Самая многочисленная группа. Из такой классической бронзы отлито 42 предмета. Искусственная добавка олова в них колеблется от 1 до 10-12%. В эту группу входят предметы вооружения, различные виды украшения и предметы культового назначения. Часть перечисленных категорий вещей попадает и в другие металлургические группы, предметы же конского снаряжения (в основном детали конских удил) попадают только в группу оловянистой бронзы.

2. Оловянисто-свинцовистые бронзы (Cu + Sn + Pb). Вторая по количеству группа. Из этого сплава с добавлением олова и свинца отлиты 16 предметов. Сюда входят различные виды оружия, украшения, предметы ритуально-культового назначения и овальная бронзовая чаша из разрушенного погребения (ан. 1075).

3. Условные металлургические группы. Здесь мы имеем самые разнообразные сплавы с применением разных лигатур и их комбинаций. В отдельных случаях применялись несколько легирующих компонентов, что позволяло получать многокомпонентные сплавы. В одном случае (ан. 426) имеем весьма редкий сплав, когда вместе с оловом и свинцом в составе изделия имеется добавка серебра до 2%.

Заканчивая краткую металлургическую характеристику ширакаванского металла 11-9/8 вв. до н.э., хочу отметить, что мастера-литейщики этого времени при получении любого искусственного сплава почти в обязательном порядке применяли олово. Элементарные подсчеты показывают, что количество сплавов, где олово присутствует в роли лигатуры (либо как единственная добавка, либо в комбинации с другими компонентами Pb, Sb, As) составляет 97- 98%. Такие высокие показатели говорят о том, что олово практически выступает как обязательный легирующий компонент и что этот дефицитный для Закавказья металл регулярно и бесперебойно поступал на рынки ширакского микроочага металлопроизводства.

По своему химическому составу металл этого времени мало чем отличается от химизма металла 14-12 веков. Это хорошо видно на гистограммах распределения цинка, висмута, серебра, никеля, кобальта, которые настолько схожи в эти оба периода, что можно утверждать об их полнейшей тождественности. Гистограммы цинка, висмута и мышьяка показывают, что в мастерских Ширикавана на протяжении 14-9/8 вв. до н.э. медная руда поступала из одних и тех же источников. Здесь, как и в случае с арктическим металлом, как-будто выделяются два таких источника, первый из которых характеризуется низким или полным отсутствием примеси цинка, второй источник в своей руде имел сравнительно высокое содержание этого элемента.

Подробности о металле Орома⁹ здесь не приводится т.к. коллекция этого памятника описана в моей отдельной статье о цветном металле Орома.

Длительная история металлургии меди и бронзы Армянского нагорья в своем развитии пережила три основных этапа.

Первый этап с двумя фазами, охвативший огромный промежуток времени от конца VIII до середины IV тыс. до н. э., в памятниках Ширака он еще не зафиксирован. Но, начиная с века ранней бронзы, металлопроизводство этого микрорегиона начинает постоянно выдвигаться на передовые позиции в древнейшем очаге металлургии Закавказья. Об этом говорят многочисленные находки артефактов меднобронзового производства и остатки плавильного и литейного дела в виде шлаковых отходов и литейных форм.

Второй этап, первая фаза. Эта фаза хронологически совпадает со становлением и расцветом Куро-аракской культуры. Характерными признаками этой фазы являются следующие металлургические показатели: наличие печей для первичной плавки окисленных руд на самом поселении, литье в литье в двухстворчатых литейных формах, производство массивных орудий и оружия (топоры, клевцы), черешковые кинжалы, различные украшения в виде колец, браслетов и подвесок.

Для отливки в основном применяется высокомышьяковистая медь. В отдельных случаях встречаются предметы, выплавленные из "чистой" меди. В комплексе металлических изделий ранней бронзы Ширака имеются все категории вещей, характерных для этого этапа металлопроизводства. В первую очередь отметим несколько разновидностей топоров, кинжалов, проколов и некоторые украшения в виде колец и булавок (Арич, Анушаван, Карнут).

Свидетельством высокого уровня местного металлопроизводства являются находки литейной формочки серповидного топорика (Арич), форма для отливки слитка (Карнут) и, что очень важно, набор литейщика, состоящий из нескольких миниатюрных чернолощенных горшочков раннебронзовой поры и трех ложечек для разлива жидкого металла (Карнут), в которых имелись остатки металла.

Второй этап, вторая фаза. Данная фаза металлопроизводства по времени полностью синхронна среднебронзовой культуре Армении. Она характеризуется некоторым спадом производства металла как в самом Шираке, так и по всей Армении в целом. Мы до сих пор еще не имеем каких-либо атрибутов медеплавильного дела (шлаки, печи, литейные формы), металлопроизводство фиксируется только в виде находок готовой продукции. Из них в первую отметим асимметричный топор 18-го века до н.э. При этой фазе металлургии Ширака появляются (правда в единичных случаях) наконечник копья крито-микенского типа и кинжал с рамочной рукоятью (Арич).

Характерными типами сплавов для этого времени становятся оловянистые бронзы, примесь олова в которых доходит до 20%. Спектральное исследование показывает, что весь металл Ширака вероятно связан если и не с одним, то во всяком случае с однотипными медными месторождениями, точное местонахождение которых установить пока не представляется возможным.

⁹ Gevorkyan A., Non-ferrous metal of Horom necropolis, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, vol. XI/1-2, Yerevan, 2017, p. 145-160.

Третий-финальный этап по времени совпадает с веками поздней бронзы и раннего железа. Изучение продукции металлопроизводства этого времени показывает, что как будто нет существенной разницы между металлом поздней бронзы и раннего железа. Но при работе с цветным металлом таких уникальных памятников, как Артик, Ширакаван и Ором, становится очевидным, что где-то на рубеже 12-11 вв. имеет место резкий скачок, который прежде всего выразилось в увеличении производства металла. Количество продукции цветного металла этого времени превышает позднебронзовое производство почти в десять раз. Данное обстоятельство дает основание разделить третий этап металлургии на две последовательные фазы.

Третий этап, первая фаза. По всей вероятности, в начале этого этапа происходят кардинальные изменения в организации всего горно-металлургического производства. Прежде всего, горняки-металлурги начинают осваивать медно-сульфидные руды, что позволило существенно увеличить выплавку металла. Такое резкое увеличение добычи руды вынудило древних металлургов производить первичную плавку уже либо на территории самого месторождения, либо в непосредственной близости от него. Здесь получали слитки меди, которые затем доставлялись на поселение, где они проходили процесс вторичной плавки с дальнейшей разливкой его в литейные формы и получением готовой продукции.

Именно с началом этой фазы наблюдается расширение ассортимента бронзовых изделий, начинается литье высокохудожественных произведений с применением одноразовых восковых моделей (*cire perdue*). Особое место занимает металл, связанный с культово-ритуальным обрядом.

С чисто металлургической точки зрения появляются новые типы бронз, в которых применяются новые лигатурные компоненты и их комбинации, что в итоге позволяет получать разнообразные многокомпонентные сплавы.

Третий этап, вторая фаза. Основным критерием при выделении этой фазы служат чисто количественные показатели. Изучение металла Артика, Ширакавана, Орома и др. Показывает, какой бурный расцвет переживает металлопроизводство Ширака, да всей Армении, и каких высот оно достигает в период раннего железа. Теперь уже почти на каждом памятнике мы встречаем либо литейные формы (Ором, Гюмри-мясокомбинат), либо богатый набор инструментов, связанных с бронзолитейным делом (Артик пог. N 285).

Считаю необходимым особо подчеркнуть, что именно в РЖ веке на всей территории Армении наблюдается резкое увеличение выпуска оружия. Одним из основных выводов было то, что в 11-9 веках до н.э. на всей территории Армении происходит процесс милитаризации общества¹⁰, а Ширак был наиболее милитаризован и наиболее оснащен оружием, чем остальные регионы Армении.

Подытоживая сказанное, можно вкратце заключить, что древние мастера бронзолитейщики Ширака, лишенные собственной меднорудной базы, на протяжении тысячелетий упорно и кропотливо участвовали в сложном и трудном деле развития металлопроизводства и весьма удачно применяли все технологические достижения известные в древнем мире.

¹⁰ Геворкян А.Ц., Металлопроизводство Армении в предрархское время, Сборник статей к 100-летию Бориса Пиотровского, Ереван, 2010, с. 207.

ՇԻՐԱԿԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՅՆԱԳԻՏԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԿԵՐԼՈՒԾԱԿԱՆ

Ռուզան Մկրտչյան, Հասմիկ Սիմոնյան

Երևանի պետական համալսարան, Պատմամշակութային արժեքների պահպանման և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ

Հնագետ Տելեմակ Խաչատրյանի՝ Արթիկի դամբարանների պեղումներից հայտնաբերված գանգաբանական հավաքածուն բազմիցս լուսաբանվել է մարդաբանական գրականության մեջ: Այն հրատարակվել է Ա. Բուբուլջյանի¹, Վ. Ալեքսեևի² և Ռ. Մկրտչյանի³ կողմից: Ժամանակին հավաքածուն բնութագրվել է համեմատաբար նրբակազմ, խիստ պրոֆիլավորված և երկարադեմ ձևաբանությամբ, որի ընդհանուր մարդաբանական կառուցվածքը էնեոլիթյան նրբակազմ տարբերակների և Սևանի գանգվածեղ ձևաբանական տիպերի խառնուրդի արդյունք է⁴: Այս հավաքածուն հնագիտական և մարդաբանական վերստուգումից հետո վերախմբավորվեց: Այն գանգերը, որոնց հնագիտական անձնագրավորումը կասկած չէր հարուցում, թվագրվեցին մ.թ.ա. 14-13-րդ դարերով: Նորովի խմբավորված Արթիկի դամբարանադաշտի գանգաչափությունը ներկայանում է երկարազանգ, երկարադեմ, չափավոր լայնադեմ, խիստ պրոֆիլավորված ձևաբանությամբ⁵:

Հնագետ Տ. Խաչատրյանի Արթիկի և Հառիճի դամբարանադաշտերից հավաքագրված գանգաբանական նյութերը շարունակում են հանդիսանալ կարևոր սկզբնաղբյուր ոչ միայն հնամարդաբանական, այլ նաև կենսահնագիտական ուսումնասիրությունների համար, որոնք գետնեղված են Հայաստանի պատմության պետական թանգարանի գանգաբանական նյութերի պահուցում (30 գանգ), թվագրվում են մ.թ.ա. 14-13-րդ դարերով⁶ և ատամնաախտաբանական ծրագրով ուսումնասիրված են առաջին անգամ:

Սևանի ավազանի բրոնզեդարյան գանգաբանական ընտրանին հավաքագրված է Ներքին Գետաշենի, Հացառատի, Զանագեղի, Նորատուսի, Նորաբակի հուշարձաններից⁷ (նկ. 1):

Աշխատանքի նպատակն է ներկայացնել Շիրակի և Գեղարքունիքի բրոնզեդարյան բնակչության ատամնաախտաբանական որակիչների համեմատական վերլուծականը: Առանձնացված են 3 հատկանիշներ. կարիսը՝ որպես ածխաջրատային սննդանու, արքցեսը՝ ինֆեկցիոն իրավիճակի, Էմալային հիպոպլազիան՝ թերսնման ցուցիչ:

¹ Բուբուլջյան Ռ., Արագածի հյուսիսարևմտյան լանջերի հնեամարդաբանական նյութերը, Բանբեր Երևանի Համալսարանի, Երևան, 1972, N 1, էջ 244- 253:

² Алексеев В.П., Происхождение народов Кавказа, Москва, 1974.

³ Мкртчян Р.А., Палеоантропология Оромского могильника, Ереван, 2001.

⁴ Алексеев В.П., Происхождение народов Кавказа, Москва, 1974, с. 98.

⁵ Мкртчян Р.А., Палеоантропология, с. 27.

⁶ Хачатрян Т.С., Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 90-110.

⁷ Мкртчян Р.А., Биоархеология населения эпохи бронзы Геаркуникского региона, Антропология и этнология Кавказа, Тбилиси, 2016, с. 124-129.

ներ: Հատկանիշները փաստագրվել են ըստ Բ. Սմիթ⁸ և Ա. Բուժիլովայի⁹ մեթոդական ծրագրերի:

Արթիկի և Հառիճի բրոնզեդարյան գանգաբանական հավաքածուի ախտաբանական հատկանիշների անհատական տվյալները (աղ. 1, 2) և նրանց միջինացված տոկոսային ցուցանիշները (աղ. 3) հնարավորություն են ընձեռում փաստելու, որ Շիրակի բրոնզեդարյան հուշարձաններից հայտնաբերված գանգաբանական հավաքածուների մեջ Էմալային հիպոպլազիան բացակայում է: Եթե հաշվի առնենք, որ այս հատկանիշը թերսնման ցուցիչ է, ապա կարելի է վստահորեն փաստել, որ Շիրակի բրոնզեդարյան բնակչությունը սովի կամ սննդային սթրեսների չի ենթարկվել: Այս ցուցանիշը համահունչ է Սևանի ավազանի համարժեք տվյալների հետ, որտեղ Էմալային հիպոպլազիան հանդիպում է միայն կանանց մոտ, ընդամենը երկու դեպքում՝ կազմելով 35 դիտարկումների 5,7 %-ը:

Երկու տարածաշրջանների կարիեսի միջխմբային համեմատականը բացահայտում է Շիրակի արական սեռի բնակչության (նկ. 2) առավել կարիոգեն պատկերը: Այս ախտանիշը Սևանի և Արթիկի բրոնզեդարյան բնակչության իգական սեռի (նկ. 3) մոտ նմանական է, համապատասխանաբար 17,1 և 14,3 %: Մինչդեռ արական սեռի համեմատականի պարագայում այն զգալիորեն՝ մոտ հինգ անգամ, բարձր է Արթիկի դիտարկումներում: Մեծ է նաև բազմակի կարիեսի հանդիպման հաճախականությունը (նկ. 4), հատկապես եթե հաշվի առնենք, որ Սևանի ավազանի արական սեռի դիտարկումներում այն բացակայում է (աղ. 3): Այս տարբերությունից կարելի է եզրակացնել, որ սննդակարգի բաղադրությունը Շիրակի իգական և արական խմբերում տարբեր են եղել: Այն է՝ տղամարդիկ նախապատվությունը տվել են կարբոհիդրատներով առատ հացահատիկային սննդանու: Ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ հացամթերքը տղամարդկանց հասու «դելիկատես» է հանդիսացել:

Կարիեսի առատությունը Շիրակի բրոնզեդարյան բնակչության արական միջավայրում կարելի է բացատրել «հացահատիկի շտեմարաններ ունեցող Շարայի ամբարներով» և նրա առատ օգտագործմամբ՝ սախարոզով հարուստ ածխաջրատային հացամթերքի առկայությամբ: Այս ախտանիշի հանդիպման հաճախականության ցուցանիշների երկսեռային տարբերակվածությունը կարելի է փորձել բացատրել արական սեռի առավել հացակերությամբ:

Կարիեսի նվազ հանդիպման հաճախականությունը Սևանի ավազանի բրոնզեդարյան բնակչության մոտ կարելի է բացատրել նրանց օդոնտոլոգիական կառուցվածքի հզոր միներալիզացմամբ: Որպես գործոն առաջարկում ենք պրոտեինային և հատկապես ձկնային սննդանու հավանական առատությունը ներկայացված էկոլոգիական միջավայրում, որը արգելակում է այս ախտանիշի գոյացումը:

Սևանի ավազանի և Շիրակի հարթավայրի բրոնզեդարյան գանգաբանական հավաքածուների հնաատամնաախտաբանական վերլուծությունը բացահայտեց մի տարօրինակ անհամապատասխանություն՝ կարիեսի նվազ և արքցեսի չափազանց մեծ հանդիպման հաճախականություն (աղ. 3) (նկ. 6, 7):

⁸ Smith B.H., Patterns of molar wear in hunter-gatherers and agriculturalists, American journal of physical anthropology 63, 1984, p. 39-56.

⁹ Бужилова А.П., Древнее население: палеопатологические аспекты исследования, Институт археологии РАН, Москва, 1995.

Անգամ Արթիկի և Հառիճի միացյալ արական ընտրություն արքեպիսկոպոսի հանդիպման հաճախականությունը կրկնակի անգամ գերազանցում է Սևանի ավազանի բրոնզեդարյան հավաքածուի տվյալները, համապատասխանաբար 62,5 և 32,4 %% (աղ. 3):

Սովորաբար կարիեսը և արքեպիսկոպոսի համատեղ հանդիպման մեծ հավանականություն: Այս երկու հատկանիշների բարձր տոկոսային ցուցանիշները Շիրակի բրոնզեդարյան բնակչության միջավայրում (աղ. 3) կարելի է բացատրել որպես առաջին ախտանիշի հետևանք (նկ. 2, 4, 5): Բացառված չէ, որ արքեպիսկոպոսի բարձր տոկոսային ցուցիչները նաև վարակածին իրավիճակի արդյունք են: Կարծես թե օրինաչափ է դարձել, այս պարագայում, առաջին հերթին դիտարկել քաղաքային խիտ բնակեցված միջավայրը: Այս ենթադրությունը պահանջում է Շիրակի բրոնզեդարյան բնակավայրերի մասին լուրջ տեղեկատվություն, որը հնարավոր կլինի օգտագործել հնաախտաբանական համատեքստում:

		Տղամարդիկ		Աջ								Ձախ							
NN	Գ-ամբ. NN	Տարիք		M3	M2	M1	P2	P1	C	I2	I1	I1	I2	C	P1	P2	M1	M2	M3
1	59	20-25	max		1	3													
2	611	30-35	max	4	5C A	6				L	L						4	L	L
3	Յ110	35-40	max	5C a			5	5									L	L	5 a
			mand	5	4	5c							5 a	5 a			6 a	3	
4	71	35-45	mand	-	-	-	-				L	L					-	-	-
5	69	35-45	max	L	L	L											L	A	L
6	632	35-45	max	-	-	-		8A			L		-	-	-	-	-	-	-
7	14/	40-45	max	L	L	L		5C	A	A		L	LA				L	L	L
8	9	40-45	max	L	7 a	8A a	7 a	7 a	6 a	6 a				6 a	6 a	6 a	8 a		L
9	Յ117	40-45	max	L	A	8 A	8		8A			L			L		A	L	
10	Յ117	40-45	max																
			mand																
11	15/	45-50	max	8	A	5 a		4 a	4 a						L		5C A	5C c	3 c
12	63	45-50	max	L	L	8	A	L			L			8	A	8		L	L
13	62	45-55	max	3 C	5 C	8											LA		
14	11	50-55	max	5 a	5 a	6	5 a	3 a							4 a	5 a	5 a	5 a	5 a
15	628	50-60	max	-	-	-										7	6	4	3C
			mand	-	-	-				5			5	3	3	L	3		
16	636	50-60	mand	L			-	-	-	L	L	-	-	-	-	-			L

Աղյուսակ 1

NN	Կանայք			Աջ								Ձախ							
	Գամբ. NN	Տարիք		M3	M2	M1	P2	P1	C	I2	I1	I1	I2	C	P1	P2	M1	M2	M3
1	141	18-22	max	1	1								br		1			1	1
2	630	18-22	max	-	-	-	-	-	-	-	-					2	3	1	
			mand	1	2	3													
3	603	18-22	max	X	3 a	4	3										4		X
4	631	18-22	max	X	2	4 a		3 a									5	2	X
5	350	20-25	max	1 C	1	2											3	2	1
6	302	20-25	max	X	3	5	3	3	4								5 C	3	X
7	630	20-25	max	1	2 a	5 a											5 a		
8	607	20-30	max	1	2	4 a		2									4 a	2	1
9		30-35	max	1	2	4											4	2	1
10	242	30-40	max		A												A		
11	44	35-45	max	1	5	6											5	5	
			max																
12	626	35-45	mand	L	L														
13	640	40-45	max	2	3	A		6					-	-	-	-	-	-	-
14	179	40-45	max			A													


Աղյուսակ 2. Արթիկի և Հատիճի բրոնզեդարյան զանգերի
ատամնաախտաբանական անհատական տվյալներ
(A=աբսցես, L=ատամնաթափություն, C=կարիես, 1-8=ատամների ծամող
մակերեսի մաշվածության աստիճաններ, a,b,c= ատամնաքարի աստիճաններ,
br= կոտրված ատամներ, X= ոչ լրիվ աճած մնայուն ատամներ)

Տարածա- շրջան	n	Աբսցես	Բազմակի աբսցես	Կարիես ըստ անհատների	Կարիես ըստ ատամների	Բազմակի կարիես	Էմալային Հիպոպլազիա
Արթիկ, Հատիճ ♂	16	62,5	25,0	43,8	12,0	18,8	0
Սևանի ավազան ♂	34	32,4	23,5	8,8	2,7	0	0
Արթիկ ♀	14	21,4	7,1	14,3	3,1	0	0
Սևանի ավազան ♀	35	31,4	14,3	17,1	8,6	11,4	5,7

Աղյուսակ 3. Շիրակի և Սևանի ավազանի բրոնզեդարյան զանգաբանական
հավաքածուների ատամնաախտաբանական հատկանիշների տոկոսային
ցուցիչներ



Նկ. 1. Հնաախտաբանական տեղեկատվություն պարունակող բրոնզեդարյան հուշարձանները



Նկ. 2. Հատիճ N 117, ստորին ծնոտի արսցես և ձախ M3-ի կարիես, 3. Արթիկ N 350, վերին ծնոտի աջ M3-ի կարիես, 4. Արթիկ N 15, վերին ծնոտի բազմակի արսցես, ձախ M1 և M2-ի կարիես, 5. Արթիկ N 611, վերին ծնոտի արսցես՝ համադրված աջ M2-ի կարիեսի հետ, 6. Արթիկ N 14, վերին ծնոտի բազմակի արսցես, 7. Արթիկ N 63, վերին ծնոտի բազմակի արսցես

ՈՂՋԻԻ ՄԻՋՆԱՐՈՍԱՆՔԻ Մ.Թ.Ա. ՈՒ ԳԱՄԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Արտակ Գևունի, Գագիկ Խաչատրյան, Անժելա Թադևոսյան
Երևանի պետական համալսարան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտ, Էջմիածնի Պատմաազգագրական թանգարան

Տելեմակ Խաչատրյանի աշխատանքներում կարևոր տեղ է հատկացվում թաղման ծեսին: Ճշգրիտ և համակարգված նկարագրությունները կայուն հիմք են հանդիսանում հետագա պատմագիտական և մշակութաբանական վերակազմությունների համար, ինչպես նաև թույլ են տալիս ճշգրիտ ժամանակագրել ուսումնասիրվող հուշարձանները: Ներկայացվող հաղորդումը նվիրված է Ողջիի միջնահոսանքում գտնվող Կերենի և Շահումյանի դամբարանադաշտերի թաղման ծեսի լուսաբանմանը:

Կապանի տարածաշրջանի հնագիտական ուսումնասիրությունը. Հարավային Սյունիքի տարածաշրջանը թեպետ չափազանց հարուստ է հնագիտական հուշարձաններով, սակայն կանոնավոր հետազոտություններ այստեղ գրեթե չեն իրականացվել: Թանգարաններում պահպանվող հիմնական նյութը հայտնի է դիպվածային գտածոներից և հետախուզական աշխատանքներից¹: Այսպես, դեռևս XX դարի սկզբին Արծվանիկ գյուղի տարածքում գտնվել է կավե արձանիկների հավաքածո²: Պատահական գտածոներից ուշադրության է արժանի Կապանի շրջանի Սգնակ գյուղում պեղված առյուծի արձանիկը, որն ունի բազմաթիվ զուգահեռներ ուրարտական արվեստում³: Դավիթ Բեկ գյուղի մոտակայքում⁴, Կապանի Թեղուտ թաղամասում⁵ ավերված դամբարանների պեղումները ևս հատուկ են նոր նյութով:

Կանոնավոր պեղումներ իրականացվել են Շիկահողի, Տանձավերի և Մաճի դամբարանադաշտերում՝ Օ. Խնկիկյանի կողմից⁶:

Տարածաշրջանի վաղագույն հուշարձանները բնորոշ են Էնեոլիթին (Ճակատեն, Լեռնաձոր) և վաղ բրոնզին (Տանձավեր, Քարե Կտուր, Գեղի, Ամազղ, Շահումյան)⁷: Այսքանով հանդերձ, վաղ, միջին և ուշբրոնզեդարյան հուշարձանների քանակը զգալիորեն զիջում է ավելի ուշ շրջանին բնորոշ հուշարձաններին⁸:

¹ Kroll S., Southern Armenia survey (Syunik) 2000-2003, Aramazd, 1/1, Yerevan, 2006, 19-49. Տարածքն ուսումնասիրվել է նաև Պատմամշակութային ժառանգությունն գ/հ կենտրոնի (ղեկ. Գևունի Ա.) և ԱՀ տուրիզմի գործակալության (ղեկ.՝ Սարգսյան Գ.), ԵՊՀ հնագիտության ամբիոնի (ղեկ.՝ Ավետիսյան Հ.) արշավախմբերի կողմից:

² Есаян С., Скульптура древней Армении, Ереван, 1980, с. 37.

³ Хнкикян О., Syunik during the Bronze and Iron Ages, Barrington 2002, ill. 1.

⁴ Есаян С., Шагинян А., Археологические находки в Зангезуре, Советская археология, 1963 N 3, с. 199-200.

⁵ Եսայան Ս., Չանգեզուրի վաղ հնագիտական հուշարձանները, Լրաբեր հասարակական գիտությունների, 1972, N 4, էջ 70-72:

⁶ Хнкикян О., նշվ. աշխ., էջ 18, 49-58, 83-90:

⁷ Kroll S., նշվ. աշխ., էջ 21-23. Хнкикян О., նշվ. աշխ., էջ 18, 107. Շահումյանում վաղ բրոնզի խցեղենի մասին՝ Ֆ. Մուրադյանի անձնական հաղորդումը:

⁸ Հմնտ.՝ Խնկիկյան Օ., նշվ. աշխ., էջ 18, 47-48. Kroll S., նշվ. աշխ., էջ 21-25. Мартиросян А., Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 148:

Կերենի և Շահումյանի դամբարանադաշտերը. Կերենի դամբարանադաշտը գտնվում է ԼՂՀ Զաչաթաղի շրջանի Կովսականի ենթաշրջանի համանուն գյուղի տարածքում, Կապան քաղաքից 8 կմ հյուսիս-արևելք: Հուշարձանը հետազոտվել է 2003-2013 թթ. ՀՀ մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության գ/հ կենտրոնի արշավախմբի կողմից: Պեղումները կրում էին փրկարարական բնույթ, քանի որ դամբարանների մեծ մասը տնտեսական գործունեության հետևանքով ավերվել էին, իսկ հետագայում՝ թալանվել: Հուշարձանը տեղադրված է Կերեն-Գրիամ անտառային ճանապարհի երկայնքով, ինչպես նաև ջրբաժանի լանջերին: Բացի հիմնական դամբարանադաշտից, այստեղ առկա է ևս երկու դամբարանադաշտ: Այս գոտին շահագործվել է նաև անտիկ շրջանում ու միջնադարում⁹:

Շահումյանի դամբարանադաշտը գտնվում է Կապան քաղաքից 3 կմ հյուսիս-արևմուտք, Շահումյան նախկին գյուղում գտնվող և ներկայումս շահագործվող բազմամետաղ հանքավայրի տարածքում: Հուշարձանը հետազոտվել է 2012 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից: Ինչպես և Կերենում, Շահումյանի գոտին ևս բնակեցված է եղել անտիկ և միջնադարյան շրջաններում: Պեղումների ընթացքում բացվել են XI-XII, XIII-XIV դդ. բնակելի և տնտեսական համալիրներ: Բրոնզ-երկաթեդարյան հուշարձանները առկա են ողջ հնավայրում (բնակավայրի գոտում հիմնականում ավերված են):

Դամբարանների կառուցումը երկու հուշարձաններում էլ ենթարկվում է որոշակի տրամաբանության. եթե Կերենում դամբարանները տեղադրված են վերից վար սկզբունքով (NN 94 և 95, 98 և 99 դամբարաններ, աղ. 1, նկ. 2)¹⁰, ապա Շահումյանի դամբարանադաշտը կամ նրա մի հատվածը (IV տեղամասի N 2,3 և 5 դամբարանների հատված) միասնական համալիրի տեսք ունի և զատված է պատաշարով (աղ. 1, նկ. 1): Այսպիսի երևույթ առկա է Հայաստանի մի շարք հուշարձաններում (Այգեշատ, Նորակերտ¹¹): Տարածքում առկա են մեկուսի տեղադրված զոհասեղաններ (N 4 հարթակ): Չոհասեղան-հարթակներ առկա են Այգեշատի դամբարանադաշտում: Հարթակներ հավաստված են և առանձին դամբարաններին կից (IV տեղամասի N 5 դամբարան աղ. 2, նկ. 2. հմմտ.՝ Ղալաջիք, Ներքին Գետաշենի N 1, Զանազեղի N 3 դամբարաններ, Չիրիկ, Սևասար¹²): Չոհասեղանների երրորդ տիպը տեղադրված էր անմիջականորեն դամբարանային կառույցի վրա: Այսպես, Կապանի V տեղամասի N 3 դամբարանում ծածկասալերի վրա կառուցված է կլոր հատակազածով զոհասեղան, որի կենտրոնում կոտրատված խեցեղենի բեկորներ էին (աղ. 2,

⁹ Գևունի Ա., Խաչատրյան Գ., Վարդանյան Գ., Թադևոսյան Ա., Հնագիտական ուսումնասիրություններ ԼՂՀ Զաչաթաղի շրջանում, Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում (այսուհետև՝ ՀՈԱԱ) 2005-2010 թթ., Ստեփանակերտ, 2011, էջ 49-50:

¹⁰ Գևունի Ա., Խաչատրյան Գ., Վարդանյան Գ., Թադևոսյան Ա., Նշվ. աշխ., էջ 52. Գևունի Ա., Աղիկյան Լ., Խաչատրյան Գ., Վարդանյան Գ., Թադևոսյան Ա., Կերենի 2011-2012 թթ. պեղումների հիմնական արդյունքները, Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում, 2011-2012, Ստեփանակերտ, 2015, էջ 25:

¹¹ Թորոսյան Ռ., 1971 թ. Այգեշատի պեղումների օրագիր. Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, 1948, էջ 8. Գևունի Ա., Թադևոսյան Ա., Սկրտչյան Լ., Շրեշ բլուր, Մեծամորյան ընթերցումներ I, Երևան, 2017, էջ 31-32:

¹² Ավետիսյան Հ., Բորիսյան Ա., Գևունի Ա., Բացթյա պաշտամունքային հարթակները և դրանց տիպերը, Մեծամոր, կեսդարյա պեղումների տարեգրություն, Երևան., 2015, էջ 34-36, 39:

նկ. 1. հմմտ. Վերին Նավեր, Շամիրամ¹³): Որպես զոհասեղան կարող էին օգտագործվել և դամբարանների ծածկասալերը (Կերենի N 105, Կապանի IV տեղամասի N 1 և 3 դամբարաններ¹⁴):

Ինչպես Կերենի, այնուհետև էլ Շահումյանի դամբարանադաշտերը գործել են մի քանի հարյուրամյակների ընթացքում: Դրանցում առկա է թաղման ծեսի բաղադրատարրերի նմանություն, ինչը թույլ է տալիս դիտարկել ծեսի զարգացումը մ.թ.ա. XIV-VI դդ.:

Առավել վաղ շրջանին է բնորոշ Կերենի հ. 103 հիմնահողային դամբարանը (աղ. 3, նկ. 1): Նման թաղումները Սյունիքում սովորական են միջին բրոնզի դարաշրջանում և շարունակում են մինչև մ.թ.ա. II հազ. կեսը¹⁵: Այստեղ ննջեցյալը պառկած էր աջ կողքին, գլխավերևում փայլանախշով սև փայլեցված փոքր անոթներ էին, որոնք բավականին տարածված են Հայաստանում (Լճաշեն, Մեղրաձոր, Արթիկի դամբարանների ավագ խումբ)¹⁶:

Թաղումային կառույցների հաջորդ տիպը ներկայացված է Կերենի N 105 դամբարանով (աղ. 3, նկ. 2): Այն աչքի է ընկնում իր համեմատաբար մեծ չափերով: Կեղծ թաղի եղանակով իրականացված ծածկը կառուցված է խոշոր սալերից: Այստեղ ևս հայտնաբերվեցին մեծ քանակությամբ փոքր անոթներ: Կերենի դամբարանն իր կառուցվածքով և թաղման ծեսով մոտ է Կապանի IV տեղամասի N 7 և 8 դամբարաններին (աղ. 2, նկ. 3): Այստեղ ևս թաղման կառույցը աչքի էր ընկնում համեմատաբար մեծ չափերով և ծածկված էր կեղծ թաղով ու մեծ քարերով փակված խցի հետ հաղորդակցվող դրոմոսով: Դամբարանում հայտնաբերվեցին զրահի տասնյակ կոճակներ, ինչպես նաև հովհարաձև և զանգաձև վերնամասերով դաշույններ: Հատանշական է, որ ինչպես Շահումյանում, այնպես էլ Կերենում մարդաբանական նյութը խիստ հատվածային է և ներկայացված է ընդամենը վերջույթների ոսկորների բեկորներով:

Կերենի դամբարանների վաղ խմբին են պատկանում նաև հ. 3, 62 (հիմնական թաղում) և 90 դամբարանները¹⁷: Թեպետ այս դամբարաններում ծածկը չի պահպանվել սակայն պատերի թեքվածությունից կարելի է ենթադրել կեղծ թաղի առկայությունը: Այստեղ հայտնաբերված երկկոն հորիզոնական փողոկներով անոթներն ունեն զուգահեռներ Կարմիր բլուրի նախաուրարտական շերտում, Դավիթ Բեկում¹⁸: Ավերված դամբարաններից հայտնաբերվել են նաև երկու բրոնզե գոտի՝ զուգահեռներով Կարմիր Բերդում, Օձունում, Ստեփանավանում¹⁹:

Շահումյանի դամբարանադաշտի համալիրների հիմնական մասը պատկանում է մ.թ.ա. XI-IX դդ. (ըստ հ. 6 դամբարանի նյութի C-14 անալիզի արդյունքների): Նախորդ շրջանի պես, դամբարանների մեծ մասի ծածկը կառուցված է կեղծ թաղի եղանակով

¹³ Սիմոնյան Հ., Վերին Նավեր, Երևան, 2006, էջ 36. Արեշյան Գ., Ասատրյան Ե., Հայագիտական կենտրոնի 1979-1983 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներ, Բանբեր Երևանի համալսարանի, 1985, N 3, էջ 203-204:

¹⁴ Ավետիսյան Հ., Բոբոխյան Ա., Ղևունի Ա., նշվ. աշխ., էջ 32:

¹⁵ Хнкикян О., նշվ. աշխ., էջ 42:

¹⁶ Ավետիսյան Պ., Ուշ բրոնզի առաջին փուլի հնագիտական համալիրների առանձնացման և ժամանակագրման փորձ, Հին Հայաստանի մշակույթը, պր. 3, Երևան, 2003, էջ 53-54: Хачатрян Т.С., Артикский некрополь, Ереван, 1979, с. 14:

¹⁷ Ղևունի Ա., Խաչատրյան Գ., Վարդանյան Գ., Թաղևոսյան Ա., նշվ. աշխ., էջ 50-52:

¹⁸ Мартиросян А.А., նշվ. աշխ., էջ 148, 177:

¹⁹ Ղևունի Ա., Խաչատրյան Գ., Վարդանյան Գ., Թաղևոսյան Ա., նշվ. աշխ., էջ 50:

և ունի դրոմոս: Ինչպես և Կերենի հ. 105 դամբարանում, Շահումյանում ևս դամբարանների ծածկը ծառայում էր որոշակի ծիսական գործողությունների համար: Այստեղ ևս առկա է դրոմոս: Կերենի և Շահումյանի վաղ ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի թաղման ծեսի առանձնահատկություններից է կմախքի տեղադրումը անմիջականորեն մայր հողին: Միևնույն ժամանակ մ.թ.ա. XI-IX դդ. Շահումյանի դամբարաններում առկա է ննջեցյալի/ների ոսկորների լրակազմը, քարարկղի ետևի պատի մոտ սովորաբար կյուբը բացակայում է: Առանձնահատուկ պետք է նշել Կերենի հ. 101 դամբարանը, ուր կյուբը տեղադրված էր կոտրված վիճակով, լցումանը զուգահեռ:

Կերենի համալիրներում առանձին խումբ են կազմում կարասային թաղումները (հ. 1, 46, 106): Բոլոր դեպքերում էլ թաղումն իրականացվել է դիակիզման ծեսով, նույն վայրում, որտեղ տեղադրված էին կարասները, որից հետո մոխիրը տաք վիճակում լցվել է կարասի մեջ: N 1 և 46 դամբարաններում կարասը տեղադրված էր բերանն ի վայր, իսկ N 106-ում հատակի վրա: Մեկ դեպքում (հ. 1 դամբարան) կարասն օղակված էր քարաշարով (հմմտ՝ Նոր Արեշ)²⁰: Հ. 106 դամբարանում, նույն հարթակում ամփոփված էր երկու կարաս, ընդ որում կարասներից մեկը հորված էր, իսկ մյուսը՝ տեղադրված էր ոչ բարձր հողե հարթակին (աղ. 4, նկ. 1): Թաղման արարողակարգից հետո տարածքը ծածկվել է դամբանով: Կարասներն ունեն իրենց բազմաթիվ զուգահեռները մ.թ.ա. VII-VI դդ. խեցեղեն կյուբում²¹: Կերենի կարասային թաղումներն ունեն իրենց զուգահեռները Իշխանազետի հովտում հայտնաբերված դամբարանադաշտում²²:

Կերենի դամբարանների հիմնական խումբը պատկանում է մ.թ.ա. VII-V դդ.: Այս շրջանին է վերաբերում նաև Շահումյանի հ. 2 դամբարանի իջեցուկ թաղումը: Թեպետ այստեղ պահպանվում են թաղման ծեսի հիմնական հատկանշական գծերը, սակայն հանդես են գալիս նաև նորերը: Այսպես կեղծ թաղի տեսքով ծածկը պահպանվում է, սակայն ի հայտ են գալիս հարթ ծածկով կառույցներ: Որոշ կառույցներում կենտրոնական հատվածն ավելի խորն է, ինչը կառույցին տալիս է նավակաձև տեսք (հմմտ. Հարժիս): Կառույցները քարարկղային են, սակայն մի շարք դեպքերում լայնական պատը հիմնահողային է (հմմտ.՝ Մակարաշեն)²³: Պահպանվում է դամբարանի ետնապատի մոտ կյուբ չտեղադրելու ավանդույթը: Այս շրջանի թաղման ծեսի առանձնահատկություններից է մարդաբանական կյուբի տեղադրումը ոչ թե անմիջականորեն մայր հողի, այլ հողային միջնաշերտի վրա (աղ. 4, նկ. 2), ինչն իր բացատրությունն ունի զրադաշտական ծիսակարգում (Авеста, Видевтат, VIII, 8): Իրանական զուգահեռները դիտարկվում են նաև Կերենի որոշ դամբարաններում (N

²⁰ Мартиросян А.А., նշվ. աշխ., էջ 241:

²¹ Аветисян Г., Биайнская керамика памятников Араратской долины, Ереван, 1992, табл. 2 (5, 10).


²² Սիմոնյան Հ., Գևուկի Ա., Արցախի ազատագրված տարածքների հնագույն, նախաքրիստոնեական և միջնադարյան հուշարձանները, ՀՀ-ում, 1993-1995 թթ. հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, 1996, էջ 80:

²³ Կարապետյան Ի., Հայաստանի կյուբական մշակույթը մ.թ.ա. VI-IV դդ., Երևան., 2005, էջ 23:


64-ում վերարտադրված է հեղման գործընթացը, N 99-ում անոթի մեջ կա Էֆեդրինի հետքեր, որը խառմայի բաղադրատարր է²⁴):

Ասպիտով, ԼՂՀ Զաշաթաղի շրջանի Կերենի և ՀՀ Սյունիքի մարզի Շահումյանի դամբարանադաշտերի ուսումնասիրությունը մեծապես հարստացնում է մեր գիտելիքները տարածաշրջանի մ.թ.ա. II-ի հազ. թաղման ծեսի վերաբերյալ:

²⁴ Саргсян Г., Гнуни А., Новые данные о культе и религии в восточных областях Армении во второй-третьей четверти I тыс. до н. э. (местные традиции и инокультурное влияние), Археологические Вести, т. 21, С. Петербург, 2015, с. 106.



Աղյուսակ 1



Աղյուսակ 2



1



2

Աղյուսակ 3



1



2

Աղյուսակ 4

ԴՎԻՆԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ ՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Աղավնի ժամկոչյան, Նյուրա Յակոբյան
ՀՀ ԳԱՄ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Դվինի պատվավոր հյուրերից մեկը՝ պ.գ.դ., պրոֆեսոր Տելեմակ Խաչատրյանը մշտապես հետաքրքրվում էր այդ կարևոր հուշարձանի՝ հատկապես բրոնզ-երկաթի դարաշրջանին վերաբերող ձեռքբերումներով: Վերջիններիս ուսումնասիրությամբ զբաղված Կ. Զուլնարյովայի (Դվինում աշխատել է 1967-1969 և 1971-1973 թթ.) հետ նրանց գրույցները վեր էին ածվում կենդանի դասախոսության ու մենք՝ սկսնակ հնագետներս անհրաժեշտ գիտելիքներ էինք քաղում հնագիտության այդ փուլի վերաբերյալ՝ ընդլայնելով ու հարստացնելով մեր մտահորիզոնը:

1958-1961 թթ. Դվինի միջնաբերդի IV-XIII դդ. մշակութային շերտերի ուսումնասիրությունից հետո, արշավախումբը Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Կարո Ղաֆադարյանի գլխավորությամբ¹ հայտնաբերեց հուշարձանի վաղ երկաթի (մ.թ.ա. X-VIII դդ.) շերտը՝ Նյուրա կան մշակութային առարկայական մնացորդներով հանդերձ: Այն չափազանց խառնաշփոթ վիճակում էր՝ համատարած հրդեհի, ինչպես նաև միջնադարյան ու անտիկ շերտերի միջամտությունների հետևանքով:

1961-1962 թթ. հայտնաբերվել է 60x70x6 սմ չափերի առաջին պաշտամունքային կավե տախտակը Մարգո Վահանյանի կողմից (աղ. 1, նկ. 4): Վերջինիս վրա ռելիեֆ եղանակով երեք հորիզոնների բաժանված մակերեսի առաջին շարքում երեք խոյերի ոճավորված պատկերները շրջանակում է 17 կիսաշրջանաձև միմյանց հաջորդող գոտիների շարքը: Անկյունների ազատ տարածությունը զբաղեցնում են օձ ու արեգակ հիշեցնող ուռուցիկ շրջանները: Տախտակի վերջին ուղղահայաց դիրքով ուռուցիկ յոթական շարք գոտիներից բաղկացած համախումբ պատկերով ավարտվում է տախտակի կոմպոզիցիան:

1962 թ. Լենա Կարապետյանի պեղումներով հայտնաբերվել է հեթանոսական երկրորդ սեղանաձև կավե տախտակը՝ 62x51x5 սմ չափերով (աղ. 1, նկ. 3): Այստեղ մարդակերպ, կենդանակերպ և երկրաչափական պատկերները ներդաշնակորեն զբաղեցնում են տախտակի ողջ մակերեսը: Վերին մասում եզրագծին խորն ընկած աչքերով մարդկային երեք դեմքեր են պատկերված՝ երկուսն անկյուններին, մեկը՝ կենտրոնում, բոլորն ամփոփված երեք շարքով կիսաշրջանների մեջ: Արանքներում, ազատ տարածությունների մեջ, ավելի փոքր չափերի մարդկային երկու դեմքերով ավարտվում է կոմպոզիցիայի առաջին հորիզոնը: Երկրորդը ներկայացնում է շրթայական գոտիների արանքում գալարվող օձի պատկեր, իսկ շարունակությունը կիսաեռանկյունների ուղղահայաց ու հորիզոնական երկրաչափական առարկաների լուծումով ավարտում է առեղծվածային բովանդակությամբ թեման: Ի տարբերություն մյուս տախտակների այստեղ գերիշխում են մարդակերպ պատկերները²:

¹ Արշավախմբի կազմը բաղկացած էր թանգարանի հնագիտության բաժնի աշխատակիցներից, որոնց թվում էին Սոյոպա Եսայանը, Էմմա Խանգադյանը, Լենա Կարապետյանը, Մարգո Վահանյանը, Սոնա Մախաթյանը և Ռիմա Գրիգորյանը:

² Այս կապակցությամբ հմմտ. Ս. Հարությունյանի հետևյալ միտքը. «Բնության համատարած ոգեղենացման նախնադարյան հավատալիքի և հասարակական հարաբերությունների զարգացման և բարդացման արդյունքում ձևավորվում է բնության և հասարակության բարի ու չար ուժերը մարմնավորող ոգիների գոյության հավատալիքը: Բարի և չար ոգիները, ըստ նախնական աշխարհայացքի, պատկերացվում են կենդանակերպ, բուսակերպ,

Երրորդ կավե տախտակը հայտնաբերվել է 1970 թ. Կարինե Զուշնարյովայի կողմից (աղ. 1, նկ. 2): Այն իր եռաշար պատկերագրությամբ պաշտամունքային տախտակների մեկ այլ տարբերակ է (55x55x5 սմ): Նրա եզրի առաջին շարքում կիսակլոր խոշոր շառավղով խոյերը պատկերագրական մի նոր ոճի արձագանք են: Երկրորդ գոտին ներկայացնում է ուղղանկյուն մակերեսի մեջ ամփոփված անորոշ կենդանիների երթի տեսարան: Ինը շարքերի կիսաշրջանների լիցքով ավարտվում է այս տախտակի պատկերագրությունը³:

Չորրորդ կավե տախտակը հայտնաբերվել է Դվինի կենտրոնական թաղամասում 1973 թ. Գայանե Զոչարյանի կողմից (աղ. 1, նկ. 1): Համակենտրոն տարբեր չափերի երեքական շրջանակներով կենդանակերպ երեք գլուխները՝ կիսաշրջանաձև կոտորներով հարստացած առաջին շարքին հետևում են ասիմետրիկ լուծումով նույն մոտիվով, տախտակի ստորին մասում: Ի դեպ, ինչպես միջնաբերդում, այնպես էլ Կենտրոնական թաղամասում ի հայտ եկած բոլոր տախտակների առջև, առանձին հարթակ-օջախների մեջ, մոխրի կուտակումներ են փաստագրվել:

Կավե տախտակներից երկուսը հրատարակվում են այստեղ առաջին անգամ:

Դրանցից մեկը բացվել է 1973 թ. Աղավնի Ժամկոչյանի կողմից Կենտրոնական թաղամասում՝ քրիստոնեական միանավ բազիլիկ տաճարի հարավային պատի տակ, կանգուն և ամբողջական վիճակում, դեմքով դեպի հարավ: Ա. Ժամկոչյանի հավաստմամբ, տախտակի դիմաց եղել է հարթակ-օջախ՝ խաթարված վիճակում, լի վառված ածխի և մոխրի մնացորդներով: Տախտակը պահպանվում է տեղում (աղ. 1, նկ. 5): Նրա հարդարադաշտը դրվագագաթող է և բաժանված է երեք հորիզոնների: Առաջին հորիզոնը զարդարում են վերադիր խոյագլուխները⁴, որոնցից ներքև ջրերի այլակները՝ տասը կիսալուսնաձև զիգագագաթող փորագիր ժապավենների տեսքով:

մարդակենդանակերպ կամ լրիվ մարդակերպ: Վիշապը՝ մեծ մասամբ օձակերպ, շահապետ վայրաց՝ դաշտերը պահպանող օձակերպ կամ մարդակերպ ոգի է» (Հարությունյան Ս., Հին Հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001, էջ 12-13):

³ 1967-1969 և 1970-1973 թթ. Կ. Զուշնարյովային հանձնարարվեց վաղ երկաթի՝ մ.թ.ա. X-VIII դդ. շերտի մասնագիտական ուսումնասիրությունը: Թեև համատարած հրդեհն ու անտիկ և միջնադարյան շինարարական միջամտությունները խաթարել էին շերտագրական հորիզոնը, բայց պահպանված որոշ քարե հիմքերի վրա հում աղյուսի վերնամասի շարվածքով նա կարողացավ որոշել պատերի ուղղությունները և փաստել իրարահաջորդ երեք սրբարանների գոյությունը: Կառույցները եղել են փակ, ունեցել են սյուների վրա հանգչող հարթ ծածկեր, իսկ պատերին՝ պաշտամունքային անոթներ տեղադրելու համար խորշեր: Կ. Զուշնարյովան այդ սրբարանների տարածքում հայտնաբերված խեցեղենի, սրբարաններին կից բացված մետաղագործական արհեստանոցի ուսումնասիրությամբ ցույց տվեց Դվինի կարևորությունը մ.թ.ա. X-VIII դդ. (Кушнарева К.Х., Древнейшие памятники Двина, Ереван, 1977):

⁴ Հմմտ. «խոյ նմանությամբ Առաջինն ի կենդանակերպի, յոր մտանէ արեգակն ի մուտս գարնանոյ համէլ. ըստ դիպելոյ պատճառառանաց» (Նոր բառգիրք հայկազյան լեզուի Ա., Երևան, 1979, II, Երևան, 1981, հ. Ա., Երևան, 1979, էջ 960): Անանիա Շիրակացին խոյը համարում է համաստեղությունների գլուխը («խոյ, Ցուլ, Երկվորյակներ, դրանք գարնանային եղանակի համաստեղություններն են: Ծագում են արևելքում նախ խոյը, ապա Ցուլը և հետո Երկվորյակները (երկրավորը)՝ խորհրդանշելով գարնան գալուստը, մեռնող և հարություն առնող բնության զարթոնքը, բուսական և կենդանական աշխարհի վերածնունդը» (Անանիա Շիրակացի, թարգմ. առաջաբ. և ծանոթագր. Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան., 1979, էջ 76): Հմմտ. նաև Հ. Մարտիրոսյանի այս եզրակացությունը. «խոյը հանդես գալով երկնային լուսատուների, գարունն ավետող թռչունների և երկիրն ու կենդանաշխարհը պտղաբերող արեգակնային աստվածների հետ, որոնք խորհրդանշում են տարվա իսկական սկիզբը, բնության զարթոնքը, նրա արգասավորումը «խոյ» համաստեղությունը՝ «խոյը» դառնում է տիեզերական պաշտամունքի առարկա» (Մարտիրոսյան Հ., Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, 1978, էջ 151):

Կենսատու ջրերը երկրի առջև դարբասել է հսկա վիշապը շրջապատված լուսատուների նշանակներով⁵:


Կավե մյուս տախտակը գտնվել է 1998 թ. Ս. Գրիգոր կաթողիկե եկեղեցուց հարավ ընկած դաշտում պատահաբար, բեկոտված վիճակում: Տարածքը ժամանակին կազմել է Կենտրոնական թաղամասի մակերեսի մի հատվածը, որտեղ, ամենայն հավանականությամբ, գործել է մեկ այլ տաճարային համալիր, որին և պատկանել է սույն կավե տախտակը: Վերջինս Հայաստանի Պատմության թանգարան է հանձնել Նյուրա Հակոբյանը, ուր և վերականգնվելով, այն ստացել է իր ամբողջական տեսքը (չափերը՝ 41x45x7 սմ) (աղ. 1, նկ. 6): Պատկերագրության կերպով և կերտման հնարներով, տախտակը բացառիկ է: Եռամաս է, դրվագազարդ: Պատկերները նույնն են, ինչ առաջինի դեպքում, միայն այն տարբերությամբ, որ դրանք այստեղ կենդանի են, շարժուն և արտահայտիչ, համահունչ իրենց բնական կերտվածքին: Պատկերաշարը լրացնում են լուսատուները, չի բացառվում և մոլորակները խորհրդանշող նշանակները (փոսիկներ, գծազարդ շրջաններ, որոնց կենտրոնում առկա է կոնաձև ելուստ):

Բացահայտ է, որ հիշյալ տախտակները կերտվել են տարբեր խեցեգործ վարպետների կողմից, ովքեր հմուտ և փորձառու խեցեգործներ են եղել՝ ծանոթ ժամանակի գեղագիտական դրսևորումներին:


Փաստորեն վաղ երկաթի դարում Դվինը եղել է պաշտամունքային խոշոր կենտրոն: Չի բացառվում, որ համապատասխան համալիրները նվիրված են եղել խոյերի պաշտամունքին, մի կենդանի որը հատուկ դեր է կատարել հին Հայաստանի ողջ պատմության ընթացքում: Դվինը սրբավայրի կարգավիճակը պահել է նաև հետագայում⁶:

⁵ Եվ այդ ամենակարող սողունը, «ամպրոպի ժամանակ ծովի խորքերից կամ էլ ամայի լեռներից երկինք բարձրանալով, չար ոգիների հետ միասին կամենում է կուլ տալ արեգակին, փակել նրա երեսը, որպեսզի նրա լույսը չտեսնեն» (Հարությունյան Ս., Հայ հին վիպաշխարհը, Երևան, 1987, էջ 19):


⁶ Այս մասին տե՛ս Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Ա., 1942, էջ 214. Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան, 1952, էջ 90, 92:




1




2



3



4



5



6

Աղյուսակ 1

ՌԱՖԻԿ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՇԱԿԱՆԻ ԴԱՄԱՐԱՆԱԴԱՇՏՈՒՄ

Հայկ Ավետիսյան, Անժելա Թադևոսյան

Երևանի պետական համալսարան, Էջմիածնի պատմաազգագրական թանգարան

Ականավոր հայ հնագետ Ռաֆիկ Թորոսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը չափազանց լայն էր: Այն ընդգրկում էր նոր քարի դարից միջնադար ընկած ողջ ժամանակաշրջանը: Ռ. Թորոսյանի պեղումները նշանակալից հետք են թողել հայ հնագիտության մեջ: Անուրանալի է նրա ներդրումը հատկապես Էջմիածնի տարածաշրջանի և պատմական Արագածոտնի հնագիտական ուսումնասիրության գործում: Ցավոք, Ռ. Թորոսյանի նյութերի մեծ մասն առ այսօր հրատարակված չէ: Առանձին տեղեկություններ կարելի է քաղել նրա օրագրերից, ինչպես նաև Էջմիածնի պատմաազգագրական թանգարանում պահվող նմուշների՝ Ռ. Թորոսյանի կազմած անձնագրերից: Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի հանգուցային հնավայրերից մեկում՝ Օշականում, Ռ. Թորոսյանի պեղումներին:

Օշականի հնագիտական համալիրների հետազոտության պատմությունը.

Օշականի հնությունները գրավել են ճանապարհորդների և հետազոտողների ուշադրությունը դեռևս XIX դարի սկզբից: Մասնավորապես, Արտեմի Արարատսկին հիշատակում է Օշականի բլրի լանջերին գտնվող քարե բուրգերը (հավանաբար՝ դամբարանները), ինչպես նաև մոտ 1,5 մ բարձրությամբ անմշակ քարից մահարձանը, որը տեղացիներն անվանում էին «յոթ եղբոր գերեզման»¹: Մ. Թադևոսյանը հիշատակում է գյուղի ճանապարհին բլրածև ավերակներ, որոնք հավանաբար գետի ափին գտնվող դոլմենատիպ կառույցներն ու դամբարանաբլուրներն էին²: Հ. եպս. Շահխաթունյանը մանրամասն ներկայացնում է Օշականի հնությունները՝ բնակա-նաբար հատուկ նշելով քրիստոնեական հուշարձանները: Նա հիշատակում է գյուղի հարավային հատվածում դեպի Այգեշատ գ. տանող ճանապարհին Ղարաքիլիսե կոչվող ավերակները, հյուսիսային կողմում՝ Մանկաց վանքը, և Դիդի Կոնդի³ ստորոտին գտնվող Սբ. Գրիգոր մատուռը ու լանջերին սփռված քրիստոնեական գերեզմանոցը: Հ. Շահխաթունյանը նաև հիշատակում է Դիդի Կոնդի գագաթին գտնվող ամրոցը: Առանձնապես պետք է նշել գյուղի արևելքում գտնվող մեծ քարերի կուտակումները, որոնք Շահխաթունյանը համարում է Վահան Ամատունու պալատի ավերակները⁴: Հայր Ղևոնդ Ալիշանը, ընդհանուր առմամբ կրկնելով միջնադարյան

¹ Жизнь Артемия Арапатского, Москва, 1981, с. 46, 48.

² Թադևոսյան Մ., Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, 1975, էջ 117, ծանոթ. 143, էջ 548:

³ Դիդի Կոնդն իր այս անունով հիշատակում է դեռևս Սիմեոն կաթողիկոս Երևանցին: Նա նաև հիշատակում է, որ բլրի հյուսիսասիայաց հատվածը կոչվում է Արեգունի և Նույն տեղում տեղադրված է Ս. Սարգիս մատուռը: Չամբռ, Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ բնակից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոյ շրջակայից վանօրէիցն համաժողովեցեալ եւ շարադեցեալ ի Սիմեոնի կաթողիկոսն Երեւանցոյ, Վաղարշապատ, 1873, էջ 172-173: Հմմտ՝ Հուշարձանների պետական ցուցակ, 2. Արագածոտն, 113 գ. Օշական, 28. Ս. Սարգիս մատուռ:

⁴ Յովհաննես եպս. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ իրնգ գաւառացն Արարատայ, Ս. Էջմիածին, 2014, էջ 95:

հուշարձանների, Դիդի Կոնդի գերեզմանոցի և գագաթին ամրոցի մասին տեղակու-
թյունները, ևս նշում է բազմաթիվ քարաբլուրների և ձեռակերտ քարայրների
ամկայության մասին: Բացի այդ, հիշատակվում է Ցլի գլուխ բլուրը, որտեղ ըստ
Ալիշանի, ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել մագկութների հետ ճակա-
տամարտը⁵, ինչպես նաև դեպի Էջմիածին ձգվող առապարը, որը նույնպես կապվում
է Ամատունյաց տոհմի հետ⁶:

Օջականի հնագիտական ուսումնասիրությունը սկիզբ է առել դեռևս XIX դարի
վերջում Խաչիկ վարդապետ Դադյանի և կոմս Ուվարովի կողմից⁷: Ամենայն հավանա-
կանությամբ Դադյանի պեղումները կատարվել են մեծ բլուրի՝ Դիդի Կոնդի գագաթին
գտնվող ամրոցի արևմտյան հատվածում⁸: Ուվարովի կողմից ուսումնասիրել է 10
դամբարան Օջական-Վաղարշապատ և Օջական-Աշտարակ հատվածներում:
Հուշարձանները ներկայացնում էին կանոնավոր շրջանաձև կրովի քարերով օղակված
և տուֆի սալերով ծածկված դամբարաններ: Նյութը հիմնականում բեկորային է եղել,
Կովկասյան թանգարան են տեղափոխվել միայն մեկ գնդասեղ և մածուկից պատ-
րաստված ուլունքներ⁹:

Նկարագրելով Օջականի տարածքը՝ Գ. Ղափանցյանը նշում է, որ հնավայրը
զբաղեցնում է ավելի քան 1 քառ. կմ (1 քառ. վերստ) տարածք գյուղի Գեդառ կոչվող
տեղամասում¹⁰: Մեզայիթյան կառույցները, որոնք Գ. Ղափանցյանը անվանում է
«օղուզի քյալաֆաներ», բնորոշելով որպես «նախնադարյան տնակներ», ներկա-
յացված են, 1-2 մ տրամագծով, թվով 20-30 սալածածկ շինություններով, որոնք
հպվում են 2-4 մ երկարությամբ անմշակ քարերից կառուցված նախամուտքերը¹¹:

1925-1926 թթ. Արագածի տարածաշրջանի մեզայիթյան հուշարձանների ուսում-
նասիրության շրջանակներում Օջականում քարե գործիքներ է հավաքում Ա. Քալան-
թարը: Ընդամին, նա նշում է, որ մեզայիթյան կառույցներն այստեղ ձգվում են կիլոմե-
տրերով¹²: Օջականի հուշարձանախումբը հետազոտվել է նաև Թ. Թորամանյանի
կողմից: Նա առաջինն է չափագրել Օջականի դոլմենանման կառույցները, տիպա-
բանել դրանք, ուշադրություն է դարձրել բլրի գագաթին տեղադրված ամրոցի վրա¹³:

⁵ Հմմտ. Եղիշեի հաղորդումը Վասակ Սյունու կողմից արքունական գործերի
կայանատեղիների, այդ թվում և Օջականի ավերման մասին: Տե՛ս Եղիշե, Վարդանի և Հայոց
պատերազմի մասին, Երևան, 1989, էջ 159:

⁶ Ալիշան Դ., Այրարատ, բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 191, 193-194:

⁷ Есаян С., Калантарян А., Ошакан І, Ереван, 1988, с. 6. Լալայան Ե., Դամբանների պեղում-
ներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 4, 10:

⁸ Есаян С., Калантарян А., նշվ. աշխ., էջ 8:

⁹ Коллекции Кавказского Музея, т. V, Тифлис, 1902, с. 132-133:

¹⁰ Այս տեղամասը և այնտեղ գտնվող ջրաղացը հիշատակում է Սիմեոն Երևանցին: Սիմեոն
Երևանցի, նշվ. աշխ., էջ 187: Հմմտ.՝ Հուշարձանների պետական ցուցակ, 2. Արագածոտն, 113.
Օջական, 21. դամբարանադաշտ «Օղուզի տներ», 1. դոլմեն, 2. Արագածոտն, 113. Օջական, 29.
ջրաղաց:

¹¹ Ղափանցյան Գ., Հնութան մի քանի յիշատակարաններ, Արարատ, 1914, թ. Ա, էջ 91-92:

¹² Քալանթար Ա., Քարե դարը Հայաստանում, Նորք, 1925, N 5-6, էջ 212-213, 226:

¹³ Թորամանյան Թ, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948, էջ
142, 220-224: Թ. Թորամանյանի ուսումնասիրած դոլմենանման կառույցների մի մասը կանգուն
է առ այսօր, աղ. 5, նկ. 1-2 (լուսանկարները՝ Ռ. Թորոսյանի):

1950 թ. Օշականի հյուսիս-արևելյան հատվածում՝ Օշական-Աշտարակ ճանապարհին, Մ. Հասարթյանի կողմից պեղվեցին 3 դոլմենատիպ դամբարաններ¹⁴:

Հուշարձանախմբի կանոնավոր պեղումները իրականացվել են 1970-1980 թթ. Ս. Եսայանի և Ա. Զալանթարյանի կողմից: Պեղումների ընթացքում մեծ բլրի՝ Դիդի Կոնդի գագաթին պեղվեց ուշ ուրարտական դարաշրջանի ամրոց (Թ. Թորամանյանի կողմից հիշատակվածը), որը գոյատևել էր մ.թ.ա. VII-V դդ.¹⁵: Հաստատագրվեց, որ ամրոցի տեղում IV-V դդ. կառուցվում է հզոր ամրացված բնակավայր՝ Ամատունի իշխանների նստոցը¹⁶: Ամրոցից բացի հետազոտվեց բլրի հյուսիսային լանջը, որտեղ ուրարտական և աքեմենյան դարաշրջաններում տեղադրված էին պալատական համալիրներ, ինչպես նաև՝ Վանի թագավորության ժամանակաշրջանի դամբարաններ¹⁷: Նույն տարածքում II-III դդ. դամբարանադաշտ էր¹⁸: Հիմնական դամբարանադաշտը տեղադրված էր պալատական համալիրներից 200-250 մ արևելք՝ զբաղեցնելով բլրի բոլոր լանջերը, բացառությամբ պալատական համալիրներով կառուցապատված գոտու. այն շրջանցում էր Փոքր Բլուրը՝ զբաղեցնելով միայն վերջինիս հարավային լանջը: Դամբարանները տեղադրվում են բլրի ստորոտից լանջն ի վեր բարձրանալով և ազատ թողնելով միայն վերին թեք հատվածը: Պեղված դամբարանները թվագրվում են ուշ բրոնզ-երկաթի դարաշրջաններով, առկա է նաև ուրարտական թաղում¹⁹:

2002 թ. Օշականի հյուսիս արևմտյան հատվածում, շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերվեց և Ա. Զալանթարյանի, Ա. Փիլիպոսյանի և Հ. Մելքոնյանի կողմից հետազոտվեց կարմիրբերդյան մշակույթի հիմնահողային խցով թաղում: Դամբարանային կյուրթի քննությունը, ինչպես նաև ռադիոածխածնային անալիզի տվյալները թույլ են տալիս թվագրել այն մ.թ.ա. XVII-XVI դդ.²⁰:

2012 թ. ի վեր հնավայրն ուսումնասիրվում է Հ. Ավետիսյանի և Մ. Հերլեսի կողմից: Պեղումները մասնավորապես ընդգրկում են Դիդի Կոնդի արևելյան լանջը, որտեղ 2013-2015 թթ. Պեղվել է մ.թ.ա. XII-XI և XI-IX դդ. թվագրվող 11 դամբարան²¹: Հետազոտություններ իրականացվեցին նաև Օշականի Փոքր Բլրի տարածքում:

¹⁴ Հասարթյան Մ., Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 209-217: Հավանաբար այս տարածքի առապարն է հիշատակում Սիմեոն Երևանցին: Սիմեոն Երևանցի, նշվ. աշխ., էջ 111:

¹⁵ Есаян С., Калантарян А., նշվ. աշխ., էջ 7, 10:

¹⁶ Օշականի ամրոցի պաշտպանական նշանակության մասին վկայում են ինչպես պեղումների արդյունքները, այնպես էլ գրավոր աղբյուրները: Հմմտ.՝ Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու հաղորդումը մագկույթների բանակը այստեղ կոտորելու մասին. Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, Երևան, 1986, III, Ը. Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, III, Թ:

¹⁷ Есаян С., Калантарян А., նշվ. աշխ., էջ 18, 68-77:

¹⁸ Есаян С., Калантарян А., նշվ. աշխ., էջ 51:

¹⁹ Есаян С., Калантарян А., նշվ. աշխ., էջ 6, 77, 82:

²⁰ Калантарян А., Пилипосян А., Мелконян У., Среднебронзовое погребение N 30 Ошакана, Археология, этнология и фольклористика Кавказа, Тбилиси, 2004, с. 69-71.

²¹ Ավետիսյան Հ., Հեռլես Մ., Ավետիսյան Ն., Օշականի դամբարանադաշտի 2013 թ. պեղումները, Հայագիտության հարցեր, 2015, N 3, էջ 229-241. Avetisyan H., Herles M., Beuger C., Kutzer E., Wallner M., Untersuchungen an den Hügeln Didi Kond und Pokr Blur in Oshakan (Armenien), Mitteilungen der Deutschen Orient-Gessellschaft zu Berlin, N 147, Berlin, 2015, S. 71-84:

Մասնավորապես բլրի արևմտյան լանջին պեղվեց բազալտե մեծ քարակտորներից կառուցված պարսպաշար: Պարսպի մնացորդները դիտարկվում են նաև բլրի հյուսիսային և հարավային լանջերին: Այստեղ հայտնաբերված խեցեղենը բնորոշ է միջին բրոնզից-միջնադար ընկած ժամանակահատվածին²²:

Ռ. Թորոսյանի պեղումները Օշականում

Օշականի հնավայրում Ռ. Թորոսյանը պեղումներ է կատարել 1962 թվականից: Հետազոտությունների արդյունքները առ այսօր հրապարակված չեն:

Աղբյուրները. Պեղված նյութերի մասին տեղեկությունները ամփոփված են Ռ. Թորոսյանի 1962 թ. դաշտային օրագրում²³, թանգարանային իրերի անձնագրային գրառումներում և առանձին լուսանկարներում: Բացի Օշականի հուշարձանների և վերաբերող նյութերից, օրագրում ներկայացված են Էջմիածնի V դարի բազիլիկ եկեղեցու հատակագիծը, Աղավնատուն գյուղում պատահականորեն հայտնաբերված նյութերի նկարագրությունը, քաղաքային բաց բիոֆիլտրի տարածքի, Արագածի վաղ բրոնզի դարաշրջանի ավերված դամբարանի, ինչպես նաև Էջմիածնի Լենինի անվան խորհրդային տնտեսության տարածքում հայտնաբերված վաղմիջնադարյան դամբարանների պեղումների արդյունքները:

Հնավայրից պատահական գտնված իրերը. Օշականում Ռ. Թորոսյանի հետազոտությունների առիթ է հանդիսացել դեռևս 1958 թ. Օշականի բնակիչ Խաչիկ Մխիթարյանի կողմից իր տնամերձ տարածքում մի շարք անոթներ, ինչպես նաև բրոնզի լարից պատրաստված վզնոց հայտնաբերելը: Այս անոթներից երկուսը հանձնվել են Էջմիածնի պատմաազգագրական թանգարանին:

Առաջին անոթը կավե գորշ թաղար է (ԵՊԱԹ 351/7) (աղ. 1, նկ. 4): Ամանը ունի լայն բերան, ոչ բարձր շուրթ, որից անմիջապես ներքև սկսվում է լայն իրանը, որի վերնամասը զարդարված է ամանը շրջափակող 2 փորագիր՝ 2,5-3 սմ հեռավորությամբ ակոսով: Սրանց մեջ իրարից 9,5 սմ հեռավորության վրա ամանը զարդարված է ուղղահայաց իրար զուգահեռ գծերի 4 խմբով: Հատակը նստուկավոր է: Նշված անոթն իր զուգահեռ ունի Շիրակավանի N 30, Լոռի բերդի N 9, Փևրեբի դամբարաններում²⁴: Երկրորդ անոթը (ԵՊԱԹ 352/7) ևս թաղար է, ունի սև և գորշ անփայլ մակերես, իրանի վերին հատվածում առկա են 4 փորագիր ակոսներ: Հատակը լայն է, հատակին առկա է գայլիկոնված անցք:

Խաչիկ Մխիթարյանից գնված հավաքածոյում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ծխաման-անոթը (աղ. 2, նկ. 12): Անոթի ստորին հատվածը կոնաձև է, իսկ վերին հատվածն ունի գնդաձև իրանով կարճ վզով դուրս ճկված շուրթով թաղարի տեսք: Անոթի վզի տակ անցնում են 5 փորագիր ակոսներ, որոնցից ներքև տեղադրված է հատիկաձև զարդանախշ գոտին, որից ներքև շեղանկյուններից կազմված ցանց է: Կոնի վերին հատվածին տեղադրված է հատիկաձև զարդանախշ, որից ներքև եղևնաձև զարդանախշերով կազմված գոտի է, կոնի ստորին հատվածում

²² Avetisyan H., Herles M., Beuger C., Kutzer E., Wallner M., նշվ. աշխ, էջ 84-97:

²³ Օրագրում պարունակվող դաշտային չափագրությունների և գրչանկարների վերակազմությունը կատարվել է ԵՊՀ ՀՀԻ հնագիտության լաբորատորիայում Ա. Դավթյանի կողմից:

²⁴ Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., Հին Շիրակավան, Երևան, 2002, աղ. XX. Деведжян С., Лори-берд 1, Ереван, 1981, с. 47, табл. XIV (2). Пицхелаури К., Археологическая культура центральной части Закавказья в XIV-XIII вв. до н. э., Тбилиси, 2005, с. 128, 155, табл. LXIX:

3 փորագիր ակոս է²⁵: Այս անոթը որոշակի նմանություն ունի Լոռի Բերդի N 7 դամբարանի համապատասխան նյութին²⁶:

Հիշյալ անոթների հետ մեկտեղ գյուղի բնակիչ Հայկազ Ավետիսյանը թանգարան է հանձնել ևս մեկ կավաման (ԷՊԱԹ 345/7) (աղ. 1, նկ. 2): Սափորն ունի լայն բերան, երկար վիզ: Ամանի իրանը զարդարված է գեղեցիկ զարդանախշով: Վերևից 3-4 փորագիր գոտի շրջափակում են ամանը, որից հետո հասկածա երկրաչափական գոտի է 3 սմ լայնությամբ. դրանից ներքև ևս մեկ շրջագիծ է: Ամանի իրանի ստորին մասում առկա է անցք:

Դամբարանների պեղումներ. Այս նյութերի հետ մեկտեղ օրագրում կա մի քանի դամբարանների նկարագրություն:

N 2 դամբարան. Դամբարանը գտնվում է Օշական գյուղի կոլտնտեսային նախկին հավանոցից 15 մ արևմուտք Բնառու կոչվող առվակի ափին, գետնի մակերեսին: Խցի ուղղվածությունը հյուսիս-արևմուտք հարավ-արևելք: Ուղղանկյուն խուցը ծածկված էր 4 մեծ սալաքարերով, որոնցից կենտրոնականն ուներ 215 սմ երկարություն, 125 սմ լայնություն և 30 սմ հաստություն:

Էջմիածնի պատմաագագադրական թանգարանում պահպանվում է դամբարանից պեղված թաղար (ԷՊԱԹ 370/7) (աղ. 3, նկ. 1)՝ սև գույնի, կոկիչով փայլեցված, բարձրությունը՝ 19 սմ, իրանը գնդաձև, տրամագիծը՝ 23 սմ, վիզը կարճ, շուրթը կտորված, իրանի ուսերով անցնում է սեղման եղանակով արված երեք ակոս, հատակի տրամագիծը՝ 8,5 սմ:

N 3 դամբարան. Արտաքինից երևում էին մի քանի քարեր (աղ. 4, նկ. 3): Խուցը կառուցված էր տուֆից: Պահպանվել էր խցի միայն մեկ հատվածը, որն ուներ կիսաշրջանի տեսք: Դամբարանը թալանված էր դեռևս հնում և լցված պատահական քարերով այլ դամբարաններից:

N 4 դամբարան²⁷ (աղ. 4, նկ. 2). Դամբարանն ուղղված էր հարավ-արևմուտք հյուսիս-արևելք: Խցի արտաքին երկարությունը 330 սմ, լայնությունը հարավային հատվածում 140 սմ, հյուսիսայինում՝ 160 սմ: Խուցը ծածկված էր երեք ծածկասալերով՝ հարավայինի երկ. 100 սմ, լայն. 140, բարձր. 25 սմ, կենտրոնականինը՝ երկ. 140, լայն. 160, բարձր. 28 սմ և հյուսիսայինինը՝ երկ. 70, լայն. 160 և բարձ. 30 սմ: Դամբարանի խորությունը 160 սմ էր:

N 5 դամբարան (աղ. 4, նկ. 1). Դամբարանը ծածկված էր երեք սալերով՝ յուրաքանչյուրը 1,4 մ երկարությամբ և 1,2 մ լայնությամբ: Սալերը հեռացնելուց հետո՝ բացվեց արևելք-արևմուտք ուղղվածությամբ քարարկող՝ 1,70 մ երկարությամբ, 1 մ լայնությամբ և 0,96 մ խորությամբ: Կավանոթները տեղադրված էին պատերի տակ. երկուսը արևելյան պատի կենտրոնական հատվածում, երկուսը՝ հյուսիսային պատի արևմտյան հատվածում և մեկը հարավային պատի տակ:

²⁵ ԷՊԱԹ հավաքածոյում այս իրը բացակայում է: Ռ. Թորոսյանի օրագրային գրառման համաձայն անոթը Հ. Մնացականյանի կողմից տեղափոխվել է Երևան: Առանձին գրառման մեջ Ռ. Թորոսյանը համադրում է այս անոթը Էրիդոնի II վաղ դինաստիական հորիզոնից հայտնաբերված գավաթի հետ: Իրի նկարագրությունը բերվում է ըստ Ռ. Թորոսյանի գրչանկարի:

²⁶ Деведжян С., նշվ. աշխ., 26, 37-39, աղ. X (1):

²⁷ Օրագրում դամբարանի նկարագրությունը բացակայում է: Խուցը նկարագրած է ըստ օրագրում բերված մոտավոր հատակագծի:

Թանգարանում պահպանվում են նշված դամբարանի պեղումներից հայտնաբերված մի շարք կավանոթներ:

Սափոր (ԵՊԱԹ 361/7) (աղ. 3, նկ 7). Մոխրագույն, գնդաձև իրանով, բարձրությունը՝ 27 սմ, իրանի տրամ.՝ 24 սմ, վիզը երկար, իրանի ուսերով են անցնում երեքական շարքով երկու խումբ ակոսավոր նախշեր: Շուրթը դուրս ճկված, շուրթի տրամագիծը՝ 11 սմ: Հատակը հարթ, տրամագիծը՝ 10 սմ: Այս տիպի անոթները լայնորեն տարածվում են մ.թ.ա. II հազ. վերջից (Մեծամոր, Արթիկ, Կարմիր Բերդ և այլն)²⁸:

Թաղար (ԵՊԱԹ 366/7) (աղ. 1, նկ. 1). սև փայլեցված, բարձրությունը՝ 16,5 սմ: Իրանը կորացող, տրամագիծը՝ 21 սմ: Իրանի ուսերը զարդարված են հորիզոնական ակոսներով, որոնցից ներքև հատիկաձև գոտի է, շուրթը դուրս ճկված, տրամագիծը՝ 14 սմ, հատակը հարթ, պարագծով զարդարված հատիկաձև գոտով, տրամագիծը՝ 7 սմ: Այս անոթն իր զուգահեռներն ունի Հայաստանի և Անդրկովկասի համաժամանակյա բազմաթիվ հուշարձաններում (Մեծամոր, Ներքին Գետաշեն, Փևրեբի, Գաղրեկելի)²⁹:

Անոթների բեկորներ (ԵՊԱԹ 365/7). սև փայլեցված, իրանին 2 ուռուցիկ զարդով: N 6 դամբարան³⁰:

Զրեղան (ԵՊԱԹ 355/7) (աղ. 1, նկ. 6). Մոխրագույն, բարձրությունը 16,5 սմ: Իրանը երկկոն, տրամագիծը՝ 23 սմ: Իրանի վերին հատվածը զարդարված է եռանկյունաձև փայլանախշով, որից ներքև անցնում է հորիզոնական ակոս: Շուրթը կլորացող, տրամագիծը՝ 22,5 սմ: Հատակը նեղ հարթ, տրամագիծը 8,4 սմ: Այսօրինակ անոթները տարածվում են սկսած ուշ բրոնզի սկզբնական փուլերից՝ մ.թ.ա. XIV-XIII դդ., և հայտնի են Արթիկից, Կարմիր Բերդից, Էլառից, Մեծամորից³¹:

Թաս (ԵՊԱԹ 368/ 7) (աղ. 1, նկ. 3). Մոխրագույն փայլեցված, բարձրությունը՝ 6 սմ: Իրանը՝ կիսասֆերիկ, շուրթը՝ հարթ, տրամագիծը՝ 14,5 սմ: Հատակի տրամագիծը՝ 5 սմ: Այս գավաթն իր զուգահեռներն ունի Հառիճի հ. 13 դամբարանի կյուբերում, Սամտավրոյում³²:

Թաղար (ԵՊԱԹ 357/7) (աղ. 1, նկ. 6). Մոխրագույն փայլեցված, բարձրությունը՝ 12,5 սմ: Իրանը ուռուցիկ, տրամագիծը՝ 25 սմ: Շուրթը կլոր, տրամագիծը՝ 22 սմ: Հատակը հարթ, տրամագիծը՝ 12,3 սմ: Իրանին՝ ուղղահայաց փորագիր զարդանախշ:

Թաղար (ԵՊԱԹ 358/7) (աղ. 3, նկ. 2). Մոխրագույն փայլեցված, բարձրությունը՝ 17,5 սմ: Իրանը ուռուցիկ, տրամագիծը՝ 16 սմ: Շուրթը դուրս ճկված, տրամագիծը՝ 10,4 սմ, շուրթի տակ առկա է լայն ակոս: Հատակի տրամագիծը՝ 8 սմ:

²⁸ Khanzadian E., Metsamor 2, la nekropole, Neuchatel-Paris, 1995, p. 62-64, pl. 23.

²⁹ Khanzadian E., նշվ. աշխ., աղ. 39. Xnkikyan O., Syunik during Bronze and Iron Ages, Barrington, 2002, tab. XXII (18). Пицхелаяри К., նշվ. աշխ., էջ 128, 155-156, աղ. LXXVI:

³⁰ Օրագրում դամբարանի նկարագրությունը բացակայում է: Ներկայացվում են հայտնաբերված կյուբերի նկարագրությունները ըստ օրագրի և Ռ. Թորոսյանի կողմից կազմված անձնագրերի:

³¹ Петросян Л., նշվ. աշխ., էջ 59. Мартиросян А., Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, рис. 40. Խանգաղյան Է., Էլառ-Դարանի, Երևան, 1979, աղ. XVI (7). Խանգաղյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է., Մեծամոր, Երևան, 1973, նկ. 30:

³² Ավետիսյան Պ., Ուշ բրոնզի հնագիտական համալիրների առանձնացման և ժամանակագրության հարցերի շուրջ, Հայաստանի հնագույն մշակույթը, պր. 3, Երևան, 2003, էջ 34, աղ. 2 (8). Садрадзе В., Мцхета в XV-XIII вв. до н. э., Тбилиси, 1991, табл. ХСІ (48):

N 7 դամբարան³³ (աղ. 6, նկ. 3). Խուցն ուղղված է հյուսիս-հարավ առանցքով: Ունի ուղղանկյուն հատակագիծ: Երկարությունը 1, 60 մ, լայնությունը՝ 1,10 մ, խորությունը՝ 80 սմ:

Սափոր (ԵՊԱԹ 359/7) (աղ 2 նկ. 10). Սոխրագույն, բարձրությունը՝ 15 սմ: Իրանը ուռուցիկ, տրամագիծը՝ 17 սմ: Վիզը՝ գլանաձև: Վզին ուղղահայաց փայլանախշ: Շուրթը դուրս ճկված, տրամագիծը՝ 11,5 սմ:

N 8 դամբարան³⁴:

Դաշույն (ԵՊԱԹ 115/7) (աղ. 2, նկ. 13). պատրաստված է բրոնզից, ուներ թեք, կոթաձև ուղղանկյուն, շեղբը կտրվածքում շեղանկյունաձև: Երկարությունը՝ 22 սմ, լայնությունը՝ 4 սմ:

N 9 դամբարան (աղ. 5, նկ. 3, աղ. 6, նկ. 1-2): Դամբարանը տեղադրված է գյուղից հարավ-արևմուտք³⁵ Զասախ գետի ձախ ափին՝ կոլտնտեսական գոմերի մոտ գտնվող դամբարանադաշտում: Այս դամբարանն արտաքինապես ներկայացնում էր փոքրիկ քարակույտ հիշեցնող բլրակ՝ 0,8-1 մ. բարձրությամբ: Լիցքի մանր քարերը հեռաց-նելուց հետո պարզվեց, որ դամբարանը ծածկված էր 3 սալերով 1,30 մ երկարությամբ և 1,20 մ լայնությամբ, որոնք հեռացնելուց հետո բացվեց հյուսիս-հարավ ուղղվածությամբ 1,5 մ երկարությամբ, 1 մ լայնությամբ և 0,9 մ խորությամբ ուղղանկյուն հատակագծով քարակղզի, որը լցված էր մաղած հողով, գուցե ջրաբերուկ շերտով: Խեցեղեն կյուրը երևան եկավ 0,7 մ խորությունից: Կմախքը տեղադրված էր հյուսիս-հարավ ուղղվածությամբ՝ ձախ կողքին կծկված վիճակում: Դամբարանի հարավային և արևելյան պատերի անկյունում տեղադրված էր չորս կավանոթ: Թանգարանում պահպանվում են դամբարանից հայտնաբերված մի շարք կավանոթներ:

Սափոր (ԵՊԱԹ 363/7) (աղ. 2, նկ. 8). մոխրագույն, բարձրությունը՝ 15,5 սմ, իրանը երկկոն, տրամագիծը՝ 22 սմ: Իրանի վերին հատվածում 5 հորիզոնական փորագիր ակոս: Վիզը կարճ, գլանաձև, շուրթը դուրս ճկված, տրամագիծը՝ 10,5 սմ: Հատակը հարթ, տրամագիծը 8 սմ:

Սափոր (ԵՊԱԹ 362/7) (աղ. 2, նկ. 9). սև, բարձրությունը՝ 23,5 սմ: Իրանը գնդաձև, տրամագիծը՝ 20 սմ: Իրանի վերին և կենտրոնական հատվածներում երեքական շարք փորագիր ակոս: Շուրթը դուրս ճկված, տրամագիծը՝ 10 սմ: Հատակի տրամ.՝ 8 սմ:

Կավանոթ (ԵՊԱԹ 369/7) (աղ. 1, նկ. 5). սև փայլեցված, բարձրությունը 36 սմ, իրանը ուռուցիկ, տրամագիծը՝ 25 սմ: Իրանի կենտրոնական հատվածում և վզի տակ առկա են փորագիր ակոսներ: Վիզը գլանաձև: Վզի վերին հատվածում այն ձևավորում է ևս մեկ անոթ՝ թաղար գնդաձև իրանով և լայն շուրթով: Շուրթի տրամագիծը՝ 10,5 սմ: Հատակի տրամագիծը՝ 9 սմ: Երկրորդ անոթը շրթնամասում թաղարատիպ լայնացումով անոթն է N 9 դամբարանից: Նմանատիպ անոթները տարածվում են Հայաստանում սկսած մ.թ.ա. XVIII-XVII դդ.³⁶, սակայն առավել մոտ զուգահեռը

³³ Օրագրում դամբարանի նկարագրությունը բացակայում է: Խուցը նկարագրած է ըստ օրագրում բերված մոտավոր հատակագծի:

³⁴ Օրագրում դամբարանի նկարագրությունը բացակայում է: Ներկայացվում է հայտնաբերված դաշույնի նկարագրությունները ըստ օրագրի և Ռ. Թորոսյանի կողմից կազմված անձնագրերի:

³⁵ Հմմտ՝ Հուշարձանների պետական ցուցակ 2. Արագածոտն 113. Օշական, 17 դամբարանադաշտ:

³⁶ Հովհաննիսյան Վ., Զարաշամբի թասաձև բերանով սափորների մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, 1989, N 1, էջ 90, աղ. 1/1:

հայտնի է Քարաշամբի N 174 դամբարանից, որը թվագրվում է ուշ բրոնզի սկզբնական փուլով³⁷:


N 11 դամբարան³⁸: Նախորդների պես տեղադրված է Քասախ գետի ձախ ափին: Դամբարանի պեղումների ժամանակ հայտնաբերվել է գավաթ (ԷՊԱԹ 367/7) (աղ. 3, նկ. 6) սև փայլեցված, բարձրությունը՝ 6 սմ: Իրանի տրամագիծը՝ 10 սմ, շուրթի տրամագիծը՝ 11 սմ: Հատակը հարթ, տրամագիծը՝ 5 սմ:

Բացի նշված դամբարաններից 1969 թ. Ռ. Թորոսյանի կողմից Օշականի Մեծ բլրի հարավային հատվածում պեղվել է դամբարան, որտեղից հայտնաբերվել է քրեղան (ԷՊԱԹ 2764/7) (աղ. 1, նկ. 7): Կարմիր գույնի, բարձրությունը՝ 14 սմ: Իրանը կոնաձև, վերին հատվածում ուղղահայաց: Իրանի վրա առկա է երկու ներճկված ակոս: Շուրթը՝ կլոր, տրամագիծը՝ 33 սմ:






Ռ. Թորոսյանի հնագիտական ժառանգության հետագա ավելի մանրամասն հրապարակումները և վերլուծությունները կարող են էական լույս սփռել հնագույն Հայաստանի նյութական մշակույթի բազմաթիվ հարցերի պարզաբանման վրա:

³⁷ Հովհաննիսյան Վ., Նույն տեղում, էջ 93, աղ. 1/2:


³⁸ Դամբարանի նկարագրությունը բացակայում է: Հայտնաբերված նյութերը նկարագրված են ըստ օրագրի և թանգարանում պահվող անձնագրերի:




Աղյուսակ 1




1





Աղյուսակ 2




Աղյուսակ 3



Աղյուսակ 4



Աղյուսակ 5



Աղյուսակ 6

ԱՐԳԻՇԹԻՒՆԻՆԻԼԻՈՒՄ 2016 Թ. ՊԵՂՎԱԾ ԿԱՐԱՍԱՅԻՆ ԵՎ ԿԱՎԱՐԿՂԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԸ. ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Սիմոն Հմայակյան, Նվարդ Տիրացյան, Մարգար Հմայակյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Նոր Արմավիրի (Արգիշթիխինի) արշավախմբի գործունեությունը վերսկսվել է 2012 թ.¹: Արշավախմբի հիմնական նպատակը Արգիշթիխինի քաղաքի դամբարանադաշտի ուսումնասիրությունն է: Արգիշթիխինի դամբարանադաշտի վրա է ավելի ուշ հիմնվել Նոր Արմավիր գյուղը: Գյուղին և Արգիշթիխինի ամրոցին հարող տարածքներում տարբեր ժամանակներում պեղվել և ուսումնասիրվել են 23 թաղումներ, որոնց թվում 14-ը կարասային են, երեքը՝ սափորներում, երկուսը՝ քարե սարկոֆագներում², այլ երկուսը սալարկղային են, իսկ վերջին երկուսը դիաթաղումներ են՝ կոտրված, խոշոր կավանոթների բեկորներից սարքված «արկղի» մեջ: Սա հուղակավորման ձև է, որը, որքանով հայտնի է մեզ, այլ ուրարտական հուշարձաններում չի հանդիպում:

Լճաշեն-Մեծամորյան մշակույթին բնորոշ սալարկղային դամբարանների թիվը կազմում է այստեղ ուսումնասիրվածների ընդամենը 8,7 տոկոսը: Այսինքն, Արգիշթիխինի արևմտյան ամրոցի բնակչությունը, մ.թ.ա. 8-6-րդ դդ. հիմնականում կազմված է եղել լեռնաշխարհի հարավային ու արևմտյան ծայրագավառներից: Արարատյան դաշտ վերաբնակեցված ընտանիքներից ու նրանց սերունդներից. հանգամանք, որը հաստատագրվում է նաև սեպագիր տվյալներով³:

2016 թ. պեղված կարասային թաղումը գտնվել է Նոր Արմավիր գյուղում, «Լևոնի այգի» անվանված տեղամասի Բ 7 փոստրակում (նկ. 1, 2): Կարասը դրված էր բերանքսիվայր՝ շուրթի վրա: Դեպի վեր նայող հատակի մասը կոտրված էր: Կարասի մեջ գտնվեցին տարբեր քարեր, որոնցից մեկը խոշոր գլաքար էր և մի քանի կարասի մաս (նկ. 6): Փոստրակում, 55-60 սմ խորության վրա, կարասի շուրջը բացվեցին տարածքի համար բնորոշ քարեր և տարբեր անոթների բեկորներ, որոնք կարասի մասերը չէին, սակայն արտաքինից հպված էին կարասի իրանին: Փոստրակի հարավ-արևմտյան և հարավարևելյան անկյուններում բացվեցին տարածքի համար բնորոշ

¹ Այս հոդվածում քննարկվող մարդաբանական նյութը հետազոտվել է Անահիտ Խուրապեր-դյանի կողմից:

² Мартиросян А.А., Аргистихинили, Ереван, 1974, с. 57-58. Մարտիրոսյան Հ.Ա., Թորոսյան Ռ.Ս., Արգիշտիխինի սարկոֆագը, Պատմաբանասիրական հանդես, N 3 1986, էջ 221-227. Տիրացյան Գ.Ա., Արմավիրի պեղումները, Հայկական ՍՍՀ-ում 1985-1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 38-39. Կարապետյան Ի., Թումանյան Գ., Ավետիսյան Պ., Հակոբյան Հ., Հմայակյան Ս., Վարդանյան Ռ., Տիրացյան Ն., Երիտասարդ ուրարտուհու թաղումը, ՀՀ-ում 1993-1995 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գեկուցումների թեզիսներ, Երևան, 1996, էջ 36-37. Կարապետյան Ի.Ա., Ենգիբարյան Ն.Գ., Զրմի կնիքով թաղում Արգիշտիխինիից, Բանբեր Երևանի համալսարանի, 2002, թիվ 2, էջ 218-225. Tiracyan N.G., Two pitthos burials from Argistihinili, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, vol. VIII, Yerevan, 2014, p. 141-158:

³ Մկրտչյան Ռ.Ա., Ավետիսյան Պ.Ս., Ուրարտական դամբարանների հնամարդաբանական նյութերը, Հայաստանի հնագիտական հուշարձանները, 16/III, Երևան, 1995, էջ 101. Տիրացյան Ն.Գ., Արգիշտիխինիի դամբարանադաշտի կարասային թաղումները, Հին Արևելք, Երևան, 2014, թիվ 1 (6), էջ 124-125:

ործաքարերից քարակույտեր: Հարավարևելյան քարակույտի միջից 95 սմ խորության վրա գտնվեց սև վանակատե մի միջուկ, հարավարևմտյան կողմի թափվածքին՝ թասի մի բեկոր:

85-95 սմ խորությամբ բացվեց մոխրաշերտ, գտնվեցին կարմիր փայլեցված բեկորներ, որոնցից մեկը ծորակավոր անոթի շուրթի մաս է (սկ. 7): Կարասի մոտ՝ արևմտյան կողմում, սև, վատ թրծված բեկորների միջավայրում բացվեցին խոշոր եղջերավոր կենդանու ատամներ և ոսկորներ:

Կարասից շուրջ 1 մ հարավ-արևմուտք, 100 սմ խորության վրա, բացվեց մի կմախք, որն առնված էր տարբեր խեցաբեկորներից կազմված «արկղի» մեջ (սկ. 4): Կմախքի գանգը դեմքով նայում էր դեպի արևելք, ձգվածությունը՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք: Գանգի մոտ՝ արևելյան կողմում, դրված էր կարմիր փայլեցված փոքրիկ մի թաս (սկ. 3, 9): Ոտքի վրա՝ կողոսկրերի մոտ, կար աղորիքի մի բեկոր, իսկ կողոսկրերի վրա՝ «սրտածև» մեկ այլ քար (սկ. 3): Ծնոտն անջատված էր գանգից (սկ. 5): Կինը թաղված էր իր զարդերով՝ երկու զսպանակածև մազակալով և մեկ խոշոր ապարանջանով (սկ. 9, 10):

Կմախքի գանգից արևմուտք՝ շուրջ 15 սմ ավելի բարձր, գտնվեցին այլ գանգոսկրերի մասեր, ատամներ, ինչպես նաև սև գույնի կարասի բեկորներ, որոնց վրա՝ կոնքոսկր և ազդրոսկրի մասեր: Եղած մարդաբանական նյութի վերլուծությամբ պարզվեց, որ այստեղ կատարվել է վեց անձանց թաղում⁴: Ամբողջական թաղումը պատկանել է 20-29 տարեկան կնոջ (սկ.11, 13-1), որի ատամնաբանության համակարգի տարբերակը առավելագույն կերպով արտահայտում է հարավային գրացիլ տիպի արևմտյան ենթատիպի տարրեր:

Ստորին ծնոտի երկարությունը միջին չափերի է, ճյուղի բարձրությունը շատ մեծ է, իսկ ամենափոքր լայնությունը փոքր է: Փոքր չափերի կատեգորիա են ստորին ծնոտի առջևի լայնությունը, սիմֆիզի բարձրությունը և մարմնի բարձրությունը: Ստորին ծնոտի վրա առկա են հետևյալ դիսկրետ-փոփոխական հատկանիշները՝ torus mandibularis, sulcus mylohyoideus, foramina mandibularia:

Սկանային լարվածությունը կմախքի վրա զգալի է, հատկապես վերին վերջույթների վրա (սկ. 13-1a): Կարելի է ասել, որ նա սովոր է եղել ծանր աշխատանքի: Ողնաշարի ծանրաբեռնվածությունը հանգեցրել է Շմորլի ճողվածքի ձևավորմանը (սկ. 13-1d): Թիակի վրա՝ կրծքավանդակի շրջանում նկատվել է անցք: Հավանաբար մահացու նետահարել են կնոջը (սկ. 13-1b): Նա հիվանդ է եղել թոքախտով (տուբերկուլյոզով) (սկ. 13-1c): Մի շարք ատամների վրա (C, P₁, C, P₁, P₂) արձանագրվել է արձնածածկի հիպոպլազիա (enamel hypoplasia) (սկ. 13-1f): Այն ֆիզիոլոգիական սթրեսի (անբավարար սնունդ, բորբոքումներ) արդյունք է, ստացած՝

⁴ Կմախքներն ուսումնասիրվել են ըստ ընդունված մարդաբանության մեթոդների՝ Алексеев В.П., Дебец Г.Ф., Краниометрия (методика антропологических исследований), Москва, 1964. Зубов А.А., Некоторые данные одонтологии к проблеме эволюции человека и его рас. Проблемы эволюции человека и его рас, отв. ред. Дебец Г.Ф., Рогинский Я.Я., Москва, 1968а, с. 5-122. Зубов А.А., Одонтология (Методика антропологических исследований), Москва, 1968б, Мовсесян А.А., Мамонова Н.Н., Рычков Ю.Г., Программа и методика исследования аномалий черепа, Вопросы антропологии, 1975, вып. 51, с. 127-150. Федосова В.Н., Общая оценка развития компонента мезоморфии по остеологическим данным (Остеологическая методика), Вопросы антропологии, 1986, вып. 76, с. 105-116. Buikstra J.E., Ubelaker D.H., Standards of data collection from human skeletal remains, Arkansas archaeological survey research series, 44, Fayetteville, 1994. Goodman A.H., Martin D.L., Armelagos G.J., Qark G., Indications of stress from bones and teeth, Paleopathology at the origins of agriculture, Ed. by Cohen M.N., Armelagos G.J., New-York, 1984, p. 13-49.

6 - 10 տարեկան հասակում: Ատամների ուսումնասիրությամբ պարզվել է, որ կինը զբաղվել է մանածագործությամբ: Կա ատամնաքար (նկ. 13-1f):

2. 50-59 տարեկան կին (նկ.12), որի ժանիք ատամը ունեցել է 2 արմատ (նկ. 13-2b), ինչը հազվադեպ մի երևույթ է: Նրա ատամնաբանության համակարգի տարբերակն առավելագույն կերպով արտահայտում է հարավային գրացիլ տիպի արևմտյան ենթատիպի տարրերը: Փաստորեն բացակայում են արևելյան ատամնաբանական տեսակի տարրերը: Սիմֆիզի բարձրությունը շատ փոքր է (20.5մմ): Գանգատուկի վրա առկա է՝ foramina zygomaticofacialia (դիսկրետ-փոփոխական հատկանիշ):

Արտաքին ականջի շրջանում նկատվում են ցրտահարման հետքեր (cribra տիպի) (նկ. 13-2d): Ոսկրերի վրա նկատվում են պերիոստիտի օջախներ (նկ. 13-2a, f): Այն բորբոքային հիվանդությունների արդյունք է: Մի շարք ատամների վրա (C, P1) արձանագրվել է արձևածածկի հիպոպլազիա: Նաև առկա է պորոդոնտիտը և ատամների կորուստ: Կմախքի վրա նկատվում են դիստրոֆիկ փոփոխություններ (նկ. 13-2c) և օստեոպորոզ (նկ. 13-2f): Օստեոպորոզի ժամանակ մեծանում է անսպասելի կոտրվածքների վտանգը: Կնոջ մոտ թոքախտի հետքերը բացահայտվել են ողերի վրա:

3. Մեծահասակ կին: Գանգատուկի վրա առկա է՝ os wormii suturae lambdoidea (դիսկրետ-փոփոխական հատկանիշ): Մկանային լարվածությունը կմախքի վրա զգալի է (նկ. 13-3b): Նրա ուսուկրի վրա բուրձ գործիքով արված հարվածի հետք կա (18.5մմ×11.5մմ) (նկ. 13-3a): Ունեցել է կմախքի վրա դիստրոֆիկ փոփոխություններ և բորբոքումներ (պերեոստիտ):

4. Մեծահասակ կին. գտնվել են այս կնոջ կմախքի առանձին ոսկորներ:

5. Միջին տարիքի տղամարդ, որի գանգի բեկորի վրա առկա է՝ foramina mastoidea (դիսկրետ-փոփոխական հատկանիշ): Նա հիվանդ է եղել միջին ականջի կամ թմբկախոռոչի բորբոքումով (mastoiditis) (նկ. 13-4): Հաստատագրվել է նաև բորբոքում կողերի վրա:

6. Երեխա. ոսկորների վրա բացահայտվել է փոքր կենդանիների ատամների հետքեր, նկատվում են նաև պերիոստիտի օջախներ:

Կարելի է ենթադրել, որ անհատներից հինգը հուղարկավորված են եղել կարասում, իսկ մեկը կարասի մոտ՝ այլ ծիսակարգով: Բացառված չէ, որ կարասը թալանվել է, դուրս է թափվել պարունակությունը, հետո հավաքվել են արժեքավոր իրերը: Երիտասարդ կնոջ թաղումը, որի նիշը քիչ ավելի ցածր է կարասինից, չի նկատվել, այդ իսկ պատճառով մնացել է անխաթար: Այն միջին հարստության կարելի է համարել, բայց կնոջ սոցիալական դիրքը ցածրացված է:

Երիտասարդ կնոջ հետ հուղակավորված իրերը հետևյալն են.

Թաս, նյութը՝ կավ, ընդհ. տրամ.՝ 14.7 սմ, շրթի տրամ.՝ 13.4 սմ, հատակի տրամ.՝ 5.4 սմ, բարձր.՝ 3 սմ, խոր.՝ 2.2 սմ, խեցու հաստությունը հատակին՝ 0.8 սմ: Կարմիր անգոբապատ փոքր թաս է, շուրթը դեպի ներս է թեքված, հատակը հարթ է (նկ. 9):

Ապարանջան, նյութը՝ բրոնզ, տրամագիծը՝ 8.2-8.9 սմ, ամենամեծ հաստությունը՝ 0.6 սմ, լարի ընդհանուր երկարությունը՝ 25 սմ.: Պատրաստված է բրոնզե լարից, ծայրերը չեն միանում իրար, բացվածքը՝ 1.6 սմ: Արտաքինից արված են կտրվածքներ, ինչի արդյունքում ձևավորվել են փոքրիկ ցցվածքներ, որոնք վեցը ընդմիջարկումներով բաժանված են յոթ խմբերի՝ 13+9+13+10+11+10+10=76 (նկ. 9,10):

Հերակալ, նյութը՝ բրոնզ, վիճակը՝ ամբողջական-վերականգնված: Ստորին տրամ.՝ 2 սմ, վերին մասում՝ 1.5 սմ, մետաղալարի հաստ.՝ 2-3 մմ: Մետաղալարից պատրաստված իր է, ստացվել է մետաղալարը 3 անգամ առանցքի շուրջը պտտելու արդյունքում, պարուրածն է: Սկսվում է ավելի բարակ մետաղալարով ամրացված

գլխիկով, որն այս գործողությունից հետո սնամեջ է ստացվել: Գալարապոչը սուր է (նկ. 9,10):

Նախորդի նմանակն է, ունի նույն չափերն ու նկարագիրը (նկ. 9,10): Բացառված չէ, որ կանայք այս հերակալներն օգտագործել են սանրվածքի այն ձևում, երբ մագերը հավաքվում էին գլխի գագաթին:

Ականջօղ, կյուրը՝ բրոնզ, ամբողջական, մեծ տրամ.՝ 1.4 սմ, փոքրը՝ 1.1 սմ, լարի երկար.՝ 2.3 սմ: Ստացվել է լարը կորացնելու և երկու իրար չմիացած ծայրերը սրելու արդյունքում (նկ. 9,10):

Թվագրության վերաբերյալ պետք է նշել հետևյալը: «Լևոնի այգի» տեղամասը գրավում է 60x60 մետր տարածք, որի արևմտյան հատվածը զբաղեցնում են Լևոն Յովհաննիսյանի տունն ու օժանդակ կառույցները: Այգին արևելյան կողմում է, ուր նորագույն կառույցներ չկան: Ընդհանրապես, Նոր Արմավիր գյուղը հիմնվել է Պոլսից և այլ տեղերից այստեղ գաղթած հայրենադարձների կողմից 1923 թ.: Մինչ Յայաստանի խորհրդայնացումը գյուղում եղել է ընդամենը տասը տուն բնակիչ⁵:

1989 թ., այգում պեղվել են մեկ սարկոֆագային և մեկ կարասային դամբարաններ, որոնք թվագրվում են մ.թ.ա. VIII-VII դդ.: Դրանք այստեղ գտնված ամենահին հուշարձաններն են: Սարկոֆագի մեջ դրված էր ուրարտական մի կոթող⁶: Յետագայում՝ 2013-2015 թթ., տեղամասում հայտնաբերվեցին տարբեր չափերի որձաքարից ու տուֆից այլ կոթողներ, որոնք առնչվել են թաղման ծիսակարգի հետ: 2013 թ. նույն տեղամասում՝ նախորդների հարևանությամբ, փաստագրվել է մեկ այլ ուրարտական ավերված թաղում խոշոր կարասում, որի վրա կար վարպետի նշան, ինչը թերևս վկայում է դրա մ.թ.ա. VIII-VII դդ. պատկանելու մասին⁷:

2012-2017 թթ. ընթացքում տեղամասի տարբեր մասերում դրված փոստրակների շնորհիվ պարզվել է, որ տեղամասը գրեթե ամբողջությամբ կառուցապատված է եղել շինություններով, որոնք այստեղ հիմնվել են ավելի ուշ, քան վերոհիշյալ դամբարանները: Այս են վկայում որպես շինաքար օգտագործված կոթողների բեկորներն ու պատերի վրա գտնված ուրարտական, խոշոր, խորադիր երկրաչափական զարդանախշով կարասների մասերը:

2014-2015 թթ. պեղվել են երկու թաղումներ, որոնք կատարված են նույն ծիսակարգով, ինչ 2016 թ. պեղվածները (կարասում և «կավարկղում»): Գտնվել են նույն միջավայրում՝ կառույցների պատերի մոտ, նույն նիշերի վրա: Ենթադրում ենք, որ կառույցներն ու այս չորս թաղումները համաժամանակյա են (ավելի ուր են), քանի որ կարասային թաղումները ուղեկցվում էին «կավարկղային» հուղարկավորություններով, որոնք բնորոշ չեն մ.թ.ա. VIII-VII դդ.: Կանանց թաղման գույքը համապատասխանում է ուրարտական թաղումներին. այն է՝ կարմիր փայլեցված թաս, ականջօղ, մատանի, ապարանջան, գավաթ, ունելի կամ վարսակալ: Այլ կռվանները, որոնք վկայում այս դամբարանների ավելի ուշ լինելու մասին, երկուսն են:

Ինչպես ասվեց, մագակալների վրա անցք է ստացված՝ մետաղալարի եզրը կորացնելու, ապա այն մետաղալարին ամրացնելու ձևով, ավելի բարակ մետաղագալարի օճևությամբ: Մետաղագալարը ուրարտական կիրառական արվեստում

⁵ Յակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ա.Տ., Բարսեղյան Յ.Խ., Յայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, չորս հատորով, հատոր 1, Երևան, 1986, էջ 468:

⁶ Տիրացյան Գ.Ա., նույն տեղում:

⁷ Յմայակյան Ա.Գ., Յակոբյան Յ.Պ., Տիրացյան Ն.Գ., Յմայակյան Ա.Ս., Նոր Արմավիրի արշավախմբի 2012-2013 թթ. կատարած ուսումնասիրությունների արդյունքները (հանձնված է տպագրության):

օգտագործվել է նաև որպես լրացուցիչ զարդանմուշ: Մետաղագալարներով են օժտված Կարմիր բլուրի 1946 թ. գտնված զույգ օղերը⁸ և 1953 թ. համար 38 սենյակում հայտնաբերված երկկոն միջնամասով օղը⁹, որոնք կարող են թվագրվել Թեյշեբաինի քաղաքի զոյատուման վերջին փուլով՝ VI դարով: Մետաղագալարներով են օժտված նաև Լոռի բերդի թիվ 1 դամբարանի երկկոն միջնամասով ականջօղը¹⁰ և թիվ 56 դամբարանի արծաթե շղթայի կախիկը, որը նույնպես ստացվել է վերը նկարագրված ձևով¹¹: Երկու իրերն էլ տիկին Սեդա Դևեջյանը թվագրել է մ.թ.ա. VII-VI դդ:

2014-2015 թթ., Լևոնի այգում պեղված հուղակավորությունների դամբարանագույքում կա կարմիր փայլեցված երկկանթ զավաթ-սափոր, որն ունի անոթի խորքից սկսվող ծորակ և ծորակի վրա՝ փոքրիկ արձանամաս: Այս իրի մերձավոր զուգահեռն է՝ Պերսեպոլիսի ապադանայի արևելյան մուտքի աստիճանավանդակի բազրիքի բարձրաքանդակին հայ պատգամաբերի ձեռքին պատկերված սափորը, որը նույնպես օժտված է ծորակով. այսինքն երկուսն էլ, փաստորեն, ռիտոններ են: Ինչպես հայտնի է, Պերսեպոլիսը Աքեմենյանների մայրաքաղաքն էր՝ հիմնված Դարեհ I-ի կողմից (մ.թ.ա. 522-486 թթ.): Ապադանան կառուցվել է իր և իր որդու՝ Զսերքսես արքայի (մ.թ.ա. 486-464 թթ.) գահակալության առաջին տարիներին¹²: Ուրեմն բարձրաքանդակը¹³ կարող է թվագրվել մ.թ.ա. VI դ. վերջ - V դ. առաջին քառորդով:

Նկատի ունենալով վերն ասվածը՝ Նոր Արմավիրում 2013-2015 թթ. պեղված թաղումները, հակված ենք թվագրելու մ.թ.ա. VI դ., հավանական է՝ երկրորդ կեսով՝ դիտարկելով որպես ուրարտականի արտահայտություն վաղ հայկական պատմամշակութային միջավայրում¹⁴:

⁸ Пиотровский Б.Б., Искусство Урарту (VIII-VI вв. до н.э.), Ленинград, 1962, с. 87-88, рис. 53.

⁹ Пиотровский Б.Б., Кармир блур III (Результаты работ археологической экспедиции Института истории Академии наук Армянской ССР и Государственного Эрмитажа, 1951-1953 гг.), Ереван, 1955, с. 20, рис. 14.





¹⁰ Դևեջյան Ս., Լոռի բերդ II (միջին բրոնզ), Երևան, 2006, էջ 11-12, աղ. XII, նկ. 2. Ուրարտական ոսկե ականջօղերի մասին տե՛ս նաև՝ Հմայակյան Ս.Գ., Ուրարտուի ոսկին, «Հին Հայաստանի ոսկին» գրքում, գլուխ 6, էջ 180-181, աղ. XCIV:

¹¹ Դևեջյան Ս., Հայաստանի ոսկին երկաթի լայն տարածման ժամանակաշրջանում, «Հին Հայաստանի ոսկին» գրքում, գլուխ 5, էջ 148, աղ. XCII:

¹² Տե՛ս, օրինակ, Persepolis, Achaemenid souvenir, Text by N. Nafisi, Photos by H. A. Yeganeh, Translation by P. Saidi, Teheran, 2003, p. 14-16, 178.

¹³ Կարմիր փայլեցված երկկանթ զավաթ-սափորները, որոնք, սակայն, չունեն ծորակ, Պերսեպոլիսի հիշատակված պատկերի հետ համադրել է դեռևս Հարություն Մարտիրոսյանը (Мартиросян А.А., Город Тейшебаини (по раскопкам 1947-1955 гг.), Ереван, 1961, с. 137-150). Ծաղկահովիտից գտնված, ծորակով օժտված զավաթ-սափորի և Պերսեպոլիսի բարձրաքանդակների մասին տե՛ս. Khachadourian L., Empire in the everyday: A preliminary report on the 2008-2011 excavations at Tsaghkahovit, Armenia, American Journal of Archaeology, 118, 2014, p. 142-149. Հայաստանում գտնված երկկանթ զավաթ-սափորների մասին, տե՛ս նաև Մարտիրոսյան Ա.Ա., Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 267-268. Тирациян Г.А., Культура древней Армении (по археологическим данным), Ереван, 1988, с. 35-38. Ավետիսյան Յ., Արագած, Երևան, 2001, էջ 68-69, աղ. LXXIV-LXXVI:

¹⁴ 2016 թ. Նոր Արմավիրի արշավախմբի կազմը. Հմայակյան Ս., Տիրացյան Ն., Հմայակյան Ս., Գալստյան Շ., Գալստյան Լ., Սկրտչյան Թ.: Իրերը վերականգնել է Տ. Իսահակյանը:



1,2-Մարտիազայն և Կարասայն
 քարաններ 1986 թ.
 3-Կարասայն քարում 2012 թ.
 4-Հիմնահողայն քարում
 5-Կարասայն քարում, քարում
 Կարասի բերրերի մեջ 2016թ.
 6-Թարոմ սպիրում և Կարասով
 ծածկած քարում 2014-2015 թթ.

 A-Շերտագրական նստվածքներ և
 փորրիկ կորոջ 2016թ.
 B-Քեւապատ 2016թ.
 C-Քաշալտ քար 2016թ.
 D-Պատ, 2012 թ.
 E- երկճակատ պատ 2014-2015 թթ.



Նկ. 1. «Լևոնի այգի» տեղամասի F 7 փոտրակում պեղված կարասը և երիտասարդ կնոջ թաղումը. 2. «Լևոնի այգի» տեղամասի F 7 փոտրակը (չափագրությունը՝ Սյուզի Հակոբյանի). 3. «Լևոնի այգի» տեղամասի F 7 փոտրակում պեղված երիտասարդ կնոջ թաղումը. 4. «Լևոնի այգի» տեղամասի F 7 փոտրակի երիտասարդ կնոջ թաղումը և կավանոթների բեկորներից սարքված «արկղի» մնացորդները. 5. «Լևոնի այգի» տեղամասի F 7 փոտրակի երիտասարդ կնոջ ծնոտը և մագակալը (դաշտային լուսանկ.՝ Ս, Հնայակյանի). 6. Կարասի մասերից մեկը. 7. «Լևոնի այգի» տեղամասի F 7 փոտրակից գտնված ծորակավոր անոթի բեկորը թրծումից առաջ արված նշանի հետքով. 8. Կարմիր փայլեցված թասերի մասեր «Լևոնի այգի» տեղամասից. 9-10. «Լևոնի այգի» տեղամասի F 7 փոտրակում պեղված երիտասարդ կնոջ թաղման գույքը (իրերի լուսանկ.՝ Աննա Ազիզյանի). 11. «Լևոնի այգի» տեղամասի C 11 փոտրակում գտնված երկկանթ գավաթ-սափորը (իրերի գրչանկարները՝ Անի Սահակյանի). 12. «Լևոնի այգի» տեղամասի փոտրակների տեղաբախշումը (զծագիրը՝ Թագուհի Հնայակյանի). 13. «Լևոնի այգի» տեղամասի F 7 փոտրակում գտնված կարասային թաղման ոսկրանյութը (լուսանկարները՝ Անահիտ Խուդավերդյանի)

ХРАМОВЫЙ ПРАЗДНИК В СТРАНЕ БИАЙНИЛИ / УРАРТУ

Эмма Петросян

Институт археологии и этнографии НАН РА

Изучение духовной культуры прошлого, когда до нас не дошли тексты мифов или описания ритуалов - сложная задача. Приходится обращаться к косвенным источникам - литературе, проводить типологические сопоставления с традициями соседних более или менее ближних народов, привлекать артефакты и данные изобразительного искусства той поры. Метод реконструкции помогает в той или иной мере приподнять завесу времени.

Цель нашей статьи - представить основные сюжеты, которые разыгрывались во время ритуалов и театрально-зрелищных представлений Урартского царства. Из урартских клинописных источников известны довольно скудные упоминания о некоторых событиях, которые должны были сопровождаться обрядами с целью обеспечения успеха в предпринимаемом деле. Это упоминание о церемониях с жертвоприношениями в связи со строительством, коронацией, началом военных походов и сезонно-полевых работ¹. Так, в городе Ардини царь Ишпуини страны Биайнили построил часовню богу Халди, на дороге поставил стелу, преподнес оружие, посвященные сосуды, пригнал скот к воротам святилища для жертвоприношения². Не исключено, что часть животных были выделены для содержания при храме и в зверинце.

О размахе праздничных богослужений свидетельствует царь Менуа, сын Ишпуини: Когда виноградник *tešule*, бык и 3 овцы пусть будут принесены в жертву богу Халди (в) церемонии (?) пусть будут выполнены (?) как у ворот Халди, так и перед надписью. Когда устройство (?) виноградника *'ahule* - праздник(?) богу Халди пусть будет устроен (?) у ворот Халди, праздник (?) - богине Арубани, праздник (?) богу Халди перед надписью³. Царь Руса, сын Сардури в надписи о коронации Урзаны высек билингу, чтобы и урарты, и ассирийцы знали о торжествах: "Народ в городе Ардини (Мусасир) присутствовал (при этом); сделанные мною пожертвования целиком я отдал городу Ардини (Мусасир); праздник (?) для жителей города Ардини (Мусасир) я устроил⁴.

В большинстве клинописных текстов упоминается принесение животных, щитов, оружия, сосудов и прочей утвари богам в качестве жертвоприношения. Сам акт жертвоприношения - уже ритуал, праздник, который стоит в центре церемонии. Согласно этимологии, предложенной Р. Ачаряном, арм. *unnü* 'праздник' - от и.е. *dapni* - 'жертва'⁵. Это значит, что в стране Биайнили праздники могли занимать

¹ Меликишвили Г.А., Урартские клинописные надписи (далее - УКН), Москва, 1960. Հմայակյան Ա.Ք., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990:

² УКН, N 19, 27, 137, и т.д.

³ УКН, N 65.

⁴ УКН, N 264. В надписях наиболее часто в связи с праздниками и жертвоприношениями упоминается город Ардини.

⁵ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979, տես՝ տոմ:

значительную часть годового времени. которые, как любой праздник, сопровождалась богослужением, пением, плясками и инсценировками подвигов богов.

Большинство церемоний должны были совершаться прилюдно, с приглашением знатных людей и представительных соседей, чтобы все видели могущество владыки государства. Общеизвестно, что “свита делает короля”, а это значит, что гости тоже прибывали в сопровождении приближенных, певцов, танцоров, с богатыми подарками и пожертвованиями в пользу святилища, в которых уже и так были несметные богатства, о чем свидетельствует Саргон II, разоривший святилища в религиозном центре государства Биайнили - Ардини.

Таков распорядок любого праздника. Но благодаря данным изобразительного искусства до нас дошли также ряд визуальных свидетельств о мистериях и праздниках той поры, и, следовательно, о хронологически более ранних⁶.

Из наследия культуры страны Биайнили известны статуэтки, украшения, бронзовые пояса, в которых запечатлены мифологические образы и композиции, сцены из театрализованных представлений. Один из ярких примеров - статуэтка из резной кости из Топрах-кале⁷. Изображен человек (жрец?) в маске орла, поддерживающий рукой небольшую капитель (рис. 1). Если бы резчик хотел изобразить орла, то капитель должно было поддерживать крыло.

Кто же этот бог или жрец? Известно, что у армян почитание орла/сокола издавна воспринималось как трансформация бога Арци, Арцибиси⁸, а позже - Вахагна. Понятно, что участие такого персонажа в мистериях не случайно. Более того, этот прием типологически соответствует передаче сакральных образов в масках орлов божеств- танцоров соседних народов (рис. 2).

О продолжении традиции разыгрывания образа птицы в театрализованных представлениях вплоть до средних веков свидетельствует дуэт танцоров в парной миниатюре кисти Тороса Рослина (1260 г.). Изображены два исполнителя в очень выразительном танцевальном диалоге (рис. 3, 3а)⁹.

Все вышеприведенные персонажи крылатые. Как же привязывали крылья? Яркой иллюстрацией прием ряженья в крылатые образы, может служить фигурка ручки урартского бронзового котла¹⁰ (рис. 4). На крыльях с обратной стороны при-

⁶ О музыкальных инструментах эпохи бронзы см. Բրոնզյան Ա.Ա., Բրոնզեդարյան Հայաստանի երաժշտական գործիքները, Շևրի ի վերուստ, առասպել, ծես և պատմություն, Հողվածների ժողովածու՝ նվիրված Սարգիս Հարությունյանի 80-ամյակին, Երևան, 2008, էջ 240-261. Franklin J.C., Divinized instruments and divine communication in Mesopotamia, Music and ritual bringing material and living cultures, Publication of the ICTM study group on music archaeology, v. 1, p. 47-61:

⁷ См. Пиотровский Б.Б., Ванское царство (Урарту), Москва, 1959, табл. L. Статуэтка хранится в Британском музее.

⁸ Ջահուկյան Գ.Բ., Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին, Պատմաբանասիրական հանդես, N 1, 2009, էջ 124-129:

⁹ Петросян Э.Х., Театр в средневековых армянских миниатюрах, Ереван, 2014, табл. IX.

¹⁰ Пиотровский Б.Б., Искусство Урарту, Ленинград, 1962, рис. 4. Бронзовое украшение котла, Стамбул. Урартские парадные медные котлы, по-видимому, в основном использовались в ритуальных жертвоприношениях. Например, анналы ассирийского царя Саргона II упоминают бронзовый сосуд, наполняемый вином «возлияний» при совершении жертвоприношений богу Халди. Среди украшающих котлы фигурок отмечены головы быков, а также

деланы кольца, в которые продеты руки женщины. При взгляде спереди создается впечатление, что вместо рук - крылья. Торс женщины скрыт в костюме, имитирующем торс и хвост птицы. Как видим, в этой фигурке наглядно отражен прием костюмировки. В современных спектаклях, в частности в детских и балетных, а также во время карнавала, используется тот же принцип. Такова связь времен.

Сцена с персонажами в масках орлов изображена на каменной шкатулке из Кармир Блура¹¹. В центре композиции мировое дерево со стоящими по обе стороны существ в длинных одеяниях (рис. 5). У них вертикальный торс человека, руки и ноги людей и не похожие на птичьи крылья, привязанные к спине. Дерево явно бутафорское. А существа в масках орлов, по всей вероятности, участники ритуала (жрецы?)...

Из истории индоевропейской мифологии известно, что мировое дерево соорудилось на новый год - в период порубежной ситуации, связанной с актом творения Космоса. Дерево идентично космическому столбу в центре мира, который держит небо и землю врозь, "чтобы небо снова не упало на землю"¹². Само дерево, как ось вселенной, имеет вертикальную и горизонтальную структуру¹³. При делении по вертикали получаются три уровня - низ, средняя зона и верх, которые хорошо видны на резьбе шкатулки. Нижний уровень - земля, подземный мир, представлен стилизованными ногами животного и пальметтой, средний - сфера обитания человека, стилизованно передана человекообразным существом с распростертыми в стороны руками, третья зона - небо, солнечный диск, птица - небесное царство.

Горизонтальная структура - это само дерево со стоящими по обе стороны жрецами (?) в масках орлов. Вместо людей могут быть изображены пара животных, птиц, фантастических существ и др. В урартском искусстве, на мой взгляд, наиболее распространена композиция со жрецами, стоящими по обе стороны стилизованного дерева, как, например, на шлеме Сардури II.

Вертикальная сфера больше связана с космогонией, а горизонтальная - соотносится с ритуалом и его участниками. Итак, изображенная урартская композиция мирового дерева совпадает принятым в науке "характерным для мифопоэтического сознания образом, воплощающим универсальную концепцию мира"¹⁴.

Еще один сюжет ритуала нашел отражение в резьбе на шкатулке. Это диалог персонажей, стоящих друг против друга. Согласно основному индоевропейскому мифу, у мирового дерева или дерева жизни с целью творения элементов Космоса происходил диалог жрецов, состоящий из вопросов и ответов, когда нужно было назвать составные элементы вселенной.

На урартской шкатулке жрецы у дерева тоже о чем-то говорят, на что указывает выразительное положение рук. О чем они спрашивают друг друга? - Они

крылатые божества, обычно женские, реже мужские. Существует предположение, что эти божества являлись изображениями бога Шивини и его супруги богини Тушпуеа - богини солнца.

¹¹ Там же, рис. 66, Исторический музей Армении.

¹² Топоров. В.Н., Некоторые соображения о происхождении древнегреческой драмы (к вопросу об индоевропейских истоках), Текст: семантика и структура, Москва, 1983, с. 23, 30.

¹³ Топоров В.Н., Дерево мировое, Мифы народов мира, т.1, Москва, 1980, с. 398-405.

¹⁴ Там же, с. 398.

задают друг другу загадки, творя Вселенную словом и делом, т. е. магическими движениями-формулами.

В армянском фольклоре сохранилось множество загадок, которые должны были сопровождаться магическими жестами, речитативом или мелодическим распевом. Однако, время и секуляризация ритуала привели к распаду синтеза действия.

Приведу несколько армянских загадок как акта творения составных частей Космоса, которые типологически соответствуют архаичным текстам, восходящим к жанру *брахмодья*, представляющему собой серию загадок (вопросов и ответов) на космологические темы и отраженному в ряде ведийских текстов. *Брахмодья* является частью ритуала, воспроизводящего первособытие - сотворение ведийского космоса¹⁵.

(Հարց) Էն ի՞նչն աս, ինչ, /Անգերան շինած աս, /Անսին կաղնած աս: (Պատասխան) Երկինք: (Вопрос) Это, что, что? Без бревна построили, без столба поставили. (Ответ) Небо. 2. (Հարց) Էն ի՞նչ՞ա, ինչ, / Երկու սինի, իրար դափադ: (Պատասխան) Երկինք և երկիր: (Вопрос) Это что, что? Два подноса, а вместе - одно. (Ответ) Небо и земля. 3. (Հարց) Էն ի՞նչն աս, ինչ, / Ինքը մինն աս, / Աչքերը - հազար: (Պատասխան) Երկինք և աստղեր: (Вопрос) Это что, что? Он один, а глаз много. (Ответ) Небо и звезды. (Հարց) Էն ի՞նչն աս, / Կեսն ուտեմ, կեսն փախեմ: (Պատասխան) Լուսին: (Вопрос) Это что, половину съем, половину спрячу. (Ответ) Луна¹⁶.

Слияние неба и земли - хаотическая ситуация, согласно армянским верованиям, имела место на Амбарцум (христианское - Вознесение Господне). Полагаю, что мифологически тогда совершалось зачатие божества (акт Творения), а на Вардавар¹⁷ - отделение Неба и Земли - акт Сотворения - родился солнечный младенец.

В ведийской мифологии им был Индра, в армянской, соответственно, был Вахагн. Согласно Мовсесу Хоренаци (V в.) он сам слышал (и видел) сюжет Рождения Вахагна под музыкальное сопровождение *бамбирна*¹⁸.

Итак, резьба на урартской шкатулке идеально передает мифологические воззрения своей эпохи, запечатлев одну из сцен мистерии "Сотворение мира",

Как существа нижней зоны - подземного мира в мифологии обычно представлены драконы, рыбы и другие земноводные. Образцом ряженья в образ рыбы являются три статуэтки, обнаруженные в Кармир блуре в кладовой около жертвенника¹⁹. Как указывает Б. Б. Пиотровский, это "стоящие бородатые фигуры, головы и спины покрыты рыбьей кожей таким образом, что голова рыбы является головным убором Бога... Подобные глиняные статуэтки в облачении рыбы известны из раскопок

¹⁵ Елизаренкова Т.Я., Топоров В.Н., О ведийской загадке типа brahmodya, Паремииологические исследования, Москва, 1984, с. 14-46.

¹⁶ Հարությունյան Ս.Բ., Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, N 1, 8, 70, 40:

¹⁷ В древности Вардавар праздновали в день летнего солнцестояния, когда солнце было в зените, после чего дни начинали идти на убыль.

¹⁸ Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, գ. I, 33:

¹⁹ Пиотровский Б.Б., Искусство Урарту, ук. соч., там же, рис. 77. Глиняная фигурка, Кармир блур, Исторический музей Армении. Его же Ванское царство, с. 230.

ассирийской столицы Ашура. Боги в одеянии рыб, связанные с богом Эа, встречаются на ассирийских памятниках, особенно магического значения, где они находятся обычно у ложа больного. Б. Б. Пиотровский упоминает об урартской печати, принадлежащей К. В. Тревер, на которой вырезаны жертвенник и обезглавленная человеческая фигура, крылатый солнечный диск (знак Ашура) над рыбой, бог на троне, стоящий жрец и божество в виде рыбы около ложа, фигура животного (козла?), полумесяц и звезда и считает, что изображена религиозно-магическая сцена. Б. Б. Пиотровский также приводит глиняную статуэтку в виде антропоидного божества с хвостом скорпиона²⁰.

Наглядным примером ряженья жрецов в рыб - изображение процессии по бордюру сакрального ассирийского бассейна Ашура, выставленного как музейный экспонат в Переднеазиатском музее (Пергамон)²¹.

Статуэтки с рыбьим покрывалом можно идентифицировать как изображение бога Дагона, который почитался в образе рыбы. По Г. А. Капанцяну, «Имя Дагонские горы, южнее Муша (по армянским данным) и имя села Daganavana (по римским дорожникам) у Ванского озера говорят определенно о почитании сиро-арамейского бога Dagan-Dagon в Тароне»²². Географически это этническая территория расселения жителей страны Биайнили, а позже - Армении.

З.А. Рагозина пишет: «В храме Дагона (dag - по-семитски 'рыба') была статуя, имевшая голову и руки человека, тело рыбы, ноги человека»²³. Фактически, эта была скульптура, моделью которой послужил ряженный в Дагона жрец. Понятно, что в праздники, связанные с почитанием воды и рыб жрецы облачались в накидку с маской, похожей на голову рыбы. Но были и женские параллели образа человека-рыбы.

Мыслитель поздней античности Лукиан из Самосаты (II в.) писал, что видел в Финикии в храме статую Деркетто, верхняя часть туловища представляла женщину, а нижняя, от бедер до ног, сделана в виде рыбьего хвоста²⁴.

Мы хотим продолжить тему почитания богини Деркетто в образе рыбы, в связи с почитанием в богини Астхик. По преданию, она каждую ночь под покровом тумана спускалась с горы, чтобы выкупаться в Евфрате. Чтобы ее увидеть обнаженной, юноши взбирались на гору Дагона (Դափնիշ)²⁵. Гора, понятно, была рядом, где купалась Астхик, а так как в мифологической традиции богини имели прозвища по имени гор (пещер в горах) или месту, где они почитались, то можно, по аналогии с прозвищами других богинь, напр. Артемида - Эфесская, Лимнатиды, Орфия, Афина - Ларисейская, Итония, Полиада и др. полагать, что одним из прозвищ Астхик было Дагонская, точнее, у богини Анаид был астральный код 'астхик' (звездочка), геогра-

²⁰ Там же, с. 111-112.

defending the main gateway of Daruband. Apparently, according to Herodotus' numeration, it was XI district - Kaspiana. The palaces of Qarajamirli and Gumbati were built under Xerxes' (486-465 cc. BC) reign. The Persians peacefully abandoned these palaces, probably, in the last quarter of the 4th c. BC after the collapse of Achaemenid Empire. New settlers made use of some of the storerooms of the deserted buildings for living. They left typical Georgian pottery, including both white-striped and red-painted one. Such pottery widely spread throughout late Achaemenid and early Hellenistic Georgia, was recovered in Azerbaijan for the first time¹⁴.

Kingdom of Kartli (Iberia) was founded on the ruins of Achaemenid Empire and as it is mentioned in old Georgian chronicle 'Kartlis Tskhovreba' ("Life of Kartli") the first king of Kartli - Parnavaz arranged his kingdom according to a "Persian model". Analysis of archaeological findings, the data received from the language and written sources enable us to claim that the note given by the chronicler can be true and indeed Kingdom of Kartli inherited a number of things from Achaemenid Empire, but this is the subject of a different survey.

¹⁴ Babaev I., Gagoshidze I., Knauss F., op. cit., 2007, p. 316-317.




Fig. 1. South Caucasus. Three sub-regions




Fig. 2. The map of distribution of bell-shaped bases



Fig. 3. Bell-shaped base from Qarajamirli



Fig. 4. Double protome capital from Kavtiskhevi



Fig. 5. Achaemenid silver phiale from Kazbegi



Fig. 6-7. Achaemenid golden bracelet from Vani



Fig. 8. Colchian coins

ԴՎԻՆԻ ԱՆՏԻԿ ՇԵՐՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԲԼՐԻ ԳԱԳԱԹԻ ՀԱՐԹԱԿԻ ՆՅՈՒԹԵՐԻ

Գայանե Զոչարյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Դվին հնավայրի հնագիտական հետազոտությունները (1937 թ. սկսած) բացահայտել են մ.թ.ա. III հազարամյակից մ.թ. XIII դարն ընդգրկող բազմաշերտ հուշարձանի գոյությունը: Ցարդ արձանագրվել են վաղբրոնզեդարյան, վաղերկաթեդարյան, անտիկ և միջնադարյան մշակութային շրջափուլեր, որոնք թվագրվում են մ.թ.ա. III հազ. կեսեր, մ.թ.ա. X-VIII դդ., մ.թ.ա. II- մ.թ. I դդ., մ.թ. II դ., մ.թ. IV-V դդ., մ.թ. V-VII դդ., մ.թ. VIII-IX դդ., մ.թ. X-XI դդ., մ.թ. XII-XIII դդ., մ.թ. XIII դ. երկրորդ կես¹:

Պեղումների ընթացքում հատվածաբար բացվել են Դվին բլրի գագաթի խիտ կառուցապատված (4000 քմ) հարթակն օղակող պարսպագոտու մնացորդները: Պարսպի և անմիջականորեն կից շինությունների շերտագրությունը ուրվագծում է դրանց գոյության հիմնական շրջափուլերի նույնականությունն առնվազն մ.թ.ա. I հազարամյակի սկզբից ի վեր, անտիկ ժամանակաշրջանում և վաղ միջնադարում՝ ընդհուպ մինչև 984 թ. մեծ երկրաշարժը: Այն է՝ բնակավայրն ու պարիսպը պարբերաբար վերակառուցվել են գրեթե բոլոր հանգուցային դարաշրջաններում:


Արտաշիսյան ժամանակաշրջանի՝ մ.թ.ա. II-մ.թ. I դդ. շերտը գագաթի հարթակի վրա ներկայանում է շինությունների հատվածաբար բացահայտված հետևյալ ընդհանրական ուրվապատկերով (նկ. 1).

- արևմտյան մասում՝ ճյուղավորված տնտեսական հարկաբաժիններով բնակելի համալիր (երկայնական առանցքով ձգված միջանցք և սրա երկու թևերին հարող սենյակներ), շրջակայքում կառույցների քարաշեն հիմքերի, հում աղյուսե վերնամասերի մնացորդներ, սպիտակ ավազաքարե տորածն զույգ սյունախարսխով սենյակի հատված (տե՛ս b-g-15-8, c+b-7-6 քառ.),

- արևելյան մասում՝ վարչատնտեսական բնույթի շինություն (in situ սպիտակ ավազաքարե զույգ տորածն սյունախարսխով սրահ և կից սենյակներ) (տե՛ս e+a-3+3, c+b-1+2 քառ.),

- սրանից հարավ՝ «Արշակունյաց գահադահլիճով» ընդհատված հատվածում կան բնակելի սենյակներ, խոհանոց-շտեմարաններ (շիկավուն տուֆե տորածն զույգ սյունախարսխով սենյակը հավանաբար ունեցել է երդիկային ծածկ և կատարել խմբավորող դեր) (տե՛ս -b-f-3+3, -e-f-3-2 քառ.):

¹ Դվին բազմաշերտ հնավայրի մշակութային շրջափուլերը ներկայացված են ըստ՝ Տեր-Ավետիսյան Ա.Վ., Հայագիտական հետազոտություններ, Գիտական ժառանգություն, N 6, Երևան, 2010, էջ 266-268. Նաև՝ Ղաֆադարյան Կ.Գ., Զայանթարյան Ա.Ա., Դվին II, Դվին քաղաքը և նրա պեղումները (1973-1980), Հնագիտական պեղումները Հայաստանում, N 20, Երևան 2002, էջ 42-61. Kalantarian A., Dvin. Histoire et archéologie de la ville medievale, Paris, 1996, p. 35-54. Байбуртян Е., Последовательность древнейших культур Армении на основании археологического материала, Ереван, 2011, էջ 39. Խանգաղյան Է.Վ., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967, էջ 13-14. Кушнарева К. X., Древнейшие памятники Двина, Ереван, 1977, с. 5-10. Զոչարյան Գ., Անտիկ Դվինը ամրոց-սրբավայրից արքայանիստ քաղաք, Բանբեր հայագիտության, 2014, N 1/4, էջ 26-46:



Նկ. 1 Դվին, միջնաբերդի կենտրոնական հատվածի ընդհանուր հատակագծի վերակազմության փորձ (Ըստ 1950-2013 թթ. պեղումների նյութերի համադրության), Չափագրությունը՝ Կորյուն Ղաֆադարյանի

Այստեղ ամենուր ակնհայտ է մ.թ. I դ. կեսին բնակավայրի կործանման օրհասական պատկեր (մոխրառատ միջավայր, կարմրաշիկավուն հող, քանդված պատեր, փայտե կրող կոնստրուկցիաների ածխացած մնացորդներ, ջարդոտված խեցանոթներ, մարդու գանգի, կմախքի, կենդանիների սևացած ոսկորներ):

Շերտագրական իրավիճակը հետազոտելիս վաղ միջնադարում դիտվում է ավերված անտիկ կառույցների հիմքերի կրկնակի օգտագործման իրողություն (հարթակի արևմտյան մասում անտիկ քարաշեն հիմքերի վրա մ.թ. IV-V դդ. վերակառուցված շենք, արևելյանում՝ քարե կանոնավոր խիտ շարվածքով անտիկ պատի հատված՝ մ.թ. IV-V դդ. «Արշակունյաց գահադահլիճի» հյուսիսային հիմնապատի սալերի

շարվածքում (տե՛ս b-c-3+4 քառ.): Անտիկ շինությունների զգալի հատվածներ առկա են նաև «Արշակունյաց գահադահլիճի» և սրանից հյուսիս՝ մ.թ. V-VI դդ. հում աղյուսաշեն կառույցի տակ:

Հարթակի հարավարևելյան անտիկ շինության հատակի վրա բացվել են՝ 640 թ. արաբական ավերիչ արշավանքից հետո կատարված իջեցուկ թաղումներ (տարբեր չափերի գետաքարերով շարված անկանոն ձևի դամբարաններ, անտիկ շրջանի հատակից հանված գլաքարերի տեղում ստացված ինքնատիպ քարարկղ):

Մ.թ. VIII դ. սկզբին բլրի գագաթին նոր կառուցված արաբ ոստիկանի (3000 քմ) մեծածավալ պալատական համալիրի հում աղյուսե՝ 2,0 մ լայնությամբ զանգվածեղ պատերից մի քանիսի տակ նշմարելի են բաց շիկավուն անտիկ շերտի աղճատված հիմնապատերի՝ մի քարի բարձրությամբ հատվածներ:

Բլրի գագաթի հյուսիսարևմտյան մասում անտիկ շերտի վրա կառուցված մ.թ. X-XIII դդ. բնակելի համալիրում կրկնակի օգտագործված են անտիկ քարաշեն հիմքերը որպես հենապատ կամ կցապատ (օր. միջնադարյան հաղորդակից սենյակների պատը շարված է անտիկ հիմնապատին կից՝ սրա երկայնքին) (տե՛ս b+a-15-14 քառ.): Միջնադարյան շարվածքում առկա են անտիկ շրջանի սյունախարսիսի և լծակավոր, մակույկաձև, կոտրատված աղորիքների բեկորներ:

Բլրի գագաթի արևելյան մասի անտիկ շինությունների տարբեր հատվածներում դիտվում են.

- հարավարևմտյան կողմում՝ մ.թ.ա. II-մ.թ. I դդ. տորածև խարիսիսների և բնորոշ խեցեղենի միջավայրում՝ մ.թ. X-XI դդ. քարակերտ կառույցի հիմնապատեր և նյութեր (այսինքն՝ նախորդ շերտերը համահարթեցվել են, մասամբ ներթափանցել անտիկ շերտի մեջ) (տե՛ս -e-f-3-2 քառ.),

- հարավարևելյան կողմում՝ վաղերկաթեդարյան քարե շինվածքների վրա կառուցված մ.թ. XII-XIII դդ. բնակելի մեծ սենյակ՝ կից բաժանմունքներով² (այսինքն՝ ամբողջովին համահարթեցվել են նախորդ՝ այդ թվում և անտիկ հորիզոնները, ներթափանցել մոտ 0, 5 մ խորությամբ մ.թ.ա. I հազ. սկզբի շերտի մեջ),

- հյուսիսարևելյան կողմում՝ վաղերկաթեդարյան քարե շինվածքների վրա կառուցված մ.թ. XII-XIII դդ. կացարան տնտեսական հարկաբաժիններով³ (այստեղ ևս ամբողջովին համահարթեցվել են նախորդ և անտիկ հորիզոնները):

«Արշակունյաց գահադահլիճի» արևմտյան թևի հատվածում (1,20 մ խորության մեջ)⁴ մ. թ. X-XI դդ. խոհանոց-շտեմարանների նկուղային հարկաբաժինների գոյությունը հավաստող գտածոները ևս բացահայտված են վաղերկաթեդարյան մոխրառատ շերտի վրա տոփանված կավածեփի հատակին:

² Մ. թ. XII-XIII դդ. բնակելի մեծ սենյակը կից բաժանմունքներով ներկայացնում է՝ քարե կավակերտ հիմքերի վրա թրծած աղյուսե սալիկներով շարված պատեր, կավածեփի հատակ, անկյունում in situ որձաքարե խոշոր սանդ սանդաթակով (տե՛ս -c-e+2+4 քառ.):

³ Մ. թ. XII-XIII դդ. կացարանը տնտեսական հարկաբաժիններով ներկայացնում է՝ միաշար քարե հիմնապատեր, աղյուսե սալածածկ հատակներ, հորեր, թոնիրներ՝ մեկի շուրջը հովհարածև թոնրափ (տե՛ս d+b+3+4 քառ.):

⁴ Տվյալ չափումը տրված է «Արշակունյաց գահադահլիճի» կրաշաղախե հատակի (-4,05 մ) մակարդակից: «Արշակունյաց գահադահլիճի» արևմտյան թևում (տե՛ս b-c-3-2 քառ.) խորացել են հատակի հարթությունից դեռևս մ.թ. VIII դ. սկզբին արաբ ոստիկանի հում աղյուսե մեծածավալ (գրեթե բլրի գագաթի հարթակն ամբողջովին ընդգրկող) պալատական համալիրի արևելյան հարկաբաժինները կառուցելիս:



Նկ. 2. Խեցանոթների անուշներ Դվինի միջնաբերդից (մ.թ.ա. II- մ.թ. I դդ.),
Լուսանկարները՝ Վոսան Հակոբյանի

Քննվող ողջ տարածքում մ.թ. IV-XIII դդ. բազմաթիվ իջեցուկ հորեր՝ տարբեր մակարդակներում, հատել և խաթարել են ստորին մշակութային հորիզոնները: Սրա հետևանքով վաղբրոնզեդարյան, վաղերկաթեդարյան, անտիկ և միջնադարյան նյութերը ներկայանում են մեկ ընդհանուր «խառը» շերտով: Այս հորերի ստորին հատվածներում հաճախ նշմարելի են անտիկ և վաղերկաթեդարյան հիմնապատերի մնացորդներ:

Այսպիսով, բլրի գագաթի հարթակին փաստագրվում են՝ անտիկ շերտում վաղ և զարգացած միջնադարյան համալիրների մասնակի ներթափանցման և անտիկ շինությունների առանձին հատվածների, սրբատաշ քարերի, ճարտարապետական մանրամասների, նույնիսկ՝ հատակագծային ցանցի կրկնակի օգտագործման իրողություններ: Պահպանվածության նման իրավիճակում հատված և զգալիորեն կրճատված անտիկ շերտի հզորությունը հարթակի տարբեր մասերում տատանվում է՝ 0,20-1,50 մ սահմաններում: Բլրի անտիկ շերտը համեմատաբար անխաթար վիճակում (1,50 մ հզորությամբ, 5, 50 մ խորության վրա)⁵ ցարդ բացահայտվել է միայն հարթակի հյուսիսարևելյան մասում՝ վարչատնտեսական բնույթի շինության տարածքում (տե՛ս e+a-3+3 քառ.): Անտիկ շինությունների հիմքերը հիմնականում հայտնաբերվում են մ.թ.ա. VIII դ. առաջին քառորդին ավերված ու հրկիզված վաղերկաթեդարյան ամրոց-սրբավայրի «կարմրանարնջագույն աղյուների շերտի» մեջ⁶:

Ամբողջովին համահարթեցված անտիկ նստվածքների պարագայում՝ զարգացած միջնադարի կառույցները փաստագրվում են վաղերկաթեդարյան շերտի վրա: Միջնադարյան նյութերի նման միջավայրում հայտնաբերված մ.թ.ա. II-մ.թ. I դդ. խեցատները՝ համահարթեցված անտիկ հորիզոնների երբեմնի ներկայության նյութական վկայություններ են, իսկ մ.թ.ա. X-VIII դդ. գտածոները՝ վաղերկաթեդարյան շերտի վրա իրականացված շինարարության և իջեցուկ հորերի հետևանքով ներթափանցած նմուշներ:

Պեղումները և շերտագրական դիտարկումները հավաստում են այս տարածքում ծավալուն շինարարության պարբերական ընթացք: Միջնաբերդի առավել լայնամասշտաբ կառուցապատման շրջափուլերում՝ Դվինի քաղաքայնացման գործընթացում (մ.թ. IV-V դդ.), արաբական տիրապետության շրջանում (մ.թ. VIII-IX դդ.), հատկապես 894 թ. մեծ երկրաշարժից հետո (մ.թ. X-XIII դդ.) իրականացվել են նախորդող մշակութային շերտերի մասնակի կամ ամբողջական համահարթեցումներ ընդհուպ անտիկ և վաղերկաթեդարյան շերտերը: Սրանց հետևանքով մ.թ. X-XIII դդ. կառույցները հայտնվել են մ.թ. ա. II- մ.թ. I դդ., մինչև իսկ՝ մ.թ. ա. X-VIII դդ. շերտերի վրա:

Նման գանգվածային համահարթեցումների պարագայում բացառված չէ հնավայրի շերտագրության մեջ բացակայող, դեռևս հստակորեն չփաստագրված շերտերի ոչնչացված լինելու հնարավորությունը: Այսպես, մ.թ. I դ. կեսին անտիկ

⁵ Տվյալ չափումը տրված է բլրի գերդրական մակարդակից («Արշակունյաց գահադալիճի» ներսում տեղադրված եռանկյունաչափական կետի տակ պահպանված բարձունքից), մանրամասն տե՛ս Կочарян Г., Калантарян А., Кафадарян К., Античный слой на территории центрального квартала и цитадели Двина, в кн.: Акопян Н.Г., Бабаян Ф.С., Жамкочян А.С., Калантарян А.А., Кафадарян К.К., Кочарян Г.Г., Двин IV, Город Двин и его раскопки (1981-1985 гг.), Археологические раскопки в Армении, N 3, Ереван, 2008, с. 139:

⁶ Ըստ տեղակիքի՝ անտիկ շինության լանջահայաց հիմնապատերը մոտ 0,35 մ ավելի խոր են մյուսների նկատմամբ:

շինության ավերման և մ.թ. IV դարում «Արշակունյաց գահադահլիճի» կառուցման միջանկյալ շերտում ակնհայտ է ուղղանկյուն հատակագծով որոշակի կառույցի գոյության փաստը⁷ (տե՛ս c-a-1+1քառ.): Առանց գահադահլիճի պահպանված մասը խաթարելու անհնար է վերականգնել Նախորդ շերտի հնագիտական ամբողջական պատկերը: Փաստորեն այս միջանկյալ հորիզոնը բլրի ուսումնասիրված հատվածներում ցարդ չբացահայտված մ.թ. առաջին դարերի՝ վաղ Արշակունյաց ժամանակաշրջանի, շերտի առայժմ միակ նյութական հավաստումն է:

Դվինի միջնադարյան հազարամյա շերտի ձևավորման տևական ընթացքում զգալիորեն խաթարվել է բլրի գագաթի անտիկ ժամանակաշրջանի կառուցապատման ընդհանուր պատկերի ամբողջությունը: Այնուամենայնիվ հստակորեն ակնհայտ է՝ մ.թ.ա. VIII դ. առաջին քառորդին կործանված վաղերկաթեդարյան ամրոց-սրբավայրի վերին մոխրառատ հորիզոնի վրա մ.թ.ա. II դ. իրականացված ծավալուն շինարարության փաստը: Բազմակի վերակառուցումների, նորոգումների, փոփոխությունների բացահայտ հետքերը վկայում են անտիկ շինությունների շահագործման շարունակականությունը: Անտիկ շերտի շինարարական հորիզոնների նման փոփոխված իրավիճակում հայտնաբերված հնագիտական նյութի (հատկապես գունազարդ խեցեղենի) նույնատարրությունը և հետագա ավերիչ միջամտությունները խոչընդոտում են հնագիտորեն որոշակի ենթաշերտեր տարբերակելուն (նկ. 2):

Այնուհանդերձ Դվինի անտիկ շերտի առկա իրավիճակի հետազոտության արդյունքների և գրավոր աղբյուրների տվյալների համեմատական վերլուծությունը հավաստում է.

- մ.թ.ա. II դ. (Արտաշես I-ի Նախածեռնած երկրի քաղաքայնացման գործընթացում) ամրոցի՝ քարե գետնախարսխի վրա վերաշինված հում աղյուսե պարսպազոտիով ներառված տարածքը կառուցապատվել է քաղաքացիական շինություններով,

- մ.թ.ա. II - I դդ. (Արտաշեսի արքայատոհմի գործունեության ժամանակահատվածում) բարեկարգվել են բնակելի շիւթությունները ճյուղավորված տնտեսական հարկաբաժիններով, առատ շտեմարաններով,

- մ.թ. I դ. կեսին (հռոմեական զորավար Կորբուլոնի 58/59 թթ. ռազմարշավի ընթացքում)՝ ավերածության է ենթարկվել ամրոցը,

- մ.թ. II դ. (վաղ Արշակունյաց շրջանում) ներկա է ուղղանկյուն հատակագծով ինչ-որ շինության որոշակի հետք:

Այսպիսով՝ բլրի գագաթին որոշակիորեն ուրվագծվում է Դվին հնավայրի անտիկ շրջանի պատմության շարունակական ընթացքի նկարագիրը, որի առավել հստակ ամբողջական պատկերի վերականգնման համար պահանջվում է հնագիտական նյութի հիմնարար համալրում:

⁷ «Արշակունյաց գահադահլիճի» կենտրոնական թևին հարող հյուսիսային հիմնապատից հարավ-արևմուտք ձգվող և դեպի հարավ-արևելք անկյուն կազմող պատերի հիվերից մեկը շարունակվում է «գահավորակի» մ. թ. IV դ կավածեփ հատակի տակ (տե՛ս a-a-1 քառ., մոտ 0,30 մ հզորության միջանկյալ շերտում): Այստեղ ի հայտ եկած դաջման եղանակով պարուրազարդ, բաց դեղնականաչավուն խեցաբեկորը և ցցված ունկերով փոքրիկ տափաշիշը (17 x 16 սմ, մոխրագույն մակերեսով, շուրթը, վիզն ու կանթերը թեթևակի մզացված գորշ հարդարումով) հիշեցնում են մ.թ. առաջին դարերի խեցեղեն:

ԾԻԱԱԿԱՆ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՇԻՐԱԿԻ ՀՆԱԿԱՅՐԵՐՈՒՄ

Հայկ Հակոբյան
Երևանի պետական համալսարան

Հնագույն և հին Շիրակի մշակույթը, ներկայացնելով հասարակական զարգացման մի շարք հաջորդական դարաշրջաններ, ինովացիաների մի ամբողջ շարք, ցուցադրում է նաև որոշակի ժառանգականություն: Այն վերաբերում է կենսապահովման մշակույթի զանազան բնագավառներին, հոգևոր մշակույթին: Սա անցյալ դարի երկրորդ կեսին նկատելի է Տելեմակ խաչատրյանը՝ ուսումնասիրելով բրոնզի դարին վերաբերող թաղման կառույցների խոշոր համալիրներ: Մասնավորապես, Արթիկի մ.թ.ա. XV-IX դդ. դամբարանադաշտում հնագետը փաստում է, որ այստեղ «թաղման ծեսի բնորոշ մանրամաս է արհեստական դեկորատիվացիան, որը երևում է դամբարանադաշտի որոշ թաղումներում ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիների կմախքների առնչությամբ՝ մանրամասնելով, որ դրանք են կատակոմբաների մուտք հանդիսացող ուղղաձիգ հորերի լիցքի մեջ արված զոհաբերությունները: Խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր անասունների ոսկորները, ճաները, իսկ մի դեպքում էլ՝ մարդու կողոսկրները»¹: Հնագետը հիշատակում է Պ. Չարկովսկու օրագրում արձանագրված զոհարանի օրինակներ Թագաքենդ-Կարմիրբերդից, որոնք վերաբերում են միջին բրոնզի դարին²: Կենդանիների և մարդու զոհաբերության կարևոր մանրամասներից մեկը Տ. Խաչատրյանը կապում էր «կենտաֆների» և, ընդհանրապես, առանց կմախքի կամ էլ ուղեկցող նյութեր չպարունակող թաղման կառույցների հետ: Սովորական դամբարաններից ոչնչով չտարբերվող ավելի քան 60 նման կենտաֆ է առանձնացվում: Բացի այդ, որևէ ոսկրաբանական կամ ուղեկցող նյութ չպարունակող 40 դամբարան է փաստագրվում հետմահու հոգեհացի հետքերով: Նման կարգի պաշտամունքային կառույցների շարքը համալրում են Լճաշենի, Իջևանի, Տավուշի և Հայաստանի այլ վայրերի դամբարանադաշտերը: Արթիկի դամբարանադաշտում տարածված էր հանգուցյալի աճյունի դիամասնատումը, որ արտահայտվում էր երկու կերպ. 1) դիամասնատված աճյունի մասերի տեղաբաշխումը խցի տարբեր մասերում, 2) գլուխը մնացած կմախքից անջատելը և առանձին տեղադրելը, հաճախ մի հատուկ թասի մեջ (տե՛ս օրինակ, NN 135, 145, 158, 174, 230 և այլ թաղումներում): Սա էլ բազմաթիվ զուգահեռներ ունի Գավառի, Աթարբեկյանի, Գոլովինոյի թաղման համալիրներում: Որպես ակնառու օրինակ, Արթիկից բերվում էին NN 217, 223 դամբարանները³:

Ինդիքը նոր մեկնաբանվեց և ավելի խորացվեց հնագետներ Ա. Փիլիպոսյանի, Պ. Ավետիսյանի և մարդաբան Ռ. Մկրտչյանի ուսումնասիրություններում՝ Սևանա լճի ավազանի և Թալինի դամբարանադաշտերի, ինչպես նաև Հայաստանի մ.թ.ա. II-ի հազ. այլ հնավայրերի փաստական հիմքի վրա: Մարդկանց մարմինների և հարուստ ուղեկցող նյութի աստիճանակարգված դրսևորումն այստեղ բացված խմբային

¹ Хачатрян Т.С., Артикский некрополь, Ереван, 1979, с. 7.

² Хачатрян Т.С., նույն տեղում, էջ 8:

³ Хачатрян Т.С., նույն տեղում, էջ 9:

թաղումների մի մասում բնորոշվեց որպես համաժամանակյա հուղարկավորված մարդկանց՝ նահապետի և նրա ստորդրոյալների հուղարկավորություն՝ կատարված կանխամտածված, նախապատրաստված և կանոնակարգված սպանության կամ ինքնասպանության ծեսով⁴: Ընդ որում, երևույթը հավասարապես տարածվում է և՛ միջին, և՛ ուշ բրոնզի, և՛ վաղ երկաթի դարաշրջանների նմանատիպ հուշարձանների վրա՝ ամրապնդվելով հուսալի վիճակագրական տվյալների համակարգման արդյունքներով: Համաչափորեն տարբեր սեռատարիքային խմբերից զոհերի ընտրության ժամանակ բացառություն էին կազմում հասունացման՝ ինիցիացիայի տարիքին մոտեցող, բայց դրան դեռ չհասած՝ 10-15 տարեկան երեխաները⁵: Նորածին և մինչև մինչև 5 տարեկան երեխաների զոհաբերությունը ծիսականորեն թույլատրելի էր, որ ձայնակցում է մանուկների զոհաբերության ծեսերին հնագույն Երիթովից սկսած մինչև Թեյլ-Բեյդար և Խաթուսաս⁶, ինչպես նաև արտացոլվում է բանահյուսական ավանդազրույցներում և գրի առնված հին առասպելներում⁷:

Եթե մինչև Վանի թագավորության ժամանակաշրջանն ապրող նահապետական հասարակության համար նման «ոչ քաղաքակիրթ» ծեսերի առկայությունը հասկանալի պետք է լիներ և մեկնաբանվեր խոր հոգևոր հիմնավորում ունեցող հնագույն աշխարհայացքով, ապա ժամանակագրական սանդղակով ավելի վեր՝ նման ծիսական դրսևորումները պիտակվում են որպես բարբարոսներին բնորոշ վերապրուկներ:

Չողմիկի անտիկ հնավայրում՝ Արևելյան համալիրի արևմտյան եզրի հաստահեղույս պատի հակառակ երեսին՝ արևմուտքից, 1989 թ. բացվեց նրան զուգահեռ հյուսիսից հարավ ձգվող հրապարակ: Այն ցածր քարե միջնորմով բաժանված էր հյուսիսային և հարավային հավասար կեսերի: Հարավայինում՝ բնականից փոքր-ինչ թեքությամբ դեպի քարափի եզրը ձգվող ժայռի մակերևույթից մոտ 0.1 մ բարձրության վրա, տաճարական սենյակների կից, բացվեցին երկու

⁴ Սկրտչյան Ռ., Փիլիպոսյան Ա., Սոցիալ-ժողովրդագրական գործընթացները Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. II-ի հազարակյակներում, «Զաղաքագիտության հարցեր» ժողովածու, Երևան, 2011, էջ 250. Սկրտչյան Ռ., Փիլիպոսյան Ա., Մանկասպանությունը Գեղարքունիքի մ.թ.ա. III-ի հազ. խմբային թաղումներում, «Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները» հանրապետ. գիտաժողովի կյուլթեր, Երևան, 2001, էջ 100-105. Փիլիպոսյան Ա., Հնադարյան հեթանոսական ծեսի արձագանքները հայոց մեջ, Արշալույս քրիստոնեության Հայոց, Երևան, 2017, էջ 200:

⁵ Սկրտչյան Ռ., Պետրոսյան Լ., Քոչարյան Լ., Սևանի ավազանի բրոնզեդարյան բնակչության հնաժողովրդագրական նկարագրի համեմատական վերլուծություն («Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր. Հայկական լեռնաշխարհը հայ էթնոսի բնօրրան» հայագիտական գիտաժողովի զեկ. հիմնադր.), Երևան, 2004, էջ 14-16. Փիլիպոսյան Ա., Հնադարյան հեթանոսական ծեսի արձագանքները, էջ 201:

⁶ Սկրտչյան Ռ., Պետրոսյան Լ., Քոչարյան Լ., նշվ. աշխ., էջ 14-16. Փիլիպոսյան Ա., Հնադարյան հեթանոսական ծեսի արձագանքները, էջ 201. Moses Sh., Sociopolitical implications of Neolithic foundation deposits and the possibility of child sacrifice: A case study at Catalhöyük, Turkey (in "Sacred killing: The archaeology of sacrifice in the Ancient Near East" edited by Anne Porter and Glenn M. Schwartz), Winona Lake, 2012, p. 57-77:

⁷ Цепен Э., Лунный бог, Москва, 1976, էջ 234. Фрэнктер Э., նշվ. աշխ., էջ 346-347. Мифы народов мира, т. 2, Москва, 1992, с. 36, 55, 641. Комей Дж., Кто есть кто в Ветхом Завете, Москва, 1998, с. 45:

սալարկղային թաղումներ⁸: Ծայր հարավայինը (N 1), որը կողմնորոշված էր հարավից հյուսիս, իր մասամբ պահպանված արևելյան երկայանական պատի երկու կողասալերով հարում էր մոնումենտալ պատ-պարսպին, իսկ գերեզմանի մյուս երկայանական պատի կողասալերից հյուսիսում պահպանված էր միայն մեկը: Այս սալարկղից քիչ դեպի հյուսիս գտնվեց մեկ այլ սալարկղ (N 2), սակայն արդեն կողմնորոշված արևմուտքից դեպի արևելք: Երկուսում էլ բացվեց մեջքի վրա պառկած և մարմնին զուգահեռ ձգված վերաջավորություններով չափահաս տարիքի մեկական մարդու աճյուն: Առաջին թաղման մեջ աճյունը չուներ ողնաշար, կողեր և աջ ձեռք ու ոտք: Հարևանությամբ գտնվեց մի կլորավուն խեցեղեն ճրագ: Երկրորդ սալարկղում հանգուցյալի ձեռքերը դրված էին որովայնի վրա: Ուղեկցող կյուրթը կազմում էր խեցեղեն անոթների՝ երեք թասիկի և մի կճուճի բեկորներ:

Եթե հիշյալ թաղումները վերաբերում են մ.թ. առաջին դարերին, ապա հրապարակի հյուսիսային կեսում դաշտի մակերևույթից 0.5-0.7 մ խորության վրա, պեղվեցին, փոքր-ինչ ավելի հին՝ հելլենիստական շրջանի յոթ թաղումներ: Հարավից դեպի հյուսիս բացվեցին երեք կից թաղումներ, որոնցում հանգուցյալների մարմինը կողմնորոշված էր արևմուտք-արևելք: Դրանցից առաջինում (N 3) բացվեց մի երեխայի աճյուն, որը պառկեցված էր ձախ կողին (գլուխը արևմտյան կողմում, ազդրոսկրի երկարությունը՝ 0.25 մ), կծկված դիրքով և նայում էր դեպի հյուսիս: Սրանից 0.5 մ դեպի հյուսիս բացվեց մյուս թաղումը (N 4): Սա նույն տարիքի հանգուցյալ էր՝ պառկած աջ կողի վրա, դեմքով ուղղված դեպի հարավ: Գանգը նախորդի նման վատ էր պահպանված: Այս երկուսի միջև եղած հողակտորի մեջ ընդամենը պահպանվել էին մի երրորդ երեխայի մի քանի ողեր:

N 4-ից 0.3 մ դեպի հյուսիս-արմուտք պեղվեց մի ուրիշ թաղում (N 5), որը պատկանում էր քիչ ավելի մեծ անհատի՝ մոտ 10-13 տարեկան երեխայի: Նա էլ պառկած էր ձախ կողի վրա, կծկված էր և դեմքով նայում էր դեպի հյուսիս: Այս աճյունն էլ շատ վատ էր պահպանված և գուցե ճզմվել էր ծածկասալերի ծանրությունից:

Սրանից 1.05 մ դեպի արևելք բացվեց մի այլ թաղում (N 6): Գանգատուվող գրեթե լրիվ փշրված էր և ընկել 0.15 մ արևմուտք: Տեղում մնացել էր վերին ծնոտը: Կմախքը թեև պահպանված էր գլխից ներքև, բայց խիստ ճզմվել էր, այն կողմնորոշված էր հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք: Պառկած էր աջ կողի վրա: Սա նախորդներից տարիքով ավելի մեծ պատանի էր (ազդրոսկրի երկարությունը՝ 0.31 մ): Հիշյալ չորս թաղումները վերևից բաց էին, գուցե ծածկասալերը հետագայում տեղաշարժվել էին: Սրանք նման էին հիմնահողային թաղումների, սակայն տեղում երևում էին հողի մեջ հնում կանգնեցված կողասալերից մնացած առանձին հետքեր:

Վերջին երկու թաղումներից 0.45 մ դեպի հյուսիս բացվեց հյուսիսային սեկտորի ամենամեծ դամբարանը (N 7), որն իր չափերով նշվածներին գերազանցում էր մոտ երեք անգամ: Արևելքից արևմուտք կողմնորոշված սալարկղում (1.4 x 1.1 մ) կծկված և ձախ կողի վրա պառկած հանգուցյալի գլուխը արևելյան կողմում էր, նա դեմքով ուղղված էր դեպի հարավ: Պահպանվել էին վերին ծնոտի ատամները: Գլխավերում թեքված դիրքով մտում էր ծածկասալերից մեկը: Աջ ոտքը ծավված էր ձախի վրա:

⁸ Հակոբյան Հ.Պ., Վարդանյան Ռ.Ե., Հովհաննիսյան Տ.Ռ., Հողմիկի հելլենիստական հուշարձանի 1989-1990 թթ. պեղումների հիմնական արդյունքները, Հայաստանի հանրապետությունում 1989-1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներն նվիրված գիտական նստաշրջան (գեկուցումների թեզիսներ), Երևան, 1991, էջ 82-83:

Ծածկասալերի զանգվածի ճնշման տակ իրանը ճզմվել էր որովայնի վրա, բայց ոտքերի դիրքը մնացել էր անխախտ: Գանգի մոտ ընկած էր ստորին ծնոտի աջ կեսը՝ նախավերջին երկու սեղանատամներով: Հանգուցյալը կենդանության օրոք ուներ մոտ 1.75-1.80 մ հասակ: Այս սալարկղից 2 մ հյուսիս-արևմուտք բացվեց մի այլ սալարկղ, որի ծածկասալից ներքև դատարկություն էր (կառույցը չի համարակալված):

Վերոհիշյալ երեք թաղումներից (NN 3, 4, 5) ծայր հարավայինից (N 3) 2 մետր դեպի հրապարակի կենտրոնը՝ նույն հյուսիսային սեկտորում, արված էր հաջորդ թաղումը (N 8): Նրանում գտնված աճյունը վատ էր պահպանված, ձեռքերը և գանգը շատ էին բեկոտված: Նրանից քիչ արևմուտք բացվեց քառակուսի հատակագծով (0.40 x 0.40 մ) մի քարարկղ (N 9): Մանկական այս թաղման ներսում աճյունը մյուսների համեմատ շատ ավելի կծկված էր: Գլուխը ուղղված էր դեպի արևելք: Մանկան աջ ոտքին անցկացված էր մոտ 3 մմ հաստությամբ, լայնակի կտրվածքում քառակուսի մի մետաղյա ապարանջան, ձողիկը ճկվելով ստացել էր 5 սմ ներքին տրամագիծ. աղեղի վրա և նրա երկու ծայրերին միմյանցից հավասարաչափ հեռացված հինգ կիսակլոր ելուստներ կային:

Շիրակի անտիկ դարաշրջանի մյուս հնավայրը, որը զուգահեռներ ունի Հողմիկի վերը ներկայացված կյուբի հետ, Կարմրաքարի դամբարանադաշտն է: Այն տեղադրված է գյուղի հարավային եզրին և մասամբ ծածկված է նախորդ դարի վերջին գոյացած շինությունների փլատակներով և սրանց հարևանությամբ կուտակած շինարարական աղբով: Դամբարանադաշտի հյուսիսային կեսը պարբերաբար ոչնչացվել է ժամանակակից տեխնիկայով: 1987 թ. ջրմուղի և կոյուղու անցկացման ժամանակ պատահաբար բացված տուֆե սարկոֆագները խաթարվել էին, և Գյումրու Երկրագիտական թանգարանի ջանքերով դամբարանադաշտի արևմտյան եզրին պեղվեց 29 միավոր դամբարան: Սրանցից N 12-ում, որը փայտե դազաղ էր՝ իջեցված սալարկղի մեջ, թաղված էր 8-10 տարեկան մի երեխա, որը կրում էր ոսկեծույլ և սարդիոնով ընդելուզված մատանի⁹, կողքին դրված էր կաթնագույն ապակուց սրվակ¹⁰:

1992 թ. պեղումները շարունակվեցին հնավայրի հարավային եզրին՝ երկու տեղամասերում: Արևելյան թևում բացվեցին մի շարքի վրա հյուսիսից հարավ հողի մեջ իջեցված հինգ սալարկղեր (NN 30 - 34), իսկ նրանցից 12 մ դեպի արևմուտք բացած՝ այստեղից 13 մ դեպի արևմուտք և 5 մ հյուսիսից հարավ ձգվող երկրորդ տեղամասում պեղվեց ևս 26 դամբարան (NN 35 - 60)¹¹: Դրանց մի մասը հիմնահողային է, մյուսը՝ սալարկղային, երրորդն էլ՝ կարմիր կամ սև տուֆից տաշված մակույկաձև սարկոֆագներ են: Բոլոր դամբարաններն անխտիր ունեն արևմուտքից արևելք կողմնորոշում, աճյունները դրված են մեջքի վրա, ոտքերը ձգված են մարմնի երկայնքով, իսկ ձեռքերը կամ մարմնին զուգահեռ են, կամ հանգչում են կրծքին: Դամ-

⁹ Եգանյան Լ., Մատանիների և ականջօղերի դերը անտիկ Շիրակի թաղման ծիսակարգում, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. II, Գյումրի, 1999, էջ 73. Հին Հայաստանի ոսկին, Երևան, 2007, էջ 222. Եգանյան Լ., Շիրակի անտիկ դամբարանադաշտերը, Երևան-Գյումրի, 2010, էջ 69, 70:

¹⁰ Եգանյան Լ., Շիրակի անտիկ դամբարանադաշտերը, էջ 90 և էջ 203, տախտ. XXI, նկ. 2:

¹¹ Հակոբյան Հ., Կարմրաքարի դամբարանադաշտի 1992 թ. պեղումները, Հայաստանի հակրապետությունում 1991-1992 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներն նվիրված գիտական նստաշրջան, զեկուլցումների թեզիսներ, Երևան, 1994, էջ 41-43:

բարաններն ունեցել են ծածկասայեր, որոնց մի մասը սահել է լանջն ի վար կամ հեռացվել կողոպտիչների կողմից: Ուղեկցող նյութով հիմնականում մ.թ. II-III դարերով թվագրվող թաղումներն ամփոփվել են երեք չափերի կառույցներում, որոնք միաժամանակ արտացոլում են հանգուցյալների երեք խմբեր. 1) 2-3-ից մինչև մոտ 10-12 տարեկան երեխաներ, որոնց թաղումները կազմում են պեղված բոլոր դամբարանների 2/3 մասը, 2) միջին չափեր ունեցող թաղման կառույցներ, որոնք, հավանաբար, հիմնականում պատկանում են կանանց, մասամբ գուցե նաև պատանեկան տարիքից դուրս եկած երիտասարդների՝ միասին կազմելով թաղումների ընդհանուր թվի մեկ վեցերորդը, 3) Նույնքան խոշոր չափերի կառույցներ, պատկանելով հիմնականում հասուն և խոշոր տղամարդկանց: Որքան էլ թերի լինի այս խմբավորումը, որն անշուշտ կշահեր մարդաբանական վերլուծության պայմաններում, սակայն դիպուկ արտացոլում է հանգուցյալների տարիքային երկու մեծ խմբեր՝ երեխաներ և չափահասներ: Կարելի է ենթադրել, որ Կարմրաքարի դամբարանադաշտի՝ պեղման համար մատչելի այս հատվածը զբաղեցված էր մի որոշակի տարիքային կոնտինգենտով, և վիճակագրական պատկերը կարող էր փոխվել, եթե հնագետները տիրապետեին ողջ դամբարանադաշտի նյութին:

Չողմիկի վերոհիշյալ թաղումների տվյալները Կարմրաքարի այս ցուցանիշների հետ համադրելիս առաջին արձագանքը կարող է լինել այսպիսին. հավանաբար անտիկ Չայաստանում մանկական մահացությունը կազմել է բավական բարձր տոկոս: Սակայն խոսքը հելլենիստական և հռոմեական դարաշրջաններն ընդգրկող առնվազն չորսից հինգ դարերի մասին է, երբ սրա մի մասում Չայաստանը ծաղկուն և հզոր երկիր էր: Համաճարակները մարդկանց խոշոր զանգվածներ են կլանել, Ասորիքի կամ Եգիպտոսի բնակչության մեկ երրորդը կամ ավելին կոտորելով մ.թ.ա. I հազարամյակում, սակայն Չայաստանի մասին նման հիշատակություններ չկան:

Մտում է քննել հնագույն ժամանակներից Մերձավոր Արևելքում և Չայաստանում ընդունված մարդկանց զոհաբերության հնարավորությունը նաև անտիկ դարաշրջանում:

Անտիկ Շիրակի մի այլ հնավայրում՝ Բենիամինում, N 217 հիմնահողային թաղումը ծածկված է եղել 20 սմ թանձրությամբ մոխրաշերտով: Հանգուցյալը նստած էր ծնկաչոք դիրքով, ոտքերը ետ ծալած, ոտնաթաթերն ընդհուպ մոտեցրած կոնքին, ձեռքերն ընկած կողքի: Հնագետներն այս պատկերը համադրելով այստեղ թաղման ծեսի կանոնակարգի բացակայության հանգամանքի հետ (օրինակ, անհատը չի ծածկված քարերով), եզրակացրել են, որ մարդը զոհաբերվել և թողնվել է տեղում¹²: Կարծում ենք, հիմնահողից վերև տարածվող մոխրաշերտը կարող է իր հերթին ամրապնդել հնագետների եզրակացությունը: Բնակավայրի արևելյան ծայրին արված այս թաղումը միակը չէր: Մ.թ.ա. I դարին են, մասնավորապես, վերաբերում ևս երկու թաղումներ, որոնցից մեկը (N 183) ուղեկցվում է հարուստ նյութով և պատկանում է 10-15 տարեկան աղջկա: Արևելքից նրան հարում է բոլորածև հատակագծով մի ուրիշ՝ աղքատիկ թաղում (N 184), որի ներսում նստած դիրքով թաղված էր մի մանուկ, բայց այստեղ էլ հետաքրքիր են կրակի հետքերը և զոհաբերված ոչխաների ֆալանգները: Լ. Եգանյանը գտնում է, որ այս վերջին մանուկը՝ փոքրիկ ստրուկը, զոհաբերվել է կից թաղման մեջ ամփոփված աղջկա, գուցե քրմուհու, պատվին¹³:

¹² Եգանյան Լ., Շիրակի անտիկ դամբարանադաշտերը, էջ 99-100:

¹³ Նույն տեղում, էջ 100:

Այս թաղումներից ոչ շատ հեռու բացվել են ևս երկուսը: Դրանք մանկական թաղումներ են, 3-5 տարեկան երեխաների աճյուններով՝ ուղեկցող կյուրթից զուրկ: Սակայն երկու դեպքերում էլ դամբարանի վրա զոհաբերված է ձի, N 8-ում դրված են երկու ձիերի գանգեր, իսկ N 23-ում՝ ձիու ամբողջական կմախք: Սրանց վրա գտնվել են ճրագ, դուրգի անիվ: Այստեղ էլ հնագետներ Լ. Եգանյանի և Յ. Խաչատրյանի համար մանկական զոհաբերության իրողությունը կասկած չի հարուցում¹⁴: Վերջապես, Բենիամինի N 131 դամբարանում թաղված 50-60 տարեկան մարդու աճյունից վերև բացվել է մի այլ մարդու ձեռքի դաստակ, որը հնարավոր է մեկնաբանել որպես զոհաբերության դրսևորում¹⁵:

Նշված օրինակներում էլ չկա կմախքի խաթարում, դիամասնատում, և մարդկային զոհաբերության ծեսը դուրս է բերվում հանգուցյալների դիրքից, աճյունների համալիրում նրանց զբաղեցրած փոխադարձ դիրքից, ուղեկցող կյուրթերից, զոհաբերված կենդանիներից և մարդու դաստակից:

Կրկին Կարմրաքարի դամբարանադաշտի կյուրթերին վերադառնալով՝ ուշագրավ է նկատել, որ որոշ դեպքերում (NN 36, 39, 40, 46, 51) մանկական թաղումները դրված են մեծահասակի սալարկղի կամ քարարկղի վրա¹⁶: N 33-ում թաղված են երկու դեռահասներ, որոնցից մեկի՝ հյուսիսայինի աջ քունքը վնասված է. սրանց ընդհանուր սալարկղը կապված է N 32 թաղման հետ, որում ամոփոփված մեծահասակն իր կոնքով ու ձախ թևով հենված է երեխաների սալարկղի հարավային կողմին: Դամբարանադաշտում պեղված ամենամեծ սարկոֆագը, որը ինմաքով փակված ու զմռսված էր մի խոշոր ծածկասալով, շրջապատված է 2-3 տարեկան մանուկների շատ փոքր չափի սարկոֆագներով (NN 52, 55, 58, 59): Արդյոք սա վերադարձ է քաղաքակրթությունից դեպի բարբարոսությամբ, թե՞ գործ ունենք անտիկ աշխարհի քաղաքակրթության մի ստվերոտ կողմի հետ:

Սա լավագույնս լուսաբանում է Հյուսիսային Մերձսևծովի մի հնագիտական հուշարձան: 1998 թ. ներկայիս Կերչից 28 կմ հյուսիս-արևմուտք գտնվող «Բակլանյա սկալա» գյուղատեղիի պեղումների ընթացքում նրա հյուսիսարևմտյան եզրին, քարափի պռնկին գտնվեց 1.3 x 1.3 մ մակերեսով և մինչև 0.3 մ խորությամբ հարթ հատակով փոս: Այն պարունակում էր 10-12 տարեկան երեխայի գանգի բեկորներ՝ ստորին ծնոտի հետ միասին: Երեխան ստացել էր վնասվածքներ, և մարդաբանական ուսումնասիրությունը թույլ տվեց վերականգնել մահվան հանգամանքները: Առաջին հարվածը երեխան ստացել էր աջից՝ նրա հետևում կանգնած մարդուց, որը, հնարավոր է, սուր առարկայով հարվածել էր զոհի քունքին: Դրանից գրեթե անմիջապես հետո ձախից՝ հատող զենքով մի ուրիշ մարդ գլխատել էր երեխային: Պեղումներն իրակա-

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում էջ 101: Սկյութներն ի պատիվ Արեսի ցախից սարքում են մի կողմից վերելքի համար մատչելի, իսկ մյուս երեքից ուղղաձիգ կողերով մի բարձր հարթակ, թուրը կանգնեցնելով կենտրոնում: Այստեղ զոհում են կենդանիներ, նաև գերիներ: «Յուրաքանչյուր հարյուր գերուց մահվան են դատապարտում մեկին, բայց ոչ թե անասունների նման [տե՛ս IV, 61], այլ ուրիշ ծեսով: Գերիների գլուխը սկզբում թրջում են գինով, իսկ զոհերին թրով սպանում անոթի վրա: Հետո անոթով լի արյունը տանում են վերև՝ ցախի կույտի վրա, և սրանով հեղում են թուրը: Արյունը նրանք տանում են վերև, իսկ ներքևում, սրաբարանի մոտ, կատարվում է հետևյալ ծեսը: Արդեն խոցված զոհերի աջ ուսերը ձեռքի հետ միասին հատում և օդ են նետում: Այա, մյուս կենդանիներին սպանելուց հետո ծեսն ավարտում և հեռանում են: Ձեռքը մտում է այնտեղ, ուր ընկել էր, իսկ զոհի դիակը պառկած է մնում սրանից գատ»: St' u Herod., IV, 62:

¹⁶ Հակոբյան Հ., Կարմրաքարի դամբարանադաշտի 1992 թ. պեղումները:

Նացնող հնագետն ու մարդաբանը, ուսումնասիրելով նկարագրված միջադեպի հանգամանքները և հնագիտական համատեքստը (խեցեղեն բեկորներով և կենդանիների մնացորդներով հագեցած մոխրաշերտի տակ), ենթադրել են, որ գործողություններն ունեն ծիսական բնույթ¹⁷: Հնագիտական այս ֆենոմենը բնութագրվում է որոշ առանձնահատկություններով: Հատուկ տեղադրությունը, ուղեկցող նյութի անսովոր տեսքը, ժամանակակազմական որոշակի հենքը, կմախքի այլ մասերի բացակայությունը և բռնի մահվան ակնհայտ նշանները: Մինչ այդ Բոսֆորից հայտնի էր միայն մի դեպք, երբ գանգը տեղադրվել էր տնային զոհասեղանի վրա¹⁸:

Հելլենիստական դարաշրջանի կենսապահովման մշակույթն առանձին դեպքերում թույլ էր տալիս մարդկանց զոհաբերություն¹⁹: Զրեատոմատիկ օրնակներ են հայտնի Տրոյական պատերազմից (Իֆիգենիան Ավլիդայում, կամ Պատրոկլեսի թաղումը): Նման ծեսերը տվյալ դարաշրջանում հույներին լավ ծանոթ և ընդունված էին²⁰: Սակայն արդեն արխայիկ դարաշրջանում՝ մ.թ.ա. VIII - VI դդ., նույնիսկ Հունաստանի ամենախուլ գավառներում դրանք շրջանառությունից կարծես թե դուրս էին մղված՝ տեղ թողնելով միայն ռազմագերիների զանգվածային սպանություններին:

Մարդու զոհաբերությունը հետապնդում էր տարբեր նպատակներ: 1) աստվածության գուշակությունն իրականանալի դարձնելու համար զոհաբերում էին օրիորդների, երիտասարդ և գեղեցիկ կանանց, պատանի տղաների, հազվադեպ՝ նաև երեխաների: 2) հույները, որպեսզի զոհն աստվածությանն առավել ընդունելի և հաճելի լինի, զոհաբերում էին միայն ազատ ծնված մարդկանց, այն էլ նշանավոր և բարեկեցիկ ընտանիքներից սերվածների (Paus., III, 16, 6-7): Սակայն գլխատման մասին որևէ մանրամաս հայտնի չէ: Գրավոր տեղեկություններից հելլենիզմին ամենամոտը V դ. ապրած Հերոդոտի հաղորդումն է սկյութական ցեղերից մեկի՝ տավրերի պաշտելի Օրիորդ աստվածուհու պատվին՝ գերի ընկած հույներին զոհաբերելու մասին (Herod., IV, 103):

¹⁷ Հնագետը չի բացառել նաև գործողության քրեական շարժառիթը, սակայն բռնի մահվան ակնհայտությունը, զոհված անհատի տարիքը (ինիցիացիայի տարիք), սպանության տեղը, ուղեկցող խեցեղենը (մ.թ.ա. III դարի սկիզբ) և կենդանիների ոսկրաբանական նյութը ստիպում են կանգ առնել առաջին վարկածի վրա: St'u Масленников А.А., Бужилова А.П., Ифигения на Меотиде (материалы к обсуждению существования ритуальной декапитации в античном Приазовье), Древности Боспора, 2, Москва, 1999, с. 175-176.

¹⁸ Гайдукевич В.Ф., Илурат, Итоги археологических исследований 1948-1953 гг., Материалы и исследования по археологии СССР, 85, Москва-Ленинград, 1958, с. 41-46: Բոսֆորի մոխրաթմբերն էլ, որոնցում ավելի վաղ գտնված են գանգեր կամ դրանց հատվածներ, կասկած չեն հարուցել, որ ունեցել են ծիսական պատկանելություն: Русанова И.П., Культовые зольники скифского времени, Материалы по археологии, истории и этнографии Таврии, VI, Симферополь, 1997, с. 160-172.

¹⁹ Օրինակ, նման տվյալներ, սակայն կիսաառասպելական անցյալին վերաբերող, հանդիպում են Պավսանիոսի Հելլադայի նկարագրության էջերում. Չոհաբերվում են երկու դուստրեր (Paus., I, 5, 2), մի օրիորդ (Paus., IV, 9, 3-5), ամեն տարի հին Աքայայում Աթենաս աստվածուհու պատվին զոհաբերում էին մեկական պատանի տղա և աղջիկ (Paus., VIII, 19, 3-8), շատ հնում Արկադիայի թագավորը Չևսի պատվին զոհաբերում էր մի նորածին երեխա (Paus., VIII, 2, 1), Դելփիքի պատգամախոսարանի առաջարկով՝ հանուն քրմի կյանքի փրկության, զոհաբերում էին ծաղկուն տարիքի հասած մի պատանու (Paus., IX, 8, 1): Ըստ ավանդության՝ Աքիլլեսի որդին՝ Նեոպտոլեմոսը, ևս սպանվել է զոհասեղանի վրա (Paus., II, 29, 2): Նախալիկուրգոսյան ժամանակաշրջանի Սպարտայում վիճակ նետելով պարբերաբար սպանում էին պատանի տղաների՝ Էֆերների (Paus., III, 16, 7):

²⁰ Масленников А.А., Бужилова А.П., Ифигения на Меотиде, с. 176.

Համաձայն հունական էպիկական ավանդության՝ Իֆիգենիան վերադառնում է Սպարտա (Paus., III, 16, 6-7): Հենց այս աստվածուհու պատվին էլ, վիճակ նետելով, զոհաբերում էին պատանի Էֆեբի: Ժամանակ անց զոհաբերությունը փոխարինվեց մի այլ ծեսով՝ զոհասեղանին հանած Էֆեբին մտրակելու ծեսով²¹:

Մարդուն զոհաբերելու դաժան արարողության մանրամասներն ի հայտ են գալիս Էտրուսկյան մշակույթում՝ Վուլչիի մ.թ. I-II դդ. դամբանախցերից մեկում նկարված «Տրոյացի գերիների զոհաբերությունը» կոչվող որմնանկարի վրա²²: Միանգամայն հնարավոր է, որ սրա պատկերագրական մանրամասները ներմուծվել են Էտրուսկների հասարակության մեջ ընդունված թաղումների անբաժան մաս հանդիսացող մարդկանց ծիսական զոհաբերությունից:

Սպանելուց առաջ մարդուն հասցնում էին անգիտակցության աստիճանի՝ ուժգին հարվածելով նրա գլխին: Հավանաբար, այդ նպատակին էր ծառայում զոհի հետևում կանգնած մարդու ձեռքում երևացող կռանը կամ կացինը: Չոհաբերվողի տեսքն էլ կարծես թե վկայում է, որ նա անզգայացած է: Չոհին գլխատում էին կարճ շեղ ունեցող թրով: Նկարի վրա թրով զինված երկրորդ դահիճը բռնել է զոհի մազերից:

Ներկայացված այս տեսարանից քիչ տարբերվում է «Բակլանյա սկալա»-ի արարողությունը: Այստեղ զոհին անգիտակից դարձնելու համար կիրառել են ոչ թե հարվածող (մուրճ կամ կռան, որով կցնցվեր գլուխը), այլ ծակող գեղք (սուր քլունգանման գործիք, որով գանգը ծակել են քլունքի մոտերքում): Բացառված չէ, որ հարվածը հասցրել են նիզակի կամ գայիսոնի սրածայր մասով, ընդ որում, լայնակի հատույթում այս գեղքը կլոր էր²³:

Ուղեկցող կենդանիների ոսկրաբանական մնացորդները ևս պատահական չեն: Հայտնի է, որ օլիմպիական աստվածների պատվին կանգնեցված զոհասեղանների վրա ընդունված էր այրել հենց ցլերի ազդրերը: Իսկ ահա հերոսների, ինչպես նաև քտոնիկ կարգի աստվածների պատվին արդեն այլ էր զոհաբերելու համար նախատեսած կենդանիների ընտրությունը և նրանց մսի հետ արվող գործողությունների բնույթը²⁴:

Գուցե սա եղել է շինության հիմնարկեքի ծեսի մի տարբերակ: Սրանք ակնհայտ քտոնիկ երանգավորում ունեցող ծիսական արարողություններ են, կատարված որևէ համաճարակի կամ երաշտի առնչությամբ և հասցեագրված բնության կենսաբեր ուժերը հովանավորող Մեծ աստվածուհիներին՝ Դեմետրային և Կորային: Հնարավոր է, որ փոսը, որի մեջ գտնվել է գանգը, հոսող արյունը հավաքելու համար խորհրդանշական անցք էր²⁵:

²¹ Ермолова И.Е., Об эпиклезе Таврского божества у Аммиана Марцелина, Вестник древней истории, 1998, N 2, с. 129-135. հմմտ.՝ Amm., Marc., XXII, 834:

²² Pallotino M., Les grands siecles de la peinture, La peinture Etrusque, Kira-Venture, Paris, 1952, p. 115.

²³ Տե՛ս, օրինակ, III, XI, 25-40, Connely P., Greece and Rome at war, London, 1981, p. 92, 103, 117, 261.

²⁴ Масленников А.А., Бужилова А.П., Ифигения на Меотиде, с. 177-178: Ավելի մանրամասն տե՛ս Paus., I, 10, 1; III, 9, 2; 20, 5; V, 24, 5; VII, 22, 3; IX, 3, 4; 8, 1; 12, 1; X, 4, 7; 24, 5; և ընդհակառակը, Paus., I, 42, 1:

²⁵ Հմնտ Հողմիկի տաճարական համալիրի 6-րդ սրահի հյուսիսարևմտյան անկյանը մոտ բացված, զոհասեղանից սկսվող և սալահատակի տակով դեպի նրբանցք ձգվող ժայռափոր առվակի հետ:

Սովորաբար, մի շարք քտոնիկ ծեսեր պահանջում էին կենդանիների արյունը (Paus., X, 4, 7): Հելլենների, ինչպես նաև հին աշխարհի շատ ուրիշ ժողովուրդների սակրալ գործողությունների ընթացքում էական տեղ էր տրված տարբեր կարգի մարգարեությունների և պատգամախոսությունների: Ամենից տարածվածը մեռածների հոգիներին (հանգուցյալների օրակույներին) դիմելն էր: Այսպիսի կրոնական պրակտիկայի եղանակները գանազան էին: Օրինակ, ծեսերի մի մասը պահանջում էր որևէ արտացոլող մակերևույթ (հայելի, հեղուկ, փայլուն մակերեսով անոթներ)²⁶:

Եթե վերը ներկայացրած Հայաստանի անտիկ հնավայրերի նյութը երևան չի հանում բռնության, մարմնի մասերի մասնատման, տեղաշարժման ակնհայտ նշաններ, մարդաբանական քննությունը կամ դրա կատարման անհնարինությունը, կմախքի մասերի խիստ քայքայվածությունը թույլ չեն տալիս տեսնել գործիքներով կամ զենքերով արված խեղման, հարվածների, հատումների հետքեր, ապա միայն իրականացված ծեսի մնացորդների համատեքստն է, որ կարող է հուշել մարդու զոհաբերության կամ կամ ինքնասպանության մեծ հավանականությունը:

Յոդմիկի տաճարական համալիրում բացվել են նաև այլ կարգի նյութեր: 2007 թ. Արևելյան համալիրի հյուսիսարևմտյան եզրը դեպի արևմուտք ընդարձակելիս պեղվեց երեք մասերի բաժանված քարե սարկոֆագ: Նրա ներսը պարունակում էր միայն հող, իսկ շուրջը՝ 6 x 6 մ մակերեսի վրա սփռված էին կենդանիների (բազմաթիվ) և մարդու (ընդամենը մի քանի) ոսկորներ, ինչպես նաև խեցեղեն բեկորներ: Առաջին արձագանքն այն էր, որ սարկոֆագն անցյալում կողոպտվել է, իսկ ներսի մնացած պարունակությունը շաղ է տրվել շուրջբոլորը: Համալիրի ներքին բակին հարող այս հատվածը բաժանվեց 1 x 1 մ չափի 36 քառակուսիների և մանրամասն ուսումնասիրվեց, ամրագրվեց: Ինչպես պարզվեց, նշված խեցեղենն ու ոսկորները ոչ թե անկանոն էին սփռված, այլ շրջապատված էին տարբեր չափի քարե օղակներով, որոնց մեջ համադրվում էին խեցեղեն և ոսկրային բեկորները: Սա խիստ հետաքրքիր հանգամանք էր՝ պայմանավորված նրանում առկա նաև մարդաբանական նյութով՝ ծնոտով և այլ մասերով:

2009 թ. նշված հատվածից ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա որոշվեց N 33 սենյակը խորացնել դեպի ժամանակով ավելի վաղ կառուցած մյուս հատակի մակարդակին: Ինչպես և ակնկալվում էր, դատելով պեղված հարևան սենյակների նմանությունից ու նրանց ճարտարապետական և ուղեկցող մանրամասներից, սա ևս սրբարան էր: Հատակի կենտրոնում դրված էր մի հարթ քառանկյունի սալ, որի վրա շրջված էր հեղումների համար օգտագործած քարե սանդանման զոհասեղանը: Սրբարանի կենտրոնից դեպի լայնակի արևելյան պատը ձգվում էր քարերից կառուցած և իրար վրա դրված, երկու հորիզոնական շարքից բաղկացած, սեղանը: Սրա հարավային եզրին արված էր քիչ ավելի ցածր ուղղանկյուն երիզի նման աստիճան, որը, հասնելով արևելյան պատի առաջ, ձևավորում էր մի քառանկյուն շրջանակի մեջ առնված արկղիկ: Նրա ներսում in situ դրված էր պատանի

²⁶ Ողիսևը դեպի Հադեսի թագավորություն ճանապարհվելուց առաջ, մեռածների հոգիները կանչելու համար փորում է մի կանգուն լայնությամբ փոս, որի մեջ է լցնում մորթած խոյի և ոչխարի արյունը: Իսկույն և եթե հայտնվում են տարբեր մեռածների կերպարները, որոնցից հերոսը պաշտպանվում է թրով (Homer., Ill., XI, 25-40): Ենթադրվում է, որ Ողիսևը արյան գոյացած փոսի մեջ տեսնում է մեռածների դեմքերը:

տարիքի մարդու գանգատուհի: Սենյակի հատակին գտնվեցին խոշոր և մանր եղջերավոր կենդանիների, ձիու կմախքի մասեր, խեցեղեն անոթների բեկորներ:

2008 թվականից՝ Արևելյան համալիրին զուգահեռ պեղումներ սկսվեցին մի նոր՝ Արևմտյան համալիրում՝ հիմնականում բացօթյա կառույցների մի համույթում, որը մենք նույնացրել ենք հին Հայաստանի բազիլների հետ: Սրբազան հարթակները և զոհասեղանները, օժանդակ սենյակները գոտևորող ուղղանկյուն հատակագծով՝ պարսպի նման հաստահեղույս և բարձր, շրջանակի հյուսիսային պատի առաջ ներսից բացվեց մի կիսաշրջանաձև զոհասեղան: Բազիլի պարիսպը ևս լայն վերևամասով ծառայել էր ծիսական նպատակների համար, որ երևում է այստեղ բացված առանձին ստրուկտուրաներից: Սակայն ավելի քան չորս մետր բարձրությամբ այս պարսպի հյուսիսային մասը փլված էր, իսկ արևմտյան թևը թույլ հիմքերի կամ սեյսմիկ ակտիվության պատճառով մի քանի անգամ աղճատվել և վերակառուցվել էր, որ երևում է պատի շարքերի դիրքից և հատվածաբար արված մի քանի վերակառուցումներից հետո ընդհանուր առանցքի վրա տեսանելի բեկումներից: Այն փլուզումից գոնե մասամբ զերծ պահելու համար համալիրի ներսից՝ հյուսիսային և արևմտյան պատերի առաջ դրվել էին հաստ հենապատեր: Ահա, հենապատի մի ծայրին՝ վերոհիշյալ կիսաշրջանաձև զոհասեղանից ոչ հեռու՝ դեպի հարավ, քարի վրա բացվեց մարդու ստորին ծնոտ:

Բերված տվյալները, ի տարբերություն նույն Հողմիկի և Կարմրաքարի նկարագրած դամբարանների, ինչպես նաև Շիրակի մյուս հնավայրերի ոսկրաբանական տվյալների, մի այլ տեսանկյունից են ներկայացնում մարդաբանական կյուլթը: Սրանք ակնհայտորեն մարդու զոհաբերության՝ դիամասնատման, արտահայտություն են:

Ի՞նչ ընթացք է ունեցել այն, դժվար է առայժմ ասել: Չենք բացառում նույնիսկ, որ սկզբում մարդիկ մահացել են բռնի կամ բնական մահով, ապա հետո միայն գլխատվել կամ լրիվ դիամասնատվել, որ համարժեք պետք է լինի ծիսական սպանության: Հայոց սկզբնաղբյուրներում սա լուսաբանելու համար կան թեև առասպելականացված, սակայն պատմական կորիզ ունեցող դրվագներ:

Դրանցից մեկը վերաբերում է Հայոց Արտաշես արքայի մահվանը²⁷: Թեև Գ. Խալաթյանը նկատել է, որ Խորենացու հիշատակած Արտաշես արքայի շքեղ թաղման նկարագրությունը շատ նման է Հերոդոտի մահվան նկարագրությանը, տրված Հովսեփոս Փլավիոսի կողմից²⁸, սակայն մոտիվը և Էական մանրամասները հարազատ են հայ իրականությանը: Հասկանալի պատճառներով, տեղյակ չլինելով մ.թ.ա. XVI-IX դդ. Հայաստանում լայնորեն ընդունված զոհաբերության պրակտիկային հանուն ցեղապետերի և վերնախավի մյուս ներկայացուցիչների, գերդաստանների նահա-

²⁷ «Արտաշեսը հիվանդացավ Մարանդում, Բակուրակերտ ավանում: Նա Աբեղյանների տոհմի նահապետ ոմն Աբեղոյի ... հենց նրա խնդրով, ուղարկեց Եկեղյաց գավառը, Երիզա, Արտեմիսի մեհյանը, որպեսզի *կուռքերից բժշկություն և երկար կյանք խնդրե* (թագավորի համար). Նա դեռ հետ չդարձած՝ Արտաշեսի մահը վրա է հասնում: Եվ (Արիստոն Փեղղացին-Հ.Հ.) գրում է, թե որքան բազմություն մեռավ Արտաշեսի մահվան ժամանակ՝ նրա սիրելի կանայք, հարճերը և մտերիմ ծառաները, և ինչպես բազմատեսակ շքեղ պատիվներ մատուցեցին դիակին քաղաքակիրթ (ազգերի) կարգով, և ոչ թե բարբարոսների նման... Առջևից պղնձե փողեր էին հնչում, իսկ հետևից սևազգեստ ձայնարկու կույսեր և լալկան կանայք ... Եվ այսպես տանելով թաղեցին: Նրա գերեզմանի վրա կամավոր մահեր էին լինում, ինչպես վերև ասացինք»: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, ներած. և ծանոթություն. Ս. Մալխասյանի, Երևան, 1981, Բ, կ, էջ 204-205:

²⁸ Халатянц Г.А., Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, Москва, 1896, с. 310. Տե՛ս նաև Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, ծանոթագրություն N 185, էջ 359:

պետների, Խորենացին կարծես նույնությամբ վերականգնում - նկարագրում է հնագիտական նյութի մեջ քարացած հոգևոր ու նյութական միջավայրը, որը միջնորդված՝ վաղ միջնադարի հայ ազգագրությունից և Մերձավոր Արևելքի ընդհանուր մշակութային դաշտից, պետք է սկզբնաղբյուր ծառայեր պատմահոր գրքի այս դրվագի համար:

Մյուս դրվագը պատմում է սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի նենգամիտ սպանության և հետմահու արարողությունների հետևյալ մանրամասները: «Բատ Սահառունին... ազդրից կախած նրանը հանելով՝ խրեց Մուշեղ զորավարի շնչափողը և իսկույն գլուխը կտրեց: Նրա մարմինը վերցրին ու տարան իր գյուղը»²⁹: «Երբ Մուշեղ սպարապետի մարմինը իր տունը... տարան, տնեցիները նրա մահվանը չհավատացին, թեև տեսնում էին գլուխը մարմնից զատված... Իսկ ոմանք էլ հույս ունեին, թե նա կկենդանանա. ուստի գլուխը կարելով կցեցին իրանին և հանեցին մի աշտարակի տանիքը դրին՝ ասելով. “Որովհետև քաջ մարդ էր, առլեզները կիջնեն և սրան կկենդանացնեն”»: Պահապան դրին և սպասում էին նրա հարությանը, մինչև որ մարմինը սկսեց նեխել: Ապա աշտարակից վար իջեցրին, լացին ու թաղեցին, ինչպես կարգն էր»³⁰: Այստեղ հիշատակած արալեզներին կարելի է համեմատել անտիկ դարաշրջանի որոշ դամբարաններում մարդկանց աճյունն ուղեկցող ձիերի և շների՝ հանգուցյալների հոգեառների հետ: Մյուս պահը հար և նման է «Բակլանյա սկալա»-ի երեխայի սպանության ծեսին. նախ խոցված է գլուխը, Բուզանդի տեքստում՝ կոկորդը, ապա մարդը անմիջապես գլխատված է:

Անտիկ աշխարհի մասը կազմող Հայաստանում, ինչպես նաև հունական, սլյութական և մերձավորարևելյան բոլոր հասարակություններում, մեծահասակների և երեխաների զոհաբերությունը ունենալով ծիսական ընդհանրություններ և առանձնահատկություններ, մերձենում է նաև զոհաբերության հետապնդած նպատակների տեսանկյունից: Հողմիկի տաճարական համալիրում, Կարմրաքարի, Բենիամինի և այլ դամբարանադաշտերի խցերում զոհաբերված մարդիկ ապահովում էին մի դեպքում թագավորների, մյուսում՝ քուրմերի, երրորդում՝ Նահապետի, իշխանի կամ մի այլ վերադասի վերածնունդը հանդերձյալ աշխարհում³¹, կամ էլ նրանց կյանքի երկարածությունը այս ժամանակակալվոր աշխարհում: Հողմիկում, ուր պեղված հսկա համալիրի մանր և մոնումենտալ ճարտարապետական մանրամասներն այստեղ տեղի ունեցած բարդ և խիստ կանոնակարգված ծեսերի հայելին են (իսկ սրբավայրն աննշան մի մարմին չէր կարող լինել անտիկ Հայաստանի պետական համակարգում), սրբազան սպանությունները հետապնդում էին ինչպես երկրի ողջ սոցիալական վերնախավի բարօրությունը, այնպես էլ տեղի հրատապ խնդիրների ծիսականացված լուծումը: Մասնավորապես, տասնյակ տաճարական շենքերից յուրաքանչյուրի հիմնադրումը, անխաթար վիճակի ապահովումը, տաճարական համայնքի տնտեսական ու քաղաքական հարատևությունը պահանջում էին նորանոր մարդկային զոհեր, որոնց կոնտինգենտը ստացվում էր տաճարներին նվիրաբերված երեխաների, տաճարական ստրուկների բանակը համալրած ավելի տարեց վարձկանների հաշվին:

²⁹ Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց (թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի), Երևան, 1968, V, լե, էջ 276:

³⁰ Նույն տեղում, V, լգ, էջ 276:


³¹ Տեղին է այստեղ հիշատակել Սիսիանի նշանավոր դամբարանը, որի նետում կավե սարկոֆագում դիակիզված մնացորդները խցում ուղեկցված են և՛ տաղամարդու և՛ կնոջ կենցաղային իրերով, արդուզարդերով: Տե՛ս Խաչատրյան Ժ., Սիսիանի իշխանական դամբարանը, Երևան, 2008:



1



2



3



4



5




6



Աղյուսակ 1. Հողմիկ՝ 1. N 2 թաղումը հյուսիսից. 2. N 3 թաղումը հարավից.
3. N 8 թաղումը հարավից. 4. N 4 թաղումը հարավից. 5. N 9 թաղումը հարավից.
6. N 7 թաղումը արևմուտքից



Աղյուսակ 2. Հողմիկ՝ 1. Արևելյան համալիր, հյուսիսային անկյուն. 2. Արևելյան համալիրի N 33 սրբարանը արևելքից. ձախ անկյունում գանգի զետեղարանն է. 3. Արևմտյան համալիր. գոհաբերված մարդու ծնոտ բազիլների հյուսիսային պատի մոտ. 4. Արևելյան համալիրի N 33 սրբարանը հյուսիսից. կենտրոնում գոհարանն է, իսկ աջից՝ շրջված սանդանման անոթը՝ հեղումների համար. 5. Արևմտյան համալիր. ձախից բազիլի կիսակլոր գոհասեղանն է, աջից, միջնորմի վրա դրված է գոհաբերված մարդու ծնոտը. 6. Վուլչի. Էտրուսկյան որմնասկար «Տրոյական գերիների գոհաբերությունը», մ.թ.ա. II-I դդ.



Աղյուսակ 3. 1. Հողմիկի N 33 սրբարանը. 2. Կարմրաքարի 1-ին տեղամասը. 3. Կարմրաքարի 2-րդ տեղամասի թաղումների հատակագիծը

ՎԱՂՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ԵՎ ԻՌԼԱՆԴԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԽԱԶԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԳՅՈՒՏԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Համլետ Պետրոսյան
Երևանի պետական համալսարան

Ներածություն

Հանրահայտ է¹, որ հայ-իռլանդական մշակութային փոխառնչությունների առումով մի շարք հետազոտողների կողմից պատմա-մշակութային որոշ Եական փաստերի կողքին հատուկ ուշադրության է դարձվել իռլանդական բարձր խաչերի և խաչքարերի միջև եղած ընդհանրությունների փնտրողներին²:

Բարձր խաչերը, որոնք հիմնականում թվագրվում են 9-րդ և 12-րդ դարերով և իռլանդական ամենահայտնի քրիստոնեական կոթողներն են (նկ. 1), որպես կանոն, բաղկացած են քարի մի քանի առանձին կտորներից. գանգվածեղ հիմք, շրջանի մեջ ներառված խաչով պսակվող սյուն, գլխարկ, որը երբեմն գմբեթանման է, իսկ երբեմն էլ փոքրիկ տնակ՝ պսակված թեք տանիքով: Կտորներն իրար են ամրացված ելուստ-փոսորակների համակարգով:

Այս կոթողների ամենից աչքի ընկնող առանձնահատկությունը շրջանի մեջ ներառված խաչն է, որի թևերը հաճախ դուրս են գալիս շրջանից: Շրջանը երկակի բացատրություն ունի. որոշ հետազոտողներ գտնում են, որ այն տեխնիկական դետալ է և ներմուծվել է որպես հորիզոնական թևերի հենարան: Ուրիշները գտնում են, որ շրջանը կամ պսակը հաղթանակի խորհրդանշան է, որ ծագում է հռոմեական կամ վաղքրիստոնեական արվեստից: Կոթողների Եական առանձնահատկություններից են ֆիգուրատիվ քանդակները՝ տեղադրված բնի, խաչի, գլխարկի, եզակի դեպքերում նաև խարսխի վրա: Սյուները տեսարաններով պատվում են, որպես կանոն, չորս կողմերից, հորինվածքները ներառվում են քառանկյուն շրջանակների մեջ: Հիմնական թեմաները՝ խաչելություն, հարություն, մուտքը Երուսաղեմ, Քրիստոսը աշակերտների հետ և այլն, վերցված են հին ու նոր կտակարաններից ու անվավեր ավետարաններից և դասավորված որոշակի հաջորդականությամբ³:

Հայկական վաղքրիստոնեական կոթողները (4-7-րդ դարեր)


Չնայած իռլանդական բարձր խաչերը խաչքարի հետ համեմատելու փորձերին՝ դժվար չէ նկատել, որ խաչքարերն իրենց ծավալային լուծումով՝ քառակող բարձր պատվանդան և տափակ ոչ այնքան սլացիկ սալ, խիստ բուսատերկրաչափականացված հորիվածք, որը տեղադրվում է սալի արևմտահայաց երեսին, այնքան էլ մոտ չեն այս կոթողներին: Փոխարենը համեմատությունն ավելի մոտ նմանություններ է երևան

¹ Հոդվածի անգլերեն տարբերակը տե՛ս Petrosyan H., Similarities between the early Christian Armenian monuments and Irish high crosses in the light of new discoveries, Ireland and Armenia: Studies in Language, History and Narrative, Journal of Indo-European Studies, Monograph Series 6; Institute for the Study of Man, Washington D.C., 2012, p. 169-180.

² Richardson H., Scarry J., An introduction to Irish high crosses, Dublin, 1990, p. 21-22, հայկական և վրացական հուշարձանների հղումով: Տե՛ս նաև Richardson H., The jewelled cross and its canopy, in From the Isles of the North. Early Medieval art Ireland and Britain, Belfast, 1994, p. 177-186.

³ Harbison P., Irish high crosses with the figure sculptures explained, Drogheda, 1994, p. 11-14.


բերում հայ վաղքրիստոնեական կոթողների հետ: Վերջիններս, որպես կանոն, բաղկացած են գետնախարսիսից, պատվանդանից, սյունից, խոյակից, խաչակալից, պսակվում են ազատ թևերով խաչով. դրանք ավելի սլացիկ են, քան խաչքարերը, հաճախ կրում են հին և նոր կտակարանների թեմաներով պատկերաքանդակներ: Սակայն այս ամենով հանդերձ մինչև վերջերս էլ հայտնի վաղքրիստոնեական կոթողներում բացակայում էր իռլանդական կոթողներին բնորոշ ամենաեական մանրամասնը՝ շրջանի մեջ ներառված արծակ թևերով կամ աժուր խաչը: Ուշագրավ է, որ Յիլարի Ռիչարդսոնը՝ բարձր խաչերի և խաչքարարերի ընդհանրություններով ի մոտո զբաղված ամենահայտնի հետազոտողը, որպես բարձր խաչերի ամենամոտ զուգահեռներ է քննարկել թևավոր խաչքարերը, և ի մասնավորի՝ Յարանց վանքի 1639 թ. հայտնի խաչքարը, որի արևելահայաց երեսի խաչահատումն առնված է շրջանի մեջ (նկ. 2):



1



2



3



4

Նկ. 1-4

Վերջին տարիների փնտրտուքներն ու հնագիտական պեղումները երևան են բերել նոր ընդհանրություններ բարձր խաչերի և հայկական վաղքրիստոնեական կոթողների միջև: Մեր կողմից մի քանի տարի առաջ որպես իռլանդական խաչերի հետ համեմատության օբյեկտ ավելի կարևորվել են այսպես կոչված ձողաբարձ խաչերը, որոնք առավել հայտնի են 5-7-րդ դարերի քանդակային հորինվածքներից⁴: Դրանք բաղկացած են խարիսխ-պատվանդանից, սյունից և շրջանի կամ կիսաշրջանի մեջ ներառված խաչից: Դատելով հայտնի քանդակներից՝ այս խաչերը կարելի է բաժանել անշարժ և շարժական տեսակների: Առաջին դեպքում դրանք ունենում են զանգվածեղ պատվանդան, կարճ ձող, երբեմն էլ խաչատակի խոյակ, մի քանի օրինակներում խաչակիր շրջանը հենվում է գույգ սյուների վրա: Օրինակ՝ Լեռնակերտի սուրբ Ստեփանոս եկեղեցու երկբացվածք պատուհանից վերև գտնվող քանդակում՝ երկու աստղազարդ վարդյակների արանքում տեղադրված շրջանի մեջ ներառված բլթակազարդ խաչը, կարճ ձողի օգնությամբ ամրացված է եռաստիճան պատվանդանի վրա⁵: Երերույքում մի քառակող կոթողի քանդակում բեկբեկյալ գծով հարդարված երիզափակ շրջանի մեջ ներառված և երկձողի վրա ամրացված խաչը կանգնեցված է երկաստիճան պատվանդանի վրա: Ծիծեռնավանքի քանդակներից մեկում ձողի վրա խաչը ներառող զարդարուն շրջան-պսակից ներքև ամրացված են նաև թռչունի թևեր հիշեցնող արմավատերևային զարդեր: Ընդ որում, դատելով որոշ քանդակներից, խաչից բացի, որը, որպես կանոն, ներառվում էր շրջանի մեջ, ձողը կարող էր հարդարվել դրոշներին կամ շտանդարտներին բնորոշ այլ մանրամասներով՝ քառանկյուն վառ-գործվածքով, ինչպես տեսնում ենք Թայիսի Վանք-խարաբայի կոթողների վրա, ժապավեններով, ականթի կամ արմավի ցողուններ, թևեր, և նույնիսկ թռչուններ հիշեցնող զարդերով (ինչպես տեսնում ենք, օրինակ, Աքորու, Երերույքի, Ծիծեռնավանքի, Մուղնու, Օծունի խաչաքանդակներում, նկ. 3):

Որպես անշարժ խաչաձողի օրինակ նշենք Քասաղի մի կոթողի պատվանդանի հայտնի քանդակը (նկ. 4), ուր միաստիճան պատվանդանի վրա ամրացված խաչաձողի երկու կողմերում (խաչը ներառող շրջանը հենվում է ուղղանկյուն անզարդ ճակատով խոյակի վրա) կանգնած են երկու անձինք՝ մեկը թերևս լուսապսակով (ըստ Բ. Ն. Առաքելյանի), մյուսը՝ երկար թրով զինված: Ձախ պատկերը ձեռքերը պարզել է դեպի խաչը (նույնիսկ հավանական է, որ մի ձեռքով բռնել է խաչը ներառող շրջանակից): Ակնհայտ է, որ մենք գործ ունենք խաչի երկրպագության տեսարանի հետ: Ըստ Բ. Ն. Առաքելյանի՝ այստեղ ներկայացված են Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ արքան⁶: Այս առումով ուշագրավ է, որ բյուզանդական արվեստում՝ հետևելով համապատասխան լեգենդին՝ խաչի վերացման տեսարանում խաչի երկու կողմերում երկրպագողների դիրքում պատկերվում են Կոստանդիանոսն ու նրա մայր Յեղինեն⁷, հետևաբար խաչն էլ ներկայացնում է այն բազմաթիվ օրինակներից մեկը, որ, համաձայն դարձի լեգենդի, կանգնեցվում էին ի նշան նոր հավատի հաղթության: Խաչը պատկանում է շրջանի մեջ ներառված դասական տիպին՝ ակ-բլթակներ խաչա-

⁴ Պետրոսյան Յ., Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 52:

⁵ Асратян М., Армянская архитектура раннего христианства, Москва, 2000, табл. 90.

⁶ Առաքելյան Բ., Չայկական պատկերաքանդակը 4-7-րդ դարերում, Երևան, 1949, էջ 43:

⁷ Даркевич В., Прикладное искусство, в кн.: Культура Византии: вторая пол. 7-12 вв., Москва, 1989, с. 532, 533. Richardson H., նշվ. աշխ., էջ 179, նկ. 4b:

հատումում և թևերի լայնացող հատվածներում, նշատերևներ՝ թևերի միջակայքերում: Եթե պատկերված կերպարների բարձրությունն ընդունենք մոտ 160-170 սմ, ապա կարող ենք հավաստել, որ խաչածողի ընդհանուր բարձրությունը կազմել է մոտ 210-220 սմ, ինչն ուղղաձիգ քարակոթողների միջին բարձրության համեմատ ցածր է մոտ 1-1,5 մետրով:

Շրջանի մեջ ներառված ձողաբարձ խաչերի բազմաքանակությունը հիմք էր տալիս ենթադրել, որ վաղմիջնադարյան խաչակիր կոթողները թևավոր ծավալային հայտնի խաչերից բացի կարող էին կրել նաև շրջանի մեջ ներառված ծավալային խաչեր՝ դրանով իսկ երևան բերելով տիպաբանական խիստ մոտ նմանություններ իռանդական քարե խաչերի հետ: Զարե ձողաբարձ խաչերի առաջին օրինակները հայտնաբերվել են միայն վերջին երեք տարիների ընթացքում. դրանք բոլորն էլ ծագում են Արցախի Տիգրանակերտի պեղումներից և նրա շրջակայքից:


Նախ նշենք, որ շրջանի մեջ ներառված խաչերով պսակվող կոթողների քանդակներով աչքի է ընկնում Տիգրանակերտի շրջակայքում գտնվող վաղքրիստոնեական ժայռափոր հսկա համալիրը: Այստեղ խաչային հորինվածքներն ուղեկցում են ուխտավորին՝ համալիր տանող ժայռափոր ճանապարհի ողջ երկարությամբ՝ մի տեսակ նմանվելով խաչի ճանապարհին⁸, ապա պսակում եկեղեցու, գավթի ու տապալաբակի ժայռեղեն պատերը: Խաչերով են պսակվել նաև համալիրի ստորոտով անցնող ժայռափոր ջրանցքի պատերը⁹: Խաչային հորինվածքների նման տեղադրությունը հիմք է տալիս խոսել ժայռեղեն ողջ միջավայրի խաչայնացման մասին, լանդշաֆտի սրբազնացման մի ձև, որ հետագա դարերում իրականացված ենք տեսնում նաև խաչքարերի օգնությամբ Հայաստանի տարբեր վայրերում, օրինակ, Ազատ, Հրազդան և Ախուրյան գետի հովիտներում¹⁰:

Տիգրանակերտի հունարեն և հայերեն արձանագրություններով ուղեկցվող խաչային հորինվածքների մեջ կարելի է հանդիպել շրջանի և կիսաշրջանի մեջ ներառված խաչերով կոթողների, որոնց մի մասն ունեն նաև ծաղկային ու թռչնային լրացուցիչ հարդարումներ (նկ. 5, 6, 7): Շրջանի մեջ ներառված խաչաքանդակների հոյակապ օրինակներ են տվել և Տիգրանակերտի վաղքրիստոնեական հրապարակի պեղումները: Մի դեպքում դա թևավոր քարե խաչի խաչահատման կլոր ներդիր է, որտեղ շրջանի մեջ ներառված խաչը տեղադրված է շուշանների միջավայրում (նկ. 8, այս առումով շատ նման Արցախի մի այլ վաղքրիստոնեական տաճարի՝ Ծիծեռնավաքի քանդակներից մեկին), երկրորդ դեպքում այն կավե մի սկավառակ է, որի մասին քիչ ավելի մանրամասն կխոսենք ստորև, երրորդ դեպքում դրանք շքամուտքերի խոյակների հոյակապ նմուշներ են, որտեղ հավասարաթև խաչերը ներառված են կլոր բլթակներով հարդարված երիզ ունեցող շրջանների մեջ՝ տեղադրված մի դեպքում աստղային (լուսատուների), երկրորդ դեպքում՝ այգային-խաղողային միջավայրում (նկ. 9, 10):

⁸ Խաչի ճանապարհը (via crux) քրիստոսաբանական համակարգում խորհրդանշում է այն «կոնկրետ» ճանապարհը, որն անցել Զրիստոսը, դրանով իսկ խորհրդանշելով և այն փրկության ճանապարհը, որ պիտի անցնի յուրաքանչյուր հավատացյալ:

⁹ Մանրամասն տե՛ս Петросян Г., Киракосян Л., Раннехристианский культово-пещерный комплекс арцахского Тигранакерта - Пещеры как объекты истории и культуры: материалы международного научного форума, Воронеж - Дивногорье, 19-22 апреля 2016, Воронеж, 2016, с. 165-170.

¹⁰ Петросян Г., Роль хачкара в организации священного пространства - In Mythical Landscapes Then and Now, Yerevan, 2006, p. 251-260, 290-292.



Նկ. 5-10

Շրջանի մեջ ներառված քարե խաչեր. վերջին գյուղերը

Վերջապես դառնանք շրջանի մեջ առնված քարե խաչերին: Դրա առաջին օրինակը (Նկ. 11) գտնվել է 2006 թվականին՝ Խաչենագետի¹¹ միջնահովտից՝ Զոլատակ գյուղից: Ամենայն հավանականությամբ այն ծագում է գյուղի մերձակայքում գտնվող Մեծարանից սուրբ Հակոբավանքից, որն Արցախի վաղըրիստոնեական ամենահայտնի համալիրներից մեկն է¹²: Հարկ է նկատել, որ այն եզակի է ողջ հայ մշակույթում այն առումով, որ եթե մինչ այդ հայտնաբերված թևավոր խաչերը պատկանում են լատինական տիպին և ունեն ազատ թևեր, ապա սա հավասարաթև խաչ է և առնված է շրջանի մեջ: Ինչպես տեսանք, շրջանի մեջ առված խաչերը վաղ խաչային հորինվածքների ամենատարածված ձևերից են: Ավելին, որոշ հորինվածքների առանձին մանրամասներ վկայում են, որ դրանց արտապատկերման առաջնային նախօրինակները եղել են շրջանի մեջ ներառված ձողաբարձ ծավալային խաչերը:

Եվ միայն պատահականություն պիտի համարել, որ մինչ օրս նման ծավալային խաչերի բեկորներ չեն հայտնաբերվել: Խաչը մշակված է երկու կողմերից էլ. մեկ կողմից շատ ավելի մանրամասն (ենթադրում ենք՝ արևմտյան): Թևերի լայնացող հատվածներն ու խաչահատումը ընդգծված են մեկական բլթակներով: Ինքը շրջանն իր հերթին հենվել է ծավալաքանդակային արմավազարդի վրա, որն էլ, հավանական

¹¹ Խաչենագետը Արցախի երկրորդ ջրառատ գետն է, որի վերին հոսանքում գտնվում է հայտնի Գանձասարի վանքը, իսկ ստորին հոսանքում տեղադրված է Արցախի Տիգրանակերտը:

¹² Խաչաբեկորը հայտնաբերել ենք պատահաբար, երբ հետազոտում էինք Զոլատակի և շրջակայքի խաչքարերը: Այն այժմ պահվում է Արցախի պատմա-երկրագիտական թանգարանում:

Է, ստորին մասի ելուստով ամրացվել է խաչակալին: Շրջանի մեջ ներառված առնվազն չորս ծավալային խաչերի բեկորներ են տվել Տիգրանակերտի պեղումները: Դրանցից երկուսից պահպանվել են եռանկյունի կտրվածքներով շրջանակները: Ընդ որում՝ մեկ օրինակի վրա (սկ. 12), որը գտնվել է քաղաքային մեծ եկեղեցու պեղումներից, ներքուստ պահպանվել են խաչաթևերի միացման ջարդվածքները: Նրա վրա հետագայում արված կոպիտ անցքը կարող է վկայել, որ շրջանակը խաչով հանդերձ կոթողի ջարդվելուց հետո նոր արված անցքի օգնությամբ կախվել է ինչ-որ տեղից, գուցե եկեղեցու պատից: Երկրորդը գտնվել է խաչի մի թևի բեկորի հետ միասին (սկ. 13). այն չափերով ավելի փոքր է, քան նախորդը:



11



12



13



14



15




16



17

Նկ. 11-17

Երրորդ բեկորը պահպանվել է շրջանի և խաչի հատվածով հանդերձ (նկ. 14), չորրորդ բեկորի դեպքում (նկ. 15, այն գտնվել է Միջնաբերդի պեղումների ժամանակ), որի հետ գտնվել են նաև արմավագարդի քանդակներ. շրջանի մեջ ներառված լինելու հանգամանքը միայն ենթադրելի է: Մի բեկոր էլ հայտնի է Տիգրանակերտից մոտ ութ կմ հեռու գտնվող Գյավուրկալայի պեղումներից¹³: Խաչը և փորագիր եռանկյունիներով հարդարված շրջանը այն համարյա նույնական են դարձնում Տիգրանակերտում գտնված երկրորդ օրինակի հետ: Եթե նկատի ունենանք, որ Տիգրանակերտը տեղադրված է կրաքարե հզոր լեռան վրա, ապա բացառված չէ, որ հենց Տիգրանակերտն ու նրա շրջապատն են (շնորհիվ իրենց հզոր և որակյալ քարհանքերի հաղիսացել) նման կոթողների պատրաստման հիմնական կենտրոններից մեկը:



Նկ. 18-19

Այսպիսով, վերջին գյուտերը վկայում են, որ Հայաստանում վաղմիջնադարում բավականին տարածված են եղել նաև շրջանի մեջ ներառված խաչերով ավարտվող կոթողները: Մեզ հայտնի օրինակները չափերով շատ ավելի համեստ են, քան հայտնի իռանդական խաչերը, սակայն կարելի է հուսալ, որ կգտնվեն և ավելի մեծաչափ օրինակներ:

Ֆիգուրատիվ քանդակներ

Դառնալով հայկական վաղ կոթողների մաս կազմող ծավալային խաչերի վրա առկա ֆիգուրատիվ քանդակներին՝ առայժմ կարող ենք հղել միայն մի քանի բեկորային օրինակներ, որոնք ծագում են Տավուշից և Լոռուց: Մի դեպքում այն սրբի պատկեր է՝ թևավոր խաչի վրա (նկ. 16), ծագում է Կողբից և պահվում է Սանահնի վանքում: Երկրորդ դեպքում դրանք թևավոր խաչի բեկորներ են (գտնված Շնողից)՝ հորիզոնական թևերին ավետարանիչների (գուլցե և առաքյալների) դիմաքանդակներով (նկ. 17)¹⁴: Հաջորդը խաչահատման մեջ ազուցվելիք սկավառակ է՝ Համբարձման տեսարանով (նկ. 18) գտնվել է պատահաբար Դովեղում. և այժմ պահվում է Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարանում: Սրան զուտ տեխնիկապես մոտենում է Տիգրանակերտի պեղումներից գտնված կավե սկավառակը՝ դիմերեսին մորթե փափախ կրող տղամարդու

¹³ Վահիդով Ռ., Հնագիտական պեղումները Գյավուր կալայում, Ադրբեջանի Նյութական մշակույթը, հ. 4, Բաքու, 1965, աղ. 6 (ադրբեջաներեն):

¹⁴ Այն իր ֆեսյուրեյան դիմապատին հրատարակել է ազգագրագետ Սուրեն Հոբոսյանը:

դիմապատկերով և հայերեն արձանագրությամբ (նկ. 9), դարձերեսին շրջանի մեջ ներառված խաչով և հայերեն արձանագրություններով¹⁵: Այս վերջին գտածոն թույլ է տալիս հավաստել, որ ֆիգուրատիվ քանդակների տեղադրումը խաչի վրա, անկախ պատրաստման կյուրթից, որոշակի տարածում ունեն:

Քարձր խաչերին նմանվող հետսագույն կոթողներ

Ավելի ուշ, իններորդ դարի կեսերից սկսած, երբ լայնորեն տարածում են գտնում խաչքարերը, վաղբրիստոնեական սյունանման կոթողները սկսում են անհետանալ:

Մենք միայն երկու օրինակ կարող ենք վկայակոչել, որոնք թվում է, թե կապ ունեն շրջանի մեջ ներառված ծավալուն խաչի հետ:



Նկ. 20-22

Չնարավոր է քարե շրջանի մեջ ներառված ծավալային նախօրինակից է ծագում Տաթևի հայտնի սյան թևավոր խաչը (նկ. 20), որը թեև արտաքնապես կլորացող վերնամասով տափակ սալ է, բայց խաչի ետնախորքի լիակատար հեռացման շնորհիվ բաղկացած է ծավալային խաչից և այն ներառող շրջանակից: Ընդորում նկատենք, որ ներկա աժուր խաչասալը լավագույն դեպքում կարող է վերաբերել 15-16-րդ դարերին (ավելի հավանական է 17-րդ դարով թվագրելը): Տեխնիկապես նման լուծում ունեցող մի եզակի խաչքար էլ ծագում է Չովհաննավանքից: Նրա վերին կեսն իրենից ներկայացնում է կամարածև քանդակագարդ ծավալային շրջանակ, որի մեջ ներառված է կենտրոնական խաչի վերին թևը (նկ. 21), իսկ խաչահատումը ներքևից շեշտում են զույգ միջանցիկ անցքերը: Այժմ էջմիածնում, սուրբ Չոփսիսիմեի բակում պահվող այս խաչքարի բեկորները (դրանք այժմ հմտորեն ի մի են բերված և մետաղական շրջանակով ամրացված) հրատարակել է Չովսեփ Ստրժիգովսկին¹⁶, ով, ցավոք, կոթողն առանց որևէ հիմքի թվագրել է 7-8-րդ դարերով: Իրականում, այն 11-րդ դարի

¹⁵ Պետրոսյան Յ., Ժամկոչյան Ա., Չայերեն արձանագրություններով սկավառակ Արցախի Տիգրանակերտից, Պատմաբանասիրական հանդես, N 1, 2009, էջ 166-176:
¹⁶ Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918, Bd. 1, S. 257, Abb. 287.

սկզբներին վերաբերող մի խաչքար է, որը բնութագրվում է խաչատակի խիստ ծավալուն հորիզոնական արմավագարդով, խաչի թևերի հյուսածո եռանելուստ երկատուներով, երկրաչափական և բուսական քանդակների հմուտ համադրությամբ:

Եվ ինչպես նշեցինք սույն քննության սկզբում, հետսագույն թևավոր խաչքարերը, որոնց ամենավաղ օրինակը հայտնի է 12-րդ դարից (նկ. 22), կարող են ենթադրելի դարձնել, թե դրանք ծագում են վաղ խաչակիր կոթողներից, իսկ դրանցից մեկն էլ՝ արդեն հիշատակված Յարանց վանքի խաչքարը (նկ. 2) հնարավոր է որպես նախատիպ է ունեցել շրջանի մեջ ներառված թևավոր խաչով պսակվող որևէ կոթող:

Եզրակացություն

Այս քննությունը հնարավոր է դարձնում հավանական համարել, որ Յայաստանում գոնե 5-րդ դարից ի վեր գոյություն են ունեցել շրջանի մեջ ներառված խաչով պսակվող կոթողներ, որոնց որոշ օրինակներ կրել են նաև պատկերաքանդակներ: Դրանց նմանությունը հետսագույն իռլանդական բարձր խաչերի հետ ավելի քան ակնհայտ է: Սակայն, թե ինչքանով դրանք կարող էին իռլանդական խաչերի համար իրական նախատիպերի դեր խաղալ, մի խնդիր է, որ հնարավոր կլինի լուծել նոր գյուտերի և ավելի հանգամանալից քննության շնորհիվ:

Յայաստանում նման կոթողների ամբողջական օրինակների իսպառ բացակայությունն՝ ի տարբերություն իռլանդականների, ունի շատ համոզիչ բացատրություն: Դա արաբ նվաճողների անհանդուրժողական վերաբերմունքն էր բացօթյա ցանկացած տիպի խաչակիր կոթողների հանդեպ՝ վկայված մի շարք գրավոր տեղեկություններով¹⁷: Պատահական չէ, որ արաբական լծի թուլացմանը զուգահեռ ձևավորված խաչքարային մշակույթը ոչ միայն հրաժարվեց ծավալուն խաչերի օգտագործումից, այլև համարյա երկու դար չօգտագործեց մինչև արաբական արշավանքն այնքան լայն տարածում գտած պատկերաքանդակը:

¹⁷ Այդ փաստերի և իրողության քննությունը տե՛ս Պետրոսյան Յ., Խաչքար, էջ 88-89:

ԱՐՑԱՆԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՇԱՐՎԱԾՔՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ

Լյուբա Կիրակոսյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Արցախի Տիգրանակերտը գտնվում է ԼՂՀ Ասկերանի շրջանում, լեռնաշխարհի երկրորդ խոշոր գետի՝ Խաչենագետի ստորին հովտում և զբաղեցնում է մոտ 70 հա տարածք և բաղկացած է Ամրացված, Կենտրոնական և Անտիկ թաղամասերից, անտիկ դամբարանադաշտերից¹: Տասնամյակից ավելի ընթացող պեղումների շնորհիվ² բացահայտվել են քաղաքի տարբեր կառույցներին վերաբերող ճարտարապետական ավերակները: Դրանք հելլենիստական քաղաքի աշտարակներով ամրացված պարսպապատերն են, միջնաբերդի ներքին և անտիկ թաղամասերի կառույցների մնացորդները, միջնադարյան եկեղեցիների ու բնակարանների պատերի մասամբ պահպանված հատվածները:

Շինարարական մնացորդների ուսումնասիրությունն ու շարվածքների դասակարգումը թույլ են տալիս բացահայտել տեղական ճարտարապետության և շինարարության առանձնահատկությունները, կատարել կառույցների հատակագծային և ծավալատարածական հորինվածքի հիմնավորված վերակազմություններ, օգնել հուշարձանների ճշգրիտ թվագրումներին և, վերջապես, ավելի խորը ուսումնասիրել շինարարական տեխնիկայի պատմության հարցերը:

Տիգրանակերտյան շարվածքների նկարագրման և դասակարգման համար օգտագործվել է նմանատիպ հուշարձաններում կիրառված և մասնագիտական գրականության մեջ ընդունված մեթոդիկան³: Այստեղ շեշտադրված են մի քանի հիմնական կետեր՝ տրվում է. ա) շարվածքի ուղղածիզ լայնական հատման բնութագիրը (միաշերտ, երկշերտ, եռաշերտ և այլն), բ) շարվածքի համակարգի բնութագիրը (կանոնավոր, անկանոն, պոլիգոնալ և այլն), գ) օգտագործված նյութի բնութագիրը (ձևը, մշակման եղանակը, չափերը), դ) շարվածքի տեխնիկայի

¹ Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Մշակութային հետազոտություններն Արցախում. Շուշի, Հանդաբերդի վանք, Տիգրանակերտ, Երևան, 2009, էջ 25: Petrosyan H., Kirakosyan L., Safaryan V., Zhamkochyan A., Vardanyan R., Karapetyan I., Vardanesova T., The discovery and first results of archaeological investigation of Tigranakert in Artsakh, 2005-2009, Archaeology of Armenia in regional context, Proceedings of the international conference dedicated to the 50 th anniversary of the Institute of Archaeology and Ethnography held on September 15-17, 2009, Yerevan, 2012, p. 224.


² Պեղումներն իրականացնում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի հնագիտական արշավախումբը՝ պ.գ.դ. Հ. Պետրոսյանի ղեկավարությամբ: Քաղաքի տարբեր հատվածներում կատարված հնագիտական աշխատանքները ղեկավարել են պ.գ.թ.-ներ Ա. Ժամկոչյանը, Ի. Կարապետյանը, Վ. Սաֆարյանը, Տ. Վարդանետովան, Ն. Երանյանը, Ռ. Հովսեփյանը, Ժ. Խաչատրյանը, Հ. Հակոբյանը, Ռ. Վարդանյանը, Ն. Ենգիբարյանը, հնագետ՝ Ա. Գաբրիելյանը: Հնագիտական աշխատանքներին մասնակցություն են ունեցել ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության ամբիոնի ուսանողներ Ռ. Սարգսյանը, Ա. Կոստանյանը, Լ. Սուքիասյանը, Հ. Աբրահամյանը, Լ. Հարությունյանը և այլք: Չափագրությունների իրականացմանը մասնակցություն են ունեցել ԾՇՀԱՀ Ճարտարապետության ֆակուլտետի ուսանողներ Լ. Մինասյանը, Դ. Նահատակյանը, Ա. Առաքելյանը, Ա. Թորոսյանը:

³ Крыжицкий С., О принципах классификации античных кладок Северного Причерноморья, Краткие сообщения Института археологии, Москва, 1981, N 168, с. 35-41. Տոնիկյան Ա., Բնակելի կառույցների շարվածքների տիպերը Հին Արտաշատում (դասակարգման փորձ), Լրաբեր հասարակական գիտությունների N 8, էջ 97:

բնութագրումը (շարքերի չափերը, կապակցման եղանակը, կարերի մշակման աստիճանը և այլն):


Արցախի Տիգրանակերտի թվագրության և տեղայնացման կարևոր կռվան է քաղաքի պաշտպանական համակարգի իրականացման եղանակը: Պարսպապատերի ու աշտարակների կառուցվածքում երևան են գալիս հելլենիստական հատակագծման և շինարարական տեխնիկայի բոլոր նրբությունները:

Պարսպապատը շարված է ժայռի մեջ փորված հիմքերի վրա, ունի 2,6-2,8 մ հաստություն: Պահպանված ամենամեծ բացարձակ բարձրությունը 5,0 մետրից ավելին է: Պատը թեև ենթարկվում է ռելիեֆի փոփոխություններին, սակայն բաղկացած է միայն ուղղագիծ հատվածներից և ունի միայն ուղղանկյուն թեքումներ: Այն իրականացված է կրաքարի բլոկներով՝ չոր եղանակով: Կրաշաղախը (որի մեջ բացակայում է ավազը) միայն բացվածքները լցնելու դեր է խաղում: Քարերն ունեն շփման մակերեսների իդեալական տաշվածք, դրսի երեսների ռուստիկ (բարձիկատեսք) մշակում և վարպետորեն արված եզրակոսներ (քարերի արտաքին եզրերի սրբատաշ մշակումներ): Խոշոր քարերը ուղղակի դրված են իրար վրա և ուղղաձիգ ուղղությամբ կանգուն են իրենց ծանրության հաշվին, իսկ հորիզոնական տեղաշարժը կանխելու նպատակով դրանք իրար միացվել են «ծիծեռնակապոչ» կապերով: Ինչքան փոքր են բլոկները՝ այնքան հաճախակի են այդ կապերը: Սա հիմք է տալիս ենթադրել, որ փոքր քարերով պատը պակաս ամուր էր և ենթակա էր լրացուցիչ ամրացման: Կարելի է նաև փաստել, որ ավելի հաճախ նման կապերով ամրացվել են արտաքին շարքերի քարերը՝ թերևս նույն մտահոգությամբ: Լավ տաշված խոշոր քարերով, չոր շարված պատը հավաքովի-բլոկային կոնստրուկցիա է՝ հաշվարկված ուղղահայաց դիմակայելու համար (Նկ. 1):



Նկ. 1. Հյուսիսային պարսպապատի մի հատվածը

Տիգրանակերտում որոշ տեղերում, ժայռից փորվել, մասամբ անջատվել են քարե բլոկներ, որոնք դարձել են շարված պատերի բաղկացուցիչներ: Կապերի փոսիկները խնամքով են արված և լայն են (մինչև 10-18 սմ) ու խորը (7-14 սմ) (նկ. 2):



Նկ. 2. «Ծիծեռնակապոչ կապերը»

Շարվածքի այս տիպը Արցախում հայտնաբերվում է առաջին անգամ, սակայն լայնորեն կիրառվում էր Փոքր Ասիայում, Միջագետքում, Արարատյան դաշտում՝ անտիկ ժամանակաշրջանի հուշարձաններում: «Ծիծեռնակապոչ» կապերով շարվածքներ հայտնի են Արմավիրում⁴, Արտաշատում⁵, Բագարանում⁶: Իբերիական Արմավիսիւնում⁷, Ուլիսցիխեում⁸, Եգիպտոսում՝ Մեդինեթ-Յաբուի, Աբիդոսի պալատատաճարային համալիրների հելլենիստական շրջանում վերակառուցապատված պերիս-

⁴ Тирациян Г., Культура древней Армении (VI в. до н. э.-III в. н. э.), Ереван, 1988, с. 82, 37, таб. XVII.

⁵ Խաչատրյան ժ., Զարգամայր Արտաշատը պատմահնագիտական լույսի ներքո, Պատմաբանասիրական հանդես, N 2, 2007, էջ 12. Kachatryan Z.D., Archaeological research in Artaxata, PARTHICA, Incontri di culture nel mondo antico, 7. 2005, Pisa Roma, p. 19-21. Канецян А. Г., Общая характеристика архитектурно-строительной культуры античной Армении, ԵՃՇԴԳ, Գիտական աշխատությունների ժողովածու, Չատոր III (25), Երևան, 2005, էջ 13-17:


⁶ Мартиросов Ф., Античный Багаран, Ճարտարապետություն և շինարարություն, 10 (92), 2013, էջ 52-53:

⁷ Древнейшие государства Кавказа и Средней Азии, Москва, 1985, с. 84, 85, 154, таб XL ж.

⁸ Хахуташвили Д., Уплисцихе, Результаты археологических изысканий 1957-1963 гг., Тбилиси, с. 103 (վրացերեն):

տիլային բակերում⁹ և կիրառվել է շարվածքի այս եղանակը: Քարերի «ռուստիկ» մշակման եղանակը հայտնի էր նաև հունական աշխարհում¹⁰:

«Ծիծեռնակապոչ» կապերը Հայաստանում հանդես են գալիս IV-III դարերի սահմանագլխին և հարատևում են ամբողջ հելլենիստական ժամանակաշրջանում: Նման կապեր հաստատված չեն ուրարտական ճարտարապետության մեջ: Դրանք Հայաստանում հանդես են գալիս ավելի ուշ: Այդ մասին են վկայում Հասանդալայի վաղ հելլենիստական ժամանակաշրջանով թվագրվող դամբանաբլրի թաղման սենյակի պատերի քարերը, ինչպես նաև Տաշքուրունում, Ցոլակերտում, Չերնակի-թեփեում, Անիում, Երվանդակերտում հանդիպող քարերը¹¹: Չերնակի թեփեում քարերն իրար միացվել են ինչպես ուղղանկյուն, այնպես էլ «ծիծեռնակապոչ» կապերով: Ուսումնասիրողները գտնում են, որ այստեղ հայտնաբերված ուղղանկյուն կապերը ուրարտական շրջանի են, իսկ «ծիծեռնակապոչ»-երը՝ հելլենիստական¹²: Ինքնատիպ կառուցման եղանակ ունի միջնաբերդի դարավանդը պահող ամրապատը: Այն շարված է մինչև 1.7 մ երկարություն և 0.5-0.7 մ լայնություն ունեցող կրաքարի կոպտատաշ խոշոր քարերով և միաժամանակ ծառայում է որպես Միջնաբերդի արևելյան պարսպապատ (նկ. 3):



Նկ. 3. Դարավանդի հենապատի շարվածքը


⁹ Шуази О., История архитектуры, т. I, Москва, 2002, с. 17. Всеобщая история архитектуры, т. I, Москва, 1970, 116, 117. Հարությունյան Վ., Հին աշխարհի ճարտարապետություն, Երևան, 1978, էջ 25:

¹⁰ Блаватский В., Архитектура античного мира, Москва, 1939, с. 28, рис. 19.

¹¹ Тирацян Г., Новые археологические материалы послеурартского времени на территории Западной Армении (Турция) и их место в истории древнеармянской культуры, Древний Восток, т. 2, Ереван, 1976.

¹² Burney Ch., Urartian fortresses and towers in the Van region, Anatolian Studies, VII, 1957, p. 49-50.

Որոշ տեղերում պատը պահպանվել է երկու բլուկի բարձրությամբ (մինչև 1,20 մ): Շարված է հելլենիզմի ժամանակ տարածված չոր տեխնիկայով: Պարիսպների համեմատ այն շատ ավելի կոպիտ է, չեն օգտագործվել նաև «ծիծեռնակապոչ» կապեր: Ընդ որում, հորիզոնական շարքերը կազմված են տարբեր բարձրություն ունեցող բլուկներով: Պատը տեղադրված է տեղ-տեղ հարթեցված բնական հիմնաժայռին, որոշ դեպքերում էլ հիմնաժայռի ելևէջների, ճեղքերի մեջ լցրած հողաքարային լիցքի վրա: Այն տեղերում, որտեղ հողե հիմքի վրա է դարավանդի հենապատը նստվածք է տվել: Այսօր բացված են հենապատի միայն արտաքին ճակատը և նրան կից որմնահեցերի շինարարական մնացորդները: Դյուսիսային հատվածում որմնահեցը բարձրացված է լանջի խորքային անկման՝ հողաքարալիցքային՝ 0,85մ բարձրություն ունեցող հարթեցված շերտի վրա: Այստեղ վավերացվել է կառուցողական արվեստի հետաքրքիր դրսևորում: Պարզվել է ոչ միայն հենապատի ճակատը, այլ նաև դարավանդի՝ մասնակի պահպանված հարթակի կառուցվածքը: Հենապատն այս մասում (պահպանված երկարությունը 9,7մ) դրված է ժայռի վրա. ավերված է և չի հասնում հյուսիսային պարսպապատին: Այն բարձրացված է մանր կրաքարերով համահարթեցված շերտի վրա, գառիթափի հիմնաժայռի եզրից 2,0մ հետ քաշած: Պատի ստորին հատվածը շարված է խոշոր բլուկների երկու շարքերով՝ 1,0մ բարձրությամբ: Այդ շարքերին հաջորդում են մանր քարերով շարված նորից 1,0մ բարձրության ևս չորս շարքեր, որոնցից երկուսը իրականացված են «եղևնաձև» շարվածքով (նկ. 4):



Նկ. 4. Դարավանդի հենապատի որմնահեցի շարվածքը

Ուղղաձիգ հատման մեջ դա երկշերտ միաճակատ է: Կառուցման այս եղանակը բնորոշ է վաղմիջնադարյան շինարվեստին: Այսպիսի շարվածքներ օգտագործվել են Չաքարի-բերդ¹³, Երնջատափ¹⁴ վաղմիջնադարյան ամրոց-բնակատեղիներում: «Եղևնաձև» շարվածքները սահմանափակ քանակությամբ կիրառվել են նաև անտիկ և անտիկից վաղմիջնադարին անցման ժամանակաշրջանում Արտաշատում¹⁵, Շամիրամում¹⁶, Շիրակավանում, Հացավանում¹⁷:

¹³ Կիրակոսյան Լ., Չաքարի-բերդի բնակելի համալիրների ճարտարապետությունը, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1989, N 10, էջ 92:


¹⁴ Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Երնջատափի վաղմիջնադարյան ամրոց-բնակատեղին, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1990, N 9, էջ 95:

¹⁵ Տոնիկյան Ա., նշվ. աշխ., էջ 98:

¹⁶ Օհանյան Հ., Շամիրամի անտիկ բնակավայրի պեղումները, Հայկական ՍՍՀ-ում 1983-1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Չեկուցումների թեզիսներ, Երևան, 1985, էջ 40:

¹⁷ Тирацян Г., Культура древней Армении, с. 35.


Տիգրանակերտի անտիկ թաղամասում վավերացվել է կառուցողական և ժամանագրական երեք շրջան՝ վերին վաղմիջնադարյան, միջին՝ ուշ անտիկ և ստորին՝ ուշիլլենիստական¹⁸: Հելլենիստական թաղամասի հատակագծումը կանոնավոր է, միասնական մտահղացմամբ՝ հյուսիս-հարավ և արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Բնակարանները տեղաբախշված են մեկ միասնական երկարածիգ պատի երկու կողմերում՝ հաղորդակցվելով երեսները հարթեցրած խոշոր քարերով շեները սալարկած, մուտքերով: Շինությունների քարե հիմքերը իջեցված են հիմնակամի մեջ, շարված կավաքարային միջնալիցքով եռաշերտ երկճակատանի տեխնիկայով (նկ. 5):



Նկ. 5. Անտիկ թաղամասի բնակարաններից մեկի պատի շարվածքը

Վաղ միջնադարի պատերը բարձրացված են անտիկ շերտը ծածկող մոխրաքարալիցքի, իսկ տեղ-տեղ էլ սալահատակի վրա և շարված են փոքր ու միջին չափերի ճեղքված քարերից: Կառույցների պատերում վավերացվել են նաև «եղևնաձև» շարվածքներ (նկ.6):

Արցախի Տիգրանակերտի վաղմիջնադարյան ժամանակաշրջանի կառույցների շարվածքների տեղեկատվական աղբյուրը առաջին հերթին պայմանականորեն Մեծ անվանված եկեղեցու, ինչպես նաև Փոքր եկեղեցու խորանի տակ ամփոփված դամբարանի պահպանված շինարարական ավերակներն են: Եկեղեցու պատերը շարված են ավանդական եղանակով՝ «միդիս» եռաշերտ երկճակատանի սկզբունքով:



Նկ. 6. «Եղևնաձև» շարվածք Անտիկ թաղամասի բնակարաններից մեկի պատում

¹⁸ Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Կարապետյան Ի., Գաբրիելյան Ա., Վարդանետովա Տ., Հովսեփյան Ռ., Արցախի Տիգրանակերտի 2012թ. հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները, Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2011-2012 թթ., ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության վարչություն, Ստեփանակերտ, 2015, էջ 84:

Հայ շինարարների կարևոր տեխնիկական նվաճում հանդիսացող այս համակարգի շարվածքով իրականացված որմածքը ստացման տեխնոլոգիայով դասվում է հավաքովի միաձույլ, իսկ կազմությամբ՝ միաձույլ կոնստրուկցիաների խմբին¹⁹: Որմածքում օգտագործված քարերը երեսի կողմից մշակված և պարագծով շրջատաշված են և տեղադրված պատի երկու կողմերում: Արանքը լցված է տարբեր մեծության քարի կտորտանքներով համալրված հեղուկ կրաշաղախը, որը ներթափանցելով բոլոր կարերի և անցքերի մեջ, բացառել է քարաբետոնում դատարկությունների գոյացումը և ապահովել համաձույլ կառուցվածք: Քարերն այստեղ ունեն պատի երեսապատման, ներպատային քարալիցքի կաղապարի, մասամբ նաև պատի վրա ընկնող բեռնվածությունն ընդունող կոնստրուկցիայի գործառնություններ: Պատերից պահպանվել է հիմնականում կրաշաղախի լիցքը (մոտ 2,5 մ բարձրությամբ), որոնց մեջ դրոշմված երևում են պատի շարքերի սրբատաշ քարերի բները, իսկ քարերը պոկված են²⁰ (սկ. 7):




Նկ. 7. Տիգրանակերտի «Մեծ» եկեղեցու պահպանված ավերակները

Սրբատաշ մի քանի քարեր պահպանվել են աղոթասրահի հարավային պատի ներքին երեսի արևելյան և արևմտյան հատվածներում միայն: Պատերի հաստությունը 1,20-1,25 մ է: Որմի ստորին շարքերը շարված են ավելի մեծ քարերից (1,90 x 0,98 մ), քան վերինները: Որմաքարերն ավելի երկարավուն են, «պառկած» դիրքով, ունեն մեծ խորություն և նմանվում են անտիկ անշաղախ շարվածքի բլոկներին: Այսպիսով հեշտանում էր պատի կառուցումը, ապահովվում էր պատի պաշտպան-

¹⁹ Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը, (Ուսումնական ձեռնարկ), Երևան, 2003, էջ 239:

²⁰ Կիրակոսյան Լ., Արցախի Տիգրանակերտի եկեղեցու ճարտարապետությունը, Պատմաբանասիրական հանդես, N 1, 2016, էջ 122:

վածությունը վնասվածքներից և բարձրանում սեյսմակայունությունը: Որմածքի հորիզոնական կարանները մշակված են 0,5-1,0 սմ լայնություն ունեցող, 45 աստիճանի թեքությամբ տաշված եզրակոսներով: Այս միջոցառումը կոնստրուկտիվ լինելուց գաստ պատի հարթությանը հաղորդել է արտահայտչականություն՝ ստեղծելով որոշակի ռիթմ և մասշտաբ: Քարերն ունեն հատած բուրգի ձև՝ սրբատաշ հիմքով, որոնք գագաթամասով ազուցված են (0,3-0,6 սմ խորությամբ) կրաշաղախի մեջ: Կարանները, որոնք առաջացել են քարերի միացման տեղերում՝ սեպածև են, որոնք նպաստել են կրաբետոնե միջուկի հետ այդ քարերի լավ կապակցմանը (նկ. 8):



Նկ. 8. «Մեծ» եկեղեցու հարավային պատի հատակագիծն ու ճակատները և արևմտյան մուտքը

Տիգրանակերտի Փոքր եկեղեցու խորանի տակ ներկառուցված դամբարանը շարված է սրբատաշ մեծ կրաքարի բլոկներով՝ ամուր կրաշաղախի օգնությամբ:

Վաղ միջնադարին հաջորդող դարաշրջաններում Արցախի Տիգրանակերտում կառույցներն իրականացվել են ոչ մշակված, երբեմն վերաօգտագործված քարերով, անկանոն՝ կրաշաղախով ամրացված միաշար պատերով: Դրանք հիմնականում պատկանել են բնակելի կացարաններին:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ Արցախի Տիգրանակերտում կիրառված շարվածքների զարգացումը դիտվում է անտիկ և միջնադարյան ժամանակաշրջաններում: Այստեղ առկա են տվյալ դարաշրջաններին բնորոշ շարվածքի հիմնական բոլոր տիպերը, որոնք վկայում են շինարարական արվեստի բարձր մակարդակի մասին:

ТРАДИЦИЯ РАСПИСНОЙ КЕРАМИКИ СРЕДНЕВЕКОВОГО ТИГРАНАКЕРТА

Татьяна Варданесова

Ереванский государственный университет

Среди многочисленных фрагментов средневековой керамики города Тигранакерт в Арцахе, из раскопа в Центральном квартале в районе Раннехристианской базилики и Раннесредневековой площади, внимание привлекают черепки неполивной (простой) керамики, раскрашенные красным ангобом. Особый интерес это явление вызывает при сопоставлении этой группы средневековой керамики с античной расписной керамикой Тигранакерта, т.к. заметно определенное сходство декора.

Керамика античного Тигранакерта в своей массе датируется 1в. до н.э. - 3 в. н.э.¹. Она представлена простой и расписной керамикой с характерным декором геометрического, реже растительного орнамента, который располагается на светлом фоне черепка.

Традиция расписной античной керамики Армении исследуется в научной литературе многими авторами² на материале таких античных городов, крепостей и поселений как Армавир, Арташат, Гарни, Двин, Ацаван, Ширакаван, Карчахпюр³ и в последние годы Тигранакерт⁴.

При описании расписной античной керамики, Г. Тирацян отмечает, что она представлена самыми разнообразными формами - крупными и мелкими сосудами, флягами, кувшинами, горшками со сливообразным носиком, блюдами, чашами-пиалами и т.д., и что вышеупомянутые формы имеют точные параллели среди массовой нерасписной керамики⁵. К сожалению, в своей основной массе, керамика Тигранакерта представлена фрагментарным материалом, но по сохранившимся целым экземплярам и характерным элементам сосудов можно сказать, что вышеперечисленные формы типичны и для античного Тигранакерта.

¹ Արցախի Տիգրանակերտի 2011 հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները (համահեղինակներ Պետրոսյան Յ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ. և ուր.), Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2011 - 2012 թթ., Ստեփանակերտ, 2015, էջ 48, 79, 95:

² Тирацян Г.А., О расписной керамике древней Армении (4 в. до н.э. - 3 в. н.э.), Историко-филологический журнал, 1966, 1. Его же, Культура древней Армении, Ереван, 1988, (4 в до н.э. - 3 в н.э.), с. 124-134. Хачатрян Ж.Д., Некоторые образцы расписной керамики, найденные в Армении, Историко-филологический журнал, 1966, 1. Аракелян Б.И., Очерки по истории искусства древней Армении, Ереван, 1976.

³ Тирацян Г.А., Культура, с. 124.

⁴ Արցախի Տիգրանակերտի 2011 հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները, էջ 77, 78. Արցախի Տիգրանակերտի հետազոտության հիմնական արդյունքները 2005-2009 թթ., (համահեղինակներ Պետրոսյան Յ., Կիրակոսյան Լ. և ուր.), Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2010 թթ., Ստեփանակերտ, 2011, էջ 3-23. Արցախի Տիգրանակերտի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները (համահեղինակներ Պետրոսյան Յ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ. և ուր.), Երևան, 2011, էջ 227-238. Արցախի Տիգրանակերտի 2007թ. հնագիտական հետազոտության արդյունքները (համահեղինակներ Պետրոսյան Յ., Սաֆարյան Վ., Կիրակոսյան Լ. և ուր.), Հոլշարձան, թիվ 2, Երևան, 2010, էջ 35-44:

⁵ Тирацян Г.А., Культура, с. 124.

При изучении орнаментальных мотивов “эллинистической расписной керамики Армении и Закавказья”⁶, Г. Тирацян, сопоставляя их со схожими, но более ранними мотивами на керамике с Армянского нагорья, а также из Малой Азии и Ирана, отмечает, что “примером может служить малоазийская расписная керамика первой половины I тыс. до н.э. представленная фригийским вариантом.” Он также находит связь античной расписной керамики Армении с полихромной керамикой “урарту из района Вана”⁷. Таким образом корнями этот декор уходит в глубь веков, однако дальнейшее распространение этой античной традиции и ее влияние на более позднюю керамику до сих пор не изучены, в то время как само явление прослеживается на керамическом материале средневековья. Особенно это заметно на керамике средневекового Тигранакерта, где при сопоставлении керамического материала различного периода заметно, что декор расписной керамики античности имеет определенное сходство с декором средневековой полихромной керамики 11-13 вв.

Античная полихромная керамика относится к категории парадной или столовой керамики. Она имеет тонкий, плотный, пропеченный черепок с хорошим лощением, который во многих случаях покрыт светлым ангобом. Роспись нанесена на светлый фон более темными полосами. Иногда декор нанесен просто на светлый черепок сосуда. В целом эта керамика имеет светлорозовый, реже светлоохристый или бледнокрасный фон, что зависит от цвета глины из которой она сделана и от ангоба, покрывающего этот черепок. В редких случаях посуда имеет красный или коричневый фон, который обусловлен используемой глиной или соответствующим цветом ангоба. Орнамент росписи в основном монохромный. Он выполнен светлокрасными полосами ангоба, реже встречается роспись выполненная охристой, бордовой или коричневой краской.

Орнаментальные мотивы в большинстве случаев носят геометрический, реже растительный характер. Здесь можно выделить следующие мотивы: поперечные параллельные полосы различной ширины (от 0,01 до 0,5 мм), продольные и поперечные спирали, орнамент сетки различной плотности и величины, пояс треугольников заполненный сеткой, пояс полностью закрашенных треугольников, ресничек различной конфигурации (орнамент скорее носит растительный характер, чем геометрический), реже встречаются орнаментальные пояса с вертикально расположенными “галочками”, орнамент “елочки” (часто встречается на ручках), орнаментальные полосы с закрашенными кружками, орнамент “паучков” (редко встречающийся растительный орнамент), и наконец пояс из закрашенных треугольников соединенных “текущими” арками, которые образуют вокруг тулова сосуда шести или семиконечные звезды⁸. (Встречается на кувшинах и чайниках средней величины).

В большинстве случаев на поверхности сосуда наблюдается сочетание поперечных полос с различными вышеперечисленными орнаментальными мотивами.

⁶ Тирацян Г.А., Культура, с. 125.

⁷ Тирацян Г.А., Культура, с. 126 -127.

⁸ Ниже приведены 2-е сводные таблицы составленные из фрагментов расписной античной керамики Тигранакерта, которые дают общее представление о мотивах декора (рис. 1, 2).

Узоры, выполненные росписью в большинстве случаев располагаются от венчика до середины тулова, но есть и более низкие границы орнамента. Часто орнаментированы венчики и ручки, которые украшены различными косыми, поперечными или продольными полосами. В закрытых сосудах декорировалась наружная поверхность, в открытых - (миски, чаши-пиалы и т.д.) внутренняя сторона, которая, как правило, имеет более простой орнамент состоящий из нескольких концентрических полос.

Имея перед глазами примеры античных мотивов расписной керамики Тигранакерта сопоставим их со средневековой керамикой декорированной росписью ангоба. При сопоставлении можно заметить следующие виды заимствований: когда орнамент средневековья полностью заимствован из античности; когда декор средневекового сосуда частично напоминает античный, но в целом характерен для средневековой керамики; когда средневековый декор не имеет аналога среди античного декора, но общий вид сосуда похож на античный.

Примером для первой категории заимствований, т.е. где заметно полное подражание античному декору, могут служить фрагменты средневековой крышки с орнаментом широкой полосы чередующейся и поясом закрашенных кружков (рис. 3). Если сопоставить фрагменты средневековой и античной керамики, то различие заметно только по качеству глины (рис. 4)⁹.

Вторая и третья категория представлены большим количеством материала, что свидетельствует о заимствовании всей традиции росписи красным ангобом, а не на единичном использовании конкретного орнамента (рис. 5). Для средневековья характерны широкие красные полосы ангоба, которые начинаются от горлышка сосуда и вертикально располагаются по всей поверхности тулова средних по размеру кувшинов с небольшим сливом. Судя по морфологии эти сосуды относятся к 12-13 вв. (рис. 6). Для сравнения отметим, что для античной росписи тигранакертской керамики, как отмечалось выше, характерны более узкие, поперечные полосы. Широкие полосы красного ангоба встречаются на крышках (рис. 7), ручках, венчиках и туловах крупных сосудов и просто на многочисленных фрагментах средневековой керамики (рис. 8).

Интересным примером второй категории заимствований является небольшой средневековый сосуд со сливом (рис. 9), украшенный красным орнаментом полос и зигзагов, которые расположены вертикально и начинаются у венчика. Несмотря на то, что формы сосудов разные, он напоминает небольшие античные сосуды (рис. 10).

К примерам третьей категории заимствований, в первую очередь, относятся многочисленные расписные миски с хорошо лощеной поверхностью. Их черепок покрыт красным, реже - желтым ангобом по которому идут мелкие полосы более темного цвета. Полосы расположены внутри и снаружи по всей поверхности сосуда (рис. 11, 12). Учитывая факт того, что, как и в античный период, формы расписной средневековой керамики имеют точные параллели среди массовой нерасписной керамики, данные миски судя по морфологии и качеству черепка относятся к 12-13 вв. Интересен экземпляр миски, где небольшими вертикальными полосками

⁹ Большой фрагмент на рисунке - это фрагмент средневековой крышки, а маленький - античная керамика.

красного ангоба украшена только ножка (рис. 13) и плоский фрагмент тарелки, где на дне заметна плохо сохранившаяся роспись красным ангобом. Скорее всего орнамент шел радиальными лучами от центра к бортам тарелки (рис. 14).

Следует отметить, что в отличие от античности, расписной декор в средневековье встречается как на кухонной, так и на парадной керамике, где она может сочетаться с врезным (рис. 15) или штампованным (рис. 16) орнаментом. В этом случае декор, представляет собой широкие полосы или закрашенный красным ангобом участок черепка в сочетании с вышеперечисленными типами орнамента. На сосудах со штампованным орнаментом красным ангобом покрывалась основная поверхность сосуда, в то время как пояс со штампом оставался более светлым, т.е. цвета черепка.

Характеризуя традицию расписного декора в период средневековья, следует отметить, что по сравнению с античностью ее орнамент сильно упрощен. В основном он представлен широкими вертикальными полосами, штрихами и сплошным красным фоном, который покрывает часть сосуда. Полное заимствование орнамента встречается крайне редко и почти нет совмещения нескольких типов расписного орнамента в пределах одного сосуда. Однако в этот период широко используется сочетание штампованного или прорезного орнамента с росписью, которая встречается практически по всей поверхности сосудов, но особое внимание уделяется крышкам и ручкам. Для средневековой керамики Тигранакерта 11-13 вв. роспись красным ангобом на крышках и ручках достаточно характерное явление.

Таким образом, в Тигранакерте, традиция расписной керамики наблюдается на протяжении двух периодов с 1 в до н.э. и до 3 в. и далее возрождаясь в конце 10 в. и в своеобразной форме существует до конца 13 в. Похоже, что возрождение традиции в данном случае носит локальный характер и является проявлением местной традиции, которая сформировалась в силу того, что город просуществовал на протяжении многих столетий, в следствии чего роспись красным ангобом как традиция не была утрачена окончательно, и возродилась в период очередного его расцвета.




Рис. 1. Сводная таблицы фрагментов античной расписной керамики (1в до н.э. - 3 в.). 2. Сводная таблицы фрагментов античной расписной керамики (1в до н.э. - 3 в.). 3. Фрагменты средневековой крышки с расписным орнаментом (12-13 вв.). 4. Фрагменты средневековой крышки и античной керамики, 5. Фрагменты средневековой расписной керамики (12-13 вв.). 6. Фрагмент средневекового расписного кувшина с небольшим сливом (12-13 вв.). 7. Фрагменты средневековой расписной крышки (12-13 вв.). 8. Фрагменты средневековой расписной керамики (12-13 вв.). 9. Небольшой средневековый сосуд со сливом (12 -13 вв.). 10. небольшой античный сосуд со сливом. 11. Фрагменты расписных миски (12-13 вв.). 12. Фрагменты расписных миски (12-13 вв.). 13. Фрагмент расписной миски с вертикальными полосками красного ангоба на ножке сосуда (11в.). 14. Плоский фрагмент тарелки с плохо сохранившейся росписью красным ангобом. 15. Фрагмент расписной керамики в сочетании с врезным орнаментом (12-13 вв.). 16. Фрагмент расписной керамики в сочетании со штампованным орнаментом (13 в.)

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Ռուզան Փալանջյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հայկական լեռնաշխարհում գինեգործության հնագույն ակունքների մասին վկայում է աստվածաշնչյան ավանդությունը, ըստ որի՝ ջրհեղեղից փրկված Նոյը, Արարատից իջնելով, տնկում է խաղողի որթը և գինի պատրաստում. «Եւ սկսաւ Նոյ այր հողագործ, զերկիր գործել եւ տնկեաց այգի եւ արբ ի գինւոյն»¹: XIX դարի անգլիացի ճանապարհորդ Լինչը, լինելով Հայաստանում, նկարագրել է Արարատյան դաշտը, գրելով, որ այն նման է Ավետյաց երկրին, որտեղ Նոյը տնկել էր խաղողի այգիներ, և որը դարձավ մարդկության երկրորդ բնօրրանը²:

Հնագիտական տվյալները նույնպես ապացուցում են հայկական գինեգործության վաղնջականությունը: Վայոց ձորում, Արենի գյուղի մոտ գտնվող քարայրում հայտնաբերվել է առայժմ հայտնի հնագույն գինեգործական կառույցը (մ.թ.ա. V հազարամյակի վերջ): Քարայրում տեղադրված է եղել հնձանը: Միաժամանակ նույն քարայրը ծառայել է նաև որպես մառան: Ստացված գինին պահվել է քարայրում կավե անոթների մեջ: Անոթների խեցու քիմիական անալիզը հայտնաբերել է բուսական ծագման կարմիր գունանյութի՝ մալվիդինի հետքեր: Այս փաստը թույլ է տվել ենթադրել, որ անոթների մեջ պահվել է կարմիր գինի³:

Մ.թ.ա. III հազարամյակի գինու վերաբերյալ տեղեկություններ կարելի է քաղել շումերական Եպոսից, ըստ որի, երբ Գիլգամեշն Ուրուկից ուղևորվում է իր նախնի Ուտնապիշտիմին՝ աստվածաշնչյան Նոյի նախատիպին հանդիպելու, անցնում է Մաշու լեռները և հասնում աստվածների պարտեզը, որը գտնվում էր ծովեզրին: Պարտեզը խնամում էր Սիդուրի աստվածուհին, ով աստվածների մատուցակն էր, գինի և գարեջուր էր պատրաստում նրանց համար: Նա ուներ գինու սափոր և ոսկե թաս՝ ածիկ պատրաստելու համար: Հետաքրքիր է, որ Սիդուրին պանդուկի տիրուհի էր, որտեղ նա գինի ու գարեջուր էր հյուրասիրում⁴: Որոշ գիտնականներ Եպոսում հիշատակված Մաշու լեռները նույնացնում են Հայկական լեռնաշխարհի հարավ-

¹ Ծննդ. Թ. 20-21 (Աստուածաշունչ, Մատեան Հին եւ Նոր կտակարանների, երբայական եւ յունական բնագիրներից թարգմանուած, Թեհրան, 1989):

² Линч Х.Ф.Б., Армения, Путевые очерки и этюды, т. I, Тифлис, 1910, с. 411.

³ Barnard H., Dooley A.N., Areshian G., Gasparyan B., Faull K.F., Chemical evidence for wine production around 4000 BCE in the Late Chalcolithic Near Eastern Highlands, Journal of Archaeological Science, 2011/38, p. 977-984.

⁴ «О все видавшем», История Гильгамеша со слов Синликиуннинни, заклинателя, Перевод с аккадского и комментарий И.М. Дьяконова, Эпос о Гильгамеше, О все видавшем, Москва, 2005, с. 408-409, 514-515.

արևմուտքի Մասիուս լեռների հետ⁵: Եպոսի համաձայն Սիդուրին բնակվում էր ծովի մոտ: Գուցե այդ «ծովը» Վանա լիճն էր⁶:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Գիլգամեշը պատմական դեմք է եղել: Նա ապրել է մ.թ.ա. մոտ 2800-2700 թվերին և եղել Ուրուկի գերագույն քուրմն ու ռազմական առաջնորդը⁷: Իսկ Եպոսը գրի է առնվել մ.թ.ա. III հազարամյակի վերջերին⁸: Այս վկայությունը, ամենայն հավանականությամբ, պահպանել է փոխաբերական տեղեկատվություն մ.թ.ա. III հազարամյակում Միջագետքից անդին, դեպի հյուսիս ընկած շրջաններում գինեգործության գոյության և համապատասխան առևտրի վերաբերյալ: Ուշագրավ է Եպոսում պանդոկի հիշատակության փաստը, որը գտնվում էր «ծովի» (թերևս՝ Վանա լճի) ափին և այնտեղ գինի և գարեջուր էին մատուցում: Հին Միջագետքում առնվազն մ.թ.ա. III հազարամյակից այդպիսի պանդոկների առկայության մասին վկայում են այդ ժամանակաշրջանի միջագետքյան վավերագրերը: Ուշագրավ է, որ պանդոկապանները հիմնականում կանայք են եղել: Օրինակ՝ «արքայական ցուցակների» համաձայն, մ.թ.ա. մոտ 2500 թվին Զիշի արքայական երրորդ դինաստիայի հիմնադիրը Կու-Բաբա անունով մի կին էր, ով, ինչպես պատմում է ավանդությունը, սկզբնապես պանդոկի տիրուհի է եղել: Հետագայում Համմուրայի թագավորի օրոք (մ.թ.ա. 1792-1750 թթ.), պանդոկապան կանայք օրենսդրությամբ «արքայական մարդկանց» շարքին դասվեցին⁹: Հատկանշական է, որ Գիլգամեշի այցելած պանդոկում մատուցում էին գինի և գարեջուր, մինչդեռ հինմիջագետքյան պանդոկներում միայն գարեջուր էին մատուցում¹⁰: Այս փաստը թույլ է տալիս եզրակացնել, որ Եպոսում նշված պանդոկը փոխաբերաբար հուշում է այնպիսի մի տարածաշրջանի մասին, որտեղ ոչ միայն գարեջուր, այլ նաև գինի են պատրաստել:

Պանդոկներ տարածված են եղել նաև խեթական պետությունում: Խեթական պանդոկները կոչվում էին «արցանա»: Համաձայն խեթական գրավոր աղբյուրների տվյալների, «արցանա» պանդոկներում հաճախորդներին մատուցում էին գարեջուր և «մարնավա» կոչվող ոգելից ըմպելիքը¹¹: Ուշագրավ է, որ մ.թ.ա. II հազարամյակի փոքրասիական բնակավայրերի պեղումների ժամանակ բացված որոշ կառույցներ մասնագետների կողմից մեկնաբանվել են որպես պանդոկներ¹²: Չնայած Հարավային Միջագետքում խաղողի վազը աճեցվել է սկսած մ.թ.ա. IV հազարամյակից, սակայն խաղողից գինի չեն պատրաստել, այլ օգտագործել են միայն սննդի մեջ՝ թարմ վիճակում, ինչպես նաև չամիչ են պատրաստել: Սկսած մ.թ.ա. III հազարամյակից

⁵ Ինգլիզեան Վ., Հայաստան Սուրբ գրքի մեջ, Վիեննա, 1947, էջ 121. Նաև՝ Պետրոսյան Ա., Կորդվաց լեռ տարածաշրջանի հին ժողովուրդների տիեզերածնության և մարդածնության առասպելների կենտրոն, Հայ ժողովրդական մշակույթ, հ. XII, Երևան, 2004, էջ 109:

⁶ Ասորեստանյան աղբյուրներում Վանա լիճը անվանվում է «Նաիրի երկրի ծով» (Арутюнян Н.В., Топонимика Урарту, Ереван, 1985, с. 148):

⁷ Дьяконов И.М., Эпос о Гильгамеше, Москва, 2005, с. 289.

⁸ История древнего Востока, Часть I, Месопотамия, Москва, 1983, с. 169.

⁹ История древнего Востока, Часть I, Месопотамия, с. 198, 382.

¹⁰ История древнего Востока, Часть I, Месопотамия, с. 382.

¹¹ Ардзинба В.Г., Ритуалы и мифы древней Анатолии, Москва, 1982, с. 21, 40, 41, 45, 131.

¹² Маккуин Дж.Г., Хетты и их современники в Малой Азии, Москва, 1983, с. 64-65.

մինչև մ.թ.ա. I հազարամյակը ներառյալ խաղողի գինին Հարավային Միջագետքի համար եղել է միայն վերնախավին մատչելի, ներմուծվող թանկարժեք ապրանք¹³:

Գինու առևտուրը Միջագետքում հիմնականում կատարվել է ջրային ուղիներով՝ Եփրատով և Տիգրիսով: Հարավային Միջագետքի կենտրոններ խաղողի գինու ներմուծումը հատկապես մեծ չափերի է հասնում մ.թ.ա. III հազարամյակի վերջերին, քանի որ Ուրի արքաները վերահսկում էին Տիգրիսի և Եփրատի ավազանի մեծ մասը¹⁴:

Մ.թ.ա. II հազարամյակի սկզբներին Եփրատի միջին հոսանքում գտնվող Մարի քաղաք-պետությունը դառնում է գինու միջազգային տարանցիկ առևտրի հիմնական կենտրոնը: Գինեգործական շրջաններից գինին Եփրատ գետով բերվում էր Մարի, այնտեղ պահեստավորվում, այնուհետև գետով փոխադրվում Հարավային Միջագետքի քաղաքներ վաճառքի¹⁵: Հետաքրքիր է, որ այդ ժամանակաշրջանի բաբելոնյան առևտրական բնույթի մի նամակում բաբելոնացի վաճառականը տեղեկացնում է Սիպպարում գտնվող իր ներկայացուցչին «գինու նավակի» ժամանման մասին և հանձնարարում է նրան գինի գնել և այն Բաբելոն բերել¹⁶: Հավանաբար, դրանք եղել են այն կլոր նավերից, որոնց մասին հետագայում գրել է Հերոդոտոսը¹⁷, և որոնք մինչև XX դարը ներառյալ հիմնական փոխադրամիջոցն էին Եփրատ և Տիգրիս գետերով: Արաբները դրանց անվանում են «քուֆֆա»¹⁸: Ա. Զոմֆորթը 1999 թվին ակնատես է եղել այդպիսի նավերով ձկնորսության¹⁹: Սակայն, ինչպես հետևում է Բրիտանական թանգարանում պահվող Սինաբերիբ թագավորի Նինվեի պալատի բարձրաքանդակից, որտեղ պատկերված է այդպիսի նավերով նավարկության տեսարան²⁰, Միջագետքում դրանք օգտագործվել են շատ հնուց:

Ուշագրավ է, որ այդ նավերը հիշատակում է նաև Զսենոփոնը: Նրա վկայությունից պարզվում է, որ արքեմեյան շրջանում դրանցով նավարկում էին ոչ միայն Եփրատով, այլ նաև Տիգրիսով՝ տեղափոխելով ցորենի հաց, պանիր, գինի²¹: Հետևաբար, Հայաստանից Հարավային Միջագետք գինի կարող էին տանել նաև Տիգրիսով²²: Ջ. Գրեպպինը ընդգծել է Հայաստանը Միջագետքին կապող ջրային

¹³ Powell M.A., Wine and the vine in Ancient Mesopotamia: The cuneiform evidence, The origins and ancient history of wine, Ed. by McGovern P., Fleming S. and Katz S., Amsterdam, 1996, p. 100-106.

¹⁴ Powell M.A., Wine and the vine in Ancient Mesopotamia, p. 101.

¹⁵ Zettler R.L., Miller N.F., Searching for wine in the archaeological record of Ancient Mesopotamia of the third and second millennia BC, The origins and ancient history of wine. Ed. by McGovern P., Fleming S. and Katz S., Amsterdam, 1996, p. 127-131.

¹⁶ Powell M.A., Wine and the vine in Ancient Mesopotamia, p. 103.

¹⁷ Геродот, История в девяти книгах, Пер. и прим. Г.А. Стратановского, Ленинград, 1972, I, 194.

¹⁸ Флиттнер Н.Д., Культура и искусство Двуречья и соседних стран, Ленинград-Москва., 1958, с. 12, фото на с. 13. Кленгель-Брандт Э., Древний Вавилон, Смоленск, 2001, с. 100.

¹⁹ Comfort A., Erges R., Following the Euphrates in Antiquity, p. 23.

²⁰ Klima J., Gesellschaft und Kultur des alten Mesopotamien, Prag, 1964, p. 141-142, Abb. 34.

²¹ Ксенофонт, Анабасис, II, IV, 28, Пер. М.И. Максимовой, Москва-Ленинград, 1951.

²² Powell M.A., Wine and the vine in Ancient Mesopotamia, p. 102. Չարդարյան Մ.Հ., Հայաստանը առաջավորասիական տնտեսա-մշակութային սերտաճման համակարգում, Հայկական լեռնաշխարհ-Իրան-Միջագետք համագործակցության ձևավորման պատմությունից (մ.թ.ա. I հազ.), Հայացք Երևանից, Տարի 3, 1997, թիվ 2, էջ 77. Зардарян М.,

ուղիների՝ Եփրատ և Տիգրիս գետերի կարևորությունը, որոնցով հին Հայաստանից գինի են տեղափոխել Բաբելոն և Միջագետքի այլ կենտրոններ²³:

Մ.թ.ա. III-II հազարամյակների գրավոր աղբյուրներից կարելի է որոշ տեղեկություններ քաղել այդ ժամանակաշրջանի գինու տեսակների վերաբերյալ: Այսպես, մ.թ.ա. 2064-2056 թվերին վերաբերող տևտեսական բնույթի մի տեքստում Ուր քաղաք ներմուծվող ապրանքի թվում նշվում է սպիտակ գինի²⁴: Մարի քաղաքի արխիվների տվյալներից կարելի է եզրակացնել, որ այնտեղ պահեստավորվել են հիմնականում կարմիր գինիներ, սակայն Մարի են բերվել նաև սպիտակ գինիներ²⁵: Այս խնդրի վերաբերյալ ավելի շատ ինֆորմացիա են տալիս խեթական տեքստերը, որտեղ հիշատակվում են «կարմիր գինի», «ընտիր գինի», «քաղցր գինի», «մեղրի հետ խառնած գինի», «նոր գինի», «անխառն գինի»²⁶: Կարող ենք արձանագրել, որ մ.թ.ա. III-II հազարամյակում առաջավորասիական գինեգործությունը բավականին բարձր մակարդակ է ունեցել: Կիրառվել են հատուկ տեխնոլոգիաներ՝ կարմիր, ինչպես նաև բարձր շաքարայնությամբ գինիներ ստանալու համար: Խեթական արձանագրությունների «նոր գինի», հավանաբար մաճառն էր՝ խաղողի դեռևս գինու չվերածված, մասնակիորեն խմորման ենթարկված քաղցուն: Անկասկած, Հայկական լեռնաշխարհի գինեգործական շրջաններում, այդ թվում նաև Վանա լճի ափին, պատրաստվել են այդ բարձրորակ գինիներից: Այդ մասին են վկայում նաև ուրարտական տեքստերը, այսպես, արքայական ընտանիքի անդամները խաղողի այգիներ ունեին այդ տարածքում (Կատեպանց գյուղի մոտ էր գտնվում Մենուա արքայի դստերը՝ Թարիրիային պատկանող խաղողի այգին²⁷, որը տնկված էր թերևս արհեստական մի քանի դարավանդների վրա²⁸): Վանա լճի ավազանի ուրարտական ամրոցների պեղումների ժամանակ հայտնաբերվել են գինու մառաններ²⁹:

Միջագետքում բարձր էին գնահատվում նաև Հայկական լեռնաշխարհի այլ շրջանների գինիները: Ասորեստանյան աղբյուրներում հիշատակվում է Ամեդու քաղաքը, որը մասնագետները նույնացնում են Ամիդ-Դիարբեքիի հետ: Ամեդուն եղել է Բիթ-Չամանի երկրի կենտրոնը³⁰: Ասորեստանյան առևտրական բնույթի

Коммуникационная ось “юг-север” в системе внешних связей Армянского нагорья (I тыс. до н.э.), Армянский гуманитарный вестник, 2/3-I, Ереван, 2009, с. 56-58.

²³ Greppin J.A.C., Did the good wines come from Armenia? p. 47-48.

²⁴ Шарашенидзе Дж.М., Клинописная табличка эпохи III династии Ура (документ о скупке импортных благовоний на жертвы при III династии Ура), Вестник древней истории, 1976, N 3, с. 116, 118.

²⁵ Powell M.A., Wine and the vine in Ancient Mesopotamia, p. 113-114.

²⁶ Hoffner H.A., An English-Hittite glossary, Revue Hittite et Asiatique, 1967, t. XXV, Fasc. 80, p. 21. Gorny R.L., Viticulture and Ancient Anatolia, The origins and ancient history of wine, Ed. by McGovern P., Fleming S. and Katz, Amsterdam, 1996, p. 150.

²⁷ Меликишвили Г., Урартские клинообразные надписи, Москва, 1960, N 111. Арутюнян Н.В., Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, с. 103.

²⁸ Пиотровский Б.Б., Ванское царство (Урарту), Москва, 1959, с. 143-144.

²⁹ Çilingiroğlu A., Storerooms, Ayanis I, Ed. by Çilingiroğlu A. and Salvini M., Roma, 2001, p. 67-83. Пиотровский Б.Б., Ванское царство, с. 145. Մանագլեթրտից արևմուտք, Արածանիի ափին տեղադրված ուրարտական Կայալիդերե ամրոցի միջնաբերդում բացված քանիիկ կարասներով գինու մառանի մասին տե՛ս Burney C., A first season of excavations at the Urartian citadel of Kayalidere, Anatolian Studies, Vol. XVI, 1966, p. 83-91.

³⁰ Арутюнян Н.В., Топонимика Урарту, с. 25.

փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Բիթ-Չամանին եղել է գինու միջազգային առևտրի խոշոր կենտրոն: Մի փաստաթղթի համաձայն, այդտեղ գինին վաճառվել է Նինվեում սահմանված շուկայական գնով, որը բավականին բարձր է եղել³¹: Այս փաստը խոսում է այն մասին, որ Բիթ-Չամանին եղել է զարգացած գինեգործությամբ երկիր: Չատկանշական է, որ ասորեստանյան աղբյուրներում պահպանվել են տեղեկություններ այն մասին, որ այդ շրջանի գինին մեծ հռչակ է վայելել ասորեստանյան արքաների մոտ: Այսպես՝ Ասորեստանի Աշուրբանիպալ թագավորի գրադարանում պահպանվել է տասը լավագույն գինիների ցուցակը, որը գլխավորում է Բիթ-Չամանիի հարևանությամբ գտնվող Իզալա երկրի գինին: Ուշագրավ է, որ հաջորդը հռչակավոր սիրիական *Յելբոնի* գինին է³²: Ստացվում է, որ Ասորեստանի արքան Իզալայի գինին գերադասում էր սիրիական հայտնի «բրենդ»-ից: Նինվեից հայտնաբերված մ.թ.ա. VII դարի մի կավե սալիկի արձանագրության համաձայն՝ Ասորեստանի թագուհին Աշշուր աստծու տաճարին նվիրաբերել է Յելբոնի և Իզալայի գինու մեկական սափոր³³:

Այսպիսով, սկսած առնվազն մ.թ.ա. III հազարամյակից Չայկական լեռնաշխարհի գինեգործական շրջանները պետք է ընդգրկված լինեին մերձավորարևելյան գինու առևտրի ոլորտում³⁴: Ակնհայտ է, որ Չարավային Միջագետքի քաղաքները շահավետ շուկա էին հանդիսանում լեռնաշխարհի բարձրորակ խաղողից պատրաստված գինիների սպառման համար, և, ինչպես կարելի է եզրակացնել Յերոդոտոսի վկայությունից³⁵, հայկական գինեգործության համար սպառման այս շուկան պահպանել է իր նշանակությունը նաև հետագայում՝ արքեմենյան շրջանում, երբ Չայաստանում արտադրվող ընտիր գինիները Եփրատով տարվում էին Բաբելոն վաճառքի:

³¹ Lutz H.F., *Viticulture and brewing in the Ancient Orient*, Leipzig, 1922, p. 44-45.

³² Forbes R.J., *Studies in ancient technology*, Vol. III, Leiden, 1965, p. 72.

³³ Stronach D., *The imagery of the wine bowl: Wine in Assyria in the early first millennium BC, The origins and ancient history of wine*, Ed. by McGovern P., Fleming S. and Katz S., Amsterdam, 1996, p. 193, note 9.

³⁴ Greppin J.A.C., *Did the good wines come from Armenia?* p. 48-51.

³⁵ Геродот, *История в девяти книгах*, Пер. и прим. Г.А. Стратановского, Ленинград, 1972, I, 194.

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՅՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՍԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԷԶԵՐԻՑ

Ռաֆիկ Նահապետյան
Երևանի պետական համալսարան

Յովսեփ Օրբելին (1887-1961 թթ.) XX դարի խոշորագույն հայագետներից է: Յայրենական գիտության մեջ նա ճանաչված է նաև որպես նշանավոր արևելագետ, հնագետ, վիճակագրագետ, թանգարանագետ, բանագետ, աղբյուրագետ, պատմաբան, հուշարձանագետ, արվեստաբան: ՅԽՍՀ և ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս է: Օրբելին ոչ միայն ականավոր գիտնական էր, գիտության հմուտ կազմակերպիչ, այլև ակտիվ հասարակական գործիչ¹: Նա միաժամանակ նշանակալի ներդրում է ունեցել նաև հայ ազգագրության՝ իբրև ուրույն գիտության կայացման և զարգացման գործում: Ցավոք, առ այսօր գիտնականի ազգագրական գործունեության վերաբերյալ մեկ հաղորդումից² զատ, այլ ուսումնասիրություններ դեռևս չկան:

Գիտնականը դեռ Պետերբուրգի համալսարանում ուսանելու տարիներին մի քանի հոդված է գրել հայերի, վրացիների և մահմեդական ժողովուրդների արվեստի վերաբերյալ, որոնք գետնովել են Բրոնկհաուզի և Էֆրոնի նոր հանրագիտական բառարանում: 1909 թ. Յ. Օրբելին Պետերբուրգի պատմաբանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Կովկասի ազգագրությունը՝ ըստ դասական (հունական և հռոմեական) հեղինակների տեղեկությունների»: Նրա ազգագրական դիտարկումները հիմնականում վերաբերում են Արևմտյան Յայաստանի Մոկս գավառին, որտեղ նա Ն. Մառի խորհրդով 1911-1912 թթ. գործուղվում է Պետերբուրգի կայսերական գիտությունների ակադեմիայի կողմից: Այստեղ էլ նա գրի է առնում եզակի ազգագրական, բանահյուսական ու բարբառագիտական նյութեր: Նրա՝ Մոկսում կատարած գրառումները առաջինն ու միակն են, որ իրականացվել են դաշտային ուսումնասիրությունների պայմաններում: Ըստ որում՝ գիտնականը շատ էր կարևորում նյութերի բնագրային արժեքի պահպանումը:

Մոկսում կատարած գիտական հետազոտությունների արդյունքները իր կենդանության օրոք լույս չտեսան: 1982 թ. հրատարակվեց միայն դրանց մի փոքր մասը³, որ ընդգրկում էր Մոկսի մասին ազգագրական ակնարկը և գրառված բնագրերի ռուսերեն թարգմանությունները: Ազգագրական ուսումնասիրությունները (Մոկսը և նրա բնակիչները, գավառի 1911-1912 թթ. բնակավայրերի ցուցակը) լույս տեսան միայն

¹ Юзбашян К.Н., Академик Иосиф Абгарович Орбели, Москва, 1964, с. 15-19. Тарле Е.В., Историк-патриот, В кн: И.А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, с. XVIII-XXII. Ղաֆաղարյան Կ.Գ., Յովսեփ Օրբելի, Յայագիտական հետազոտություններ, Ա, Երևան, 1974, էջ 6-19: Յուզբաշյան Կ.Ն., Ակադեմիկոս Յովսեփ Օրբելի, Երևան, 1987. Պետրոսյան Յու.Ի., Ակադեմիկոս Յովսեփ Օրբելի (Ծննդյան 100-ամյակի առթիվ), Պատմաբանասիրական հանդես, N 1, 1987, էջ 3-10: Мегрелидзе И.В., Иосиф Орбели, Тбилиси, 1983. Пиотровский Б.Б., Академик Иосиф Абгарович Орбели. Биографический очерк, В кн: Исследования по истории культуры народов Востока, Сборник в честь академика И.А. Орбели, Москва-Ленинград, 1960. Якубовский А.Ю., Академик И.А. Орбели (к 60-летию со дня рождения), Вестник древней истории, 1947, N 4 և այլն):

² Վարդումյան Դ., Յ. Օրբելու ազգագրական հետազոտությունները Մոկսում, Նոր ազգագրական հանդես, 2005, N Ա, էջ 122-123:

³ Орбели И.А., Фольклор и быт Мокса, Москва, 1982.

հետագայում 2002 թ. հրատարակված «Ընտիր երկերի» 2-րդ հատորի առաջին բաժնում⁴:

Մոկսի աշխարհագրական պայմանները, բնակչությունը և բնակավայրերը.

Մոկսում գիտնականը նյութերը գրառել է 23 հայ և 1 քուրդ՝ հայերեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն լեզուներին տիրապետող բանասացներից: Նրանք հիմնականում տղամարդիկ էին, հիշատակված է նաև կին բանասաց՝ Նազե Շահամիրյան անվամբ, ումից Յ. Օրբելին գրառել է զվարճախոսություններ:

Ըստ Օրբելու՝ Մոկսը XX դարի սկզբին գավառակ էր (կազա) Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Վանի գավառում, Վանա լճի հարավային կողմում, որը հայտնի էր նաև որպես Մեուքուզ, Մյոքուզ, Մոզս, Մոկաց գավառ, Մոկյուս, Մոկսայե, Մոկուս, Մոկք, Մուքուս: Տարածքը մոտավորապես համապատասխանում էր պատմական Մեծ Հայքի Մոկք աշխարհի Մոկք-Առանձնակ գավառին: Կենտրոնը Մոկս գյուղաքաղաքն էր: Գավառի Մոկս (Մոզք, Մոզս) անվանման ժողովրդական ստուգաբանության վերաբերյալ Օրբելին բերում է հետևյալ ավանդությունը. «Մանուկ Զրիստոսին խոնարհվելուց հետո երեք մոզերը վերադառնում են Բեթղեհեմից: Նրանցից մեկը՝ Գասպարը, ճանապարհին հիվանդանում, մահանում ու թաղվում է այնտեղ: Այդ վայրում հետագայում (1408թ.) կառուցվում է Սուրբ Գրիգոր Ամենափրկիչ եկեղեցին, իսկ երկիրը կոչվում է Մոզք (Մոզս)» (ԸԵ, 8): Ունի խիստ լեռնային ռելիեֆ, խմելու և ոռոգելու առատ ջուր, զով ու առողջարար կլիմա, սաղարթախիտ անտառներ, փարթամ արոտավայրեր, բուսական ու կենդանական հարուստ աշխարհ: Գավառակի երկարությունը մոտ 30 կմ է, լայնությունը՝ 25 կմ: Նրան եզերում են՝ հյուսիսից Եղերովի, արևելքից՝ Կոռաշապահի և Առնոսի, արևմուտքից՝ Կառկառի, իսկ հարավից Բարվարի լեռները: Բաժանված էր յոթ գլխավոր գյուղախմբերի՝ Բառազային, Հառնջուզային, Հառնանցային, Տալանից ձոր, Տինխազային, Տուրկազային, Փութկուզային: Խիտ լեռնային այս գավառակը ներկայանում է տեղ-տեղ գետերի ընթացքով ձգվող հովիտներով:

Մոկս գյուղաքաղաքը Մոկս գավառի կենտրոնն է, ընկած է Վան քաղաքից հարավ-արևմուտք՝ 60 կմ հեռավորության վրա, Մոկս կամ Մոկաց ջուր գետի աջ և ձախ ափերին, լեռան ստորոտում՝ 1650 մ բարձրության վրա: Իսկ շրջակա լեռները՝ 3-4 հազար մետր բարձրություն ունեն, գագաթները կլոր տարին սառցապատ են, շուրջ-բոլորը անդնդախոր կիրճեր են, անանցանելի թավ անտառներ, տարվա 5-6 ամիսը կտրված է «աշխարհից», ասես փակ ամրոց լինի:

Յ. Օրբելին Մոկս գյուղաքաղաքը նկարագրել է իր դիրքով, շրջակա միջավայրով, բնակչության կենցաղամշակութային պատկերով: Ըստ այդմ՝ գյուղաքաղաքը բաղկացած էր հինգ թաղամասից՝ **Քյաղքը** թաղ (Քաղաքի թաղ), **Անջղոնց** (Անճղոնց) թաղ, **Ապրրիսամանց** (Աբրահամենց) թաղ, **Տյաշտը** (Դաշտ) թաղ և **Մանդականց** (Մատկունց)՝ հայ և քուրդ բնակչությամբ: Դժվար չէ նկատել, որ քաղաքի 3 թաղամասերը կրում են ազգակցական, տոհմական անվանումներ, ինչը խորհրդանշում է նրանց բնակիչների ազգակից ընտանիքներով համատեղ բնակվելու սովորույթի մասին, իսկ երկու թաղամասերի անվանումները պայմանավորված են եղել տեղանքի աշխարհագրական դիրքով:

⁴ Օրբելի И.А., Избранные труды в двух томах, том II, Ереван, 2002 (այսուհետ՝ ԸԵ, էջը):

Սոկսի կենտրոնական Քյաղքի թաղում էին շուկան, խանութների շարքը, դայֆախանաները (սրճարան), կառավարական տունը, որը «կունախ» էին անվանում: Բնակվում էին 20 տուն հայեր և 4-5 տուն թուրք պաշտոնյաներ: Այստեղ էր գտնվում Սուրբ Հովհաննես եկեղեցին:

Անջղոնց թաղում էին գտնվում արհեստանոցներն ու իջևանատունը (խանը): Թաղում կար 15 տուն, բնակիչները հիմնականում արհեստավորներ էին (սուկար, դարբին, պայտար), 4 ընտանիք զբաղվում էր առևտրով: Նրանից վերև՝ Ջերմուկ կոչված աղբյուրի մոտ, 1908 թ. կառուցվել է կենտրոնական հայկական դպրոցը: Թաղի եկեղեցին կոչվում էր Սուրբ Աստվածածին:

Տյաշտի թաղի բնակչությունը կազմված էր 42 տնտեսությունից: Նրանց զբաղմունքն էր շալագործությունը, հողագործությունը և անասնապահությունը: Թաղի եկեղեցին կոչվում էր Սուրբ Հակոբ: Այն գտնվում էր քաղաքից դուրս՝ գերեզմանոցի հարևանությամբ:

Ապըրխամանց թաղում կար 20-25 տուն: Բնակչությունը զբաղվում էր արհեստագործությամբ (շալագործություն, կտավագործություն), առևտրով, անասնապահությամբ և հողագործությամբ: Այն ևս ուներ եկեղեցի:

Մանդականցը առանձին թաղ էր կազմում Մոկս գետակի ձախ ափին՝ սարալանջի վրա, ընդամենը 7 տուն, որտեղ ապրում էին ջրաղացպանների ընտանիքները: Գետի ափին, կողք-կողքի կար 5 ջրաղաց և 1 ձիթանոց⁵:

Սոկսց ջուր գետի ստորին հոսանքի աջ կողմում՝ Դալան և Մարմախ կոչվող կիրճերի միջև ևս 4 գյուղ կար, իսկ մնացած գյուղերն ու ագարակները տեղաբաշխված էին հարևան կիրճերի ուղղությամբ: Ընդհանուր առմամբ Մոկս գավառի խոշոր բնակավայրերը 75-ն էին, ևս 5 ագարակներ ունեին 2-3 տնտեսություններ: Գյուղերը գտնվում էին 8 առանձին ձորակներում (կիրճերում): Նրանցից 3-ը մոտ էին Մոկս գյուղաքաղաքին և մասնակցում էին քաղաքի տնտեսական և առևտրական կյանքին: Հայաբնակ այդ գյուղերից մեկի մոտ գտնվում էին միջնադարյան բերդի ավերակները: Մոկսց ջուր գետի վրա դեռ XVI դարում (1553թ.) կամուրջ էր կառուցվել առևտրով զբաղվող երկու եղբայրների՝ Խոջա Մուրադի և Խոջա Կարապետի (Զերապետ) կողմից, որոնք այդ մասին կամրջի պատին թողել են արձանագրություն (ԸԵ, ՄօԿԵ, Էջ 1-34): Ընդ որում, դրանում հիշատակված է նաև, որ այն կառուցվել է Մոկսի դաժան կառավարիչ Ավդալի ժամանակներում:

Մոկս գյուղաքաղաքի 5 թաղամասերն, ինչպես ասվեց, ունեին իրենց եկեղեցիները, որոնցից կանգուն էին մնացել Անջղոնց Ս. Աստվածածինը (XIII դ., վերանորոգված 1676թ.), Տյաշտ (Դաշտ) թաղամասի Ս. Հակոբը (XIV դ.), որը ուշ միջնադարում եղել է գրչության նշանավոր կենտրոն: Մոկսց Ս. Խաչ վանքը, որ կոչվել է նաև Ս. Կանանց վանք (ըստ ավանդության հիմնել է Հռիփսիմեն), հիշատակվում է X դարից: Այն մշակութային կարևոր կենտրոն է եղել XIV-XVI դդ.: Վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, ըստ արձանագրության, կառուցվել է 1408-ին, ուներ սրբատաշ բազալտից կառուցված XVII դ. ժամատուն՝: Դրանք միանման կառուցված կառույցներ էին: Մոկս գյուղաքաղաքի մոտ էր գտնվում նաև Մոկսց Ս. Գևորգ, ավելի գործածական՝ Փուլթու Ս. Գևորգ և Մոկսց Ամենափրկիչ վանքերը: Այն կառուցվել է 1887 թ.: Ս. Գևորգի

⁵ Մոկսի մասին այս տեղեկությունները քաղել ենք Ալ. Դարբինյանի «Մոկսի ազգագրական և բնահայրենական նյութեր» ձեռագիր աշխատությունից (VII և VIII մաս), տե՛ս ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, ՀԱԻԱԲԱ, թղթ. N 24, գործ N 26, 27:

գերեզմանը քրդերը կոչում էին Միր-խասանի: Ձմռանը եկեղեցու համալիրի մի տեղից մյուսի գնալը հնարավոր էր միայն ձյան տակով մարդաբոյ երկար թունել բացելով⁶:

Մոկաց Ամենափրկիչ վանքը, որ հիշատակվել է XIII դարից, կառուցվել է Մոկս գյուղաքաղաքից արևելք՝ Ամնջո ձորում, լեռան լանջին: Այն XIII-XVI դդ. եղել է Վասպուրականի նշանավոր գրչության կենտրոններից մեկը: Նրա գլխավոր Ս. Աստվածածին եկեղեցին վերակառուցվել է 1570-ին Յովսեփ ճարտարապետի ձեռքով: Մոկսի մոտ՝ բարձր լեռան գագաթին, ինչպես ասվեց, պահպանված են հին բերդի ավերակները՝ իր աշտարակով: Գյուղաքաղաքի հարավային կողմում կար մի քարածայր՝ Արծվաքար անվամբ, որտեղ իբր բնակվում են երկնային էակներ: Մոկս գավառի Ամնոս լեռան ստորոտին է գտնվում Ս. Վարդանի կամ Ս. Վարդանանց վանքը (ԸԵ, էջ 7-8):

Գիտնականը «Մոկսի բանահյուսությունը և կենցաղը» գրքի հավելվածում գտնել է 19 լուսանկար, պատկերել է բնական տեսարաններ, շինություններ, տարազների նմուշներ, տապանաքարեր, նաև մանուկների հետ հայուհիների լուսանկարներ, ապա Մուրթուլա բեկին՝ իր վարչակազմով:

Տնտեսական կենցաղը և նյութական մշակույթը: Երկրագործություն.

Մոկս գավառակի նստակյաց երկրագործական կյանք վարող հայ բնակչությունը, ըստ Յ. Օրբելու գրառումների, կազմել է 672 տուն⁷, իսկ քրդերը, որոնք սուննի մահմեդականներ էին՝ 640, բացի այդ, 1-2 թաղամասերում ապրում էին նաև զնչու-բոջաների (յճան) 4-5 ընտանիք և ամբողջ գավառում՝ 4-5 թուրք աստիճանավորների ընտանիքներ (ԸԵ, Мокс, էջ 7-9):

Մոկս գյուղաքաղաքը XX դ. սկզբին ուներ 2000 բնակիչ, որի գերակշիռ մասը հայեր էին: Մոկսի հայաբնակ 49 բնակավայրերի ավելի քան 900 ընտանիք տեղահանվել է 1915 թ.: Նրանց մեծ մասը զոհվել է բռնագաղթի ճանապարհին: Փրկվածները հիմնականում անցել են Արևելյան Հայաստան և բնակություն հաստատել Թալինի, Աշտարակի շրջաններում, Սևանի ավազանում և այլուր: Տեղացի հայերին քրդերն անվանում էին հոռոմներ՝ կաթոլիկ դավանանքի պատճառով, իսկ հայերը քրդերին՝ կարմրագլուխներ՝ կարմիր գլխարկ կրելու համար:

Գիտնականը նկարագրել է հայ բնակչության՝ որպես նստակյաց երկրագործների և քրդերի՝ որպես անասնապահների զբաղմունքները՝ հողագործություն, անասնապահություն, տնայնագործություն, արհեստները, փոխադրամիջոցները, բնակավայրերն ու բնակարանները, կենցաղը, տարազը և այլն: Նստակյաց կյանք վարող հայ և քուրդ բնակչությունը համատեղ ապրում էր Մոկսի գյուղերում և ագարակներում: Նրանք ապրում էին առանձին թաղամասերում: Համատեղ կյանքը շատ նմանություններ էր առաջացրել բնակարանի, հագուստի, կյանքի այլ կողմերի վերաբերյալ (ԸԵ, Мокс, էջ 10):

⁶ «Փոլսի Սուրբ Գևորգ» - ըստ ժողովրդական-եկեղեցական ավանդության՝ այսպես է կոչվել ս. Գևորգի գլուխը պուտուկի (կճուճի) մեջ դրած բերելու և այդ սրբավայրի հիմքում թաղելու պատճառով: Սրբավայրը նվիրական է եղել ու սիրելի տեղի թե՛ հայ և թե՛ քուրդ բնակչության շրջանում: Այն, ըստ ավանդության, կառուցվել է Միր Հասան անունով իշխանի կողմից, որը որսի է դուրս եկել Մոկսաց լեռներում՝ մոլորվելով խիտ և թավուտ անտառներում: Նա օգնության է կանչել ս. Գևորգին, որը օգնել և փրկել է նրան: Իշխանը նրա պատվին այդ վայրում կառուցել է սրբատեղի, որը հետագայում վերածվել է վանական համալիրի և դարձել Մոկաց լեռներում, մանավանդ ձմռանը, մոլորված ուխտավորների և ճանապարհորդների համար պատսպարան ու ժամանակավոր կացարան:

⁷ XX դարի սկզբներին Մոկսի 49 բնակավայրերի հայ բնակչությունը կազմված է եղել ավելի քան 900 ընտանիքից (տե՛ս ՀՍՀ, հ. 7, Երևան, 1981, էջ 697):

Բնակլիմայական բացառիկ դժվարին պայմաններում հայ բնակչությունը վարում էր աշխատատար երկրագործաանասնապահական համալիր տնտեսաձև: Լեռնային անտառածածկ շրջաններում ձմռան 5-6 ամիս տևողության պայմաններում հիմնականում մշակում էին այնպիսի հացաբույսեր, որոնք կարող էին ապահովել բարձր բերք: Դրանցից էին կորեկը՝ իր բազմաթիվ՝ կարմիր, սև, ճերմակ տեսակներով, տարեկանը, հաճարը, գարին, ցորենը: Մշակում էին նաև խաղող, բամբակ, տեսակ-տեսակ պտղատու ծառեր, ձիթատու բույսերից՝ կտավատ, նաև բոստանային կուլտուրաներ: Ձմեռը դահուկ-սահնակներով, գարնանը՝ շալակի կողովներով, յուրաքանչյուր տուն իր ունեցած գոմաղբը տեղափոխում էր արտերը՝ որպես պարարտանյութ: Գարնանը, նախքան վարուցանքը, անասուններին արոտ էին հանում արտերի վրայով: Ոչխարի մեզը, անասունների գոմաղբը հողի պարարտացման ամենաուժեղ միջոցն էին համարում, ուստի այստեղ և շրջակա վայրերում այդ եղանակը գործածում էին գրեթե բոլոր ընտանիքները:

Այստեղ լեռնային տեղանքի պատճառով մշակաբույսերը պահանջում էին մեծ խնամք, լարված ու դժվարին աշխատանք: Սակավահողության պատճառով լանջային տեղանքներում ստեղծում էին դարավանդային արտեր, իսկ անտառածածկ հատվածներում կիրառում էին անտառահատահրկիզային համակարգը, որ բնորոշ էր դարձել լեռնային հայ բնակչության տնտեսական կենցաղում: Այս առումով Մոկս գավառի բնական պայմանների և տնտեսական կյանքի շատ կողմեր նման էին լեռնային Սասունին⁸: Հովսեփ Օրբելին իր դիտարկումներում չի անդրադարձել երկրագործական աշխատանքային գործիքներին, վարման եղանակներին (ԸԵ, ՄօԿՏ, Էջ 9-35): Այստեղ, ինչպես և հարևան Աղձնիքում և այլուր ցանքը կատարել են միայն արորով և մի զույգ եզով: Ըստ Վ. Բոդյանի հետազոտությունների՝ Միջագետքին հարող հայկական բոլոր ազգագրական շրջաններում՝ Ծոփք-Աղձնիքում, գուցե նաև Կորճայքում (այդ թվում նաև՝ Մոկքում - Ռ.Ն.) գութան չի օգտագործվել⁹: Մոկսի տարածաշրջանում գյուղատնտեսական տեխնիկական չափազանց պարզունակ է եղել վարը կատարվել է պարզունակ արորով, հունձը կատարվել է մանգաղով, գերանդի գործածելու սովորություն չկար, կախումը՝ անասունների ոտքերի տրորման՝ գոռի կամ կոռի համակարգով: Աշխատանքը կատարելիս 3-5, երբեմն էլ 6-10 եզ ու արջառ կողք կողքի պահած, վզները հյուսում, միացնում էին երկար պարանով կամ թե գոռի հատուկ շղթայով, անասունների բերանները կապում էին ուռնու թարմ ճյուղերով: Կողք կողքի, միմյանց կապված, շարքով պտտեցում էին կալում՝ կենտրոնում կանգնած կամ տեղում պտտվող եզան շուրջը: Կենտրոնինը, որ միայն առանցքի շուրջն էր պտտվում, կոչվում էր **բընդոր**, ծայրերին լծվածը՝ **սարդորի եզ**, որոնք ամենից ավելի արագ էին պտտվում: Կոռը քշողը օրվա մեջ մի քանի անգամ անասունների խումբը մինչև կալման ավարտը աջից ձախ, ձախից աջ էր դարձնում և անասունների դիրքն ու տեղն էր փոխում՝ չհոգնեցնելու համար: Այստեղ **կամը** որպես կախող գործիք չէր գործածվում: Կոռիով կալումը կատարվում էր յուրաքանչյուր տան բակում: Ամեն տան կալսատեղը տան առջև եղած հարթ հրապարակն էր կամ ներքևի հարևանի կտուրը: Նրան կից կառուցված էր կալտունը՝ երեք պատերով, թեք ծածկով, առջևը բաց, որտեղ լցնում էին հարդը կալտունը ավարտվելուց հետո, իսկ անձրևի դեպքում

⁸ Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ), Պատմաազգագրական ուսումնասիրություն Երևան, 2004, էջ 30-34:

⁹ Բոդյան Վ., Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 212:

ամբողջ կալը: Կալատանը՝ կալը նայող կողմն էր բաց, իսկ հատակը կալի մակերեսին էր հավասար: Բերքահավաքի ժամանակ, օրանը (կալավելու համար հնձած հացահատիկ) խուրձ-խուրձ արված շալակով էին տեղափոխում կալատեղ, որը պետք է լավ պնդացրած հատակ ունենար: Կալսումը վերջանալուց հետո եղաններով՝ **հորսելիներով** և փայտե թիերով բոլոր կողմերից ծեծած օրանը հավաքում, կիտում էին կալի կենտրոնում, դարձնում թեղ (կալսված հարդախառն հացահատիկի կույտ) և ձեռնամուխ լինում հատիկն ու հարողը երնելուն՝ քամուն տալուն՝ հարողը բերքից առանձնացնելու համար, որովհետև քամիար մեքենան այստեղ մուտք չէր գործել (ԸԵ, Մօճ, էջ 12): Հարողը առանձնացնում և լցնում էին կից կառույցի՝ կալատան մեջ, իսկ կորեկը, գարին կամ ցորենը, առանձնացնելով հարդից, մաղում էին տարբեր մեծության անցքեր ունեցող մաղերով: Նախ՝ ծանծախառն հատիկը մաղում էին անցքերը մեծ՝ **սղռատ** մաղով, ապա՝ ավելի փոքր անցքերով՝ **քարմաղով** և քարից ու հարդից մաքրվածը մաղում էին **փոքեմաղով** և այնուհետև՝ պահեստավորում այծի մազից հյուսված պարկերում՝ **ջվալներում**: Այս նույն եղանակը գրեթե նույնությամբ կատարվում էր նաև Սասունում¹⁰:

Ուշագրավ են վարուցանքը հաջողությամբ իրագործելուն ուղղված ժողովրդական հավատալիքների վերաբերյալ գիտնականի գրառումները: Այսպես, տևական ոչ անձրևային եղանակի դեպքում կանայք ավանակին տանում էին աղբյուրի կամ գետակի մոտ, լողացնում, հետո կանացից մեկը հրացանը ձեռքին հեծնում էր ավանակին՝ դեմքով դեպի պոչը և այն ձեռքն առած քշում էր դեպի վարատեղ, որտեղ էլ օդ էր կրակում կենդանի և անկենդան էակներին՝ չարքերին վախեցնելու ու փախցնելու համար: Այդպես ակնկալում էին եղանակի փոփոխություն և անձրև: Մեկ այլ հավատալիքի համաձայն՝ գիշերը հայ տղամարդիկ գնում էին քրդերի, քրդերը՝ հայերի գերեզմանները, իրենց խոնջանները՝ գոտիները, կապում էին գերեզմանաքարին, հայկական գերեզմանախաչքարին և ապա գոտին գլորում էին մոտակա գետակը: Այդ պահին նրանցից մեկն անպայման պետք է շան նման հաչեր (ԸԵ, Մօճ, էջ 33):

Գյուղատնտեսական տեխնիկայի պարզունակությունը, արտադրողական ուժերի զարգացման ցածր աստիճանը մարդուն կախման մեջ էին պահում նաև բնությունից, շրջապատող աշխարհագրական միջավայրից: Ուստի այստեղ ևս, ինչպես հայկական մյուս պատմական գավառներում, բավարար քանակությամբ կենսամթերքների արտադրությունը, բնակարանային ու արտադրական կառույցների շինարարությունը, բնության տարերքի դեմ պայքարելն անհնար կլիներ առանց համայնքի անդամների և ընտանիքների կոլեկտիվ փոխադարձ օգնության կազմակերպման: Կիրառվում էին աշխատանքային համագործակցության տարբեր ձևեր. հայ գյուղացիական ընտանիքները համախմբում էին աշխատուժը և արտադրամիջոցները: Խմբային աշխատանքները իրականացնում էին հերթականությամբ:

Իրողությունն է, որ Մոկսում քրդերի որոշ մասն անցել էր նստակեցության, այդուհանդերձ, բացառապես երկրագործությամբ զբաղվողները հայերն էին: Սակավաթիվ թուրք բնակչությունը բնակվում էր Մոկս գյուղաքաղաքում, իսկ քրդերը հիմնականում զբաղվում էին խաշնարածությամբ: Նրանց հիմնական զանգվածները սեզոնային վրանաբնակ վաչկատուններ էին:

Անասնապահություն. Ալպիական հարուստ մարգագետինների առկայությունը նպաստում էր արոտային անասնապահության, հատկապես խաշնարածության

¹⁰ Նահապետյան Ռ., Աղձնիք. պատմաագագրական ակնարկ, Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա, էջ 162-177 և հավելվածը:

զարգացմանը: Այստեղ կիրառվում էր անասնապահության նստակյաց համակարգը՝ ձմռանը մսուրային, ամռանը՝ արոտավայրային խնամքով: Ձմռան երկարատևության պատճառով անասունները ենթարկվում էին մսուրային խնամքի շուրջ 5-6 ամիս տևողությամբ:

Անասնապահությունը գավառի հիմնական զբաղմունքն էր: Գիտնականի գրառումների համաձայն՝ անասնապահության մեջ գերակշռում էր ոչխարաբուծությունը, այծաբուծությունը, դրանցով պայմանավորված՝ կաթնատնտեսությունը, բրդավալությունը, ջուլհակությունը, շալագործությունը, գգրարությունը, որոնք Մոկս գավառի հայ բնակչության հիմնական զբաղմունքներն էին: Մոկսի հայությունը կաթնատու խոշոր եղջերավոր անասուններին պահում էր ուշադրության կենտրոնում, նրանց նկատմամբ ցուցաբերում մշտական խնամք և հոգատարություն: Գիտնականը գրառել է նաև անասնապահությանն առնչվող հավատալիքներ: Դրանցից մեկի համաձայն՝ տանտիրուհուն չինազանդվող կովին հնազանդեցնելու նպատակով նրա մեջքին բարձում էին հաց թխելու գործածական պարագաներ՝ գրտնակ, բաթաթ, ակիշ և այլն, և քշում արոտավայր: Երեկոյան կովի ետևից գնում էր հարևանը՝ տուն վերադարձնելու համար: Հաց թխելու պարագաները, ըստ տեղացիների պատկերացումների, կովին «խելքի էին բերում» (ԸԵ, ՄօԿՍ, Էջ 17-18): Մեկ այլ հավատալիքի համաձայն՝ հավին թուխս դնելիս ածան հավերի գլխաքանակը ապահովելու համար երկու աղջիկ թխսին նստեցնում էին 11 ձվերի վրա, թխսի մի կողմում նստում էր մեկ տղա երեխա, մյուս կողմում 10 աղջիկ երեխա, որպեսզի 11 ձվից մեկը լիներ որձակ, մնացած տասը՝ ածան հավ (ԸԵ, ՄօԿՍ, Էջ 17-18):

3. Օրբելին ակնարկներ ունի Մոկսի վաչկատուն կյանք վարող քրդերի վերաբերյալ: Ըստ նրա նստակյաց կյանք վարող քրդերից վաչկատունները տարբերվում էին թե՛ կյանքի պայմաններով, վարքով, սովորույթներով և թե՛ բարբառով: Մոկսի հարավային վաչկատուն Բոհտանի Ձեգիրեի քրդերի 200 ընտանիք Մոկսի արոտավայրերն էին բարձրանում մայիս ամսից՝ իրենց անասունների հոտերով՝ 40.000 ոչխար, 6.000 խոշոր եղջերավոր անասուն, 1000 ջորի, 200 ձի և այլն: Այստեղ էին հաստատվում նաև Սղերդի քրդերի 300 ընտանիք՝ իրենց բազմաքանակ հոտերով (ԸԵ, ՄօԿՍ, Էջ 9):

Արհեստագործություն. Մոկաց լեռնաշխարհի հայ բնակչության հիմնական արհեստներն էին՝ շալագործությունը, գգրարությունը, թաղիքագործությունը, ջուլհակությունը: Մոկսի և նրա հարևան գավառների՝ Շատախի, Գավաշի հայ բնակչության կենցաղում լայն տարածում ուներ բրդի մշակումը, բուրդ գգելու՝ գգրության և բրդի մնացորդներից թաղիք (քեչա) գգելու արհեստները՝ թաղիքագործությունը: Մոկացի թափառաշրջիկ գգրարներն ու թաղիքագործները հայրենի եզերքից դուրս էին գալիս արտազևա աշխատանքի աշնան սկզբներին խմբեր կազմած՝ տարածվելով Թուրքիայի, Կովկասի, Հարավային Ռուսաստանի հայաբնակ շրջաններում: Սովորաբար Մոկացի գգրարներն ու թաղիքագործներն արտազևա աշխատանքի էին մեկնում մինչև առաջին ձյան գալը՝ հոկտեմբեր ամսին, և վերադառնում էին ապրիլին, որովհետև ձմռանը ճանապարհները փակվում էին և լեռնանցքներում մոլեգնում էր փոթորիկը: Մոկսի և շրջակա գավառների աշխարհագրական դիրքն ու տնտեսական զբաղմունքները նկարագրել է նաև Գարեգին Սրվանձտյանցն իր «Համով-հոտով» աշխատության մեջ¹¹:

¹¹ Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, Էջ 402:

Ընկույզի պատյանից ստանում էին ներկ, որով ներկում էին բրոյա գործվածքները (ԸԵ, Материалы экспедиции 1911-1912 гг. по этнографии и фольклору Мокса, էջ 3): Մոկսում շատ գնահատելի էին նախշագարդ շալե գոտիները: Ըստ Օրբելու՝ այստեղ բրոյա գործվածքեղենը աչքի էր ընկնում որակով, նախշագարդման բարձր արվեստով, վարպետությամբ: Տարածված էր նաև հարավային հարևան գավառներից ներկրվող բամբակի հումքով իրականացվող կտավագործությունը և քաթանի արտադրությունը: Տղամարդու զգեստեղենի մեջ գերակշռում էին շալից պատրաստված շավարը, վերնագգեստները:

Չաղորդակցության միջոցներ. Բնակչությունը կտրված էր արտաքին աշխարհից՝ ճանապարհների բացակայության, տեղադիրքի պատճառով: Ամենուրեք բարձրաբերձ լեռներ էին, կիրճեր, ձորեր, ինչի հետևանքով անհնար էր անիվավոր փոխադրամիջոցների կիրառումը, ուստի բեռներն ու բերքը տեղափոխում էին մարդիկ՝ իրենց ուներին բարձած կամ շալակով, որոշ դեպքերում՝ ձեռքի մանր անիվավոր քարշակներով: Սայլը կամ կառքը անծանոթ փոխադրամիջոց էր՝ այն կիրառելու անհնարինության պատճառով:

Չաղորդակցությունը այստեղ իրագործվում էր նեղ արահետներով, որոնք ձգվում էին նեղ կիրճերի եզրով, հետևաբար բեռները մեծ մասամբ տեղափոխում էին ոչ թե գրաստներով, այլ շալակով, որովհետև, ինչպես վկայում են մատենագիրները, «...լերինս բարձրաբերձս և փապարս անտառախիտ ունի¹²»: Վերոհիշյալ փաստը հիմք է ծառայել, որ մոկացիները նորածին տղայի օրորոցում պարանի կտոր դնեին և մաղթեին, որ լավ բեռնակիր լինի (ԸԵ, Мокс, էջ 7): Մոկսն արտաքին աշխարհի հետ կապվում էր Շատախի, Առնուսի, Նեմրանի և Եղերովի լեռնանցքներով: Վերջինիս ամենաբարձր կետում՝ Մոկս գյուղաքաղաքի շրջակա երկու կիրճերի միջև, մի հարթության վրա գտնվում էր հռչակավոր Փուխլու Սուրբ Գևորգ սրբավայրը՝ ճանապարհորդների օթևանը, որտեղ նրանց անվճար սնունդ և ապրելու պայմաններ էր տրամադրվում: Երբեմն ճանապարհորդներն օրերով մնում էին արգելափակված միջև Սուրբ Գևորգի հռչակավոր սև աքաղաղը կանչելով: Աքաղաղի կանչը գուշակում էր լավ եղանակ, ու գրավական էր, որ մարդիկ անփորձանք կհաղթահարեն լեռնանցքը (ԸԵ, Мокс, էջ 6-7)¹³:

Ձյան վրայով անվտանգ քայլելու համար հագնում էին թաղիքե, կաշվե տրեխներ, գործածում լական՝ ութածև մի շրջանագծով տախտակ, 3-4 սմ լայնությամբ, որը դրսից հյուսված է կաշվե կամ կանեփի ամուր թելերով, հագնում էին տրեխի տակից (ԸԵ, Мокс, էջ 7) և ազատ քայլում թարմ ձյան վրայով՝ առանց խրվելու:

Նյութական մշակույթ: Բնակավայր, բնակարան. Մոկս գավառակի գյուղերը մեծ մասամբ տեղավորված էին լեռնալանջերին, որոնց տների պատերից մեկը խրված էր լեռնալանջի մեջ և, բնական պայմանների թելադրանքով՝ դրանք բազմահարկ էին ու դարավանդային պատկեր էին ներկայացնում. մի տան կտուրը մյուսի համար բակ էր ծառայում, ինչը, գիտնականի բնութագրմամբ՝ բնորոշ էր Դաղստանին: Տները հիմնականում երկհարկ, երբեմն էլ եռահարկ էին: Առաջին հարկը կիսագետնափոր էր, որտեղ տեղավորված էին գոմը, թոնրատունը, տնտեսական նշանակության այլ կառույցներ: Պատերը կավե ամուր աղյուսներից էր շարվում: Թոնրատունը կոչվում էր **տան-տուն**, իսկ քրդերեն՝ **մալե-մալե**: Չայկական տան-տուն հարկաբաժնում

¹² Թովմա Արծրունի, Պատմության Արծրունեաց, Երևան, 1978, էջ 314:

¹³ Գ. Սրվանձոյանց, Երկեր, հ. 1, էջ 402:

երկու թռիկի էր տեղադրվում մեկը հաց թխելու, որտեղ էլ կատարվում էին նաև ծիսական արարողակարգերը, մյուսը՝ ամենօրյա կենցաղային նպատակներով, այդ թվում՝ ճաշ պատրաստելու համար: Երբեմն նաև երկրորդ հարկում էին տեղադրում թռիկի՝ փայտե քառակուսի կարկասի մեջ, ներսից և դրսից կավե շաղախով երեսպատված: Դրանք կավե հաստ շուրթերով թռիկիներ էին: Բացի թռիկիներից, գոյություն ուներ նաև բաց կրակարան-օջախ՝ **հանգուլթ**: Օրբելին այցելության ժամանակ հայկական տներում նկատել է ռուսական երկաթե վառարաններ, որոնց ծուխը խողովակներով դուրս էին հանում: Դրանք պատրաստվում էին Վանում կամ էլ արտագնա աշխատողները բերում էին Ռուսաստանից: Երկրորդ հարկը շեռուցվում էր հիմնականում հանգուլթով, թռիկի կրակով: Երկրորդ հարկում էին տեղավորված հյուրասենյակն ու ննջարանները: Բնակելի և օժանդակ կառույցները հարմարեցված էին այնպես, որ ձմռանը, հատկապես տղամարդկանց արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով կանայք և երեխաները հեշտությամբ օգտվեին թե՛ վառելիքից, թե՛ մառաններից ու անասնակերով լեցուն մարագներից և թե՛ հոգային անասունների մասին (ԸԵ, Մօսկ, էջ 11):

Մոկսի գավառում ազգակիցների տները հնարավորինս միմյանց կից էին կառուցվում՝ տնտեսական փոխօգնության և ինքնապաշտպանության կազմակերպման անհրաժեշտությամբ պայմանավորված: Արյունակից ազգականների դրկից տները միմյանց մեջ արագ հաղորդակցվելու նպատակով ակնատ՝ փոքրիկ պատուհաններ կամ նեղլիկ դռներ են ունեցել: Դրանց միջոցով միմյանց էին փոխանցում կրակը՝ թռիկիը վառելու համար կամ էլ ուրախառիթ և բոթաբեր լուրեր¹⁴:

Տների ծածկը հարթ էր, գերանակապ, վրան բարակ հեծաններով (մարթակ) շարվածքով, սրանց վրա՝ ծղոտի և ծառի ճյուղերի փովածքով, սրանց վրա՝ տերև, կորեկի փուք, վրան ցեխ, ապա կավե հաստ շերտով, որն ամրացնում, պնդացնում էին կաղնու փայտի ծանր գլանով կամ լողքարով: Ամեն տարի այն պնդացվում, ամրացվում էր լողքարով, աղաջրով: Պատերը պետք է ունենային **ցվիք**՝ ջրհորդան:

Բնակարանի ներսույթը. Այստեղ բնակարանների ծածկը, հատակը, սյուները, դռնն ու պատուհանները թանկարժեք ընկույզի փայտից էին: Տները ներսից ընկույզի հաստ տախտակներով էին երեսպատվում: Սպիտակեղենի և անկողնու համար հիմնական կահույք էին ծառայում պատամիջի պահարանները, պատերի երկայնքով արված թարեքները, իսկ արտահագուստ զգեստեղենը տեղավորում էին սնդուկներում (ԸԵ, Մօսկ, էջ 12):

Տան ընդհանուր մուտքը մեկ դռնից էր: Այն ընկույզի փայտից էր՝ հաստ, ու ամուր, երկաթե կախովի կողպեքով կամ էլ առավել տարածված փայտե շարժական փականով: Փայտե փականները կոչվում էին **գրիռա**, որն ուներ կրիայի ձև:

Տան ծածկը հենվում է սյուների վրա. խոյակներն ամրացվում էին հորիզոնական գերաններով, որոնք հենվում էին քարե ամուր խարիսխների վրա: Կթու, լծկան, մանր եղջերավոր անասունները միմյանցից առանձնացվում էին ճիպոտահյուս միջնորմ պատերով, նաև մուրքներով՝ անասունների գլուխները տան մեջ դասավորությամբ:

Տան առաջին հարկի ներսից երկրորդ հարկ բարձրանում էին աստիճաններով: Այն ներկայացնում էր յուրատեսակ ամրոց: Դրանք բնակելի և տնտեսական նշանակության համակառույցներ էին, որոնց առաջին հարկը, ինչպես ասվեց, կթու և լծկան անասուններին էր հատկացվում, երկրորդը մարդկանց բնակեցման համար էր,

¹⁴ Այս մասին տե՛ս նաև Բարսեղյան Ա., Մոկաց ազգագրական նյութեր, մաս. 1 (ձեռագիր), էջ 119-121 (տե՛ս ՅԱԻԱԲԱ, թղթ. 8, գործ. 14):

երրորդ հարկը, որ կոչվում էր վերնահարկ՝ հյուրասենյակ օդան էր, որի մուտքը դրսից էր՝ լեռան լանջով բարձրացող աստիճաններով: Լուսավորությունը ապահովում էին կամ կտուրից բացվող երդիկով, կամ էլ երկրորդ և երրորդ հարկերում՝ փոքրիկ շքակապտուհաններով, որոնք ծածկվում էին ընկույզի յուղով պատված թղթով: Հարձակման ենթարկվելիս շքակապտուհաններից դուրս էին հանվում հրացանների փողերը (ԸԵ, ՄօԿԵ, Էջ 11-12): Նման շենքերը՝ շքակապտուհաններով և վերնահարկով, բնորոշ են եղել նաև Սասունին¹⁵: Ե՛վ Մոկս գավառում, և՛ Սասունում նման երկհարկ կամ եռահարկ շենքերը կոչվում էին **քօշկ**՝ պալատ նշանակությամբ: Գիշերային լուսավորությունը ապահովվում էր կավե ձեթաճրագներով, որ ամրացվում էին պատերին կամ կենտրոնական սյանը: Շարժական լապտեր էին ծառայում տնային արտադրության մոմե ճրագները՝ բրոյա թելից գործված, մոմով երեսպատված պատրույզներով, ավելի քան 2 մետր երկարությամբ:

Ուտեստ. Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացած լինելու շնորհիվ ուտեստի համալիրում գերակշռել է կաթը և կաթնամթերքը, հատկապես սարերի համեմունքներով պատրաստված պանիրը: Այն գործածում էին թարմ և կծուներում հորած՝ պահածոյացված ձևով: Այդ համալիրում մեծ տարածում ուներ յուղով պահածոյացված խաշած միսը՝ դավուրման: Շատ էր ընկույզի և նրանից քամված ձեթի կիրառությունը ավանդական ուտեստում: Այն անգամ գործածում էին պանրի մեջ: Բացառիկ էր նրա ձեթի առողջարար նշանակությունը (ԸԵ, ՄօԿԵ, Էջ 3):

Պտուղներից առավել առատ էր ընկույզը, որը գործածվում էր ոչ միայն որպես ընդեղեն և ուտեստի ու խմորեղենի մեջ, այլև դրանից ձեթ էին ստանում: Գիտնականը ընկույզի ձեթի ստացման՝ հսկա զանգվածով քարե անիվով աշխատող ձիթհան է արձանագրել Մոկս գյուղաքաղաքի մոտ՝ Ջնեստան գյուղում: Այսպես, Մոկս գյուղաքաղաքում նկարագրել է ահագին սալերից կառուցված շինություններ, որոնք ձիթհաններ էին՝ կարծր քարից տաշած հսկայական անիվներ, որ միևնույն ժամանակ ծառայում էին որպես դինգ: Այդպիսիք հայտնաբերվել են միայն միջնադարյան բնակավայրերում՝ Անիում, Սրենում, Ամբերդում պեղումների ժամանակ, իսկ Մոկսում դեռևս գործածվում էին (ԸԵ, ՄօԿԵ, Էջ 8):

Չգեստ. Տղամարդու հագուստների մեջ գերակշռել է շալից պատրաստված զգեստեղենը՝ շալվարը, վերնագգեստերը: Ջուլիակներին հումք մատակարարողները կանայք էին, որոնք բրդե և բամբակե թել էին հասցնում: Ըստ գիտնականի հաղորդումների՝ հյուսում էին նախշագարդ գորգեր, շալե գոտիներ, որոնք աչքի էին ընկնում բարձր որակով և նախշագարդման արվեստով:

Սոցիոնորմատիվ մշակույթ. Ուշագրավ է գիտնականի գրառումները Մոկսի հայության ամուսնության և հարսանեկան սովորույթների վերաբերյալ, որը, ցավոք, շատ կցկտուր և շատ հակիրճ է ներկայացված: Նա առավել մեծ ուշադրություն է դարձրել հարսանիքներին երգվող երգերին, լեզվին: Սակայն և միաժամանակ հայտնում է, որ այն հայկական հարսանիքներին, որին ինքը անձամբ է մասնակցել, հարսը եղել է 11 տարեկան, փեսան՝ 19 (ԸԵ, ՄօԿԵ, Էջ 29): Ըստ տեղական սովորույթի՝ աղջիկներին ամուսնացնում էին դեռահաս տարիքում, անգամ 6 տարեկանից սկսած: Գիտնականը բացահայտում է նաև, որ այստեղ բարեբախտաբար չէր պահանջվում տեղական քուրդ աղաների՝ հայ հարսի առաջին գիշերվա իրավունքին տիրանալու ավանդական սովորույթի վերածված գարշելի երևույթը, ինչպես դա արվում էր

¹⁵ Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ), Պատմաագագարական ուսումնասիրություն, էջ 47:

Արևմտյան Հայաստանի հարավային քրդահպատակ այլ շրջաններում: Այդուհանդերձ, սրանով էր պայմանավորված հայ աղջիկների մանկական շրջանում ամուսնացնելու սովորույթը՝ տիրողների նման բարբարոսությունից խույս տալու համար:

Աղջկա ընտրության հարցում հետևում էին մի հավատալիքի, ըստ որի՝ տղայի մերձավորները երեկոյան ուզնկալության ժամանակ իրենց հետ տանում էին հավի ձու ու դնում ոչխարի փարախում: Եթե այն անվնաս մնար մինչև առավոտ, կհամարվեր հաջող ընտրություն, հակառակ պարագայում տղայի կողմը խուսափում էր նման ընտրությունից, այն անհաջող համարելով (ԸԵ, ՄօԿԵ, Էջ 29-30):

Օրբելին նշում է նաև հայ ընտանիքում սեռերի խտրական վերաբերմունքի մասին: Օրինակ՝ Մոկսում սովորույթ չկար աղջկա ծնունդը շնորհավորելու, այլ կարեկցում էին, ասելով՝ «աղջիկ բերողը տղա էլ կունենա» (ԸԵ, ՄօԿԵ, Էջ 7):

Ուշադրության արժանի է նաև տոների, մասնավորապես Վարդավառի և Տյառն-ընդառաջի տեղական սովորույթների վերաբերյալ գրառումները (ԸԵ, ՄօԿԵ, Էջ 32):

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ժողովրդական բժշկության վերաբերյալ գրառումները: Մոկսում բժշկական պետական օգնության լրիվ բացակայության պայմաններում, բնականաբար կարևորություն էր տրվում ժողովրդական բժշկության դարավոր հմտություններին: Օրբելու հիշատակմամբ մանգաղով կամ որևէ այլ գործիքով կամ սուր քարով ձեռքը կամ ոտքը վնասելու դեպքում, վերքի վրա կանաչ ջրիմուռի¹⁶ (խոնավ տեղերում քարերի մակերեսը ծածկող բոլբոս) թրջոց էին դնում, իսկ մրսածության, թոքերի հիվանդության կամ մեջքացավի ժամանակ՝ թիակներիին էին փաթաթում տաքացրած թաղիք (քեչա): Շատ հիվանդությունների բուժման միջոց են համարել հիվանդ մասերը տաքացած երկաթով այրելու եղանակը: Մեծ տարածում է ունեցել բուժիչ խոտաբույսերի օգտագործումը որպես սպեղանի, իսկ հատկապես տուբերկուլյոզի դեպքում գործածում էին կովի կաթի խիժից կամ էլ կովի կաթնախիժ շատ կերած նորածին հորթի տաք արտաթորանքից՝ որպես մերանից պատրաստված մածուն կերցնելով: Սրանք հնագույն ժողովրդական բժշկության հնարներն էին, որ կիրառվում էին անգամ XX դարի սկզբներին:

3. Օրբելին «Մոկաց տեքստերում» անդրադառնում է նաև տոներին, մանկական խաղերին:

Ուշագրավ է Մոկսի Մուրթուլա բեկի տանը գիտնականի դիտարկած հյուրընկալման արարողակարգերը: 3. Օրբելին ուշադրություն է դարձնում նրա՝ պատուհանի գոգին դիզված քառակուսի հարթ բարձերին: Երբ երեկոյան տանտիրոջն այցելում էին հյուրերը՝ քրդեր և հայեր, այդ բարձերը դրվում էին հատակին, և պատվավոր հյուրերը նստում էին դրանց վրա: Առավել մեծանունը կարող էր ստանալ նաև երկրորդ բարձը: Բարձերը դարսում էր «մեհմանդարը» (հյուրընկալը - Ռ. Ն.), ընդ որում՝ մի դեպքում տան տերն էր բերելու նշան տալիս, մյուս դեպքում մեհմանդարը բարձը բերում էր՝ չսպասելով նշանի: Հյուրերը նստում էին հատակին, ըստ ավագության և անվանիության, ճիշտ այնպես, ինչպես տեղավորվում էին հին Պարսկաստանում և հին Հայաստանում պալատ հրավիրված ազնվականները: «Բարձը», ինչպես և «գահը» խորհրդանշում էր հասարակական սանդուղքի վրա նախարարի գրաված աստիճանը: Հետագայում 3. Օրբելին կռահեց, որ Էրմիտաժում պահվող մի սկուտեղի

¹⁶ Ջրիմուռ - ջրամամուռ, ծովաքոս, լոռ, գորտնխալի, գորտնգորգ (բեղմնիկավոր-սպորավոր) ջրային բույս (Սուբիասյան Ա.Մ., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան հ. 2, Երևան, 2009, էջ 962):

վրա պատկերված են հենց այդպիսի բարձեր, իսկ նրանց կույտի վրա հենված գահին նստած է Խոսրով Անուշիրվան արքան (ԸԵ, Мокс, էջ 5, 10, 14-15):

Ազգագրական երևույթներից բացի, գիտնականը Մոկսում կարողացավ կազմել տեղական բարբառի հոլովման և խոնարհման հատուկ աղյուսակներ, ազգագրական նյութը հաճախ համեմվում էր բանահյուսական տվյալներով՝ գրի առնելով նաև երգեր ու պարերգեր, գվարճալի պատմություններ, որոնցում «քաղաքացի» հեղինակները հումորով, երբեմն էլ բավականին կծու արտահայտվում էին գյուղացիների բարքերի մասին: Նրա ընտրած բանասացները այն մարդիկ էին, որոնք երբեք դուրս չէին եկել իրենց ծննդավայրից, ուստի լեզուն, արտասանությունը անարատ էին պահպանվել: 3. Օրբելին եղել է միակ եվրոպացի գիտնականը, ով հետազոտություն է կատարել հենց տեղում: Գավառի բնակչության շատ սովորույթներ, կենցաղային առարկաներ պահպանվել էին վաղնջական ժամանակներից:

Ուշագրավ են մեծանուն գիտնականի ազգագրության հետ սերտորեն առնչվող հայ բանագիտական հետազոտությունները: Արժեքավոր է գիտնականի «Մոկաց տեքստեր» ընդհանուր խորագրով ծավալուն աշխատությունը, որն ամփոփում է հեղինակի 1911-1912 թթ. Մոկս գավառում կատարած ոչ միայն բարբառագիտական և ազգագրական հետազոտությունների արդյունքները, այլև իր իսկ գրի առած բանահյուսական նյութերը: Դրանցում առանձին խումբ են կազմում ժողովրդական հեքիաթները, մանրապատում գրույցները, վեպերն ու առակները, վիպական երգերն ու բալլադները, աշխատանքի և ծիսական, երգիծական և մանկական երգերը, առածներն ու ասացվածքները, հանելուկներն ու շուտասելուկները: Բարբառախտաբար սրանք հրատարակվեցին գիտնականի «Избранные труды», т. 2 (Եր., 2002) ժողովածուի մեջ (էջ 129-185):

3. Օրբելին մեծ ներդրում ունի նաև հայ ժողովրդական Եպոսի ուսումնասիրման, այն ժողովրդական լայն շրջաններին ճանաչելի դարձնելու գործում: Դեռ Մոկսում և Վանում եղած ժամանակ՝ 1911-1912 թթ. նա մոտիկից շփվում է Մոկաց գգրարների հետ, ծանոթանում «Սասնա ծռերի» մասին նրանց ավանդած պատումներին, իսկ Վանի մոտ՝ Միերի դռան սեպագրերն ուսումնասիրելիս, լսում է Դավթի որդի Միերի ավանդագրույցը: 1939 թ. «Սասունցի Դավիթ» Եպոսի 1000-ամյակի տոնակատարության միջոցառումները հանձնարարված էր գլխավորել 3. Օրբելուն: Նա մեծ դեր ունեցավ «Սասունցի Դավիթ» համահավաք ժողովածուի հայերեն և ռուսերեն հրատարակման գործում (1939 թ.): Գիտնականի «Յայ հերոսական Եպոսը» (1956 թ.) աշխատությունը Եպոսագիտության բնագավառի խոշոր նվաճումներից է: Նրա նախաձեռնությամբ նույն թվականին Լենինգրադում տպագրվեց «Սասունցի Դավիթ» Եպոսի ռուսերեն թարգմանությունը¹⁷: Նրա ջանքերով էր, որ մեր դյուցազներգությունը, դուրս գալով ազգային սահմաններից, դարձավ համամարդկային մշակույթի սեփականություն: «Յայ հերոսական Եպոսը» աշխատության և «Սասունցի Դավիթ Եպոսը» («Խորհրդային գրականություն» ամսագիր, Երևան, 1939, N 8-9) ուսումնասիրության մեջ Օրբելին հանգամանորեն անդրադարձել է Եպոսի բովանդակությանը, կերպարներին, վեր է հանել Եպոսի պատմական կորիզն ու ձևավորման ընթացքը, բացահայտել համանման այլ գործերի միջև ընդհանրությունները, մատնանշել Եպոսի պատմամշակութային ու գեղարվեստական արժեքները, ընդգծել նրանում մարմ-

¹⁷ Давид Сасунский. Армянский народный эпос, Москва-Ленинград, 1939.

Նավորված ազատասիրական, հերոսական, խաղաղասիրական, մարդասիրական գաղափարները:

Յ. Օրբելին ինքնատիպ դիտարկումներ է կատարել նաև ժողովրդական առակների ժանրային առանձնահատկությունների սոցիալական որոշակի ուղղվածության վերաբերյալ: Ա. Ղանալանյանի խմբագրությամբ լույս է ընծայվել Յ. Օրբելու կազմած միջնադարյան առակների («Басни средневековой Армении») ժողովածուն: Յ. Օրբելու խմբագրությամբ 1959-1962 թթ. լույս են տեսել «Յայ ժողովրդական հեքիաթներ»-ի I, II, III հատորները: Նրա՝ Սոկսում գրառած 6 միավոր հեքիաթները հրատարակվել են «Յայ ժողովրդական հեքիաթներ»-ի (Սոկս) XVII հատորում¹⁸:

Այսպիսով, Յ. Օրբելին թողել է աղբյուրագիտական և տեսական իսկապես ընդհանրացնող հարուստ ժառանգություն:

¹⁸ Յ. Օրբելու բանագիտական գործունեությանը առավել հանգամանալի անդրադարձել է բանագետ Արամ Ղանալանյանը (տե՛ս Ղանալանյան Ա., Դրվագներ հայ բանագիտության պատմության, Երևան, 1985, էջ 159-175):

«ՀՆԱԳԵՏ» ԱՏՐՊԵՏԸ ԿԱՄ «ՀԱՅԿԱԿԱՆ ՇԼԻՄԱՆԸ»

Արսեն Բորոխյան

ՀՀ ԳԱՄ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ներածություն

Գրող և հրապարակախոս Սարգիս Մուբայաջյանը (1860 թ., Կարս - 1937 թ., Կոնստանդուպոլիս), որ առավելապես հայտնի է Ատրպետ մականվամբ, բացի գրական ստեղծագործություններից ունի տպագիր և անտիպ ճանապարհորդական նոթեր և դրանց հիման վրա գրված գիտական ոճի աշխատանքներ, որոնք կարևոր սկզբնաղբյուր են Հայկական լեռնաշխարհի հնությունների ուսումնասիրության պատմության համար: Այստեղ կարևոր է շեշտել, որ ծագումով շիրակցի Ատրպետը Շիրակի հնագիտության առաջին հետազոտողներից է (անդրանիկ անդրադարձները թվագրվում են 1880-ական թթ. սկզբով), ինչի մասին ժամանակին խոսել է Նաև Տելեմակ Խաչատրյանը¹:

Ատրպետի հայտնագործության տեսչացող և արկածախնդիր կերպարը մեզ հիշեցնում է Հայնրիխ Շլիմանին: Ատրպետը, սկսելով ճանապարհորդել արդեն մանուկ հասակում, ծնողների և մերձակա շրջապատից մշտապես լսում է առասպելներ, այցելում ավերակներ, սրբեր/զիարտեթներ, որոնք իր մեջ սեր են առաջացնում հնությունների նկատմամբ: Կյանքի ընթացքում նա ձգտում է նյութական ապահովվածության՝ նպատակ ունենալով դրամագլուխ հավաքել իր հետազոտությունների համար²: Չի հասցնում ստանալ մասնագիտական կրթություն, թեև մշտապես երագում է դրա մասին, կատարում է կարևոր հայտնագործություններ (վիշապ կոթողներ, բարձրլեռնային հուշարձաններ, կիկլոպյան ամրոցներ, և այլն), որոնք չի կարողանում ակադեմիական ոճով ներկայացնել, բայց որոնք առանցքային նշանակություն են ունենում հետազայում: Ատրպետը ոչ մի անգամ չի հիշում Շլիմանին, բայց և՛ կերպարով, և՛ օգտագործած տերմինաբանությամբ (հմմտ. օրինակ՝ «աչկատարյան»-կիկլոպյանի կարևորումը) շատ է նրան նմանվում:


Ներկայացվող հոդվածում, հենվելով հրատարակված և արխիվային նյութերի վրա, փորձ է արվում ընդհանուր գծերով ներկայացնել Ատրպետի՝ հնագիտության հետազոտողի կերպարը:

Ատրպետի գիտական ոճի երկերը

Ատրպետի կոլորիտային կերպարում միահյուսված են գրողը, հասարակական-քաղաքական գործիչը, ճանապարհորդ-արկածախնդիրը և, ի վերջո, գիտնականը: Վերոհիշյալ «մասնագիտությունների» տակ թաքնված է ակնհայտ հայրենասերը, ով տառապում է իր հայրենիքի ինդիքներով և ամեն կերպ փորձում ներկայացնել հայ իրականությունն իր ամբողջության մեջ: Ատրպետի այդ ունիվերսալության մեջ է նրա և՛ ուժը, և՛ թուլությունը:

¹ Хачатрян Т.С., Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 25, 127.

² Ատրպետ, Վիշապազանց կուլտը և Անահիտ, Հայաստանի պատմության թանգարան, ԱԱ 177, Լենինական, 1931, էջ Ա-Բ. հմմտ. Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929, էջ 1-8, 15:



Նկ. 1. Ատրպետ, անձնական լուսանկարը, Գրականության և արվեստի թանգարան, Ատրպետ 231-236, Միավոր 231

Ուժը, որովհետև նա փորձում է անդրադառնալ հայ իրականության բոլոր կողմերին՝ ձգտելով ընդհանուր պատկեր ստեղծել, թուլությունը, որովհետև տուժում են մանրամասները: Ասվածը վերաբերում է հատկապես գիտնական Ատրպետին, որի աշխատանքները առավելապես տեղեկատվական բնույթի են և վերաբերում են տարբեր և հաճախ իրար չառնչվող հարցերի՝ XIX դարի տնտեսությանը (հատկապես հողատիրությանը), հայոց պատմությանը, մահմեդական աղանդների պատմությանը, դրամագիտությանը, և ի վերջո՝ հնագիտությանը³:

³ Իր կողմից կազմված աշխատանքների ցանկը տե՛ս Ատրպետ, Դիմում Լուսժողովին, 7 սեպտեմբեր, 1922 թ., Ալեքսանդրապոլ, Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 122, ց. 1, գ. 287, թ. 20-27:

Ատրպետի գրական ու հասարակական գործունեության հիսնամյա հոբելյանի առիթով «Բազմավեպ»-ը, կարծում ենք, շատ ճիշտ է բնորոշում հեղինակին, որպես հիմնականում իրապաշտ մի գրողի, որի գործի մեջ գրական փայլը այնքան չի կարևորվում, որքան ազգագրականը, բուն ժողովրդականը⁴:

Ատրպետն ունի տարբեր հրապարակումներ լրագրերում, գիտական հանդեսներում, գրքերում⁵: Սակայն բազմաթիվ աշխատանքներ մտում են չիրապարակված, որոնց թվում կան նաև այնպիսիները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում մեր հարցադրման տեսանկյունից:

Ատրպետի հիմնական ժառանգությունը պահպանվում է երկու հաստատություններում՝ Գրականության և արվեստի թանգարանում (մեծ մասը) և Հայաստանի պատմության թանգարանում (փոքր մասը): Բացի այդ, որոշ գրություններ առկա են նաև Հայաստանի ազգային արխիվում:

Գրականության և արվեստի թանգարանում գտնվող Ատրպետի արխիվը բաղկացած է 240 միավորից և պարունակում է գեղարվեստական (պատմվածք, հեքիաթ) և հրապարակախոսական երկեր, պատմական ուսումնասիրություններ, թարգմանություններ, գրախոսություններ, փաստաթղթեր (դիմումներ, բողոքներ, պայմանագրեր), նամակներ (Լ. Տոլստոյից, Թեոդիկից, Թ. Թորամանյանից, Գ. Լևոնյանից, ևն), լուսանկարներ:

Հայաստանի պատմության թանգարանում գտնվող Ատրպետի արխիվը բաղկացած է 22 միավորից և պարունակում է հիմնականում պատմա-մշակութային բնույթի ուսումնասիրություններ (վիշապներ, ճարտարապետություն, պարսից բանաստեղծություն և կրոն), հուշեր:

Հայաստանի ազգային արխիվում պահպանվել են Ատրպետի երկու դիմումները, որոնցում ամփոփված են տեղեկություններ իր կենսագրության և գիտական հետաքրքրությունների վերաբերյալ:

Այսպիսով, Ատրպետի՝ հնագիտության առնչվող արխիվային նյութերն ընդհանուր առմամբ վերաբերում են վիշապներին, աչկատարյան կառույցներին, հայ ճարտարապետությանը, տեղագրությանն ու սրբավայրերին, պատմական խնդիրներին, հնագիտական գտածոներին, գրախոսություններ են, հուշեր և դիմում/կենսագրականներ, թարգմանություն/սղագրություններ, գրադարանային միավորներ՝ նշումներով, լուսանկարներ: Դրանց մեջ կան այնպիսիները, որոնք հատվածաբար կամ գրեթե ամբողջությամբ հրապարակված են կամ էլ դրանց վերաբերյալ կան մասնակի անդրադարձներ, սակայն, ընդհանուր առմամբ, հիշված նյութերը հայտնի չեն:

⁴ Բազմավեպ 7/8, 1931, էջ 307:

⁵ Հնագիտությանը վերաբերող հրապարակումներից հմտ. հետևյալները՝ Ատրպետ, Եզի պաշտամունքը հին Հայաստանում, Ազգագրական հանդես (Թիֆլիս), 1912, N XXIII/2, էջ 114-124. Ատրպետ, Դիրաքլարի տաճարը, Հանդես ամսօրեայ (Վիեննա), 1912, N 1, էջ 5-15. Ատրպետ, Շիրակի աչկատարեան (կիկլոպեան) ամրոցները, Ազգագրական հանդես (Թիֆլիս), 1914, N 25/2, էջ 165-188. Ատրպետ, Նայիրի քաղաքակրթություն, Հայաստանի կոչնակ (Նի-Յեդրը), 1926, N 2, 4, 5, էջ 175-177, 242-244, 268-270. Ատրպետ, Շինարարական նոր ատաղձ, Բանվոր (Լենինական), 1927, N 93, էջ 2. Ատրպետ, Սարմաշենում նոր կուրգան, Խորհրդային Հայաստան (Երևան), 1927, N 86, էջ 4. Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929. Ատրպետ, Վիշապազանց պաշտամունքը, Բազմավեպ (Վենետիկ), 1931, N 7/8, էջ 308-319. Ատրպետ, Հնագիտական պեղումներ, «Բանվոր» (Լենինական), 1934, N 189, էջ 4. Ատրպետ, Հնագիտական թանգարանում, «Բանվոր» (Լենինական), 1934, N 226, էջ 4:

Գիտական աշխատանքի բնութագիրը

Նախնական կրթությունն Ատրպետը ստացել է Կարսի կաթոլիկական վարժարանում, ապա մեկնել Պոլիս ու սովորել Փանկալթի Վիեննայի Մխիթարյանների դպրոցում և Օսմանյան լիցեյում (1874-1877 թթ.): Նա նպատակ է ունեցել գնալ Եվրոպա ուսանելու, բայց ռուս-տաճկական պատերազմը փոխել է այդ ծրագրերը, և նա նորից վերադարձել է Կարս ու իր հետագա գործունեությունը ծավալել Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Ախալքալաքում, Բաքվում, Թավրիզում⁶: 1880-1881 թթ. Կարսում եղել է պատմության և աշխարհագրության ուսուցիչ⁷:

Օգտագործած գրականությունից, նշումներից, թարգմանություններից և սղագրություններից կարելի է եզրակացնել, որ Ատրպետը լավ իմացել է գրաբար, ֆրանսերեն և ռուսերեն, իսկ հրապարակումները միայն հայերեն են և ռուսերեն:

Ատրպետի աշխատանքները աչքի չեն ընկնում նյութի շարադրման կազմակերպվածությամբ և գիտական ապարատով (հղումներ, չափագրություններ, լուսանկարներ): Կ. Դանիելյանի բնորոշմամբ՝ Ատրպետն ունի մի տեսակ «արկածային ոճ», ինչը գիտական աշխատանքները զրկում են ծանրակշռությունից⁸: Եվ սա հասկանալի է, քանի որ Ատրպետի գերխնդիրը տեղեկատվություն հաղորդելն է և ոչ հետազոտելը: Ատրպետն ինքը գիտեր իր աշխատանքի թերությունները, ներողություն է խնդրում ընթերցողից շտապելու համար և նշում է, որ թղթին է հանձնում նյութերը՝ դրանք ինչ-որ կերպ փրկելու նպատակով: Ատրպետը հետագայում նպատակ է ունեցել վերստին գնալ իր անցած վայրերը, վերստուգել, լուսանկարել, հատակագծեր և հատվածականներ պատրաստել, բայց դա չի ստացվել հայտնի պատճառներով և այն, ինչ նա շարադրում է, հիշատակարանների մնացորդներ են միայն, հիշողություններ⁹: Այսպես է բնորոշում իր նպատակն Ատրպետը. «Ես մի ճանապարհ, մի նեղ կածան եմ բաց անում՝ հուսալով, որ ինձնից հետո գալովները կընդարձակեն այդ անցքը»¹⁰:

Այսուհանդերձ, Ատրպետի ընդհանուր մոտեցումները, նյութի մեկնաբանմանումը բավականին գիտական են: Եվ եթե չհաշվենք որոշ շեղումներ, նրա հայտնած տեղեկությունների ատաղձն ունի արժանահավատության մեծ աստիճան: Այսպես, մի առիթով ներկայացնելով Հայաստանի գետերը՝ չի «հանդգնում» խոսել Տիգրիսի և Նրան՝ ժողովրդի կողմից ձոնված ավանդությունների մասին, քանի որ անձամբ չի եղել այնտեղ և անձամբ չի լսել այդ առասպելները¹¹:

⁶ Կենսագրության համար հմմտ. Ատրպետ, Երկեր, (Կազմ. և նախաբ.՝ Լ. Արազյան, Կ. Դանիելյան), Երևան, 1964, էջ 3-6:

⁷ Ատրպետ, Ճորոխի ավազանը, էջ 13:

⁸ Ատրպետ, Երկեր, էջ 5:

⁹ Ատրպետ, Ճորոխի ավազանը, էջ 15, 17, 19, 32:

¹⁰ Ատրպետ, Ճորոխի ավազանը, էջ 17:

¹¹ Ատրպետ, Վիշապագանց որորանը, Գրականության և արվեստի թանգարան, Ատրպետ 15, Լենինական, 1927, թ. 30:



Նկ. 2. Ատրպետ, Հնագիտական առարկաների լուսանկարներ՝ հավանաբար
անհատական հավաքածուից (երկաթեդարյան խեցեղեն, ինչպես նաև ցլի գլուխ
Ղուշչիից), Գրականության և արվեստի թանգարան, Ատրպետ 231-236,
Միավոր 236

Ատրպետի աշխատանքները հատկապես կարևոր են միկրոտոպոնիմիկայի (գետակներ, ամվակներ, բարձունքներ) հետազոտության համար: Ի տարբերություն տեղագրությունն ուսումնասիրած այլ մասնագետների, որոնք կենտրոնացած են պատմական տվյալների վերլուծության վրա, Ատրպետը տեղեկություններ է հայտնում ժողովրդական տեղանունների և դրանց պատմական միջավայրի ու մասնավորապես հուշարձանների մասին: Եվ այստեղ է, որ մենք էապես շահում ենք: Ընդ որում, Ատրպետն առաջին ճանապարհորդն է, ով ներկայացնում է Հայաստանի բարձրլեռնային գոտիները որպես գիտական հարցադրում: Օրինակ՝ մի աշխատանքում նա բերում է «Կարսի Նահանգի բարձունքներին հիմնած բազիլների, տաճարների, աղբյուրների և այլ ուխտավայրերի (գիարաթ և զուհարաթ) ցանկը, որոնք անձամբ ստուգած են 1880-1915 թթ.» (այստեղ հիշված են 109 միավոր)¹²:

Ատրպետի պատմա-հնագիտական ընդհանուր գիտելիքների և աշխարհայացքի մասին կարելի է փաստել հետևյալը. նա բավականին ճանապարհորդել է Եվրոպայում և Ասիայում, այցելել է հնագիտական հուշարձաններ, թանգարաններ (այդ թվում՝ Լուվր, Բրիտանական, Բեռլինի Առաջավորասիական թանգարաններ): Լուվրում, օրինակ, անցկացրել է 22 օր և դիտել է նաև հավաքածուները, մասնավորապես՝ հայկական, պարթևական ու ընդհանրապես արևելյան դրամների, ընդ որում, հայտնի արևելագետ Է. Բաբելոնի ուղղեկցությամբ¹³, ում այդքան հաճախ անդրադառնում է «Ազգագրական հանդես»-ում (N 21-24, 1911-1913) և «Գեղարվեստ»-ում (N 3, 1909) տպված իր դրամագիտական բավականին հաջողված հոդվածներում:

Ատրպետն ունեցել է հնագիտական իրերի և դրամների մեծ հավաքածու, որ նա ձեռք է բերել Հայաստանում և նրանից դուրս (օրինակ՝ Իտալիայում, Ղրիմի Պանտիկապեյում): Միայն դրամների հավաքածուն կազմել է մոտ 10.000 միավոր, որոնց կրկնակները նա վաճառել է¹⁴:

Ատրպետն ունեցել է նաև մեծ գրադարան, որից օգտվել են տարբեր գիտնականներ¹⁵:

Ատրպետի աշխատանքներում հնագիտական փուլերի և ժամանակագրության մասին պատկերացումները պայմանական են: Նա հաճախ խոսում է «վիշապազանց», «աչկատարյան», «նախապատմական» դարաշրջանի Հայաստանի մասին, անորոշ կերպով առանձնացնում փուլեր, որոնց հարաբերակցությունը պարզ չէ: Այսպես, օգտագործում է «քարային շրջան», «նախնական քարային դար»,

¹² Ատրպետ, Հուշիկներ, Հայաստանի պատմության թանգարան, ԱԱ 188/3, Լենինական, 1920-ականներ, էջ 60-64:

¹³ Նույն տեղում, էջ 45, 47-48:

¹⁴ Ատրպետ, Ճորոխի ավազանը, էջ 13: Ե. Բայբուրյանը հիշատակում է Ատրպետի հնագիտական առարկաների հավաքածուն. ընդ որում, գոյություն է ունեցել վերջինիս տպագիր կատալոգը՝ կազմված Ֆրանսիայում, իր կողմից կազմակերպված ցուցադրության համար (տե՛ս Байбуртян Е.А., Последовательность развития древнейших культур Армении на основе археологического материала, Ереван, 2011, էջ 15): Այդ կատալոգը լույս է տեսել ֆրանսերենով Փարիզում 1908 թ. և պարունակել է 2400 միավոր հնություններ (տե՛ս Ատրպետ, Ճորոխի ավազանը, էջ 13):

¹⁵ Ատրպետ, Ճորոխի ավազանը, էջ 15 («600 կտոր գիտական գրքեր»). հմմտ. Թորամանյան Թ., Նամակներ, Կազմ.՝ Ն. Թորամանյան, Երևան, 1968, էջ 257, 272: Ատրպետի գրքերի, հնագիտական իրերի և արխիվային նյութերի մեծ հավաքածուն զոհ է դարձել 1918-1920 թթ. խժոժություններին (տե՛ս Ատրպետ, Ճորոխի ավազանը, էջ 15. հմմտ. Նաև Պապուխյան Ն., Թորոս Թորամանյան. կյանքն ու գործը, Երևան, 2005, էջ 55):

«քարային զարգացած դարաշրջան», «կոկված քարային դարի շրջան», «պղնձի դար», «պղնձի դարի նախնական շրջան», «երկաթի դար», եզրերը¹⁶: Մի անգամ կիրառում է «Ասիական կամ Հաբեթական դարեր» տերմինը¹⁷, որից ենթադրում ենք, թե ծանոթ է եղել Ն. Մառի թեզերին: Կրոնի զարգացման տեսանկյունից տեսնում է՝ ջրապաշտություն-արևապաշտություն-գրադաշտականություն հաջորդական փուլերը. ընդ որում, վիշապներին վերագրում է առաջին փուլին¹⁸: Մի այլ տեղ այդ հաջորդականությունն այսպիսին է՝ բնապաշտություն-վիշապազանց պաշտամունք/ջրապաշտություն-կրակապաշտություն-մոխրապաշտություն¹⁹:

Ավելի հստակ է նյութի ճանաչման և արժևորման մակարդակը. մասնավորապես արշավների ընթացքում հիշում է կուրգաններ, դոլմեններ, ամրոցներ, ջրանցքներ²⁰, որոշ հնավայրերում նկատում է խեցեղեն բեկորներ²¹: Նշում է գյուղացիների կողմից ավերակներ և դամբարաններ (դոլմեններ, կուրգաններ) թալանելու մասին²²: Հաճախ շեշտում է հնագիտական հետազոտություններ/պեղումներ իրականացնելու կարևորությունը²³:

Տարբեր գնահատականներ

Ակնհայտ է, որ Ատրպետի նման ակտիվ մարդը չէր կարող միանշանակորեն ընկալվել և պատահական չէ, որ նրա մասին կան ինչպես բացասական, այնպես էլ դրական կարծիքներ:

Ակադեմիական գիտության ներկայացուցիչները բնականաբար կասկածանքով կարող էին վերաբերվել գրող Ատրպետի որոշ մտքերին և գործերին: Օրինակ՝ Մ. Մառանջյանը նշում է, թե Ատրպետն իր աշխատանքներում յուրացրել է Թ. Թորամանյանի մտքերը (այդ թվում կիկլոպյան ամրոցների մասին) և, ունենալով ավելի ճարտար լեզու, շատ բաներ ավելի շուտ է հրատարակել, սովորություն չունենալով հուշարձան չափագրել²⁴: 1910 թ. մայիսի 26-ին Հայոց ազգագրական ընկերությունում կարդացած «Արարատյան աշխարհի ճարտարապետության զարգացումը» դասախոսության ընթացքում որոշ ընդդիմախոսներ Ատրպետին անվանել են «ծայրահեղ ազգասիրությամբ մոլորված», բայց նա հակադրվել է՝ ասելով, որ իր մտքերում ելնում է միայն փաստերից²⁵: «Խորհրդային Հայաստան» թերթում տպված մի հաղորդումից իմանում ենք, որ 1928 թ. հունվարի 14-ին Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեում տեղի է ունեցել նիստ, որում Ատրպետը զեկուցել է Նոր Բայազետի գավառում 1927 թ. ամռան վերջին իրականացված իր հնագիտական ուղևորության մասին: Այստեղ նա Կոմիտեի քննությանն է հանձնել իր՝ «Վիշապազանց որորանը»

¹⁶ Ատրպետ, Ճորոխի ավազանը, էջ 37-38, 226-227:

¹⁷ Նույն տեղում, էջ 228:

¹⁸ Նույն տեղում, էջ 54:

¹⁹ Նույն տեղում, էջ 63:

²⁰ Նույն տեղում, էջ 15, 21, 37, 88, 123:

²¹ Նույն տեղում, էջ 102:

²² Նույն տեղում, էջ 86, 159:

²³ Նույն տեղում, էջ 31, 38, 91, 228:

²⁴ Մազմանյան Մ., Պապուխյան Ն., Թորամանյան Գ. (խմբ.), Ժամանակակիցները Թորոս Թորամանյանի մասին, Երևան, 2005, էջ 129-130:

²⁵ Ատրպետի դասախոսությունը, Տարագ (Թիֆլիս), 1910, N 5-6, էջ 61:

վերնագրով աշխատությունը, որ գրել է այդ ուղևորության միջոցին իր տեսած հնագիտական նյութերի հիման վրա: Հաղորդման մեջ ապա նշվում է. «Չեկուցումն առաջ բերեց մտքերի կենդանի փոխանակություն, որից երևաց, որ հեղինակի եզրակացությունները չեն համապատասխանում իր մատնանշած փաստերին»²⁶:

Ատրպետին ավելի ճիշտ ըմբռնելու համար շատ կարևոր է Թ. Թորամանյանի անձը: Ատրպետը վերջինիս ծանոթացավ Անիում 1905 թ., հետագայում Թորամանյանը դարձավ Ատրպետի հնագիտական ուսումնասիրությունների խորհրդատուն և աջակիցը²⁷: Ինչպես Թորամանյանի և Ատրպետի սամակագրությունից²⁸, այնպես էլ Ատրպետի՝ Թորամանյանի մասին գրված հոդվածներից²⁹ երևում է փոխադարձ հարգանքն ու ակնածանքը: Ատրպետը շատ բաներով օգնել է Թորամանյանին՝ ընթացքում նրանից սովորելով:

Ինչ վերաբերում է Ատրպետի գործի դրական կողմերին, կարելի է համաձայնել Մ. Մազմանյանի հետ, ով շեշտում է, թե Ատրպետը հայ գրողների շրջանում «առանձնահատուկ դիրք է գրավում իր հնագիտական և ճարտարապետական ուսումնասիրություններով»³⁰: Մասնագետները համակարծիք են, որ Ատրպետի աշխատանքները կարևոր սկզբնաղբյուր են Հայաստանի պատմության և ազգագրության հետազոտության համար³¹: Դրանք հաճախ օգտագործվում են տարբեր գիտնականների կողմից: Այսպես, ճարտարապետ Տ. Մարությանը Ատրպետին հիշում է Տայքի ճարտարապետության հետ կապված խնդիրների համատեքստում³²: Ատրպետի տեղեկությունը Խախի և Թորթումի շրջակայքի վիշապների մասին օգտագործում են որոշ հեղինակներ³³:

Նշանավոր հնագետ Ե. Բայբուրջյանը Ատրպետին անվանում է «հայտնի նումիզմատ»³⁴: Բ. Պիոտրովսկին գրում է, որ երբ նրանք 1930 թ. սկսեցին Հայաստանի կիկլոպյան ամրոցների հետազոտությունը, առաջնորդվում էին երկու աշխատանքներով՝ Ատրպետի և Թ. Թորամանյանի³⁵: Ատրպետի աշխատանքի կարևորությունը

²⁶ Անանուն, Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեում, Խորհրդային Հայաստան (Երևան), N 19, 1928, էջ 4:

²⁷ Պապուխյան Ն., Թորոս Թորամանյան, էջ 48. Մազմանյան և այլք, Ժամանակակիցները, էջ 117:

²⁸ Թորամանյան Թ., Նամակներ, էջ 173, 199, 205, 256, 272, 339. Հովհաննիսյան Հ.Ա., Արշակ Չոպանյանին և Ատրպետին ուղղված Թորոս Թորամանյանի նամակներից (1910-1913 թթ.), Բանբեր Հայաստանի արխիվների (Երևան), 1986, N 1, էջ 111-122:

²⁹ Մազմանյան և այլք, Ժամանակակիցները, էջ 114-120, 398-402:

³⁰ Նույն տեղում, էջ 404:

³¹ Simonian H.H. (ed.), *The Hemshin: history, society and identity in the highlands of northeast Turkey*, London-New York, 2007, p. 124, 127, 130. Չատիկյան Հ., Կարինի նահանգը XIX դ. երկրորդ կեսին, Երևան, 2013:

³² Մարության Տ., Խորագույն Հայք, Երևան, 1978, էջ 7, 109:

³³ Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 629. Չատիկյան Հ., Կարինի նահանգը, էջ 218, 223:

³⁴ Байбуртян Е.А., *Последовательность*, с. 15. հմմտ. նաև Ծերեթյան Կ., Հայ վիմագրագիտության և դրամագիտության սկզբնավորումը, Հուշարձան (Երևան), 2016, N 11, էջ 100-101:

³⁵ Пиотровский Б.Б., *Материалы к биографии*, Санкт-Петербург, 2008, с. 324. հմմտ. նաև Ծերեթյան Կ., Հայ հնագիտության սկզբնավորումը. հայ հետազոտողների գործունեությունը XIX դ. երկրորդ կեսից մինչև XX դ. 20-ական թթ., Հուշարձան (Երևան), 2015, N 10, էջ 130-131:

կիկլոպյան ամրոցների հետազոտման գործում շեշտում է Տ. Խաչատրյանը, ով նաև նշում է, թե դրա թերությունն այն է, որ ամրոցների ճարտարապետական մանրամասները չեն նկարագրվում³⁶: Վիշապների ուսումնասիրման գործում Ատրպետի վաստակը, կարծում ենք, ըստ արժանվույն չի գնահատվել. իր դիմումներից և նամակներից եզրակացնում ենք, որ այդ գնահատման կարիքն ինքն անձամբ զգացել է իր կյանքի վերջին փուլում³⁷: Հետագա հեղինակները Ատրպետի գործունեությանը «ծանոթ չեն» կամ, եթե իրենց աշխատանքներում հիշատակում են Ճորոխի ավազանի վիշապ կոթողների մասին³⁸, ապա մոռանում են նշել Ատրպետի անունը: Տայքի վիշապ կոթողների ամնչությամբ Ատրպետին ամառինը հիշում է Խ. Սամուելյանը³⁹, ապա և այլ հեղինակներ⁴⁰:

Վերջաբան

Ատրպետի հուշերից պարզ է դառնում, որ նա երագել է դառնալ հնագետ և ամբողջ կյանքում գնացել է իր չկայացած երազանքի հետևից: Այդ երազանքները նրան դարձրել են ճանապարհորդ, ով տարիներ շարունակ շրջել է Հայկական լեռնաշխարհի տարբեր լանդշաֆտներում և այդ աշխարհի մասին ձևավորել մի պատկերացում, որը չի կարողացել մինչև վերջ սահմանել, բայց որը իր մեջ պարունակում է ճշմարտության էական տարրեր, քանի որ հենված է ահռելի փորձի վրա: Այս իմաստով, Ատրպետի տեղեկությունները Հայկական լեռնաշխարհի, հատկապես ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող հնագիտական հուշարձանների և ընդհանրապես լանդշաֆտի կազմակերպման ամանձնահատկությունների մասին արժանահավատ են և ունեն սկզբնաղբյուրի նշանակություն: Դրա օգտին է խոսում, ոչ թե ամանձին խնդիրների քննարկումը (շատ դեպքերում դրանք աչքի չեն ընկնում մանրամասների ակադեմիական նկարագրությամբ, ինչի պատճառով շատ հարցեր բաց են մնում), այլ այն համատեքստը, որը ստեղծվում է բոլոր տեղեկությունների հանրագումարում:

³⁶ Хачатрян Т.С., Древняя культура Ширака, с. 25.

³⁷ Հմմտ. Ատրպետ, Դիմում Լուսժողկոմին, 7 սեպտեմբեր, 1922 թ., Ալեքսանդրապոլ, Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 122, ց. 1, գ. 287, թ. 20-27:

³⁸ Пиотровский Б.Б., Вишапы: каменные статуи в горах Армении, Ленинград, 1939, с. 16. Капанцян Гр., Историко-лингвистические работы, Ереван, 1957, с. 87-88, 110. он же, О каменных стелах на горах Армении, Ереван, 1952, с. 51.

³⁹ Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1 - Զարե դար, Երևան, 1931, էջ 161. հմմտ. Նույնի, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 2 - Բրոնզե ու վաղագույն երկաթե դար, Երևան, 1941, էջ 27, 29:

⁴⁰ Բարսեղյան Լ.Ա., Գեղամա լեռների «Վիշապները», Պատմաբանասիրական հանդես, N 4, 1967, էջ 181. Խանգաղյան Է., Գառնի IV, Հնագիտական պեղումները Հայաստանում, հ. 12, Երևան, 1969, էջ 138-139. Сихарулидзе А.Н., К вопросу о значении быка на Триалетских вешапах и вешапоидах, Кавказский этнографический сборник (Тбилиси), N IV, 1972, с. 24.

ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱԼԵՈԼԻԹՅԱՆ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԳՏԱԾՈՆԵՐԻ ԱԿՆԱՐԿ

Բենիկ Երիցյան, Անահիտ Խոնդավերդյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հայկական լեռնաշխարհը հնագույն մարդկանց ծագման և տարածման կարևորագույն օջախներից է Եվրասիայում, որտեղ փաստագրվել է քարեդարյան հուշարձանների բարձր խտություն: Սույն զեկուցման մեջ հեղինակները կանգ ենք առնում այն հուշարձանների վրա, որոնցից հայտնաբերվել են բրածո մարդկանց մնացորդներ: Առկա տվյալներով կարելի է փաստել, որ Հայաստանից հայտնաբերված բոլոր համապատասխան մարդաբանական գտածոները պատկանում են ժամանակակից ֆիզիկական տիպի մարդուն՝ որոշ արխայիկ առանձնահատկություններով:

Բանալի բառեր՝ Հայաստան, պալեոլիթ, քարանձավ, բաց կայանատեղեր, Homo sapiens:

ՆՈՐ ՏԿՅԱԼՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՂ ԲՐՈՆԶԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռուբեն Բադայան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

«Կուր-արաքսյան» մշակույթի զարգացման ընթացքն ունեցել է դիսկրետ բնույթ. նրա փուլաբաժանումը կարելի է հանգեցնել երկու հիմնական ենթափուլերի, որոնք թվագրվում են մ.թ.ա. 3600/3500 - 2900 (ԿԱ I) և 2900 - 2600/2500 (ԿԱ II) թթ. շրջանակում: ԿԱ I փուլը Հայաստանի տարածքում ամենուրեք ներկայացված է համեմատաբար միատարր «Էլառ-արագածյան» տիպի խեցեղեն համալիրով, որը փաստորեն տարածված է որոշ Հայկական լեռնաշխարհով մեկ:

Նոր տվյալները հնարավորություն են տալիս լրացնելու և կոնկրետացնելու կուր-արաքսի առաջին փուլի փուլաբաժանման խնդիրը:

ԿԱ I-ի ավարտական փուլը ներկայումս ամենասպառնիչ կերպով բնորոշում է Գեղարոտի ՎԲ ստորին հորիզոնի համալիրը, որը ռադիոածխածնային տվյալների ստատիստիկ վերլուծության արդյունքում թվագրվում է մ.թ.ա. 3000 - 2900 թթ. սահմաններում (ԿԱ Iq):

Յուրահատուկ «Էլառ-արագածյան» այն ենթահամալիրը, որը պարունակում է թրծումից հետո քերծվածքի զարդաձևով բնորոշվող անոթներ, Գեղարոտում բացակայում է. հետևապես այդ «մինչ-գեղարոտյան» նյութերը, որոնք հայտնի են Լուսազյուղից, Արագածից և Ապարան III-ից, պետք է պատկանեն ԿԱ Iբ-ին: Ռադիոածխածնային տվյալների ստատիստիկ վերլուծությունը ցույց է տալիս, որ Ապարան III-ի նյութերը 68,7% հավանականությամբ ավելի վաղ են Գեղարոտի համապատասխան նյութերից:

Թրծումից հետո քերծվածքով զարդաձևով բնորոշվող անոթների տվյալներին նախորդում են Ջրվեժ/Ավան դամբարան N 1-ի տվյալները: Այս համալիրի խեցեղենը «Էլառ-արագածյան» խեցեղենի հիմնական զանգվածից ավելի արխայիկ և վաղ տեսք

ունի: Այլ բառերով, խոսքը կարող է լինել մի համալիրի մասին, որն առկա տվյալներով ներկայացնում է կուր-արաքսի ամենավաղ՝ ԿԱ և Ենթաափուկը:

Բանալի բառեր՝ կուր-արաքսյան մշակույթ, վաղ բրոնզի դար, «Էլառ-արագածյան» խեցեղեն, Հայաստան, Գեղարոտ, Ժամանակագրություն, ռադիո-ածխածնային տվյալներ:

ՎԱՂԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԻԼԻԿՆԵՐԻ ԳԼՈՒԽՆԵՐ ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐԻՑ ԵՎ ԴՐԱՆՑ ԾԻՍԱԴԱՇՏԱՄՈՒԼՔԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Լարիսա Եզանյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Հոդվածում քննարկվում են Մեծ Սեպասար հուշարձանից (Շիրակի մարզ, Հայաստան) հայտնաբերված վաղբրոնզեդարյան իլիկների գլուխները ծիսապաշտամունքային համատեքստում: Մի շարք արխայիկ ավանդույթներում իլիկի պաշտամունքը կապվում է իգական աստվածության հետ, ով իր ձեռքում բռնում է իլիկը և սիմվոլիկ կերպով բուրդ մանում: Իլիկը հատկապես անդրաշխարհի իգական աստվածության ատրիբուտն է և խորհրդանշում է աստվածության տնտեսական գործառույթը: Մարդու ճակատագիրը սահմանող նման կերպարներ են անդրաշխարհի խեթական աստվածուհիները, հին հունական մոյրաները, հին իսլանդական նորները, սլավոնական Մոկոշը, հայկական Անահիտը: Սակայն իլիկները կապվում են նաև արական աստվածության հետ. այսպես, չնայած աստվածուհին կանխորոշում է ճակատագրերը, դա անում է միայն այնպիսի արական աստվածությունների թույլատվությամբ, ինչպիսիք են հունական Չևսը կամ հայկական Տիրը:

Բանալի բառեր՝ իլիկի գլուխ, Շիրակ, վաղ բրոնզի դար, հավատալիք, պաշտամունք, ծես, Մայր աստվածուհի:

ԳՆԴԵՎԱԶԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ 2016-2017 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հակոբ Սիմոնյան, Կարեն Ծերեթյան, Մելինե Սիմոնյան,
Իսկուհի Համբարյան, Գրիգոր Վարդանյան

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն ՊՈԱԿ,
ՀՀ Մշակույթի նախարարություն

2016-2017 թթ. ՀՀ մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի և «Մշակութային ժառանգություն» ՀԿ-ի միացյալ արշավախումբը «Լիդիան Արմենիա» հանքարդյունաբերական ընկերության տրամադրած միջոցներով ՀՀ Վայոց Ձորի մարզի Գնդեվազ համայնքի տարածքում բացահայտել և պեղել է 8 դամբանաբլուր, որոնք կառուցվել են մ.թ.ա. III հազարամյակի երրորդ քառորդում, ապա՝ երկրորդ անգամ, օգտագործվել ուրարտական ժամանակաշրջանում մ.թ.ա. VII-VI դդ.: Վաղ բրոնզի դարի եզրափակիչ և միջին բրոնզի դարի վաղ փուլի դամբանաբլուրները պատկանել են սոցիալական բարձր խավի ներկայացուցիչներին: Ամենայն հավանականությամբ, տեղական բարձաստիճան պալատականների և նրանց ընտանիքների անդամների գերեզմաններ են նաև ուրարտական ժամանակաշրջանի իջեցուկ թաղումները: Բարձր լեռնային գոտում ծովի մակերևույթից 1650-1850 մ բարձրության վրա

տեղակայված այս դամբարանները կարևոր սկզբնաղբյուր են ինչպես Հայաստանի՝ վաղ բրոնզից միջին բրոնզի դարի անցման ժամանակաշրջանի, այնպես էլ Վանի թագավորության կազմում ներառված Ծոլուկ(ու) (միջնադարյան Ծղուկ/Ծղուկք) երկրի պատմության և մշակույթի բացահայտման համար:

Բանալի բառեր՝ վաղ բրոնզի դար, միջին բրոնզի դարի, Ուրարտու, Ծոլուկ(ու) (Ծղուկ), «վաղ դամբանաբլուրների» մշակույթ, արխատկրատիայի դամբարաններ:

ԻՌՐԻԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԻ ՎԱՂ ԶԱՂԱԶԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ Մ.Թ.Ա. II ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ I ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ ՍԿԶԲԻՆ

Կիազո Պիցխելաուրի

Վրաստանի գիտությունների ազգային ակադեմիա

XX դարի վերջին բրոնզի դարի վերջին պատկանող մեծ թվով բնակավայրեր են հայտնաբերվել Իորիի բարձրավանդակում օդային ու արբանյակային լուսանկարչության միջոցով: Այդ բնակավայրերը հիմնականում գտնվում են պտղաբեր հովիտների շուրջ, նախալեռներում և ունեն միևնույն հատակագիծը: Բնական բլուրների գագաթներին գտնվում է միջնաբերդը՝ կենտրոնում տեղակայված սրբարանով, որի շուրջը տարածվում են բարձրաշխարհիկ խավի կացարանները: Միջնաբերդը շրջապատված է բավականին բարդ հատակագծով ամրոցի հզոր պատերի մի քանի շարքով: Միջնաբերդի ուղղակի շարունակությունն է բնակավայրը՝ դարավանդաձև տեղակայված բլրի լանջին, որը նույնպես շրջապատված է ամրաշինական հզոր համակարգով: Նշված բնակավայրերը հանդես են գալիս մեծ խմբերով և, ամենայն հավանականությամբ, կապված են բնակչության հիմնական տնտեսական գործունեության հետ, քանի որ նրանց միավորում էին ընդհանուր սոցիալ-տնտեսական ու քաղաքական շահեր: Ըստ առկա նյութերի՝ Իորիի բարձրավանդակում կարելի է խոսել երկու նման միավորումների գոյություն մասին՝ Ուդաբևոյի լեռնային գոտում ու Էրեթիի սարահարթում:

Բանալի բառեր՝ Իորիի բարձրավանդակ, Ուդաբևո, Էրեթի, Վրաստան, բրոնզի դարի վերջ, ամրոց-բնակավայրեր, բնակավայրային համակարգ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԳԱԼԻԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայկ Ավետիսյան, Արտակ Գևունի, Արսեն Բոբոխյան, Գագիկ Սարգսյան
Երևանի պետական համալսարան

Մեգալիթյան հուշարձանների մասին հիշատակումներ առկա են հայկական առասպելաբանության մեջ, ճանապարհորդական նոթերում և ազգագրական հետազոտություններում: Այդ հուշարձանների հնագիտական ուսումնասիրությունը սկսում է միայն XIX դարի վերջին: Այս առումով առանձնահատուկ դեր խաղացին Արագած լեռան լանջերին իրականացված հետազոտությունները XX դարի սկզբներին (Ա. Զալանթար և Թ. Թորամանյան):

Ընդհանրացնելով եվրոպական ու հայկական մեգալիթների ուսումնասիրության փորձը՝ հայկական նյութերի հիման վրա առաջարկում ենք հիշյալ հուշարձանները նախնականորեն դասակարգել չորս մեծ խմբերի. 1. մեգալիթյան կոթողներ, 2. մեգա-

լիթյան կառույցներ, 3. մեգալիթյան համալիրներ, 4. մեգալիթյան լանդշաֆտային միավորներ:

Ըստ եռլթյան, մեգալիթյան հուշարձանների գրեթե բոլոր տիպերը հայտնի են հայկական նյութերում: Դրանց արձանագրումը, քարտեզագրումը, դասակարգումը, լանդշաֆտային առանձնահատկությունների սահմանումը, թվագրումը, ինչպես նաև պատմական ու մշակութային համատեքստի վերհանումը կարող է եական դեր խաղալ բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի պատմության բազմաթիվ խնդիրների լուսաբանման գործում:

Բանալի բառեր` մեգալիթյան հուշարձաններ, հնագիտական ուսումնասիրության պատմություն, դասակարգում, բրոնզի և երկաթի դար, Եվրոպա, Հայաստան:

ՆՈՐԱՀԱՅՑ ԱՇՏԱՐԱԿԱՏԻՊ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ

Լևոն Մկրտչյան

Երևանի պետական համալսարան

Հոդվածը նվիրված է Արագածոտնի մարզի նորահայտ աշտարակատիպ կառույցների ուսումնասիրությանը: Այդ աշտարակները գտնվում են Արագածի հարավային լանջերից առանձնացող ժայռոտ հրվանդաններին և բլուրներին, որոնց միջև ոչ խորը կիրճեր են: Այս բարձունքները երբեմն իրար միանում են քարաշարերով` ստեղծելով բնական և պատմաաշխարհագրական որոշակի միջավայր` տարածքի սրբազնացման համար, որտեղ առկա են կրոնա-պաշտամունքային ոլորտին վերաբերող բոլոր տարրերը (աշտարակ, դամբարան, զոհասեղան): Հետազոտությունները ցույց են տալիս, որ Արագածը աշտարակատիպ կառույցների յուրօրինակ կենտրոն է եղել, որտեղ իրենց բնորոշ հնագիտական միջավայրում (ամրոց, դամբարանադաշտ) պահպանվել են այս հուշարձանների բոլոր տիպերը (բոլորածև, օվալածև, ուղղանկյուն, քառակուսի, պայտածև):

Բանալի բառեր` Արագածոտնի մարզ, բրոնզի և երկաթի դարեր, մեգալիթ, աշտարակ, դոլմեն, քարաշար, «սրբազան լանդշաֆտ»:

ՍԱԲԵՀՂԱՎԻ «ԿԻԿԼՈՊՅԱՆ» ՀԱՄԱԼԻՐԸ ԹՈՒՆՔՈՒՄ

Գողերձի Նարիմանիշվիլի, Նինո Շանշաշվիլի

Վրաստանի ազգային թանգարան

Սաբեհղավի բնակավայրը (Բեշտաշենի գյուղի մոտ, Ծալկայի շրջան, Հարավային Վրաստան) ի հայտ է եկել մ.թ.ա. XII դարում և գոյատևել է մինչև մ.թ.ա. VI դարը: Բնակավայրն ամրացված է եղել. չնայած հետազոտության այս փուլում դժվար է պնդել, թե այդ համալիր ամրաշինական համակարգը ձևավորվել է բնակավայրի հետ համաժամանակ, այնուամենայնիվ պարզ է, որ ստորին ամրոցն ի հայտ է եկել բնակավայրի հետ միասին: Բնակավայրին կից պեղված թաղումները թվագրվում են մ.թ.ա. VII-VI դարերով: Թռեղքում իրականացված վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ «կիկլոպյան» ամրոցների ամրաշինական համակարգն ի հայտ է եկել մ.թ.ա. XVI-XV դարերում: Այդ ժամանակամիջոցում ամրոցները սակավ են: Մինչդեռ մ.թ.ա. XII դարից սկսած` մեծ քանակությամբ ամրոցներ են ի հայտ գալիս, որոնք համալրվում են նորերով մ.թ.ա. VIII-VII դարերում և նշանավորում ամրաշինական

համակարգի աննախադեպ վերելքը: Սաբեչդավի համալիրը կարող է լավ օրինակ հանդիսանալ՝ նկարագրված իրավիճակը պատկերացնելու տեսանկյունից:

Բանալի բառեր՝ Թռեղք, Ծալկա, Սաբեչդավի, Հարավային Վրաստան, երկաթի դար, կիկլոպյան ամրոցներ, բնակավայրային համակարգ:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

Միքայել Հերլես, Ռուբեն Դավթյան
Մյունխենի համալսարան

2016 թ. ամռանը հայ-գերմանական համատեղ արշավախումբը հնագիտական ուսումնասիրություններ կատարեց Լոռու մարզի Ստեփանավանի և Տաշիրի շրջաններում: Որպես հետազոտությունների ելակետ ընդունվեցին Լոռի բերդի արդեն հայտնի դամբարանադաշտը և բնակավայրը, ինչպես նաև՝ Չեշմանիսի դամբարանները: Ստեփանավանի շրջանում ուսումնասիրվեցին Արմանիսի դամբարանը, խեցանոթներ և զարդեր, Կուրթանի ամրոցի վերգետնյա խեցեղենը, Սվերդլովի ամրոցն ու դամբարանը: Տաշիրի շրջանում հետազոտվեցին Սարատովկայի բնակավայրը, Կրուզլայա Շիշկայի կիկլոպյան ամրոցը, Գետավան գյուղի մերձակայքում գտնվող ամրոցը, բնակավայրը և դամբարանները, Մեծավանի ամրոցը (Բլուկ Բերդ), ինչպես նաև Պաղաղբյուրի դամբարանները և ժայռապատկերները: Բնակավայրերի և ամրոցների տիպերը ցույց են տալիս, որ դրանք կառուցվել են տեղի լանդշաֆտի բնական միջավայրի առանձնահատկություններին համապատասխան, որին հատուկ են Ձորագետ, Ուռուտ, Գարգառ և Տաշիր գետերի հետևանքով առաջացած ձորերը:

Բանալի բառեր՝ Լոռու մարզ, Ստեփանավանի և Տաշիրի շրջաններ, նախաքրիստոնեական հուշարձաններ, բնակավայրերի տեղադրությունը, դամբարանային կյուրեր, ժայռապատկերներ:

ՏԵՍԱՐԱՆԱՅԻՆ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐՈՎ ՀԻՆՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԳԼԱՆԱԶԵՎ ԿՆԻՔՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՐԹԻԿՅԱՆ ՉՈՒԳԱՅԵՆՆԵՐԸ

Աշոտ Փիլիպոսյան

Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ, ՀՀ Մշակույթի նախարարություն

Հոդվածը քննարկում է տեսարանային հորինվածքներով մերձավորարևելյան և միջերկրածովյան գլանաձև կնիքները և դրանց հայկական զուգահեռները, մասնավորապես՝ Արթիկի դամբարանադաշտի թիվ 53 և 422 դամբարաններից հայտնաբերված օրինակները: Հեղինակը գալիս է այն եզրակացության, որ դրանք արտադրվել են միտաննական կնքագործական կենտրոններից մեկում (երկրի արևելյան հատվածում) և Հայկական լեռնաշխարհ են բերվել ռազմաքաղաքական և/կամ առևտրատնտեսական որոշակի գործընթացների արդյունքում: Դրանք վերաբերում են մ.թ.ա. XV դ. վերջից մինչև մ.թ.ա. XIV դ. առաջին կեսը ներառող ժամանակահատվածին և վկայում են Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի վաղատական կազմավորումների միջև գոյություն ունեցած որոշակի կապերի մասին: Քննարկվող կնիքները իրենց գլանաձև իրանների դրոշմող մակերեսներին կրում են փորագիր տեսարաններ, որոնք առնչվում են մերձավոր Արևելքում և Միջերկրականի ավա-

զանի արևելյան հատվածում հնագույն ժամանակներից տարածում գտած ծխապաշտամունքային արարողություններին:

Բանալի բառեր` գլանաձև կնիքներ, տեսարանային հորինվածք, Շիրակ, Արթիկ, ուշ բրոնզի դար, Միտաննի-Յայկական լեռնաշխարհի հարաբերություններ:

ԻՐԻՆՂԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱԽՈՒՄԲԸ

Հենրիկ Դանիելյան, Արսեն Բոբոխյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Իրինղի հուշարձանախումբը գտնվում է Արագած լ. հարավարևմտյան լանջերին, համանուն գյուղից (Արագածոտնի մարզ) մոտ 0,5 կմ դեպի արևելք` Գիր սար/Բեքարյու բլրի (2050 մ) շրջակայքում: Մոտ 90 հա մակերես զբաղեցնող բլուրը ունի հարթ գագաթ և ժայռային դարավանդներ: Իրինղի հուշարձանները հիշատակվում են Տ. Խաչատրյանի (1974 թ.), Ե. Ասատրյանի (2004 թ.), Ռ. Բադայանի և Պ. Ավետիսյանի (2007 թ.) աշխատանքներում, դրանց մի մասը ներառված է Յայաստանի հուշարձանների պետական ցուցակում: 2014-2015 թթ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը նոր հետազոտություններ իրականացրեց Իրինղում: Աշխատանքները ցույց տվեցին, որ վաղ բրոնզի դարում բլրի շուրջ տարածվում էր բնակավայրը և դամբարանադաշտը, միջին և ուշ բրոնզի դարերում այստեղ գտնվել է սրբավայր ժայռային կառույցներով, դամբարանադաշտով և մեգալիթներով: Վաղ/միջին երկաթի ընթացքում բլրի վրա եղել է ամրացված դիտակետ: Սակայն հնարավոր է, որ այս բլուր գործառնությունները ընդհանուր են եղել բլուր դարաշրջանների համար: Իրինղը բացառիկ հնագիտական հուշարձան է, որտեղ տարբեր հնագիտական հուշարձաններ (ամրոց, բնակավայր, սրբավայր, դամբարանադաշտ, մեգալիթներ) գտնվում են միևնույն պատմական և մշակութային միջավայրում:

Բանալի բառեր` Արագածոտն, Իրինղ, Գիր սար, բրոնզի դար, երկաթի դար, ամրոց, բնակավայր, սրբավայր, մեգալիթ, վիշապ:

ՇԻՐԱԿԻ ՄԵՏԱՂԸ ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԵՎ ՎԱՂ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԵՐՈՒՄ. ԱՄՓՈՓ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Արամ Գևորգյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հոդվածում լուսաբանվում են Շիրակի մետաղի արտադրության հարցերը ուշ բրոնզ-վաղ երկաթի դարերում: Ուսումնասիրվել են մետաղյա իրերի հիմնական հավաքածուները հանգուցային հուշարձաններից, որոնց թվին են պատկանում Արթիկը, Հոռոմը և Շիրակավանը: Հոդվածում քննարկվում են նաև տարածաշրջանի պղնձե և բրոնզե արտեֆակտների սպեկտրալ անալիզի արդյունքները: Ուսումնասիրության արդյունքում հեղինակը հանգում է երկու հիմնական եզրակացության. 1. չնայած այն հանգամանքներին, որ Շիրակի տարածքը զուրկ է մետաղական հանքերից, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերում այն դառնում է Յայկական լեռնաշխարհի մետաղի արտադրության առաջատար օջախներից մեկը. 2. վաղ երկաթի դարում նկատվում է գեղքի արտադրության աննախադեպ աճ:

Բանալի բառեր` Շիրակի մարզ, Արթիկ, Հոռոմ, Շիրակավան, վաղ երկաթի դար, հասարակության ռազմականացում:

**ՇԻՐԱԿԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԲՐՈՆԶԵՂԱՐՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԿԵՆՍԱԳՆԱԳԻՏԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԿԵՐՆՈՒԾԱԿԱՆ**

Ռուզան Մկրտչյան, Հասմիկ Սիմոնյան

Երևանի պետական համալսարան, Պատմամշակութային արժեքի պահպանության ծառայություն ՊՈԱԿ, ՀՀ Մշակույթի նախարարություն

Հողվածի նպատակն է ներկայացնել Շիրակի տարածաշրջանի բնակչության (թվով 30 գանգաբանական նյութեր) 3 ատամնաախտաբանական հատկանիշների (աբսցես, կարիես և էմալային հիպոպլազիա) հիման վրա արված համեմատական վերլուծականը Գեղարքունիքի բրոնզեդարյան բնակչության հետ: Մարդաբանական նյութերը հավաքագրված են Արթիկի և Հառիճի (Շիրակի տարածաշրջան), ինչպես նաև Ներքին Գետաշենի, Հացառատի, Զանագեղի, Նորատուսի, Նորաբակի (Սևանի ավազան) ու բրոնզեդարյան հուշարձաններից: Ուսումնասիրված գանգաբանական հավաքածուների մեջ էմալային հիպոպլազիան գրեթե բացակայում է, ինչը կարող է փաստել, որ Շիրակի և Սևանի ավազանի բրոնզեդարյան բնակչությունը սովի կամ սննդային սթրեսների չի ենթարկվել: Երկու տարածաշրջանների կարիեսի միջխմբային համեմատականը բացահայտում է Շիրակի արական սեռի բնակչության առավել կարիոգեն պատկերը. կարելի է եզրակացնել, որ սննդակարգի բաղադրությունը Շիրակի իգական և արական խմբերում տարբեր է եղել: Բացառված չէ, որ աբսցեսի բարձր տոկոսային ցուցիչները կապված են քաղաքային խիտ բնակեցված միջավայրի հետ և վարակածին իրավիճակի արդյունք են:

Բանալի բառեր` բրոնզի դար, հնաախտաբանություն, աբսցես, կարիես, էմալային հիպոպլազիա:

**ՈՂՋԻՒ ՄԻՋՆԱՅՈՍԱՆՔԻ Մ.Թ.Ա. ՈՒ ՀԱՉԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ
ԹԱՂԱՆ ԾԵՍԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Արտակ Գնունի, Գագիկ Խաչատրյան, Անժելա Թադևոսյան

Երևանի պետական համալսարան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Էջմիածնի Պատմաազգագրական թանգարան

Ներկայացվող հաղորդումը նվիրված է 2003-2013 թթ. Կերենի (Արցախի Հանրապետության Զաշաթաղի շրջան) և Շահումյանի (ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջան) դամբարանադաշտերի պեղումների արդյունքների հետազոտությանը: Թեպետ Հարավային Սյունիքում հնագիտական հետազոտությունները սկսվել են դեռևս XX դարի սկզբում, հիմնական նյութերը ներկայացված են պատահական գտածոներով և հետախուզական արշավների արդյունքներով: Կանոնավոր պեղումներ անց են կացվել միայն մի շարք դամբարանադաշտերում (Շիկահող, Տանձավեր, Մաճ, Ներքին Հանդ և այլն): Այս տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում Շահումյանի և Կերենի դամբարանադաշտերի պեղումների նյութերը, որոնք թվագրվում են մ.թ.ա. XIV-VI դդ.: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում թաղման ծեսը, հատկապես մ.թ.ա. VI դարի` դիակիզման ծեսով կարասային թաղումները:

Բանալի բառեր` Սյունիք, Զաշաթաղ, Կերեն, Շահումյան, ուշ բրոնզի և երկաթի դարեր, դամբարանների պեղումներ, թաղման ծես:

ԴՎԻՆԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ ՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Աղավնի ժամկոչյան, Նյուրա Յակոբյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Դվինի հնագիտական արշավախումբը 1961 և 1962 թթ. միջնաբերդի հարևանությամբ բացեց երեք սրբարան՝ կավե տախտակներով: Դրանցից առաջինը հայտնաբերեց Ն. Վահանյանը 1961 թ., երկրորդը՝ Լ. Կարապետյանը 1962 թ., երրորդը՝ Կ. Կուշնարյովան 1970 թ.: Չորրորդ տախտակը Կենտրոնական թաղամասում հայտնաբերեց հնագետ Գ. Զոչարյանը 1973 թ.: Ներկա հաղորդման նպատակն է գիտական շրջանառության մեջ դնել ևս երկու տախտակներ: Դրանք հայտնաբերվել են 1974 թ. Ա. ժամկոչյանի և 1978 թ.՝ Ա. Յակոբյանի կողմից: Բոլոր տախտակները ծածկված են տարբեր եղջյուրավոր կենդանիների, մարդկանց և երկրաչափական մարմինների ռելիեֆ պատկերներով:

Բանալի բառեր՝ Դվին, երկաթի դար, սրբարաններ, պաշտամունքային տախտակներ, ուսումնասիրության պատմություն:

ՈԱՖԻԿ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՇԱԿԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴՇՏՈՒՄ

Հայկ Ավետիսյան, Անժելա Թադևոսյան
Երևանի պետական համալսարան, Էջմիածնի Պատմաազգագրական թանգարան

Ներկայացված հաղորդման մեջ առաջին անգամ հրապարակվում են ականավոր հայ հնագետ Ռ. Թորոսյանի՝ Օշականի դամբարանադաշտում կատարած պեղումների արդյունքները: 1962-1963 թթ. Ռ. Թորոսյանի կողմից պեղվել են 11 դամբարաններ Բնառու գետակի երկայնքով: Պեղումների նյութերը թույլ են տալիս թվագրել դամբարանադաշտի այս հատվածը մ.թ.ա. II հազարամյակի երրորդ քառորդով: Բացի այդ, 1969 թ. Ռ. Թորոսյանը պեղել է ևս մեկ դամբարան Օշականի Մեծ բլրի հարավային մասում: Դամբարանից պեղված նյութերը թվագրվում են մ.թ.ա. XI-IX դդ.: Զննարկվող ողջ նյութը պահպանվում է Էջմիածնի պատմաազգագրական թանգարանի պահոցներում:

Բանալի բառեր՝ Օշական, Դիդի Կոնդ, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարեր, դամբարանների պեղումներ, խեցեղեն նյութ:

ԱՐԳԻՇԹԻՆԻՆԻԼԻՈՒՄ 2016 Թ. ՊԵՂՎԱԾ ԿԱՐԱՍԱՅԻՆ ԵՎ ԿԱՎԱՐԿՂԱՅԻՆ ԹՎՈՒՄՆԵՐԸ. ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Սիմոն Հմայակյան, Նվարդ Տիրացյան, Մարգար Հմայակյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

2016 թ. Նոր Արմավիր գյուղում, «Լևոնի այգի» անվանված տեղամասի Բ 7 փոստրակում, պեղվեց կարասային թաղում: Կարասը դրված էր բերանքսիվայր, շուրթի վրա: Դեպի վեր նայող հատակի մասը կտրված էր: Եղած մարդաբանական նյութի վերլուծությամբ, պարզվեց, որ այստեղ կատարվել է վեց անձանց թաղում: Հետազոտված կմախքների մնացորդները պատկանում են տարբեր սեռերի և տարիքի անհատներին: Կարասից շուրջ 1 մ հարավ-արևմուտք, 100 սմ խորության վրա բացվեց մի կմախք, որն առնված էր տարբեր խեցեբեկորներից կազմված «արկղի»

մեջ: Դամբարանը կարելի է թվագրել մ.թ.ա. VI դ: Կինը թաղված էր իր զարդերով՝ երկու զսպանակաձև մազակալով և մեկ խոշոր ապարանջանով: Համակարգված մարդաբանական փորձաքննությունը թույլ է տալիս նկարագրել անհատների ձևաբանական առանձնահատկությունները: Նրանց բնորոշ են եղել զարգացած մկաններ, կրել են մեծ ֆիզիկական ծանրաբեռնվածություն: Ի հայտ են եկել սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ հիվանդությունների ախտանիշներ:

Քանալի բառեր՝ Հայաստան, Ուրարտու, Արգիշթիխիլի, դամբարան, բրոնզադիտություն, պալեոպաթոլոգիա:

ՏԱՃԱՐԱԿԱՆ ՏՈՆԸ ԲԻԱՅՆԻԿ/ՈՒՐԱՐՏՈՒ ԵՐԿՐՈՒՄ

Էմմա Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հողվածի նպատակն է ներկայացնել այն հիմնական պատկերագրական սյուժեները, որոնք արտացոլում են Բիայնիլի/Ուրարտական թագավորության թատերականացված ներկայացումներն ու ծեսերը: Այս տեսանկյունից մեզ են հասել արձանիկներ, ոսկերչական իրեր, բրոնզե գոտիներ, որոնց վրա պատկերված են դիմակներ ու սրբազան արարողություններ. դրանցից մեկը՝ արծվի դիմակով մարդու (թերևս քրմի) մի արձանիկ է, ով մի ձեռքով գլխին պահում է փոքրիկ խոյակ: Կարմիր բլուրում հայտնաբերված քարե տուփի վրա, կենաց ծառի մոտ պատկերված են արծվի դիմակներով երկու քուրմ: Նույն Կարմիր բլուրում հայտնաբերվել են ձկնակերպ թողերով երեք մարդկանց արձանիկներ:

Ուրարտական բրոնզե գոտիների վրա առկա են երաժիշտների, պարողների և ակրոբատների բազմաթիվ պատկերներ: Դրանցից մեկն ունի տոնական տեսարան, որի կենտրոնում, զոհասեղանի մոտ գահի վրա նստած է թագուհին: Սեղանին դրված է կիսալուսնաձև հացը: Պատկերված է կին երաժիշտների ու պարուհիների երթ՝ քնարով, դափով, զույգ սրինգով, զանգակներով: Մի խումբ կանայք կրում են փոքրիկ դույլեր, ուտեստ, տարբեր առարկաներ, անկողին են զցում, հաց թխում, զորգ գործում, կարասից գինի հանում: Նրանց կողքին կին երաժիշտներ են ու՝ ձեռքերի վրա քայլող մի երիտասարդ: Մյուս ակրոբատը պատկերված է բարձր ոտնափայտերի վրա և պահում է քնարի նման լարային գործիք: Գոտու տեսարանի բուն իմաստը դժվար է ստույգ կերպով հասկանալ. ենթադրում ենք, որ այստեղ պատկերված է թագուհու՝ քրմուհիների և սպասավորների մասնակցությամբ իրականացվող կառնավալային մի հանդես:

Քանալի բառեր՝ Բիայնիլի/Ուրարտու, գոտիներ, դիմակ, կենաց ծառ, պար, երաժշտական գործիք, ակրոբատներ, թագուհի:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱԾԽԱՐՀԻ ԵՎ ԿՈՂՔԻՍԻ ՑԵՂԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ՎԱՂ ԵՐԿԱԹԻ ԴԱՐՈՒՄ

Ալեքսանդր Սկակով

Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտ

Սույն աշխատանքում, հնագիտական կոնկրետ նյութերի հիման վրա, քննարկվում է Արևմտյան Անդրկովկասի (Կողքիս) բնակչության և Հայկական լեռնաշխարհի տարածքում բնակվող ցեղերի միջև եղած հարաբերությունների խնդիրը վաղ երկաթի

դարում: Ենթադրվում է, որ բացի ներմուծված նյութից, Կողքիսի տարածքում առանձնանում է առարկաների մի ամբողջ շարք՝ պատրաստված ըստ հարավկովկասյան և մասնավորապես ուրարտական օրինակների: Նման «ընդօրինակումների» տարածումը և պատճենումը ընդգրկում է երկու փուլ, որոնցից մեկը վերաբերում է մ.թ.ա. VIII դ. երկրորդ կես-VII դ. սկզբին, իսկ երկրորդը՝ մ.թ.ա. VII դ. երկրորդ կես-VI դ. սկզբին: Մեր կարծիքով՝ առաջին փուլը կապված է «կիմերական», երկրորդը՝ «սկյութական» արշավանքների հետ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք կրկնվող բնույթ են ունեցել: Տեղական բնակչության զգալի մասը (ի դեպ, Արևմտյան Անդրկովկասում մ.թ.ա. VIII-VII դ. առաջին կեսին նկատվում է ժողովրդագրական պայթյուն) ընդգրկված էր այդ արշավանքներում, ինչի հետևանքով էլ տեղի ունեցավ կոբան-կողքիսյան ցեղերի ու Յարավային Անդրկովկասի մշակույթների հարաբերությունների ակտիվացումը:

Բանալի բառեր՝ Կողքիս, Ուրարտու, կիմերներ, սկյութներ, միջմշակութային հարաբերություններ, երկաթի դար:

ԼՈՒԻ ԲԵՐԴԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՐԵՐԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՍԱՏԵՔՍԸ

Սեդա Դևեջյան, Ռուբեն Դավթյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Լոռի Բերդում հայտնաբերվել են ձիասարքի հետ կապված բրոնզե ճարմանդներ, որոնք թվագրվում են մ.թ.ա. VII-VI դդ.: Դրանք հանդիսանում են արևային մարմիններ, մեկը՝ տեղավորված է պրոտոմ ձիու վրա: Ձիու պրոտոմ ներկայացնող արձանիկներ Հայաստանից հայտնի են նաև Բրիտանական թանգարանի և Լուվրի հավաքածուներում: Ճարմանդները կապված են Տիեզերական ծառի, միևնույն ձիու պրոտոմները՝ երկվորյակների պաշտամունքի հետ: Վերջիններս ներկայացված են նաև հարավկովկասյան մարդակերպ կախիկներով: Զննարկվող նյութը արտադրվել է Հայկական լեռնաշխարհում, սակայն բացահայտում է լայն առնչություններ կովկասյան և առաջավորասիական շրջանների հետ:

Բանալի բառեր՝ Լոռի Բերդ, դամբարանադաշտ, ուրարտական շրջան, պաշտամունքային բնույթի առարկաներ:

«ԿԻՄԵՐԱ-ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ» ԵՉՐՈՒՅԹԸ

Գարեգին Թումանյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

«Կիմերա-սկյութական մշակութային ընդհանրություն» եզրույթն առաջարկվում է մեր կողմից: Հնագիտական գրականության մեջ հայտնի են «կիմերական մշակույթ» և «սկյութական մշակույթ» եզրերը: Ռուսական հնագիտության մեջ շրջանառվում է նաև «կիմերա-սկյութական մշակույթ» տերմինը, թեև մեկ միասնական «կիմերա-սկյութական» մշակույթի գոյությունը մինչ այժմ ապացուցված չէ: Մինևույն հնագիտական մշակույթի մասին խոսելու համար անհրաժեշտ են ավելի ծանրակշիռ փաստարկներ, մասնավորապես ապացույցներ թաղման ծեսի միասնության վերաբերյալ: Բացառված չէ, որ թաղման ծեսի բաղադրամասերի մանրակրկիտ վերլուծու-

թյան արդյունքում հնարավոր լինի կիմերական և սկյութական համալիրները քննարկել առանձին՝ որպես ինքնուրույն մշակույթների բաղկացուցիչներ:

Բանալի բառեր՝ կիմերա-սկյութական մշակութային ընդհանրություն, կիմերական և սկյութական մշակույթներ, հնագիտական մշակույթ, Հայկական լեռնաշխարհի, քոչվոր ցեղախմբեր:

**ՇԻՐԱԿԱՎԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԵԾՅԱԼԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՅՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
(ԸՍՏ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ)**

Անահիտ Խուղավերդյան, Համազասպ Խաչատրյան, Լարիսա Եզանյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Աշխատանքը վերաբերում է Շիրակավան գյուղից հայտնաբերված մարդաբանական նյութի ուսումնասիրությանը: Համակարգված մարդաբանական փորձաքննությունը թույլ է տալիս նկարագրել այդ անհատների ձևաբանական առանձնահատկությունները: Ուսումնասիրությունը ի հայտ է բերել նաև տարբեր հիվանդությունների ախտանիշներ, կոտրվածքներ և շեղումներ:

Բանալի բառեր՝ Հայաստան, երկաթի լայն տարածման դարաշրջան, բրոնզադարձություն, պալեոպաթոլոգիա:

ՀԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՐ ԵՎ ԱՔԵՄԵՆՅԱՆՆԵՐԸ

Յուլյոն Գազոշիձե

Վրաստանի ազգային թանգարան

Մ.թ.ա VI-IV դարերի ընթացքում ողջ Հարավային Կովկասի նյութական մշակույթը կրեց մեծ փոփոխություններ, որոնք հիմնականում տեսանելի են Աքեմենյան Իրանի հետ ունեցած հարաբերությունների համատեքստում: Այդ փոփոխությունների որոշ առանձնահատկություններ թույլ են տալիս Հարավային Կովկասում առանձնացնել երեք ենթաշրջաններ:

Առաջին շրջանը ներառում էր ներկայիս Հայաստանի մի մասը և հարակից տարածքները, որոնք ժամանակին Ուրարտու պետության կազմում էին գտնվում: Այս տարածաշրջանը, որտեղ, ըստ Հերոդոտոսի, ապրում էին մատիենները, սայսպեյրներն ու ալարոդները, ընդգրկված էր XVIII սատրապության կազմում: Ուրարտական պալատները, տաճարներն ու այլ շինությունները վերակառուցվեցին նորեկների կողմից՝ համաձայն պարսկա-աքեմենյան ճաշակի: Նույն երևույթը չէր կարող տեղի ունենալ Հարավային Կովկասի մնացած հատվածում, քանի որ այնտեղ չկային ճարտարապետական այնպիսի կոթողային կառույցներ, ինչպիսիք ուրարտականներն էին:

Երկրորդ ենթագոտին ընդգրկում էր ներկայիս Ադրբեջանի մեծ մասը և ժամանակակից Վրաստանի ծայր արևելյան մարզ Կախեթը: Այստեղ ի հայտ եկան տիպիկ պարսկա-աքեմենյան պալատներ (Գումբատի, Սարի-թեփե, Քարաջամիրի), որոնք կառուցվեցին ըստ Աքեմենյան կայսրության մայրաքաղաքներում մշակված նախագծերի, և այնտեղ կրթված ճարտարապետների կողմից: Հարավային Կովկասի այս շրջանը XI սատրապություն Կասպիանան էր, իսկ Քարաջամիրիի շրջակայքում պեղված պալատական համալիրը սատրապի նստավայրն էր:

Երրորդ ենթաշրջանն ընդգրկում էր Հայաստանի հյուսիսային մասը և ներկայիս Վրաստանը, բացառությամբ Կախեթի: Ըստ Յերոդոտոսի՝ կոլխերն ու Նրանց հարևաններն այստեղ ապրում էին ընդհուպ մինչև Կովկասյան լեռներ, «ովքեր հարկ չէին վճարում, սակայն «կամավոր կերպով» պարտավորվում էին տարին չորս անգամ հարյուրավոր պատանիներ ու օրիորդներ ուղարկել Իրանի Շահան-Շահին»: Այնուամենայնիվ, տարածաշրջանի անկախությունն ապահովող «կոլխերի ու Նրանց հարևանների» հիմնական պարտականությունը Կովկասյան լեռնաշղթայի արևմտյան ու կենտրոնական հատվածների անցումների վերահսկողությունն էր: Հարավային Կովկասի այս գոտում մ.թ.ա. VI-IV դդ. արծաթե դրամներ էին հատվում ու շրջանառվում: «Կոլխերն ու Նրանց հարևանները ընդհուպ մինչև Կովկասյան լեռնաշղթա» անկասկած բնակվում էին նույն վարչատարածքային միավորում (ըստ Յերոդոտոսի՝ «Պակտիկեի, արմենների ու Նրանց հարևանների» նման, ովքեր 400 տաղանդ հարկ էին վճարում և կազմում էին միևնույն տարածքային միավորի՝ Հայաստանի XIII սատրապության բնակչությունը):

Բանալի բառեր՝ Վրաստան, Հայստան, Ադրբեջան, Իրան, Գումբատի, Սարի-թեփե, Զարաջամիրլի, Աքեմենյան դարաշրջան, սատրապություններ:

ԴՎԻՆԻ ԱՆՏԻԿ ՇԵՐՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԲԼԻՒ ԳԱԳԱԹԻ ՀԱՐԹԱԿԻ ՆՅՈՒԹԵՐԻ

Գայանե Զոչարյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Դվինի միջնադարյան հազարամյա շերտի ձևավորման տևական ընթացքում (IV-XIII դդ.) զգալիորեն խաթարվել է բլրի գագաթի անտիկ դարաշրջանի կառուցապատման ընդհանուր պատկերի ամբողջությունը: Այնուհանդերձ, Դվինի անտիկ շերտի առկա իրավիճակի հետազոտության արդյունքների և գրավոր աղբյուրների տվյալների համեմատական վերլուծությունը հավաստում է, որ մ.թ.ա. II դ. բլրի հարթակի պարսպագոտիով ներառված տարածքը կառուցապատվել է քաղաքացիական շինություններով, մ.թ.ա. II-1 դդ. բարեկարգվել են բնակելի շինությունները ճյուղավորված տնտեսական հարկաբաժիններով, առատ շտեմարաններով, մ.թ. I դ. կեսին հռոմեական զորավար Կորբուլոնի ռազմարշավի ընթացքում ավերածության է ենթարկվել ամրոցը, մ.թ. II դ. ներկա է ուղղանկյուն հատակագծով (վաղ Արշակունյաց շրջանի) ինչ-որ շինության որոշակի հետք: Այսպիսով, բլրի գագաթին ուրվագծվում է Դվին հնավայրի անտիկ շրջանի պատմության շարունակական ընթացքի նկարագիրը:

Բանալի բառեր՝ Դվին բազմաշերտ հնավայր, հնագիտական հետազոտություն, մշակութային շրջափոխեր, անտիկ դարաշրջան, շերտագրական իրավիճակ, շարունակական զարգացում:

**ԾԻՍԱԿԱՆ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ
ՇԻՐԱԿԻ ՀՆԱԿԱՅՐԵՐՈՒՄ**

Հայկ Հակոբյան

Երևանի պետական համալսարան

Ծիսական սպանության կամ ինքնասպանության ծեսը վկայված է բրոնզի դարից մինչև ներառյալ մ.թ.ա. IX դարի Հայաստանի շատ դամբարանադաշտերում: Թեև անտիկ Հայաստանի հնավայրերից բերված են այսպիսի ծեսի կիրառման առանձին օրինակներ, սակայն կյուրթը, որի վրա հենվում են համապատասխան եզրակացությունները, կարելի է մեկնաբանել և՛ հօգուտ, և՛ ընդդեմ նրա գոյության: Սույն հոդվածում, անտիկ Հայաստանի մի շարք հնավայրերի տվյալների համաձայն, ներկայացվում են ոչ միայն տվյալներ, որոնք իրերի որոշակի կազմի և համապատասխան մշակութային համատեքստի ներգործությամբ ակնառու լուսաբանում են ծիսական սպանությունները, այլև մարդկանց ակնհայտ ծիսական սպանության հետևանքով համապատասխան տեսք ստացած արտեֆակտեր, կմախքի մասեր (օրինակ՝ ծնոտ, գանգատուկ, որոնք հայտնվել են յուրահատուկ միջավայրում): Շիրակի երկու անտիկ դամբարանադաշտերում (Հողմիկ, Կարմրաքար) մանկական թաղումները քանակապես Էականորեն գերազանցում են մեծահասակներին, որը ևս ծիսական սպանության հետևանք է: Հնագիտական կյուրթը արձագանքում է հայ վաղմիջնադարյան գրավոր աղբյուրներից մեզ հասած վկայություններին այսպիսի ծեսի գոյության և նպատակների մասին, որոնք պետք է նպաստեին ինչպես հասարակության, այնպես էլ նրա վերնախավի առանձին ներկայացուցիչների բարեկեցությանը:

Բանալի բառեր՝ Շիրակ, Հողմիկ, Կարմրաքար, անտիկ դարաշրջան, ծիսական սպանության երևույթը և դրա հասարակական նշանակությունը:

**ՎԱՂՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ԵՎ ԻՈՒԱՆՂԱԿԱՆ ԲԱՐՁՐ
ԽԱՉԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԳՅՈՒՏԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**

Համլետ Պետրոսյան

Երևանի պետական համալսարան

Հանրահայտ է, որ հայ-իռանդական մշակութային փոխառնչությունների առումով հատուկ ուշադրության է դարձվել իռանդական բարձր խաչերի և խաչքարերի միջև եղած ընդհանրություններն: Մինչդեռ ավելի մոտ նմանություններ է երևան բերում հայկական վաղքրիստոնեական կոթողների հետ համեմատությունը: Այս հուշարձանները բաղկացած են պատվանդանից, սյունից, խոյակից և թևավոր խաչից, դրանք ավելի ձգված են, քան խաչքարերը և հաճախ կրում են Հին և Նոր կտակարաններից ծագող պատկերագրական մոտիվներ: Վերջին տարիների հետազոտություններն ու հնագիտական պեղումները (հատկապես Արցախի Տիգրանակերտում) երևան են բերել բարձր խաչերի և հայկական վաղքրիստոնեական կոթողների միջև նոր նմանություններ:

Ներկա քննությունը հնարավոր է դարձնում հավանական համարել, որ Հայաստանում գոնե 5-րդ դարից ի վեր գոյություն են ունեցել շրջանի մեջ ներառված խաչով պսակվող կոթողներ, որոնց որոշ օրինակներ կրել են նաև պատկերաքանդակներ: Դրանց նմանությունը հետսագույն իռանդական բարձր խաչերի հետ ավելի քան ակնհայտ է: Սակայն, թե ինչքանով դրանք կարող էին

